22404
405

Երվանդ Շահազիզ

Տէր-Գաբրիէլ Պատկանեան

891.99.092
Պ-29Շ

Թիֆլիս
1910

2009

Ց-18

ՐՈՒԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

8

ՏԷՐ-ԳԱԲՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆՑ

(ԱՐՏ. «ԼՈՒՄԱՅ»-ԻՑ)

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՑ. 7.
1910

ԵՐՈՒԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

891.99 092
Պ-29Շ
44
12003
5353

ՏԷՐ-ԳԱԲՐԻԷԼ

ՊԱՏԿԱՆԵԱՆՑ

(ԱՐՏ. «ԼՈՒՍԱՑ»-ԻՑ)

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՑ. 7.
1910

13785

316-54

ՏԷՐ-ԳԱԲՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆՑԸ [1]

Գլուխ Ա.

Տէր-Գաբրիէլը ծնուել է 1802 թուի փետրուարի 26-ին Թիֆլիզում, որտեղ նորա հայրը Սերովբէ Պատկանեանցը ապրում էր իւր կնոջ Մարիամի և զոքանչ Թամարի հետ: Պատկանեանց ընտանիքը Պոլսեցի էր և իւր հայրենի քաղաքում կոչւում էր առանձնական բառով „Մինասխը", որի թարգմանութիւնն է Պատկանեանց ազգանունը: Սերովբէի պապը Տէր-Գաբրիէլը և նորա հայրը Տէր-Պետրոսը քահանայ էին Պոլսի հայաշատ Ղալաթիա թաղի եկեղեցում [2]: Տէր-Գաբրիէլ աւագ քահանայի օջախը յայտնի էր ամենին, դա մի Հայ նահապետական ընտանիք էր շատ հիւրասէր և դռնբաց և վայելում էր ամենքի սէրն ու յարգանքը: Ամենքի առաջ բաց էին այդ „օրհնեալ օջախի" դռները, նա մանաւանդ աղքատների և օտարականների, չենք խօսում արդէն Պոլսի վերայից Երուսաղէմ, Հնդկաստան և ուրիշ տեղեր անցնող, գնացող-եկող նշանաւոր հայերի: Եփրեմ կաթուղիկոսը դեռ իւր արքեպիսկոպոս եղած ժամանակ Հնդկաստանի նուիրակութիւնից վերադառնալիս, գտնում է մեծ հիւրասիրութիւն Տէր-Գաբրիէլի տանը և ծանօթանում է այդ ընտանիքի անդամների հետ. Ներսէս Աշտարակեցին իւր պատանեկութեան օրերում, երբ դեռ ուսանում էր Թադէոս վարժապետի դպրոցում, ընդունւում է իբրև հարազատ որդի Մինասխների օջախում և ծանօթանում է Տէր-Գաբրիէլի թոռան Սերովբէի հետ:

Սերովբէն, որ ծնուել էր 1760 թուին, մի ժիր, աչքաբաց

խելօք մանուկ է լինում· Նա դարձնում է իւր վերայ յայտնի Ջմիւռնացի Խօջենց Մարգարի ուշադրութիւնը, որ լաւ ծանօթ էր Տէր-Գաբրիէլ Մինասիբին, և նորա հոգացողութեամբ ուղարկւում է Վենետիկ Ս. Ղազարու վանքը ուսանելու։ Աչքաբաց Սերովբէն մտնում է վանքի դպրոցը և լիակատարօրէն իւրացնում է հայկական գրաբառագիտութիւնը, կրօնագիտութիւնը, դառնում է ճարտար քերականագէտ և վերադառնում է Տրիեստի վերայով Պօլիս, մնալով ընդամենը Վենետիկում և Տրիեստում 7 տարի։

Պօլսում Սերովբէն բաց է անում իւր սեփական դպրոցը և սկսում է վարժապետութիւն անել և նորա հռչակը իբրև հմուտ քերականագէտի և լեզուագէտի կամաց-կամաց տարածւում է մայրաքաղաքի ստուար հայութեան մէջ։ Ամէնքը շտապում են իւրեանց որդոցը տալ նորա դպրոցը և գլխաւորապէս հարուստ վաճառականները և ամիրաները։ Նորա յաջողութիւնը սակայն շատ երկար չի տևում. „Մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի“։ Մի քանի տարի գոյութիւն ունենալուց յետոյ, նորա դպրոցը փակւում է և իւր կեանքում մի „ալէկոծութեան“ հանդիպելով, թողնում է Պօլիսը և 1794 թուին ընկնում է Թիֆլիս։

Այստեղ Վրաստանի մայրաքաղաքում ևս Սերովբէն ձեռնարկում է իւր վարժապետութեան գործին· Նա բաց է անում մասնաւոր դպրոց և հաւաքում, ուսուցանում Թիֆլիսի ամենալաւ և առաջնակարգ ընտանիքների մանուկներին։ Նորա լաւ վարժապետ լինելու հռչակն այստեղ ևս հասնում է մինչև իշխան Յովսէփ Արղութեանի ականջը, որ Յովհաննէս Լազարեանին մի մասնաւոր թուղթ է կապել տալիս նորան և կոչում նորան „վարժապետ Հայոց“, և այնուհետև Սերովբէ Մինասիբը ուրիշ պէս չի կոչւում, բայց եթէ „Սերովբէ վարժապետ“։ Սերովբէն իւր վարժապետութեան հետ միասին պարապում է գրականութեամբ· Նա գրում է գրաբառ տաղեր, որոնց բովանդակութիւնը առնում է Աստուածաշնչից և կապում Հայոց կեանքում տեղի ունեցող զանազան երևոյթների և գործող անձանց գործունէութեան հետ։ Եփրեմ կաթուղիկոսը այդ երգերը, որոնք յետոյ հրատարակւում են մի առանձին հատորով, համարեա թէ ծայրէծայր բերանացի է իմանում եղել, երգերից մի քանիսն էլ Ներսէսի խնդիրքով և պատուէրով են գրուած լինում, Ներսէսի, որ 1802-ի վերջին և 803-ի սկզբին ամբողջ 8 ամիս անց է կացրել նորա տանը Թիֆլիսում և Գաբրիէլ մանուկին շատ անգամ գրկել ու սիրել։

Եփրեմ արքեպիսկոպոսը, ինչպէս յայտնի է, իւր նուիրակութիւնից Էջմիածին վերադառնալուց յետոյ, նշանակուեց Ռուսաստանի առաջնորդ, որ Յովսէփի մահից յետոյ մնացել է թափուր։ Նա Հաշտարխան գնալիս, հանդիպում է Թիֆլիս, հիւր է լինում Սերովբէի տանը, վերանորոգում է իւր ծանօթութիւնը նորա հետ և հասնելով իւր տեղը, գրում է նորան, որ նա ևս երթայ այնտեղ վարժապետութեան պաշտօնով։ Հաշտարխանում այդ ժամանակները յայտնի էին մի քանի ջուղայեցի դերդաստաններ, որոնք ժամանակակից, հայրենակից և ճանապարհակից էին եղել Լազարեաններին,—Գալստեանք, Արզումանեանք, Աղաբաբեանք, Ասկարխանեանք, Դելանեանք և միւսները, և որոնք յաջող առևտրական ձեռնարկութեամբ մեծ հարստութիւն էին դիզել և հասել բարօրութեան։ Նշանաւոր էին մանաւանդ երկու եղբայր Աղաբաբեանք՝ Նիկողայոս և Յակոբջան, Յովհաննիսի որդիք, որոնք իրանց կարողութիւնը ձեռք էին բերել Մոսկուայում և վերադարձել, ապրում էին Հաշտարխանում։ Եփրեմի տեղ հասնելու ժամանակները յանկարծակի մեռնում է Յակոբջանը և նորա եղբայր Նիկողայոսը, որ ունէր երեք որդի՝ Յովհաննէս, Պետրոս և Յակոբջան, կամենալով իւր եղբօր յիշատակը վառ պահել, խոստանում է իւր համաքաղաքացիներին ի յիշատակ հանգուցեալին հիմնել մի վարժարան և այդ մասին յայտնում է նոր միայն քաղաքը ժամանած առաջնորդին։ Սորանով նա կամենում է, բացի իւր եղբօր յիշատակը անմահացնելուց, և մխիթարած լինել Հաշտարխանցւոց, որոնք Յովհաննէս աղա Լազարեանի մահուամբ, որ խոստացել էր մի ուսումնարան բանալու Ռուսաստանի առաջնորդանիստ քաղաքում և չէր կարողացել իրագործել իւր խոստումը, անմխիթար էին մնացել։

Անա այդ Ազարաբեան բացուելիք դպրոցի համար էր, որ գրել էր Եփրեմը Սերովբէին և յորդորել, որ նա թողնէ Թիֆլիսը և երթայ Հաշտարխան. նա նոյն բանի մասին գրել էր և Ներսէսին և խնդրել, որ նա ևս իւր կողմից համոզէ նորան և ստիպէ ընդունելու իւր առաջարկութիւնը։ Սերովբէն, որ արդէն բաւականին մեծ ընտանիքի տէր էր և բաւական իւր վիճակով, թէև չէր կամենում քանդել իւր տունը և իւր ընտանիքը ենթարկել այդքան հեռաւոր տեղ տեղափոխուելու զրկանքներին, բայց վերջ 'ի վերջոյ ստիպուած է լինում կատարել իւր բարեկամների՝ Եփրեմի և Ներսէսի ցանկութիւնը և մի առժամանակ իւր ընտանիքը թողնելով Թիֆլիսում, գնում է մենակ, մինչև որ կարողանայ տեղեկանալ բոլոր հանգամանքներին և ամեն բան պատրաստել իւր ընտանիքի համար։ Նա հասնում է Մոզդոկ 1805 թուին և հրաման է ստանում Եփրեմից, որ այդ ժամանակները դուրս էր եկել իւր վիճակը շրջագայելու և գտնւում էր Ղզլարում, գնալու այնտեղ։ Ղզլարն էլ այդ ժամանակները շատ առաջ էր գնացել, ծաղկել ու բարգաւաճել. նորա մէջ էլ առաջ էին եկել մի քանի գերդաստաններ, որոնք քաղաքի իշխանների դեր էին կատարում և իրանց ուզածի պէս կառավարում հասարակութեան գործերն և ընթացք տալիս քաղաքացւոց կեանքին,—Բուրջալեանք, Փառակեցեանք, Թանգրյեանք, Երուսաղիմեանք, Քաջքաջեանք, Իզմիրեանք, Սերեբրյակեանք, Էլզարեանք և ուրիշները։ Սոքա ծանօթանալով Սերովբէի հետ և հաւանելով նորան, հաւաքւում են առաջնորդի մօտ և խնդրում, որ նա թողնէ նորան Ղզլարում վարժապետութիւն անելու համար, բայց առաջնորդը չի համաձայնում, ասելով, որ ինքը խոստացել է Հաշտարխանցւոց և չի կարող խոստմնազանց լինել։ Սակայն որպէսզի բոլորովին անկատար չթողնէ քաղաքացիների խնդիրքը, նա թողնում է նոցա վարժապետ Սիմէօն կաթուղիկոսի եղբայր գիտնական Գէորգ Խուբեանին, որ եկել էր նոյն իսկ ժամանակները Ղզլար Եփրեմի մօտ քարտուղար լինելու նպատակով։

Եփրեմն և Սերովբէ վարժապետը դուրս գալով Ղզլարից, հասնում են Նոր-Նախիջևան 1805 թուի վերջին Խաչէզ կա-

րապետի քաղաքագլխութեան վերջին օրերը և իջևանում Յովսէփի առաջնորդարանում։ Նախիջևանի աղաները գնում գալիս են առաջնորդարան, տեսնւում, ծանօթանում են Սերովբէի հետ. նոքա էլ Ղզլարեցւոց նման շատ հաւանում են նորա հեզ բնաւորութեան և քաղցր ձայնին և միաբերան են գնում խնդրել առաջնորդին, որ նա անպատճառ նորան թողնէ Նախիջևանում, թէև լսած են լինում Ղզլարցւոց անյաջողութիւնը։ Նախիջևանում այդ ժամանակները կար մի Յովհաննէս սարկաւագ, որ եկել էր Պօլսից, գրագիտութիւն և եկեղեցական երգեցողութիւն էր սովորեցնում և յայտնի էր «Յովհաննէս վարժապետ» անունով։ Բայց այդ Յովհաննէսը գրութիւն չգիտէր. նորան պահում էին Նախիջևանում, որովհետև կար մի կուսակցութիւն, ծեր հոգևորականներից ու ծեր մարդկանցից բաղկացած, որոնք կամենում էին վերականգնել Պօլսի երգեցողութեան եղանակը Նախիջևանի եկեղեցիներում, որ խանգարուել էր Յովսէփի մտցրած էջմիածնի եղանակով։ Հներին հակառակ էին նոր մարդիկ և նոր հոգևորականները, որոնք Յովսէփի աշակերտներն էին։ Առաջին կուսակցութիւնը սիրում էր Յովհաննիսին, երկրորդն ատում էր։ Վարժարանն էր «խօնախը», որ մի հասարակ նախակրթարան էր և որտեղ Յովհաննէսը սովորեցնում էր շարականներ, մեղեդիներ և շատ քիչ գրագիտութիւն։ Այդ խօնախը Պոտեոմկինի Եկատարինէ կայսրուհու համար շինած նախկին պալատն էր, որտեղ պիտի իջևանէր թագուհին Ղրիմ գնալու ժամանակ։ Երբ կայսրուհին ուրիշ ճանապարհով գնաց և Նախիջևան չմտաւ, նոյն պալատը ընծայուեց Յովսէփ Արղութեանին, որ նորա մի մասը դարձրեց առաջնորդարան, իսկ միւս մասը յատկացրեց վարժարանի [3]։ Ազարանքի շինութիւնը, որ եղել էր Միքայէլ Գէորգեան Կոզբէթլեանի երկրորդ անգամ քաղաքագլուխ ընտրուելու միջոցին, Նախիջևանի հիմնարկութեան երկրորդ եռամեակի—1782,83 և 84-ի ընթացքում, միջավայրում փայտակերտ էր, երկու անկիւններում քարաշէն։ Արևմտեան անկիւնի քարաշէն մասը տեղի հետ միասին 1801 թուին Յովսէփի մահից յետոյ, խառնակութեան ժամանակ, գնել էր Բայազետցի Կարապետ վարդա-

պետից, որ Ս. Խաչ վանքի վանահայրն էր և Նախիջևանի յաջորդը, նշանաւոր Մահտեսի Յովհաննէսի անդրանիկ որդի Մարկոս աղա Տէր-Մարկոսեանը, իսկ արևելեան անկիւնի տանը բնակւում էր Եփրեմի Թարգման Յակոբ աղան-Եակոբ Մինայիչը։

Եփրեմ առաջնորդարան հաւաքուած Նախիջևանի աղաներին, որոնք խնդրում էին Թողնել Սերովբէին, խոստանալով տալ նորան ռոճիկ և քաղաքի հաշուով վարձած բնակարան ու վառելիք, պատասխանեց նոյնը, ինչ որ Ղզլարեցւոց, և աշխատեց համոզել նոցա շատանալ Յովհաննէս վարժապետի գիտութեամբ։ Բայց Նախիջևանցիք, որ ժառանգել էին Անեցւոց կամակորութիւնը, պնդեցին և իրանց խօսքն առաջ տանելու համար, սկսան զանազան արատներ գնել Յովհաննէսի վերայ, ուրանալով միանգամայն նորա եռամեայ աշխատութիւնը։ Սակայն այդ բոլորը զուր էր. Յովհաննէսն եթէ ունէր պակասութիւն, այդ էլ այն էր, որ նա, բացի ժամակարգութիւնից, շարականից և մեղեդիներից, ուրիշ ոչինչ չգիտէր։ Բայց այդ էլ շատ քչերն էին հասկանում, ինչպէս Թուֆլիկեան Մանուկ ու Մարտիրոս աղաները, Մահտեսի Յարութիւն Արարատեանը, Ստեփան աղա Փէհլէվանեանը, որոնք ժամանակի ուսեալ մարդիկն էին Նախիջևանում և ճանաչում էին նորա գիտութեան չափը։ Յովհաննէսի պաշտպանն էին աղա Յարութիւն Խաթրանեանը, որի Թոռը Գէորգ Պօղոսեանը սովորում էր նորա մօտ այբուբենը, աղա Պետրոս Մահտեսի Եղիազարեան Բարսինեանցը, որի աներձագը պատանի Յարութիւն Պօղոսեան Խալիբեանը յաճախում էր խօնախը, և միւսները։

Տեսնելով, որ աղաները պնդում են, իսկ առաջնորդը չի համաձայնում, Տուֆլիկեաններն առաջ գալով, ասում են. «Սրբազան, շնորհակալ ենք, Յովհաննէս վարժապետն ինչ գիտէ, լաւ է սովորեցնում. մեր երեխաները քահանաների չափ ժամակարգութիւն գիտեն, բայց նոքա քահանայ լինելու չեն, այլ վաճառական, որոնց հարկաւոր է գրութիւն, որ կարողանան իւրեանց գործի նամակները գրել. Թո՛ղ Յովհաննէսը գայ այստեղ, և դուք նորան մի նամակ տուէք գրելու. եթէ հաւանէք նորա գրածին, մենք յօժար ենք շատանալու նորա գիտութեամբ,

իսկ եթէ ոչ, Պատկանեանցը մնայ Նախիջևանում»։ Յովհաննէսը գալիս է և ինքը խոստովանում, որ գիր չգիտէ և իւր անունը հազիւ է գրում և գրածն էլ ինքը դժուարանում է կարդալ։ Եփրեմը մնում է անպատասխան։ Վիճաբանութիւնն երբ երկարում է, ժամանակի քաղաքագլուխ Խաչերես Հալաջեանը, որ ընտրուել էր Խաղէգ Կարապետից յետոյ տասներորդ եռամեակի—1806,7,8-ի համար, ասում է. «Սուրբազան, եթէ դու մեր խօսքը ոտքի տակ կրնես, գիտցիր, որ Նախիջևան առաջնորդ ըլլալու չիս. շաէ Գիրգորը, շինտի ծիւտր կխաւրինք և հոս տաւէլթ կանինք, ան տաեն ինչ խատար կամենաս, պաղ ջուր զարկ»։ Մէջ է մտնում Տուֆլիկեան Մանուկ աղան և ասում է. «Հարցնենք իրան Պատկանեանցին. նա սարուկ չէ, ինչպէս կամենայ, այնպէս էլ կլինի»։ Գնում են միւս սենեակ, որտեղ Սերովբէ վարժապետը նստած՝ Եփրեմի հարկաւոր նամակներն էր գրում, և համոզում են նորան, որ նա մնայ և տարաձայնութեան պատճառ չլինի հասարակութեան և առաջնորդի մէջ և չբորբոքուի Եփրեմի և Գրիգորի առաջնորդութեան խնդիրը։

Այդ Գրիգորը Արղութեանի Զաքարեան Գրիգոր վարդապետն էր, որ Յովսէփի մահից յետոյ, Դաւթի կողմն անցնելով և Յովսէփի սուտ կտակը ցոյց տալով ս. Էջմիածնի միաբանութեան, համոզել էր ամենքին նորա կողմն անցնելու և ինքը ևս այդպիսով Դաւթի աչքը մտնելով, եպիսկոպոս էր ձեռնադրուել և Ռուսաստանի առաջնորդ կարգուել։ Այս հանգամանքի մասին Յովհաննէս Գեղարդակիր արքեպիսկոպոսը, որ բանտից ազատուելով, ս. գեղարդն առել, փախել էր Թիֆլիս, մի նամակ էր գրել Սերովբէի ձեռքով Եփրեմին և ամեն բան իմաց տուել։ Եփրեմն էլ գրդել էր Ռուսաստանի Հայերին գրել Դաւթին, որ Գրիգորին առաջնորդ չուղարկէն։ Գրիգորը դուրս գալով ս. Էջմիածնից և գալով Ռուսաստան, ամեն տեղ էլ անարգանքով էր ընդունուել։ Դորանից յետոյ էլ շուտով Եփրեմի խնդրքով կայսերական հրաման էր արձակուել Պետերբուրգից, որ Գրիգորն արգելուած մնայ Ռուսաստանի սահմաններում։ Ահա՛ այս

Գրիգորի առաջնորդութեան ձգտելու հանգամանքի մասին էր ակնարկում քաղաքագլուխ Հալաջեանը։

Սերովբէ վարժապետը յօժարում է մնալ Նախիջեւանում այն պայմանով միայն, որ Յովհաննէս վարժապետն էլ մնայ երգեցողութեան ուսուցիչ։ Նախիջեւանցիք էլ թէեւ ընդունում են նորա առաջարկութիւնը եւ մի առ ժամանակ թողնում են այդ Յովհաննէսին խօնախում, բայց յետոյ ճանապարհ են ձգում նորան Պօլիս։ Այսպիսով Նախիջեւանցիք Սերովբէի ձեռքով 1806 թուին վերսկսում են այն կանոնաւոր դպրոցը, որի հիմքն առաջին անգամ դրել էր Ս. Խաչ վանքում Յովսէփ արքեպիսկոպոսը եւ որ դորանից տաս տարի առաջ, կորցրել էին նոքա, Հաշտարխան փոխադրել տալով թէ դպրոցը, թէ աշակերտներին, թէ տպարանը եւ թէ «Քիտապիւտան» կոչուած Թադէոս Մարուքեան վարդապետ վարժապետին [4]։ Սերովբէն ստանձնելով վարժապետութեան պաշտօնը խօնախում, խնդրում է, որ վարժարանն ունենայ մի տեսուչ, որ, գոնէ, շաբաթն երկու անգամ գայ դպրոց եւ վերահասու լինի, թէ ինչ են անում եւ թէ արդեօք աշակերտները կանոնաւորապէս յաճախում են դպրոց, թէ չէ, բայց ագա Մանուէլ Շահինեանը պատասխանում է, թէ նորան են յանձնում դպրոցը, որովհետեւ իրենք մի այնպիսի մարդ չունեն, որ կարողանայ տեսչութիւն անել։ Սերովբէն խնդրում է, որ իրան տրուի, գոնէ, մի ցուցակ, որ իմանայ, թէ ինչ պէտք է սովորեցնել, կամ թէ ինչ են ուզում, որ նա սովորեցնէ։ Աչակովսկի Սիմէօն ագան պատասխանում է, թէ գիտցածդ պիտի սովորեցնես։ Սերովբէն ասում է, թէ օգուտ չի լինիլ, եթէ ինքը սովորեցնէ այբուբեն եւ հինգ կանոն սաղմոս. նոքա պիտի տան իրան քիչ շատ գրագէտ տղայք, որ կարողանայ քերականութիւն սովորեցնել։ Մարտինեան Մարկոս ագան հարցնում է. «Քերականութիւն նէ մանի դըր»... Մանտեսի Յարութիւն Արարատեանը պատասխանում է, թէ քերականութիւն բիր եօլէ քիթապ դըր... Եփրեմը ծիծաղելով ասում է՝ Հայոց վարժարան էք հիմնում, հայերէն խօսեցէք։ Մանուէլ Շահինեանը պարծենում է, թէ ինքը տեսել է քերականութիւնը. «Էփէի մեծկան թուղթ է, Երեմիա Չէլէ-

պին մեծկամ ունէր»։ Առաջնորդը կամենալով Սերովբէ վարժապետին հանել այդ ծիծաղելի դրութիւնից, ասում է նրան. «Հա՛, ես լսել եմ, որ Երեմիա Չէլէբին քո աշակերտն է եղել»։ Սերովբէն երբ վերադարձել էր Տրիեստից, Ստեփան ամիրան առաջինն էր եղել, որ իւր որդուն տուել էր նորան աշակերտութեան։ Քերականութիւնն էլ հէնց այն տարին էր տպագրուել, երբ Սերովբէն գնացել էր Ղազարու վանքը. տպագրութիւնը այդ ժամանակ դեռ շարունակւում է եղել եւ նա սովորել էր անկապ թերթերի վերայ։

Գլուխ Բ.

Սերովբէ վարժապետը Նախիջեւանում ունենում է 350 աշակերտ, բոլորեքեան էլ բոբոտ. նա բժշկում է նոցա, մաքրութեան ընտելացնելով եւ զանազան դեղեր տալով նոցա, որ մատակարարում էր Նախիջեւանում այդ ժամանակ յայտնի Հէքիմ Կարապետը։ Առաջին անգամ նա է շինել տալիս նստարաններ, որոնց վերայ նստեցնում է տաս-տաս աշակերտ. երկու ծայրին նստողները լինում էին գրագէտ եւ ուսուցանում էին իրանց մօտ նստած չորսին։ Աշակերտների հետաքրքրութիւնը զարթեցնելու, նոցա զբաղեցնելու եւ նոցա մէջ սէր յարուցանելու համար դէպի ուսումը եւ դպրոցը, Սերովբէ վարժապետը իւր դասատուութիւնն անում էր հեքեաթի ձեւով. նա ս. Գրքից, Հայոց, Հռոմայեցւոց եւ Յունաց պատմութիւններից զանազան հետաքրքրական դէպքեր էր պատմում եւ աշակերտները սիրով լսում էին, աշակերտները միմեանց հարցեր էին տալիս եւ վիճաբանութիւն էին անում. ով որ լաւ էր պատասխանում, վեր էր նստում, ով որ վատ — վար։ Առաջին անգամ Սերովբէ վարժապետն է մտցնում Նախիջեւանցւոց մէջ միասին կարդալ գրելու եղանակը, մի խօսքով, նա մտցնում է ուսուցման այն ձեւն ու ոճը, որ ինքը տեսել էր Վենետկում եւ Տրիեստում։ Սակայն նորա գործը շատ դժուարութեամբ է առաջ գնում, որովհետեւ աշակերտները կանոնաւորապէս չէին յաճախում դպրոց, ուսումնական պիտոյք չէին բերում եւ, որ գլխաւորն է, տղաներն ամէնքն էլ պահանջում էին, որ Սերով-

րէն իրանց խնջոյքների ժամանակ իւր աշակերտներով գայ երգէ նոցա տներում։ Նա ստիպուած է լինում այս պահանջին բաւականութիւն տալու համար, ընտրել 12 ձայնաւոր աշակերտ և սովորեցնել նոցա իւր, Մխիթար աբբայի և Բաղդասար դպրի երգերից. Նա շարադրում է ուրիշ երգեր էլ, որոնց բովանդակութիւնն առնում է Նախիջևանի կեանքից, ինչպէս բարեկենդանի երգը, որ նա գրում է 1807 թուին և որ սկսւում էր «Սիրով Սուրբ Հոգւոյն կապակցեալ Նոր-Նախիջևանցիք» խօսքերով և «Աստուած հզօր» երգը. որի մէջ գովաբանւում էին քաղաքի բոլոր նշանաւոր աղաներն անուն անուն։ Այս վերջին երգը մեծ խռովութեան պատճառ է լինում, որովհետև բոլորեքեան էլ պահանջում էին, որ երգն անվերջ շարունակուի և ծանենքի անունն էլ մէջը յիշուի, մինչև իսկ և նոցա անունը, որոնք ոչ մի արժանի յիշատակի գործ չէին արել հասարակութեան համար։

1807-ին, երբ Եփրեմը դարձեալ եկել էր Նախիջևան, գալիս է Նախիջևան և Ներսէս Աշտարակեցին, որ այդ ժամանակ դեռ վարդապետ էր, և իջևանում է առաջնորդարանի արևելեան անկիւնի քարաշէն բնակարանում Մահտեսի Ազարբէկեանի տան հանդէպ, որի վերնայարկն հասարակութիւնը վարձել էր Սերովբէի համար, իսկ ներքնայարկում բնակւում էր իւր դուստրների հետ Աղքերմանցի Տէր Յովհաննէսի մատաղահաս այրի երեցուհի Բահալը, որ Մարտիրոս Տուֆլիկեանի քենին էր։ Նա բերել էր Դանիէլ կաթողիկոսի կոնդակը Ռուսաստանի Հայերին, ինչպէս նոյնպէս մի կոնդակով Պոլիս էր գնացել և Յովհաննէս Գառնակերեան եպիսկոպոսը։ Այստեղ բնականաբար վերանորոգւում է նորա և Սերովբէի հին բարեկամութիւնը. Նա յայտնում է իւր անբաւականութիւնը թէ նորան, որ խաբուելով «մեծ գդակ» Նախիջևանցիների մեծարանութիւնից, մնացել էր նոցա մէջ և սկսել էր իւր երգերով գովաբանել նոցա, այն ինչ նոցա մէջ չկար մէկը, որ կարողանար ազգի օգուտը, կամ վնասը ճիշդ որոշել, և թէ առաջնորդին, որ մոռացել էր իւր տուած խոստումը Հաշտարխանցւոց և համաձայնել էր թողնել նորան Նախիջևանում։ Եւ որովհետև նա իւր

այս դժգոհութիւնը յայտնում էր շատ անգամ դպրոցում ի լուր աշակերտների, որոնց մէջ այդ ժամանակները ծաղկել էին մի քանիսը՝ Մելքոնեանը, Տիւլպէնճեանը և տիրացու Կարապետ Խալփախչեանը, և ի լուր դպրոցի մշտական այցելուների՝ Տուֆլիկեանների, Պետրոս Բոբասինեանի և Պօղոս Խաթրանեանի, թէ Սերովբէն և թէ այդ աղաները շատ վշտանում էին, վախենալով, որ չլինի թէ այս բոլորը հասնի քաղաքագլուխ Հալաչեանի ականջը և խռովութեան պատճառ լինի։

Սորանից յետոյ շուտով պատահում է մի դէպք, որ մի կողմից արդարացնում է Սերովբէ վարժապետի երկիւղն ու կասկածը, միւս կողմից էլ սառնութեան առիթ է լինում նորա և Ներսէսի մէջ, սառնութեան, որ յետագայ հանգամանքների ազդեցութեան ներքոյ գնալով աճում ու զարգանում է, փոխուելով թշնամութեան ու ատելութեան, որ յետոյ անցնում է և նորա որդի Տէր-Գաբրիէլի վերայ ու այնքան դժբաղդութեան պատճառ լինում նորա համար։ Ասում են, որ մի անգամ առաջնորդը, Ներսէսը և Սերովբէն հրաւիրուած են լինում խնջոյքի Զօրայ Սահակ աղայի տունը։ Հացկերոյթի ժամանակ Ներսէսը կամենում է իմանալ, թէ կա՞ն արդեօք և ո՞յք են Քէֆէցի նշանաւոր Տէր-Բարթուղիմէոսի և Եւպատորիացի նշանաւոր Տէր-Մարկոսի ժառանգները, որոնց այնքան սէր ու յարգանք է ցոյց տուել Յովսէփ Արղութեանը գաղթականութեան ժամանակ։ Նորան պատասխանում են, թէ Տէր-Բարթուղիմէոսի որդին լինում է համանուն Տէր-Բարթուղիմէոս քահանան Քէֆէյում, նորա որդի Մահտեսի Թորոսը, որ գալիս է Նախիջևան, տեսնում է Յովսէփին և սէր ու պատիւ վայելում նորանից, և դորա որդին Տէր-Յակոբը, որ գնացել է Մոսկով. իսկ Տէր-Մարկոսի որդին լինում է համանուն Տէր-Մարկոս քահանան Եւպատորիայում, դորա որդին էլ Մահտեսի Յովհաննէսը, որ գալիս է Նախիջևան և Մահտեսի Թորոսի հետ տեսնւում Յովսէփի հետ և դրա որդին Մարկոս աղան, որ ապրում է առաջնորդարանի արևմտեան անկեան քարաշէն տան մէջ և հէնց այժմ էլ գտնւում է այստեղ։ Ներսէսն իւր զարմանքն է յայտնում, թէ ինչպէս է եղել, որ պալատի մի մասն անցել է օ-

տար մարդկանց ձեռքը, և ինչ խրատներ ուներ Բայազիտցի Կարապետ վարդապետը ծախելու այն տունն ու տեղը: Մարկոս աղան շատ բարկանում է, բայց չի պատասխանում. Նորա տեղ անպատւում է Ներսէսին քաղաքագլուխ Հալաջեանը, մատը 3 անգամ զարնելով սեղանին և ասելով. «Վարդապետ, դու հոս եկիլիս մեջերս կռիւ կուզիս ձգել. բարի եկար, գնա՛ վանք, հոն ինչ գուզիս, ծածկէ, հոս ծանրը չէյլէ»: Մէջ են մըտնում և հաշտեցնում, և քաղաքագլուխը ի նշան հաշտութեան միւս օրն առաջնորդին և Ներսէսին իր տունն է հրաւիրում և այդ առթիւ մեծ հացկերոյթ սարքում: Այդտեղ պատեհ բոպէ գտնելով, Մարկոս աղան ասում է Ներսէսին, որ եթէ նա չի հաւատում, թէ տունը գնւած է Կարապետ վարդապետից, թող գայ իր մօտ և նա «քուփչիները մէկիկ-մէկիկ նորա աչքի պէպէքը կըխօթէ»:

Ներսէսը դորանից յետոյ իբրև թէ գնում գալիս է Մարկոս աղայի տունը, որ ամրագիրը տեսնէ, և ծանօթանում է աղախնի հետ, որ նկատում են Մարկոս աղան և Բանալը երիցուհին, որի հետ իբրև թէ նոյնպէս մօտ ծանօթութիւն է կապած լինում վարդապետը: Մարկոս աղայի տան և առաջնորդարանի մէջ լինում է մի դռնակ: Այս դռնով մի օր Ներսէսն իբրև թէ գնում մտնում է բաղանիս, որտեղ այդ ժամանակ լուացք է անում եղել աղախինը: Մարկոս աղան այդ նկատելով, գնում փակում է վերան դուռը և ինքը շտապով վազում է առաջնորդի մօտ, որ բերէ ցոյց տայ նորան: Բանալը, որ քննում է եղել Ներսէսի ամէն մի քայլափոխը, տեսնելով, որ Ներսէսն անժամանակ մտաւ Մարկոսի տունը և Մարկոսն էլ շտապով դուրս եկաւ և գնաց առաջնորդարան, կասկածում է և գնում իմաց է տալիս Սերովբէ վարդապետին, որ գալիս բաց է անում դուռը և ազատում Ներսէսին: Այդ օրուանից ահա՛, ասում են, ընկնում է սառնութիւն Ներսէսի և Սերովբէի մէջ, որովհետև դա իմացել էր նորա կեանքի գաղտնիքներից մէկը, և Սերովբէի և Մարկոս աղայի մէջ, որովհետև նա խանգարել էր նորա դարանակալութիւնը: Թէ որքան ճշմարտութիւն կար այս կանացահնար վիպասանաձև պատմութեան մէջ,—մենք

չենք կարող ասել, բայց որ մի բան պատահած պէտք է լինի և սառնութիւն ձգած նոցա յարաբերութեան մէջ հէնց այդ ժամանակները, այդ ստոյգ է: Տէր-Գաբրիէլը, գոնէ, որ այդ պատմութիւնը իւր հօրից պէտք է լսած լինի, հաւատում էր դորան և այդ համարում սկզբնական պատճառ Ներսէսի տածած ատելութեան դէպի ինքը և դէպի նորա հայրը:

Քանի որ Եփրեմը Նախիջևանումն էր, Սերովբէ վարդապետը տեսնելով դպրոցի անյոյս վիճակը և համոզուելով, որ այդպիսի հանգամանքներում ինքը չպէտք է կարողանայ շատ բան անել, խնդրում է նորան, որ տանէ իրան Հաշտարխան, բայց այս անգամ արդէն ինքն առաջնորդը խնդրում է, որ նա մնայ, մինչև որ ինքն երթայ Հաշտարխան և ամէն բան պատրաստէ: Սերովբէն տեսնում էր, որ Նախիջևանում խօսողը շատ է, քան թէ լսողը, իսկ հասկացողը ևս աւելի քիչ: Թէև այն չորս այցելուները սիրտ էին տալիս նրան և լաւ համբաւ տարածում դպրոցի մասին, բայց նա չէր կարողանում հաշտուել: Քերականութիւն սովորելու համար պատրաստի աշակերտներ չկային. 300 աշակերտներից, որոնք հաւաքուած էին մի դահլիճի մէջ, կէսից աւելի գիրք չունէին: Ով պէտք է նոր միայն այբուբենը սովորէր, նա բերում էր մի մեծ Նարեկ, որի վերայ վարժապետը պիտի նորան գրերը ճանաչեցնէր, միւսն աւարտում էր գրերը և գիրքը փոխառում էր ընկերին և ինքն առանց գրքի էր մնում, մինչև որ Երուսաղէմ գնացողները վերադառնային և Պօլսից գրքեր բերէին: Գրքերը բերում էին, բայց ոչ քերական և ոչ քերականութիւն: Բերում էին Ագաթանգեղոս, Պղնձի քաղաքի պատմութիւն, Էֆիմերաէ, Տօնացոյց, ոմանք ութ կանոն Սաղմոս, ոմանք էլ Ժամագիրք: Ագաթանգեղոսի վերայ մէկը տառերի հեգելն էր սովորում, միւսը ըրբավարժութիւն Էֆիմէրաէի վերայ: Երեխաները մինչև իրանց հասակի 11 տարին այսպէս ժամանակ էին կորցնում, յետոյ ծնողներն առնում, տալիս էին իրանց որդոցը վաճառականների մօտ. Նոցա ստացած ուսումը հէնց այն էր լինում, ինչ որ նոքա լսել և ուսել էին ուսուցչի արած պատմութիւնից: Յուսահատութեան մէջ էր Սերովբէն:

1808-ին գալիս հասնում է Նախիջևան և Սերոբէի ընտանիքը—կինը՝ Մարիամ, որդիքը՝ Գէորգ, Գաբրիէլ և Պետրոս և

զոքանչը՝ Թամար, որ իւր գալու քառասներորդ օրը մեռնում է և թաղւում Համբարձման եկեղեցու սրահի գերեզմանատանը: Վեց տարեկան Գաբրիէլը մեծանում է Նախիջևանի վերյիշեալ խաւար կեանքի խաւար մթնոլորտի մէջ, որտեղ ոչ հրադ էր երևում, ոչ լուսատու աստղ: Նորա հայրական տունը միակ օվազիսն է լինում մեծ անապատի մէջ, որտեղ նորա մանկական հոգին զովանում է, միտքը պարարւում. Նորա հայրը լինում է նորա համար միակ լուսատու աստղը, որի ճառագայթներով դեռ այդ վաղ հասակից առաջնորդւում է նա և նախապատրաստւում ապագայ տառապալից կեանքի ու գործունէութեան համար: 1808 թուի Նոյեմբերի 9-ին մեռնում է Դանիէլը և ընտրւում է Եփրեմը, որ 1807-ին, Ներսէսի մեկնելուց յետոյ, ինքն էլ գնացել էր Հաշտարխան: Նա այնտեղ տեսնելով, որ Աղաբաբեան դպրոցը բոլորովին պատրաստ է, 1809 թուի Սեպտեմբերին նորից գալիս է Նախիջևան, որտեղ և կնքահայր է լինում Սերովբէի նորածին աղջկան, անունը դնելով Կատարինէ և ինքն անձամբ շքեղ հանդիսով բերելով եկեղեցուց տուն: Հէնց այդ ժամանակն էլ նա պախարակելով Նախիջևանցւոց անհոգութիւնը և անփութութիւնը դէպի իրեանց որդիների ուսման գործը և դէպի իւրեանց ուսումնարանը, առաջարկում է Սերոբէին տեղափոխուել Հաշտարխան և ստանձնել Աղաբաբեան վարժարանի Հայոց լեզուի վարժապետութեան պաշտօնը, իսկ ինքը իբրև ընտրեալ կաթողիկոս գնում է Պետերբուրգ կայսեր տեսութեան: Երբ որ նա Պետերբուրգից վերադառնում է Հաշտարխան, արդէն գտնում է Սերովբէին պաշտօնի մէջ Աղաբաբեան դպրոցում. նա Ս. Էջմիածին մեկնելուց առաջ, երբ վերջին պատարագն էր մատուցանում Պօղոս-Պետրոս եկեղեցում և պիտի վերջին հրաժեշտը մատուցանէր Հաշտարխանցւոց, քարոզ է խօսում և կանչելով առեան աղա Նիկողայոս Աղաբաբեանին, ասում է, թէ ինքը նորա խնդիրքով քանդել է Սերովբէի տունը Թիֆլիսում և բերել Ռուսաստան. ճանապարհին նա ընկել է Նախիջևանցւոց ձեռքը, և այնտեղ Նախիջևանում կրկին տուն շինել: Երբ նորա վարժարանը պատրաստուել է, այս տարի յատկապէս ինքը գնացել է Նախիջևան և կրկին քանդել նորա տունը և բերել Հաշտարխան, և ահա այդ կարճ ժամանակամիջոցում ամենքն էլ վայելում են դորա երե-

խայրիքը այնպիսի կարգերով ու ժամասացութեամբ, որ Հաշտարխանը երբեք տեսած չէ: Սերովբէն միայն երգեցողութեան վարժապետ չէ, նա Պռոմեթէոսի պէս գնացել է և Արքայութիւնից Հայոց լեզուի լոյսը գողացել բերել, որ ազգի սան հրադը վառէ: Նորա պաշտպանը ինքն է, Ս. Էջմիածինը, յաջորդ կաթողիկոսները և առաջնորդները: Մինչև նորա դպրոցից մէկը ուսման վկայական չունենայ, առաջնորդը չհամարձակուի նորա գլխին ձեռք դնելու, և թող նզովեալ լինի այն իշխանը, որ կ'կամենայ տգէտ քահանայ ձեռնադրել տալ: «Ահա՛, վերջացնում է նա իւր խօսքը, ես իմ հայրապետական իշխանութեամբս հրապարակով տալիս եմ նրան ուսած քահանաներին միայն կրելիք թասակը և գաւազանը եկեղեցուց դուրս բռնելու ձեռքին և իմ մատի մատանին»: Եւ հանում է մատանին մատից և դնում է Սերովբէի մատը, ծոցից թաւշեայ թասակը և հագցնում նորա գլուխը և բերել տալով գաւազանը, տալիս նորա ձեռքը, Սերովբէի, որ այդ պատարագին դպրապետութեան պաշտօն էր կատարում [5]:

Առաջնորդ Եփրեմի տեղ 1811-ին ընտրւում է Յովհաննէս Գառնակերեանը կամ Յակոբեանը: Այդ Յովհաննէսը մի տգէտ, բայց հեզահոգի մարդ էր, նորա ընտրութիւնը եղել էր Ներսէսի հաճութեամբ, որ կարողանայ նորա միջոցով իւր ձեռքին պահել Ռուսաստանի կարևոր թեմը: Նոր առաջնորդը, որ «ճոխարան» անունն էր ստացել, որովհետև Եփրեմի ձեռնադրութեան օրը մի լաւ քարոզ էր խօսել, որ շարադրել էր Ներսէսը, հրահանգ էր ստացել կաթողիկոսից, որ Հաշտարխանում ամեն բանում ղեկավարուի Սերովբէ վարժապետի խորհուրդներով, բայց նա տեղ ժամանելով, ընկնում է Ս. Աստուածածնի եկեղեցու երեցփոխ մոմչի Սարգիս կամ Սալլահ Սարգիս կոչուած Բենդերցեանի ազդեցութեան տակ, և ոչ թէ միայն չի լսում Սերովբէի խորհուրդներին, այլև շատ բանում և շատ անգամ խապառ հակառակ է գնում նորան: Երբ Յովհաննէսը առաջին անգամ գալիս է Նախիջևան, քաղաքացիք ընդառաջ չեն գնում նորան, և նա ստիպուած է լինում ուղղակի գնալ ս. Խաչ վանքը, յետոյ միայն նոքա բերում են նորան Խաչերես Ալաջալեանի տունը, որ վարձել էին նորա համար: Նա աղանելի ցանկութեամբ անուս քահանաներ է ձեռնադրում և ամե-

նին հանոյ լինելու համար, յաճախ այցելութիւն է անում ագաներին, ներկայ է գտնւում նոցա սարքած խնջոյքներին և սովորութիւն է արած լինում խաչակնքելու գինու բաժակների վերայ. նորա միակ լաւ գործը Նախիջևանում լինում է այն, որ հաշուեմատեաններ է մտցնում եկեղեցիների մէջ, որոնք սակայն մնում են անգործածելի: Նախիջևանցիք նորա մասին ասում են եղել. «Սուրբազանը աղէկ մարդ է. որուն համար կը խնդրենք, չէ չի ասիր, կ'ձեռնադրէ, գրել-կարդալ գիտէ-չիտէ, չի հարցունուր. ինքնալ մեզի պէտնակ սայէն կըքալէ, մեզի ալ անկէ աղէկ վարդապետ ինչերո՞ւս է պէտք. Աստուած իրեն կեանք տայ»:

Հաշտարխանում էլ առաջնորդն առաջինն է լինում, որ խանգարում է կաթուղիկոսի տուած պատուէրը աղէտ քահանաներ ձեռնադրելու վերաբերմամբ. նա Բենդերցիեանի ցանկութեամբ քահանայ է ձեռնադրում նորա եղբօրորդուն Յովհաննէսին և կնոջ ազգական Սարգսին, որոնցից առաջինը կարող էր լինել լաւ ուսուցապետ, իսկ երկրորդը զուրկ էր թէ խելքից և թէ պատկառանքից: Ժողովրդի մէջ շփոթ է ընկնում, և Բենդերցիեանն ու նորա սիրելի Տէր-Սարգիս քահանայ Բերեժանեանը հասկացնում են առաջնորդին, թէ այդ ամենի պատճառն ու ժողովրդին գրգռողը Սերովբէն է, իսկ ժողովրդի մէջ տարածում են, թէ Սերովբէն է կաշառքով սուտ վկայական տուել, թէ Սարգիսն ու Յովհաննէսն ուսել են դպրոցում, այն ինչ դոքա երկուսն էլ ազա Նիկողայոս Աղաբաբեանի հրամանով դուրս էին արուած դպրոցից, որովհետև «բրուա» բառը հոլովելիս, ազայի առաջ ծիծաղելի հնչիւններ էին հանել բերաններից: Այս բոլոր կատարուածի համբաւը հասնում է կաթուղիկոսի ականջը. նա մի նամակ է գրում այդ առթիւ Սերովբէին և դնում Յովհաննէսին գրած թղթի մէջ բաց, որ նա էլ կարդայ: Այդ բաց նամակի մէջ Վեհափառը գրել էր Սերովբէին, թէ «Ոչ բարւոք դաստիարակես», այսինքն լաւ չես խրատում առաջնորդին: Բայց այս էլ խրատ չի լինում առաջնորդին. նա 1814 թուին գնում է Մոսկով և Լազարեան Յովակիմ ազայի խնդիրքով քահանայ է ձեռնադրում Հաշտարխանցի բաշմաղչի Մանուկի որդուն Գէորգ Ալամդարեանին, անունը փոխելով Յարութիւն, որին Եփրեմը դեռ իւր առաջնորդութեան օրով հրամայել էր հոգևոր կոչումից հանել [6]:

Գլուխ Գ.

Սերովբէ վարժապետի և Յովհաննէս արքազանի մէջ խռովութիւն ձգելու նպատակով Բենդերցիեանը և Բերեժանեանը ասում են առաջնորդին, թէ Աղաբաբեան դպրոցում ռուսերէն են սովորեցնում, որ յետոյ աշակերտներին ռուսաց դաւանութեան դարձնեն և իւր առաջնորդի գաղտնիքները հաղորդեն Ռուսաց իշխանաւորներին, և Սերովբէն էլ համամիտ է Աղաբաբեանի այդ խորհրդին: Այս ու այս տեսակ խօսքերից գրգռուելով, Յովհաննէսը քարոզ է խօսում եկեղեցում և զգուշացնում Հայերին, որ նոքա իւրեանց որդոցը չտան Աղաբաբեան դպրոցը, որովհետև այն մի մանկական «կաղարմայ» է և այնտեղից դուրս եկողները, զինուոր պիտի երթան: Ծնողներն էլ վախենում և դժուարութեամբ են տալիս իւրեանց որդոցը դպրոց մինչև Սերովբէն փարատում է այդ կասկածները, իւր որդուն Գաբրիէլին տալով դպրոց աշակերտութեան: Գաբրիէլը դեռ նոր էր մտել իւր 8 ամեայ հասակը, որ ծնողների հետ տեղափոխուեց Նախիջևանից Հաշտարխան. նա դեռ շատ մանուկ հասակից սկսել էր սովորել իւր հօր մօտ, այնպէս որ իւր 10—11 տարեկան հասակում, երբ նա մտնում է դպրոց, արդէն իւր հասակի համար բաւականին մեծ գիտութեան տէր է լինում: Լաւ պատրաստուած լինելով, բնականապէս դպրոցում էլ շատ արագ առաջ է գնում, մի 3—4 տարուայ ընթացքում ձեռք բերելով ժամանակի կրթութեան և գիտութեան համեմատութեամբ մեծ հմտութիւն, նամանաւանդ Հայոց գրաբառ լեզուի գիտութեան և Ս. Գրքի ծանօթութեան մէջ: Դժբախտաբար նա երկար չի մնում դպրոցում և դուրս է գալիս չաւարտած, որովհետև նուաղ է լինում և շնչարգելութեան տկարութիւն է ունենում, որ արգելում է նորա դպրոցական պարապմունքը. նա մնում է դպրոցում միայն մինչև 1816 թիւը:

Այնուհետև պատանի Գաբրիէլը մի կողմից շարունակում

է տանը հօր ղեկավարութեամբ և ինքնուսութեամբ իւր ուսման թերին լրացնել, միւս կողմից էլ սկսում է յաճախել Պօղոս-Պետրոս եկեղեցին, որ որմնակից էր Աղաբաբեան դպրոցին և իրանց բնակարանին։ Սարգիս Բենգերցիեանը լսելով, որ Գաբրիէլը յաճախում է Պօղոս-Պետրոսը, ապսպրում է Սերովբէ վարժապետին, որ նա իւր որդի Գաբրիէլին պատուիրէ առաջիկայ կիւրակնամտին գալ Ս. Աւագ եկեղեցին երէցփոխանի խուցը։ Նշանակած օրը և ժամին Գաբրիէլը գնում է, և Սարգիս աղան տալիս է նորան թարգմանելու մի ռուսերէն թուղթ և մի հայերէն նամակ գրելու Ներսէսին։ Նա կատարում է և կիւրակէ պատարագին իւր պատրաստած նամակն էլ, թարգմանութիւնն էլ յանձնում է երէցփոխին, որ ժամից յետոյ տանում է նորան Յովհաննէս առաջնորդի մօտ, ներկայացնում է նորան Գաբրիէլին և տալիս է թղթերը։ Սրբազանը հրամայում է Գաբրիէլին բարձրաձայն կարդալ թուղթը և նամակը, բայց նա իւր շնչարգելութեան պատճառով չի կարողանում անսայթաք կարդալ։ Եպիսկոպոսը թուրքերէն ասում է Սարգսին, թէ, երևի, հայրն է գրել, և պատասխան է ստանում նորանից, թէ եթէ հայերէնը հայրն է գրել, ապա ո՞վ է գրել ռուսերէնը, քանի որ Սերովբէ վարժապետը ռուսերէն մի բառ էլ չգիտէ։ Այն ժամանակը տալիս են նորան նոյն նամակի պատասխանը աւելի պարզ գրելու, որ փորձեն, և նա իսկոյն կատարում է, «Ասլանդան ասլան դողար», ասում են նոքա, և սրբազանը բաշխում է նորան 25 ռուբլի թղթադրամ, որ Գաբրիէլը տանում, տալիս է հօրը։ Դորանից յետոյ Սրբազանը հրամայում է Գաբրիէլին յաճախել Ս. Աստուածածին աւագ եկեղեցին, և նա դառնում է տիրացու Գաբրիէլ։ Դորա վերայ դեռ երեք ամիս չանցած, 1817 թուի փետրուարի 13-ին, Տեառնընդառաջի նրագալուցին յանկարծ, երբ «Այսօր տնօրինական» շարականն ասելով, դուրս են գալիս հանդէս, Սրբազանը հրամայում է և բերում են պատարագի եկեղեցական վերարկու և հագցնում են տիրացու Գաբրիէլին, և, առանց առաջին երկու ստորադաս աստիճանն անցած տալու, Սրբազանը իւր ձեռքով տալիս է նորան Ուրար։

Նոյն 1817 թուի Յուլիսին բացւում է Հոգևոր վարժարանը Յովսէփ Ասկարխանեանցի տուած փողով և հոգևոր ար-

դիւնքով, և 15 տարեկան սարկաւագ Գաբրիէլը կարգւում է վարժապետ 400 ռուբլի ռոճկով, իսկ 1820 թուին նա նշանակւում է Կոնսիստորիայի ատենադպիր այլ ևս 400 ռուբլի ռոճկով և առաջնորդի անձնական քարտուղար։ Սերովբէ վարժապետն էլ Աղաբաբեան դպրոցից ստանում էր 1000 ռուբլի։ Դոյն 1820 թուին Ներսէսը նամակ է գրում Սերովբէին, որ նա իւր որդուն ուղարկէ Թիֆլիս նորաբաց Ներսիսեան դպրոցի վարժապետութեան համար, մի նամակ էլ Յովհաննէս սրբազանին, որ նա յորդորէ կատարել այդ առաջարկութիւնը։ Սրբազանը բարկանում է, որ կամենում են քանդել իւր շինած վարժարանը, և հրաւիրում է առաջաւոր մարդկանց խորհրդի։ Որոշւում է, որ Սերովբէն գրէ, թէ ժողովուրդը չի ուզում թողնել Գաբրիէլին, որովհետև նա նոցա ևս շատ հարկաւոր է։ Այդ օրուանից Ներսէսի ատելութիւնը դէպի Սերովբէ վարժապետը, որ սկսուել էր Նախիջևանից, աւելի ևս սաստկանում է և անցնում է և նորա որդի Գաբրիէլի վերայ։ Հէնց դոյն իսկ օրերն էլ գալիս է Հաշտարխան յայտնի Գէորգ աղա Երեմեան Արծրունին, որ երբ իմանում է Գաբրիէլի Ներսիսեան դպրոցի վարժապետութիւնից հրաժարուելը, շատ մեղադրում է նորան։ Գաբրիէլը մատնացոյց է անում Յարութիւն Ալամդարեանի վերայ, որ Մոսկուայում էր, իբրև Թիֆլիս հրաւիրուելու ամենայարմար անձի վերայ, որ և, ինչպէս յայտնի է, կատարւում է դորանից 8 տարի յետոյ։

1821 թուին Եփրեմ կաթուղիկոսից կոնդակ է գալիս, որ Սրբազանը Սերովբէ վարժապետին կարգէ Հոգևոր վարժարանի ռեկտոր։ Առաջնորդն իւր սիրելիների՝ Բենգերցիեանի և Բերեժանեանի խորհրդով պատասխանում է, թէ քանի որ Սերովբէն Աղաբաբեան դպրոցումն է, չի կարող միևնոյն ժամանակ և Հոգևոր վարժարանում ռեկտոր լինել։ Դորա վերայ կրկին կոնդակ է ստացւում, որ Սերովբէն թողնէ Աղաբաբեան դպրոցը և մտնի Հոգևոր վարժարանը և իւր 1000 ռուբլի ռոճիկը ստանայ եկեղեցական արդիւնքից։ Սերովբէ վարժապետն էլ հիմնուելով կոնդակի և Սրբազանի յորդորանքի վերայ, 1822 թուի Մայիսին թողնում է Աղաբաբեան դպրոցը և տեղափոխւում է Հոգևոր վարժարանի մօտ վարժապետի բնակութեան համար

շինուած տունը և այդ մասին ես ծանուցանում է կաթուղիկոսին։ Այդ ժամանակները կաթուղիկոսը գնում է Հաղբատ կամաւոր աքսոր Պարսից բռնակալութիւնից, և Յովհաննէս սրբազանը կրկնում և երեքկնում է իւր թղթերը նորան Սերովբէի մասին, բայց ոչ մի պատասխան չի ստանում։ Մի անորոշ պատասխան միայն գալիս է Ներսէսից, թէ որովհետև կաթուղիկոսը Ս. Էջմիածնում չէ, ուստի նորա անօրէնութիւնը ևս իրաւական զօրութիւն չունի։ Եւ այսպէս Սերովբէն մնում է առանց պաշտօնի և զրկւում իւր 1000 ռուբլի ռոճկից, և ամբողջ ընտանիքի հոգսը ծանրանում է Գաբրիէլի վերայ, որ պիտի կառավարուէր իւր 800 ռուբլի ռոճկով։ Յետոյ միայն իմացւում է, որ այդ բոլորն արել է Ներսէսը, որ Սերովբէ վարժապետն անգործ մնալով, կամ երթայ Թիֆլիս Ներսիսեան դպրոցը, կամ այդպէս պատժուի։

Սորանից յետոյ շուտով Գաբրիէլի դրութիւնն աւելի ևս դժուարանում է. նորա և Սրբազանի մէջ ընկնում է խռովութիւն, և նա չի ձեռնադրւում քահանայ, թէև արդէն հրաման էր ստացել պատրաստուելու և ամենին էլ այդ յայտնի էր։ Դորա պատճառը լինում է, նախ, Գաբրիէլի քրոջ ամուսնութիւնը, երկրորդ, իւր, Գաբրիէլի, ամուսնութիւնը։ Սրբազանն ուզում էր, որ Գաբրիէլի քոյրը, Կատարինէն, ամուսնանայ Բուլբեան Ղազարի հետ, որ հարուստ էր և ժառանգել էր Պուճոռ մականուանեալ Յովհաննէս Եւանգուլեանցի ճոխութիւնը իբրև նորա սանը, որովհետև ասում էր, թէ Կատարինէն իբրև Եփրեմ կաթուղիկոսի սան միևնոյն ժամանակ և բոլոր հոգևորականների դուստրն է։ Սակայն Գաբրիէլը տեսնելով, որ Ղազարը պատճառ բռնելով, թէ կտակը դեռ չի հաստատուած, որովհետև Եւանգուլեանի ազգականները վէճ էին բաց արել ժառանգութեան համար, և իւր նշանախօսութիւնը կարող է վնասել գործին, անդադար յետաձգում է և մի որոշ պատասխան չի տալիս, ընդունում է իւր քրոջ համար Աւագ Վարդապետեանի որդի Պօղոսի նշանախօսութիւնը, որ և շատ զայրացնում է Սրբազանին, որ չէր սպասել Ղազարին։ Նշանախօսութեան գիշերուայ առաւօտը դեռ նոր է լուսացած լինում, որ լուր է գալիս Ղազարից, թէ այժմ նա պատրաստ է նշան բերելու։

Գաբրիէլն իսկոյն գնում է առաջնորդարան և խորհուրդ է հարցնում Սրբազանից. նա էլ պատասխանում է, թէ թող նա ընդունէ Ղազարի նշանը, իսկ Վարդապետեանի նշանը իրեն բերէ, որ ինքը նորա տան քահանայի ձեռքով յետ ուղարկէ։ Պատկանեանները այդպէս էլ անում են։ Վարդապետեանը բողոքում է առաջնորդին և խոստանում է տալ Ս. Աթոռին 5000 ռուբլի, եթէ նա ստիպէ նշանը թողնելու և իրաւունք չտայ աղջիկը Ղազարի հետ նշանելու և պսակելու։ Յովհաննէս սրբազանն իսկոյն փոխւում է. նա ատեան կազմելով ու ինքն բազմեցրած խաչի ու աւետարանի առաջ նախագահ նստելով, կանչում է դատի Գաբրիէլին, կամենալով ստիպել նորան պահելու Վարդապետեանի նշանը և յետ տալու Ղազարինը։ Վարդապետեանի նշան բերող քահանան կանգնում է և պատմում է եղելութիւնը, թէ ինքն արդէն պահպանիչ է ասել այդ նշանի վերայ, ուրեմն և պէտք է պահպանուի «պահպանիչի» պատիւը։ Գաբրիէլը պատասխանում է, թէ այդ պահպանիչը ոչ նոցա և ոչ իւր գրպանն է մտել, ոչ էլ իւղի պէս գլուխն է քսուել։ «Դու պահպանիչն ասել ես այս մատանու վերայ. ահա՛ քըդ ցեզ»։ Ամենքը պապանձւում են։ Սրբազանը հրամայում է, բայց Գաբրիէլը չի լսում, ասելով, թէ քոյրը չի ուզում հարս գնալ Վարդապետենց տունը և թէ նշանախօսութիւնն եղել է խարդախութեամբ, և այլն և այլն։ Առաջնորդն էլ հրաման չի տալիս նշանն օրհնելու, մինչև որ լուրը տարածւում է բոլոր քաղաքի մէջ և նահանգապետ Օսիպովը, փոխնահանգապետ Սմիրնովը, ռուս վիճակաւոր Յօնանը և ծովակալ Օրլովսկին միջնորդ են լինում և մինչև իսկ սպառնում են, թէ կ՚գրեն Նախարարին ներքին գործոց։ Դոքա միջնորդում ու սպառնում են, որովհետև ճանաչել ու շատ սիրել էին Գաբրիէլին դեռ 1822-ից, երբ նա մեծ անձնուիրութիւն էր ցոյց տուել համաճարակ հնգախտի ժամանակ։ Մի շաբաթից նշանն օրհնւում է և Կատարինէն հարսնանում է Ղազարին։

Հազիւ այս դէպքից յետոյ հաշտուած են լինում առաջնորդն ու Գաբրիէլը, երբ պատահում է մի ուրիշ դէպք, որ Պատկանեանենց Հաշտարխանից հեռանալը դարձնում է միայն ժամանակի խնդիր։ Մի օր, 1825 թուի Յուլիսին, առաջնորդը

գալիս է Սերովբէ վարժապետի տունը և յայտնում է, թէ ինքն եկել է ոչ հօր ու որդու, այլ մօր մօտ՝ «մի րուբ քրխառնէի չայ խմելու» և այդտեղ յայտնում է, թէ ժամանակն հասել է Գաբրիէլին ամուսնացնելու, որովհետև ինքը միտք ունի աշնանը քահանայ ձեռնադրելու նորան Մոսկովից և Պետերբուրգից գալիք տիրացուների և Տէր-Սարգիս Բերեժանեանի եղբայր տիրացու Մարտիրոսի հետ։ Նա առաջարկում է երկու հարսնացու՝ երեցփոխան Սարգիս Բենդերցիեանի թոռը, կամ Տէր-Սարգիս Բերեժանեանի դուստրը։ Նոքա պատասխանում են, թէ դոքա չեն յօժարիլ, քանի որ կան այնպիսի փեսացուներ, ինչպէս Ռուբէնն է իւր հարստութեամբ և Խօջամալեանի որդին, իսկ եթէ տանը լինին, շատ շնորհակալ կլինին։ Սրբազանը խոստանում է իւր աջակցութիւնը և գնում է։ Առաջիկայ կիրակի օրը նա եկեղեցում մի համառօտ ծանուցումն է անում և հրապարակով հագցնում է Գաբրիէլին մի նուրբ լօզիկ, թէ այն նշան է և առհաւատչեայ, որ երբ ձեռնադրէ նորան քահանայ առաջիկայ ձեռնադրութեան ժամանակ նա ունենայ իրաւունք խաչէ փիլոն ծածկելու և քահանայութեան հետ աւագութիւն ևս ստանալու և նոյնը գրում է վկայականի մէջ և կնքով դրոշմելով, տալիս է Գաբրիէլին, որից Բենդերցիեանն այնքան նեղանում է, որ երեցփոխութեան պաշտօնից հրաժարական է տալիս, որ սակայն չի ընդունուում առաջնորդից։

Նորընծայացուները նշանակուած ժամանակը գալիս են և տիրացու Գաբրիէլը քահանայութիւնից յետ չմնալու համար, խնամախօսում է վերոյիշեալների աղջիկներին, բայց մերժումն է ստանում։ Այն ժամանակ նա ընտրում է իրան հարսնացու աղա Մելքոն Սունդուկեանցի աղջկան, իւր հաւանած Եղիսաբէթին, որին նա սովորութիւն է անում նորա գեղեցկութեան համար «ծաղիկ» կոչելու, հակառակ առաջնորդի կամքին, որ կամենում էր, որ նա անպատճառ առնէ Տէր-Սարգսի աղջիկը։ 1826 թուի փետրուարին առաջնորդը չորս նորընծայացուներին սարկաւագութիւն է տալիս, թողնելով քահանայական ձեռնադրութեան կատարելը զատկից յետոյ, բայց զատիկն անցնելուց յետոյ, երեքին ձեռնադրում է, իսկ չորրորդին, սարկաւագ Գաբրիէլին, ոչ, որով և, ի հարկէ, չափազանց վշտացնում է նորան։ Մէկ տարուց նա ունենում է մի որդի Յովհաննէս անունով և սկսում է մեծ նեղութիւն քաշել թէ նիւթական միջոցների սղութիւնից և թէ Առաջնորդից, որ բոլորովին փոխում է իւր յարաբերութիւնը դէպի նա։ Բարեկամները խորհուրդ են տալիս նորան թողնել հոգևորականութիւնը և աշխարհական վիճակ ընտրել, որ իմանում է առաջնորդը և ասում է նորան, թէ ինքն ահա պատրաստուում է գնալ Պետերբուրգ Նորայսակ Նիկօլայ Պաւլովիչի թագադրութիւնը շնորհաւորելու. եթէ նա յաջողեցնէ մինչև իւր գնալը Տէր-Սարգսի աղջկայ հարսնախօսութիւնը Խօջամալեանի որդի Դաւթի հետ, նա կը ձեռնադրէ նորան։ Սակայն թէև նա առաջնորդի այդ պատուէրը ևս կատարում է, բայց չի ձեռնադրուում քահանայ, որովհետև իբրև թէ Ներսէսից հրահանգ է ստացած լինում՝ Պատկանեանին սարկաւագ ձեռնադրելու, բայց քահանայ—երբէք։

1827 թուին Յովհաննէս սրբազանը գնում է Պետերբուրգ և կառք նստելու ժամանակ ասում է Գաբրիէլին, թէ վերադարձին կ'ձեռնադրէ նորան քահանայ։ Նա պատասխանում է, թէ չի կարծում, որ միւս անգամ այլ ևս կը տեսնուի նորա հետ, որովհետև միտք չունի Հաշտարխանում մնալու։ Այս ասում է նա, որովհետև 1826 թուի վերջերին նա արդէն լուր էր ստացել, թէ Նախիջևանում քաղաքագլուխ է ընտրուել Խաչատուր աղա Խալմաջեանը և Հաշտարխանում եղած Նախիջևանցիները համոզում էին նորան մի շնորհաւորական նամակ գրելու քաղաքագլխին, յոյս տալով, որ դորա հետևանքը այն կը լինի, որ հրաւէր կը գայ նորան երթալու Նախիջևան վարժապետութեան։ Նա գրում է, և նորա հայրը Սերովբէն մի բազմաստորագիր հրաւէր է ստանում՝ երթալու Նախիջևան իւր Գաբրիէլ ու Պետրոս որդիների հետ և ստանձնելու քաղաքի մանուկների դաստիարակութեան գործը, թէև Սերովբէն իւր տկարութեան պատճառով աւելի հակուած է լինում գնալու Պօլիս կամ Զմիւռնիա և կամ թէ Քիշինև, ուր հրաւիրում էր նորան վարժապետութեան Գրիգոր Զաքարեան արքեպիսկոպոսը։ Եւ այսպէս Օգոստոսի վերջին դուրս գալով Հաշտարխանից, Սեպտեմբերի սկզբին նոքա հասնում են Նախիջևան և Խաչի վերացման տօնին Գաբրիէլը և Պետրոսը մտնում են վարժա-

պետութեան պաշտօնի մէջ, իսկ Նոյեմբերին գրում է նոր վարժարանի հիմքը, որ շինւում է «Աղքատաց եղբայր» կոչուած Տէր-Մկրտչեան Էմմանուէլի փողով, որի կտակը գտել էր Խաչատուր աղա Խոմաչեանը և հասարակութեան հաճութեամբ յատկացրել մանուկների դաստիարակութեան գործին։

Գլուխ Դ.

Նախիջևանում, Սերովբէ վարժապետի Հաշտարխան փոխադրուելուց յետոյ, նորա տեղը խօնախում տուել էին Իսմայիլցի տիրացու Յովակիմին, որ 72-ից էր. նա չունենալով իւր ուսուցիչ Թադէոս Քիթափիւտան վարդապետի գիտութիւնը, ժառանգել էր նորա գինեմոլութիւնը։ Երբ նա իւր այդ և դորա նման ուրիշ լաւ յատկութիւնները սկսել էր գործ դնել, Նախիջևանցիք հալածել էին նորան. նա գնացել էր Քիշինև Գրիգոր Զաքարեան եպիսկոպոսի մօտ, որ հովւում էր Քիշինևը, Օրհէյը, Խոտինը, Աքքիրմանը և Բեսսարաբիոյ միւս հայաբնակ տեղերը։ Այդ Գրիգոր եպիսկոպոսը երբ հաշտուել էր Յովհաննէս սրբազանի հետ, իւր մի նամակում գրել էր նորան այդ Յովակիմի մասին, թէ Յովակիմն եթէ աշխարհագիր լինէր, կըգրէր, թէ Քիշինևը ուրիշ բերք չունի, բացի գինուց, և թէ օրն ունի երկու ժամ, իսկ գիշերը—22։ Խօնախի մանկավարժութիւնը Յովակիմից յետոյ յանձնուել էր Բաղդասար Տէվէքչեանին և տիրացու Կարապետ Խալփախչեանին, որ, ինչպէս ասել ենք, Պատկանեանցի յառաջադէմ աշակերտներից էին։ Յետոյ երբ Տէվէքչեանը թողել էր ուսուցչութեան ասպարէզը և առևտրական էր դարձել, դպրոցը յանձնել էին Միքայէլ Մելքոնեանին, Պատկանեանցի միւս աշակերտին, իսկ երգեցողութիւնը մնացել էր տիրացու Կարապետի ձեռքին։

Գաբրիէլն և Պետրոս ստանձնելով խօնախի վարժապետութեան գործը, ընդունում են Նախիջևանում եղած վարժապետներից իրանց ընկեր Ամասիացի Յովակիմ վարժապետին. Նոքա կամենում էին ընդունել և Մկրտիչ Եկանեանին նորա գեղեցիկ ձեռագրի համար, բայց Խաչատուր աղա Խոմաչեանը և դորան քաղաքագլուխ ընտրել տուող Գէորգ աղա Օղաբաշեանը չէին

յօժարում։ Պատկանեանցները ստիպուած են լինում համակերպելու նոցա ցանկութիւններին, որովհետև շատ նեղ նիւթական վիճակում էին. Գաբրիէլը արդէն կտրել էր յոյսը քահանայ ձեռնադրուելուց, որովհետև նա դեռ Նախիջևան չէր հասել, որ լուր էր առել, թէ Զաքարեան Գրիգոր եպիսկոպոսը, որի վիճակումն էր և Նախիջևանը, վախճանել է Տրասպլունից ջերմուկներում, ուր գնացել էր նա բժշկուելու, և նորա վիճակը կայսեր հրամանով նորից միացուել էր Հաշտարխանի վիճակին և յանձնուել էր Յովհաննէս սրբազանին։ Այդ ժամանակները լուսաւորութեան մի փոքր կայծ էր երևում Նախիջևանում, որովհետև սկսել էին Լազարեան ճեմարանից աշակերտներ երևիլ քաղաքի մէջ։ Այդպիսիների թւից էր, ի միջի այլոց, «Իւ Եղիայի որդի» Աստուածատուր Բիբիկեանը, որ ձեռնարկել էր եւրոպական նիստուկաց, կաքաւ և քաղաքավարութեան ձևեր սովորեցնել, որին շատ նախանձախնդիր էին ազդեցիկ Մըկըր աղա Պօպովի տունը, նախկին քաղաքագլուխ Վարդերես Հալաչեանի ընտանիքը և հարուստ Ղազարոս աղա Լազարեանի ազգատոհմը։

Դպրոցի աշակերտների թիւը շուտով հասնում է 300-ի և դոցանից 100-ը անմիջապէս սկսում են քերականութիւն սովորել։ Գաբրիէլը մի մեծ երկրագունդ և միևնոյն չափով մի երկրագունդ է պատրաստում փայտից, նոցա հորիզոնի և հասարակածի պղնձի գօտիները շինել տալով տեղացի զինագործ դարբիններին և նուրբ մասերը շինել ու փորագրել տալով ոսկերիչներին։ Միջօրէական գծերը չափելու և նշանակելու ժամանակ օգնում են նորան այն աշակերտները, որոնք վարժուել էին վայելչագրութեան արուեստի մէջ Եկանեանի մօտ, ինչպէս Ստեփաննոս Խաչատրեան և Ստեփաննոս Յովհաննիսեան Խոմաչեանները։ Դոցանից առաջինն այնքան յառաջադիմում է, որ շարադրում է և պատկերներով զարդարում «Հայոց պատմութիւն Հայկից մինչև Դաւիթ-Բէկ», իսկ երկրորդը գրում է «Յովսէփ Գեղեցիկ» բանաստեղծութիւնը Կեսների «Մահն Աբէլի» նմանողութեամբ։ Շատերը տեսնելով աշակերտների յառաջադիմութիւնն, ուրախանում են և գովում, շատերն էլ, ինչպէս Մըկըր աղան, որ պաշտպան էր վայելչագրութեան և կաքաւին,

հակառակ էին Գաբրիէլին և Պետրոսին, որ աւելի ուշադրութիւն էին դարձնում գիտութեան և հայոց լեզուի վերայ։ Մրկըր այան ժողովրդի մէջ քարոզում ու խօսում էր ոչ միայն վարժարան շինելու դէմ, այլև հայոց լեզուի դէմ. նա առաջինն աւելորդ էր համարում, իսկ երկրորդը միանգամայն անպէտք։ «Նախիջևանէն էլլիս, Զալթըրէն անցնիս, տահա անդին հայնակ գիտցող չը կայ, խաղախնակ պիտի կալաչի անիս, ասում էր նա. քերականութիւն ինչերո՞ւս պէտքն է, մեզի թող խաղախնակ սովրեցնու»։

Եւ այդ Մրկըր ազայի պէս մտածողների թիւը խիստ շատ էր. Գաբրիէլին հրաւիրող 85 հոգու մէջ հազիւ 15 հոգի գտնուէին, որ սրանց կամենային վարժարանի շինութիւնը և հայոց լեզուի ուսումը. այնքան բազմամարդ հայ քաղաքի մէջ հազիւ թէ 200 հոգի լինէին, որ հասկանային ուսման օգուտը, և այդ 200 հոգուց 175-ը ուզում էին, որ իրանց որդիները գրել-կարդալ սովորեն ռուսերէն, իսկ հայերէն սովորեցնելու ցանկութիւն ունեցող կողմնակից 20 հոգի չէր գտնուիլ։ Ծնողները այնքան տգէտ էին, որ իրանց անասունների նախիր գնալ-գալու վերայ աւելի հոգողութիւն էին ունենում, քան իրանց որդիների դպրոց կանոնաւոր յաճախելու։ Գաբրիէլն արդէն 10 տարի էր, որ վարժապետութիւն էր անում հայոց դպրոցում և լաւ ուսումնասիրել էր գաղթական Հայերի բնաւորութիւնը. նա պահանջում էր, որ աշակերտները կանուխ և ամէն օր գան դպրոց և նոցա քաշելու, բերելու նպատակով զանազան միջոցներ էր գործ դնում, գլխաւորապէս աշակերտների մէջ հետաքրքրութիւն և հարցասիրութիւն առաջ բերելու միջոցներ։ Մատիտի և գրչի գործածութիւնը մտել էր Եկանեանի ժամանակ. նախկին վարժապետները Պոլսից բերած խէժով զանգուած չոր մելան—«միւրէքէպ»-էին գործածում։ Երբ Գաբրիէլն առաջին անգամ «թանաք» է ասում, աշակերտները «թէնէքէ»—թիթեղ-են հասկանում. «մատիտ» բառը դժուարութեամբ են սովորում, որովհետև «խուրշինէ խալէմ» կամ «քարանդաշ» էին ասում։ Ժամանում է 1828 թիւը և քերականութիւն սովորողների թիւը հասնում է 175-ի, և դասարանը նեղ և նստարանները պակաս են գալիս, այնպէս որ շատերը կանգնած էին

մնում և չէին ուզում յետ մնալ ընկերներից։ Տիրացու Պետրոսը Աստուածաշնչից 10 տեսարանով թատերախաղի նման մի բան է պատրաստում, որ խաղում են աշակերտները։ Բացի հայ լեզուից, կրօնից ու թուաբանութիւնից, սովորում էին և Աշխարհագրութիւն և հայոց պատմութիւն, բայց ոչ որպէս ուսմունք, այլ իբրև զբօսանք ու զուարճութիւն։ Առարկաներն անցնում էին պարզ աշխարհաբառով, բայց աշակերտները շուտով այնքան ընտելանում են գրաբառին, որ պահանջում են, որ գրաբառ անցնեն Ս. Գիրքը։ Երկու դասագիրք են լինում միայն՝ մին լատիներէնից թարգմանած՝ «Դու քրիստոնեա՞յ ես.—Այո՛, քրիստոնեայ եմ, շնորհօքն Աստուծոյ». երկրորդը՝ Ալամդարեանի ռուսերէնից թարգմանած «Հրահանգ հաւատոյ» գիրքը։

Նոր վարժարանը շինւում էր և ծածկուած չէր տակաւին, որ Օգոստոսի սկզբին գալիս է Նախիջևան Ներսէս արքեպիսկոպոսը, Վրաստանի հայոց առաջնորդը, որին կայսրը և կաթողիկոսը տուել էին «ծայրագոյն վարչապետ հոգևորական գործոց եկեղեցւոյն հայոց» անունը։ Սա արդէն ազատել էր Ս. էջմիածինը և Հայաստանի արևելեան մասը Պարսից ձեռքից, կազմակերպել էր հայրապետական գահի վարչութիւնը և աքսորական Եփրեմ կաթողիկոսին տարել, նստեցրել էր իւր գահի վերայ և 5 տարուց ի վեր գտնւում էր Վրաստանում և այժմ գնում էր կայսեր տեսութեան։ Նա մտնում է քաղաք այն դռնով, որտեղից 20 տարի առաջ դուրս էր եկել և մեծ պատւով ընդունւում է Ս. Լուսաւորիչ եկեղեցում։ Ո՞վ կը կարծէր, որ սա այն վարդապետն է, որին քաղաքագլուխ Հալաջեանը իւր բարկացած ժամանակ ամէն պատահած դէպքում ասում էր. «Շինարկս քիթարներդ խօլթուխդ կուտամ, կը ճամբիմ»։ Նա միտն է բերում Վարդերես Հալաջեանին, որ միակն էր, որ մնացել էր հներից, Պօղոս աղա Խալթրանեանին և միւսներին. նա ծանօթանում է քաղաքագլուխ Խաչատուր Խամաջեանի և Յարութիւն Խալիբեանի հետ, որոնք ընդառաջ էին գնացել նորան մինչև Դէլի Ծերանի ագարակը[7]). Նա, վերջապէս ճանաչում է Սէրովբէ վարժապետին և մտերմութեամբ ողջագուրում և համբուրում է նորա հետ։ Եկեղեցու մէջ Գաբրիէլը ճառ է ասում, յետոյ ինքն էլ քարոզ է խօսում, որ տևում է 2 ժամ, քարոզ, որի բնաբանը լինում է «Ալլահ ագ-

բար»—մեծ է Աստուած, և վերջացնում է, թէ ասենք ամենքեան. «Մեծ ես դու, Տէր, և առնես զսքանչելիս և դու միայն ես Աստուած»:

Եկեղեցուց նա գնում է քաղաքագլխի տունը: Ճանապարհին նա տեսնում է Մահտեսի Ազարբէկեանի տունը, որ գնել էր Խալիֆը, տեսնում է իւր վաղածանօթ խօնախը, որ Եփրեմ սրբազանի բնակարանն էր և որին կից բարձրանում էր նորաշէն վարժարանի շինութիւնը հէնց այն տեղը, որտեղ ինքը 20 տարի առաջ մի քանի ամիս կացել էր: «Այս ի՞նչ է, ի՞նչ էք արել իմ բնակարանը, հարցնում է նա.—«Այս այն նոր վարժարանն է, որ շինում ենք», պատասխանում են Խումաչեանն ու Խաթրանեանը, որոնք նստած են լինում նորա դիմաց-դէմ կառքում: Իսկոյն նա հրամայում է կառքը կանգնեցնել և իջնելով, շտապում է դէպի շինութիւնը. նորան հետևում են քաղաքի իշխանները և նորա ուղեկից իշխան Յովհաննէս Ամատունին և Բէժան Խատիսեանը. նա տախտակների վերայով բարձրանում, մտնում է շինութեան մէջ և ամեն տեղ շրջագայելով հասնում է ամենավերին մասերը և այն բարձրութիւնից մի հայեացք ձգելով քաղաքի վերայ, ասում է. «Այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ»: Այնուհետև նա իւր ուղեկիցների հետ իջնում է վար և ճարտարապետին մի բուռը ոսկի բաշխելուց յետոյ, նորից նստում է կառք և շարունակում է իւր ճանապարհը: Ճաշը լինում է արքայավայել. ներկայ են լինում քաղաքի բոլոր աչքի ընկնող աղաները, Սերովբէ վարժապետը, Գաբրիէլ սարկաւագը և միւսները: Լուսաւորչի աւագ քահանայ Տէր-Գաբրիէլ Տէր-Գաբրիէլեանը չի լինում, որովհետև նա գնացած է լինում այդ ժամանակ Նիժնի, ուր գնացել էր և Յովհաննէս սրբազանը՝ այնտեղի նորակառոյց եկեղեցին օծելու: Մինչև կէս գիշեր շատերին պահում է իւր մօտ և բարի խրատներ է տալիս, նամանաւանդ նորաշէն վարժարանի մասին: Միւս օրը նա այցելում է դպրոցը, աչքի է անցկացնում ամեն բան, նայում է աշակերտների տետրակները, ուշադրութիւն է դարձնում ձեռագրերի վերայ, հարցմունքներ է տալիս աշակերտներին, քննում, իմանում է նոցա գիտութեան չափը և ամեն բանից գոհ մնալով, իւր սրտագին շնորհակալութիւնն է յայտնում քաղաքագլխին, խոստանալով վերադարձին օրհնելու դպրոցի բացումը նոր շինութեան մէջ:

Երեք օր նա չի խօսում Գաբրիէլի հետ, թէև նա միշտ նորա աչքի առաջ է լինում. այնպէս որ մինչև անգամ զարմանում են Ամատունին և Խատիսեանը, բայց հանգամանքներին ծանօթ անձինք չեն զարմանում, որովհետև գիտէին, որ նա բարկացած է նորա վերայ: Չորրորդ օրը առաւօտեան արդէն բոլոր մեծամեծները հաւաքուած են լինում, երբ մտնում է դահլիճ Գաբրիէլը: Ներսէսը հարցնում է, թէ ո՞վ է այս տիրացուն և երբ իմանում է, թէ Պատկանեանցն է, ասում է. «Տիրացու Գաբրիէլը դո՞ւ ես. 7 տարի է, որ բարկացած եմ քո վերայ. ես կամեցայ քեզ տալ Ներսիսեան դպրոցի վարժապետութիւնը, դու չթողիր Հաշտարխանի վիճակը. այժմ ինչո՞ւ ես թողել, եկել և ինչպէս թողեց քեզ Յովհաննէս սրբազանը»: Սրբազանը գնաց մայրաքաղաքների կողմը, և ես տեղապահ ուղարկեցի և հրաման ստացայ, պատասխանում է նա: Այն ժամանակ նա կամենում է իմանալ, թէ նա ինչպէս է անցկացնում իւր ազատ ժամանակը, որովհետև գիտէր Հայոց հոգևորականների ծուլութիւնը. և երբ լսում է, թէ նա ունի պատրաստած մի քանի շարադրութիւններ, կամենում է տեսնել և կարդալ: Բերում են Գաբրիէլի բոլոր գրուածները—«խոստովանիմք և հաւատամք» դաւանութեան մեկնութիւնը, որ նա գրել էր Եփրեմ կաթողիկոսի հրամանով. մի աստուածաբանութեան թարգմանութիւն և ուրիշ բաներ: Նա առաջ նայում է մեկնութիւնը, յետոյ սկսում է կարդալ Աստուածաբանութիւնը, որ գրուած էր այն կարգով, ինչպէս Այբերտինը, որ տպուած էր Վենետիկում: Հարցնում է քաւարանի կամ օթևանաց վարդապետութեան, վերջին օծման, բաժակի ջրախառն կամ անապակ լինելու, հաղորդութեան հացի անխմոր կամ խմորուն անելու, Քրիստոսի մի կամ երկու բնութեան վերայ, Հոգւոյն Սրբոյ բղխման վերայ, և այլն, և տեսնելով, որ, ըստ ամենայնի, համապատասխանում է Հայաստանեայց եկեղեցու դաւանութեան, իւր գոհութիւնն է յայտնում. ասելով, թէ ինչ զովասանք որ ինքը լսել է նորա մասին, զուր չէ, ուստի և ներում է նորա մեղքը և պատուիրում է միշտ նամակագրութիւն ունենալ իւր հետ, ուր որ էլ նա լինի: Եւ հանում, ընծայում է նորան 200 ռուբլի թղթադրամ:

Այդ օրերը աշխարհ է գալիս Գաբրիէլի Մարիամ դուստրը,

և Ներսէս խոստանում է կնքահայր լինել նորան, ինչպէս մի ժամանակ կնքահայր էր եղել նորա քրոջը Կատարինէին Եփրեմը բայց այդ օրերի անձրևները և երեխայի հիւանդութիւնը արգելք են լինում։ Հէնց դոյն խոկ օրերն էլ մի գաղտնի նամակ է ստացւում, որից իմացւում է, թէ կայսրը գնացել է Բեսսարաբիա, և ինքն էլ պատրաստւում է գնալ այնտեղ, բայց յետոյ միտքը փոխում է և գնում է Մոսկովի ճանապարհով։ Վորոնեժում հասնում է նորա յետևից կայսերական հրովարտակը, որով պատուիրւում էր նորան երթալ Քիշինև և սպասել իւր գալստեան, որ Պասկևիչի տնօրինութեամբ էր։ Յովհաննէս սրբազանը միտք է ունենում տօնավաճառից Նախիջևան գալու, բայց լսելով Ներսէսի այնտեղ լինելու մասին, ուղղակի գնում է Հաշտարխան, որտեղից այլևս դուրս չի գալիս։ Տէր-Գաբրիէլ Տէր-Գաբրիէլեան քահանան էլ հասնում է Բահմուտ և սպասում, մինչև որ Ներսէս երթայ և յետոյ միայն վերադառնում է քաղաք։ Գաբրիէլի յարաբերութիւնը Լուսաւորչի այդ աւագ քահանայի հետ, որ առաջ շատ մտերմութեամբ էր, նորա վերադարձից յետոյ բոլորովին փոխւում է, նա սկսում է զգուշութեամբ վարուել նորա հետ և ընկած տեղը միշտ կրկնել, թէ նա եկել է վարժապետութեան պաշտօնով, ուստի և իրաւունք չունի եկեղեցի յաճախել և վերաբերութիւն անել։ Գաբրիէլը վերաբերումն էր անում, որովհետև ուրիշ սարկաւագ չկար, և այն միայն կիւրակի օրերը. նա սովորաբար գնում էր և միւս եկեղեցիները, ուր որ հրաւիրւում էին, և ոչ մի արդիւնք չէր ստանում, նամանաւանդ որ ինքը Տէր-Գաբրիէլն էլ յաճախ խնդրում էր վերաբերում անելու և երբեմն էլ իւր տեղ ժամուցումն էր անել տալիս։

1828 թուի Հոկտեմբերին վարժարանի շինութիւնը բոլորովին աւարտւում է և աշակերտները փոխադրւում են խոնաւ հին դահլիճից նոր շինութիւնը։ Գաբրիէլը խնդրում է աղաներին, որ նոր դպրոցի հետ ունենան և մի տպարան, որի երկու մամուլը դեռ Հաշտարխանում ինքը գնել էր Շոտլանդեան քարոզիչներից։ Բայց շատերը դիմում են և՛ դպրոցի, և՛ տպարանի դէմ։ Նախիջևանցւոց հետ կապած պայմանագրի յօդուածներից մէկի զօրութեամբ միայն վարժարանից աւարտողները և ուսման վկայական ունեցողները իրաւունք ու արտօնութիւն ունէին հոգևորական ձեռնադրուելու։ Տէր-Գաբրիէլը հակառակում է այդ յօդուածին և իւր կողմն է ձգում աղաներից շատերին, որոնք կամենում էին պաշտպան հանդիսանալ և ձեռնադրել տալ ազգականներին, բայց չէին կարողանում։ Դոքա բոլորեքեան էլ սկսում են թշնամի լինել Գաբրիէլին և բամբասել նորան, թէ նա սուտ վկայական է տալիս, և այլն։ Այդ թշնամութիւնը գնալով զօրանում է, նամանաւանդ Գէորգ աղա Օղարաշեանի մահից յետոյ, երբ Գաբրիէլը մի ոգևորուած ճառ էր ասել նորա դագաղի վերայ և շատ գովաբանել և երկինք բարձրացրել նորա կառավարչական ընդունակութիւնները և քաղաքին ու հասարակութեան տուած օգուտները։ «Միթէ մինչև ցայսօր Օղարաշեանի խելքո՞վ է կառավարուել մեր հասարակութիւնը», ասում էին վիրաւորուած աղաները։

Լաւ էր, որ դեռ բարեացակամ էր նորան քաղաքագլուխ Խաչատուր Խոճամճեանը, որ ընկած տեղը պաշտպանում և օգնում էր նորան։ Եւ այդ շատ հասկանալի էր, քանի որ նա էր բերել նորան Հաշտարխանից, նա էր շինել վարժարանը, նա էլ Գէորգ Օղարաշեանի ամենամտերիմ բարեկամն էր։ Գաբրիէլի և Խոճամչեանի այդ բարեկամութիւնը նամանաւանդ ամրապնդուել էր այն օրից, երբ նորա որդին Ստեփանը կնքահայր էր եղել Գաբրիէլի վերջինեայ Մարիամ աղջկան։ Տպարանի գործը այդ Խոճամչեանի օգնութեամբ այնքան առաջ է գնում, որ Գաբրիէլը հանում է իւր սեփական պղնձեայ կաղապարները արկղներից, որ բերել էր Հաշտարխանից և որ շինել էր տուել տէրութեան զինարանի մէջ, բայց չէր ժամանել պատրաստել «Հայր» կոչուած տառերից և «Մայր» կաղապարները. նա սկսում է հայ արհեստաւոր որոնել շինել տալու համար։ Վարդերես Հալաչեանը, որ հոգով չափ հակառակ էր թէ դպրոցին և թէ տպարանին, գործը խափանելու համար, աշխատում է, որ «մայրեր» ձուլելու գործը յանձնուի Պոլսեցի Գրիգոր Միւթէվէլեան ժամագործին, որ իւր սրահում խանութ ունէր, թէև Ռոստովում լինում է մի ռուս, որ այդ արհեստը աւելի լաւ է իմանում ու յանձն է առնում եղել աւելի էժան շինելու։ Այդ Միւթէվէլեանը ստանում է փողը և փախչում, գնում է Բեսսարաբիա և մնում է Վառնայի կռուի մէջ, որ շատ խոցում է Խոճամչեանի սիրտը, որովհետև վնասը, չհաշուելով նիւթը, որ քաղաքից էր, հասնում էր վեց հազար ռուբլու։

Ներսէսն էլ Նախիջևանում եղած ժամանակ շատ էր սառեցրել քաղաքացիներին տպարանի գործի վերաբերմամբ. նա պատմել էր նոցա Թիֆլիսում իւր հիմնած տպարանի պատմութիւնը, թէ ինքը ո՞րքան տառապել ու աշխատել էր, մինչև որ կարողացել էր Գէորգ աղա Արծրունու միջնորդութեամբ ձեռք բերել Ղուկաս Վանանդեցու տպարանը։

Աւագ քահանայ Տէր-Գաբրիէլ Տէր-Գաբրիէլեանի յարաբերութիւնը դէպի Գաբրիէլ Պատկանեանցը աւելի ու աւելի լարւում էր. նա երբ որ մենակ էր լինում նորա հետ, մտերմութիւն էր ցոյց տալիս, երբ ժողովրդի մէջ, զառզանում էր, և այդ բանին շատ նպաստում էին լուր տանող-բերող մարդիկ, նամանաւանդ Սերովբէ վարժապետի վաղեմի աշակերտ տիրացու Կարապետ Խալփախչի Եղիայեանը, որ 1828 թուին ձեռնադրուեց և եղաւ Տէր-Աստուածատուր Շապշնիկեան քահանայ։ 1829 թուին Ներսէսը, որ, ինչպէս ասացինք, Վրաստանի առաջնորդ էր և հոգևոր գործերի կառավարիչ, կայսերական հրովարտակով կարգւում է Բեսսարաբիոյ և Նախիջևանի թեմի առաջնորդ, և Գաբրիէլը մի շնորհաւորական նամակ է գրում նորան, օգտուելով, նախ, իրան տրուած իրաւունքից նորա հետ թղթակցութիւն ունենալու առհասարակ և, երկրորդ, այն հանգամանքից, որ Ներսէսը, որ նրա գրուածները հետը տարել էր, հարցրել էր նրան «Սուրբ Աստուած»-ի մասին։ Այդ երգի վերաբերմամբ Ներսէսը պատահել էր Պատկանեանցի մեկնութեան մէջ մի այնպիսի նիւթի, որ ուրիշ տեղ չէր պատահել, և հարցրել էր, թէ ո՞րտեղից է առնուած «Սուրբ Աստուած»-ը։ Նա պատասխանել էր, թէ առնուած է Եսայի մարգարէութիւնից, որտեղ Սերովբէները 3 անգամ «Սուրբ» են երգում, ուղղելով դէպի նա, որ էր Աստուած Հզօր, որի մասին և Միքայէլ Սալլաթեանը գրել էր իւր 1824 թուին Մոսկովում հրատարակած օրացոյցում, սակայն իւրը, Պատկանեանցինը, բոլորովին անկախ էր Սալլանթեանից, որովհետև գրուած էր դեռ 1822-ին։ Գաբրիէլը իւր այդ շնորհաւորական նամակը կարդացել էր Տէր-Աստուածատրին, որ իսկոյն հաղորդել էր Պատկանեանցի Ներսէսի հետ նամակագրութիւն ունենալու այդ հանգամանքը Տէր-Գաբրիէլին, որ և շատ բարկացել էր, կարծելով, թէ Գաբրիէլ Պատկանեանցը Ներսէսի լրտեսն է։

Գլուխ Ե.

«Ներսէսի լրտես» խօսքերը Տէր-Գաբրիէլ Տէր-Գաբրիէլեանի թեթև բերանով շուտով հռչակւում է քաղաքում և թշնամացնում Գաբրիէլի հետ և այն աղաներից շատերին, որոնք թէև մի առանձին սէր էլ չունէին դէպի Պատկանեանց սարկաւագը, գոնէ, առեցող, թշնամի էլ չէին նորան։ Առհասարակ Նախիջևանի մեծամեծները չէին սիրում ենթարկուել իւրեանց հոգևոր իշխանաւորներին, դժկամակում էին, չէին ընդունում նոցա հեղինակութիւնը եկեղեցական գործերում, եկեղեցական գումարների հաշիւը չէին ուզում տալ և իրանց լիակատար տէր էին համարում թէ եկեղեցիների և թէ նոցա պատկանած գոյքերի։ Այդ հանգամանքից առաջ էր գալիս անընդհատ կագ ու կռիւ առաջնորդների և նոցա մէջ, անընդհատ խռովութիւն էր ծագում քահանաների ձեռնադրութեան, մակիստրատի և քաղաքային դումի հոգևոր կառավարութեան գործերին խառնուելու, քաղաքագլխի առաջնորդների իշխանութիւն բանեցնելու վերաբերմամբ։ Նոքա իւրեանց այդ ձգտումով և ուղղութեամբ ամբողջ 20 տարի մաքառել էին Յովսէփի դէմ, 10 տարի Եփրեմի և 15 տարի Յովհաննիսի. նոքա մինչև անգամ հաշտ չէին եղել բարեհոգի Պետրոս Մարկոսեանի հետ, նորանից ծածուկ յարաբերութեան մէջ մտնելով ռուս իշխանաւորների հետ, չենք խօսում արդէն այն մեծ նեղութիւնների մասին, որ տուել էին նոքա հանգուցեալին Սամարում գաղթականութեան ժամանակ։ Այժմ էլ ահա հաստատուել էր նոր առաջնորդ, և նոքա պատրաստւում էին նոյնը անել, նոյն դիրքը բռնել և Ներսէսի վերաբերմամբ. և այդպիսի հանգամանքներում յանկարծ նոքա իմանում են, որ իրանց մէջ կայ մէկը, որ նորա լրտեսն է, ուրեմն, և հասարակութեան ու քաղաքի թշնամի։

Միմեանց յաջորդող դէպքերն էլ շուտով այն բնաւորութիւնն են ընդունում, որ կարծես թէ գալիս են իրականացնելու նոցա ենթադրութիւնները Գաբրիէլի մասին և հաստատելու լուրը։ Երբոր Ներսէսը կարգւում է առաջնորդ, ամեն տեղ թուղթ է ուղարկում և տեղեկութիւն խնդրում վիճակների

մասին։ Մի այդպիսի թուղթ էլ գալիս է Նախիջեւանի Հոգեւոր Կառավարութեան վերայ։ Տէր-Գաբրիէլեանը պատասխանում է, թէ քարտուղար չունենալու պատճառով, չի կարող ցանկացած տեղեկութիւններն ու հաշիւները հաղորդել, այն ինչ հէնց դոյն իսկ ժամանակները առաջնորդը մի թուղթ էր ստացել Տէր-Աստուածատրից, թէ նա 17 տարի ձրի քարտուղարութիւն է անում, բայց ամէն տարի տօնավաճառ է գնում Տէր-Գաբրիէլը, և խնդրում էր, որ իրան թոյլատրուի Մակարիա երթալու։ Ներսէսն այդ երկու միմեանց հակասող թղթերը ուղարկում է Գաբրիէլին, որ նա Խաչատուր Խումաչեանի հետ խորհրդակցելով, իմաց տայ իրան գործի էութիւնը։ Տէր-Գաբրիէլը տեղեկանալով, որ Գաբրիէլը նշանակուած է իւր վերայ դատաւոր, իսկոյն իմաց է տալիս նորա հակառակորդներին, որոնք և հաւաքուելով, աշխատում են ամէն տեսակ կռուեցնել նորան Ներսէսի հետ.—Նոքա համոզում են նորան, որ նա յետ դարձնէ Ներսէսին Տէր-Գաբրիէլի մասին ուղարկուած թղթերը և ասէ, թէ ժամանակ չունիմ։ Գաբրիէլը ընկնում է մեծ նեղութեան մէջ, որովհետև մի կողմն էր հզօր իշխանութիւնը, միւս կողմը հասարակութիւնը։ Այս առթիւ է լինում, որ Խաչատուր Խումաչեանը, ըստ իւր սովորութեան, կրկնում է. «զարմանալի, զարմանալի, զարմանալի բան. մեր քաղաքացիք մեղադրում են, թէ առաջնորդներն ուտում են եկեղեցու փողերը, իսկ իրեանք թէ եկեղեցիների, թէ առաջնորդահաս և թէ աթոռահաս դրամները ուտեցնում են մի տէրտէրի»։ Գաբրիէլը այս դժուարութիւնից դուրս գալու համար, հրաւիրում է Խումաչեանին, Տէր-Գաբրիէլին, Տէր-Աստուածատրին և Կիրակոս աղա Արարատեանին և դոցա ստորագրութեամբ մի պատասխան է գրում Ներսէսին, թէ, ճիշդ է, Տէր-Աստուածատուրը 17 տարի ձրի ծառայում է կառավարութեան մէջ, բայց քարտուղարի անունը կրում է Կիրակոս աղա Արարատեանը և Տէր-Գաբրիէլը այդպէս է գրել, որ իրաւունք ստանայ Տէր-Աստուածատրին ռոճիկ նշանակելու և յետոյ արդէն պահանջուած տեղեկութիւնները նորան գրել տալու։ Ներսէսն իրաւունք է տալիս Տէր-Աստուածատրին տօնավաճառ երթալու, բայց տեղեկութիւնները

գրելը յանձնում է Գաբրիէլին, որովհետև վստահ չէր նոցա վերայ։

Դոյն ժամանակները արդէն լրանում է Գաբրիէլի Նախիջեւանում ուսուցչութիւն անելու երկրորդ տարին։ Աշակերտներից յառաջադէմները կամենում են և ռուսերէն սովորել, որովհետև թէև կար հին վարժարանի մէջ ռուս ուսուցիչ, բայց նոքա չէին ուզում յաճախել նորա մօտ՝ լեզուն չհասկանալու պատճառով։ Գաբրիէլը, որ փոքր ինչ ռուսերէն ևս գիտէր, սկսում է ռուսերէն սովորեցնել մի 3—4 հոգու, որոնք և շատ հեշտութեամբ սովորում են, որովհետև ամէն՝ բան մեկնում էր հայերէն և ամէն բան այդ միջոցով հասկանալի էր լինում։ Միւս աշակերտների ծնողները պահանջում են, որ իրանց որդիներին ևս ռուսերէն սովորեցնէ Գաբրիէլը, բայց նա մերժում է, ասելով, թէ առանց հասարակութեան կամքի չի կարող կատարել նոցա ցանկութիւնը, քանի որ իւր պայմանագրի մէջ չկար ռուսերէն սովորեցնելու խնդիրը։ Այն ժամանակ նոքա բողոքում են, և քաղաքի կառավարութիւնը կարգադրում է, որ ով որ կամենում է, որ իւր որդին ռուսերէն ևս սովորէ, պարտական է հատուցանել Պատկանեանցին 10—10 մանէթ։ Սորանից մեծ խռովութիւն ու աղմուկ է առաջանում, և խռովութիւն յարուցանողները լինում են նոքա, որոնք ուսումնարանի մէջ ոչ զաւակ ունէին, ոչ էլ բան էին հատուցանում, ինչպէս Վարդերես Հալաչեանը, Մըկըր Պօպովը, որոնք պնդում էին, որ Պատկանեանցը ռուսերէն չ՚սովորեցնէ։ Գաբրիէլն ինքն էլ շատ ցանկութիւն չունէր ռուսերէն սովորեցնելու, քանի որ ինքն էլ լաւ չ՚գիտէր, բայց պահանջում էին ծնողները, զգալով օգուտը։

Քաղաքի կառավարութիւնը խռովութիւնների առաջն առնելու համար, միւս անգամ կարգադրում է, որ ով ուզում է ռուսերէն սովորել, թող երթայ ռուս վարժապետի մօտ, բայց աշակերտները չեն կամենում, որ չզրկուեն հայերէնից։ Այդ ժամանակ հրաման է արձակւում, որ Գաբրիէլը մի օր հայերէն, միւս օրը ռուսերէն սովորեցնէ, բայց նա չի յօժարում, որովհետև այդ դէպքում նա կախումն պիտի ունենար Տագանրոգի պետական ուսումնարանական վարչութիւնից։ Գալիս է և Տագանրոգի գիմնազիոնի վերատեսուչը, փորձում է աշակերտ-

ների գիտութիւնը, գլուխը շարժում և գնում է։ Գաբրիէլը, վերջապէս, որոշում է ռուսերէնը հայերէնի հետ խառը սովորեցնել ամենին, բայց սորանից էլ անբաւական և դժգոհ են մնում 10 մանէթ տուողները, ասելով, թէ ինչու աղքատների զաւակներն էլ, որ ոչինչ չեն տալիս, միևնոյնը պիտի սովորեն։ Դպրոցը այս ու այսպիսի հանգամանքների մէջ շատ չի զարգանում, նամանաւանդ որ սովորութիւն էր եղել, որ տղայքը շուտով և անժամանակ թողնում էին ուսման գործը թէրի և ընտրում էին իրանց համար առևտրական գործունէութիւն, որ մեծ շահ էր տալիս նոցա։ Իսկ առևտուրն այդ ժամանակները շատ զարգացել էր Նախիջևանցւոց մէջ—ցորենի, բրդի, երկաթի առևտուր։ Սկսում են Ռուսաստանի և ուրիշ տէրութիւնների զինուորական բանակների համար ձիերի երամակներ գնել ղալմուխի, թաթարի և նողայի անապատներից և տանել Լեհաստան. սկսում են ոչխարի, եզերի և կովերի հօտեր գնել ոչ միայն մսի համար, այլ և բրդի, կաշուի, մորթու, ճարպի և իւղի համար, սկսում են Սիբիրի կողմերն երթալ և արդար իւղ բերել և տանել վաճառել Պօլիս, Իտալիա, Յունաստան, Ֆրանսիա և Անգլիա։ Երկու եղբայր Կարապետ և Խաչերես Աւանեանք, որոնք կոչւում էին Մոլլայի տղայք, սկսում են կանեփի և վշի սերմ ցանել, որ շատ տարածւում է և մեծամեծ վաստակ հայթայթում այդ գործով պարապողներին։

Գաբրիէլը, իւր ասելով, թէև չունէր համալսարանական գիտութիւն, բայց անդադար կարդալով, ինքնուսութեամբ սովորելով, գրելով ու շարադրելով այնքան զարգացրել էր իւր միտքն ու հոգին, որ շատ հմտացել էր բարձր կրթութեան համար աշակերտների միտքը մշակելու և նախապատրաստելու արուեստի մէջ, ինչպէս ցոյց է տալիս Նալբանդեանցի օրինակը։ Սակայն այս բոլորին շատ արգելք է լինում Նախիջևանցւոց խռովարար բնութիւնը, որ նոքա ժառանգել էին Անեցիներից. նոքա շատ բան մոռանալով ազգայինից, սեփականել էին իրանց Ղրիմի ծէսը, որ ազգային էին համարում, և ոչ մի բանով չէին ուզում շեղուել նորանից։ Ահա այսպիսի հանգամանքներում լրանում է աղա Խաչատուր Խամամճեանի քաղաքագլխութեան եռամեակը և յաջորդ 1830,31 և 32 եռամեակի համար Խա-

չիքեանի զօրծ դրած ջանքով ընտրւում է քաղաքագլուխ աղա Մարկոս Պօպովը, որ մի կատարեալ պատուհաս է դառնում դպրոցի և Պատկանեանցի գլխին։ Այս Խալիբի կողմից լինում է, նախ, մի վարձատրութիւն Մարկոս աղայի դէպի նա ցոյց տուած բարեացակամութեան և մտերմութեան համար, երկրորդ, նա կամենում է եղել հետևեալ եռամեակի համար ինքն ընտրուել քաղաքագլուխ և ուզում է եղել, որ իրանից առաջ քաղաքագլուխ լինի մի այնպիսի անընդունակ անձն, որ յետոյ ինքը աւելի բարձրիգլուխ հանդիսանայ։

Այդ Մարկոս աղա Տէր-Մարկոսեանը, որ Նախիջևանցւոց սովորութեամբ իբրև քահանայի սերունդ իւր ազգանունը գրել էր թարգմանաբար Պօպով, մի շատ տգէտ, գոռոզ և վերին աստիճանի փառասէր մարդ էր. նա իւր այդ յատկութիւններով ամենևին չէր յիշեցնում իւր ցեղի նախահայր Եւպատորիայի նշանաւոր աւագ քահանայ Տէր-Մարկոսին, որ այնքան նահատակուել էր իւր ազգի և հայրենիքի համար։ Դաւիթ-բէկի ապստամբութեան ժամանակները 1720 թուին Ղրիմից ուրիշ հայ ուխտաւորների հետ գնում են Երուսաղէմ և երկու ծերացած և պատուաւոր քահանայ՝ Թէոդոսիայի Տէր-Բարթուղիմէոսը, որ Հայոց բերդը շինող յայտնի Տէր-Մաղաքիայի ցեղից էր, և Եւպատորիայի աւագ քահանայ Տէր-Մարկոսը։ Սոքա հասնելով Երուսաղէմ և իւրեանց ուխտը կատարելով, առիթ են ունենում թէ ճանապարհին և թէ Երուսաղէմում պատահելու Հայաստանից եկած ուխտաւորների և նոցանից լսելու հայրենիքի տառապանքի և Դաւիթ-բէկի Սիւնիք հրաւիրուելու մասին։ Ականատեսների պատմածների ազդեցութեան ներքոյ նոցա մէջ եռում է նախնի Անեցիների դիւցազնական արիւնը, և նոքա իւրեանց ձեռքը դնելով Քրիստոսի գերեզմանի վերայ երդւում են, ուխտ են կապում, որ երբ վերադառնան Ղրիմ, հաւաքեն պատերազմող մարդիկ հայ երիտասարդներից և երթան Դաւիթ-բէգին օգնութեան։ Նոյն 1720 թուի աշնան վերջին երկու քահանան հասնում են Ղրիմ և Թէոդոսիայում խորհուրդ անելով, թէ ինչպէս կատարեն իւրեանց կապած ուխտը, և օգտուելով Հրեշտակապետաց տօնի Ուրբաթ երեկոյի նախատօնակի առթիւ եկեղեցի հաւաքուած ժողովրդի բազմութիւնից, հրա-

ւիրում են զգեստատուն ականաւոր մարդկանց և յայտնում նոցա իւրեանց խորհուրդը։ Ամենքը հաւանում են և խոստանում են իւրեանց թէ նիւթական և թէ բարոյական օգնութիւնը ցոյց տալ այդ կարևոր խորհուրդը գլուխ հանելու գործին։ Ժամանակներն էլ շատ յարմար և նպաստաւոր էին. Ղրիմում այդ ժամանակ աւազանին-մրզաները-ապստամբել էին իւրեանց իշխանաւոր Խափլան-խանի դէմ, որ ժառանգել էր Ղազի Գիրէյի աթոռը, և ամբողջ Թերակղզին ծփում էր խռովայոյզ աղմուկի մէջ։ Կարճ միջոցում երկու քահանայի շուրջը հաւաքւում են 285 հոգի առոյգ երիտասարդներ և քահանաները, օգտուելով խանութեան սահմաններում կատարուող ժխորից, աննկատելի կերպով խումբ-խումբ ճանապարհ են հանում նոցա դէպի Փոքր Ասիոյ ափերը, ժամադիր լինելով միմեանց հանդիպելու Տրապիզոնում։

Ամենից յետոյ փախստականի զգեստով և առանձին նաւերով ճանապարհ են ընկնում և իւրեանք քահանաները, նախապէս իւրեանց տեղը կարգելով քահանայ իւրեանց համանուն որդոցը հաւանութեամբ ժամանակի առաջնորդ Աստապատցի Վարդան եպիսկոպոսի։ Ժամադրած տեղը հասնելով, նոքա բաժանում են իւրեանց մարդկանց զանազան խմբերի, 10—15 հոգուց բաղկացած, և ընտրուած Օնբաշիների առաջնորդութեամբ, լազերի զգեստ հագցնելով ամենին, որպէս զի ճանապարհին նոքա անվտանգ անցնեն արիւնարբու Լազերի և վայրենի Քուրդերի միջից, ուղևորում են նոցա Դաւիթ-բէկի բանակը։ Խմբերը առանձին-առանձին գնում են, նախ, Մուշ, յետոյ Կարս և, վերջապէս, հասնում են Դաւիթ-բէկի բանակը 1722 թուին հէնց այն ժամանակը, երբ եկել էին և նշանաւոր Տէր-Աւետիք և Տէր-Մկրտիչ քահանաները, և Դաւիթ-բէկը նշանակելով Մխիթար դիւցազնին զօրագլուխ, կազմում էր իւր բանակը և սպասում էր Գենաւուզի Թորոս և Մեղրու Ստեփաննոս իշխանների գալստեան, որ գնայ Պարսից դէմ։ Խրիմեցիք մնում են Հայաստանում մինչև 1729 թիւը և մասնակցում են Դաւիթ-բէկի մղած բոլոր ճակատամարտներին, իսկ երբ որ 1728 թուին մեռնում է Սիւնեաց հերոսը, նոքա հաւատարիմ մնում են նորա յաջորդ Մխիթարին, մինչև որ 1729 թուին դաւաճանու-

թեամբ սպանուում է Խնձորեսքում և այդ դիւցազը և բանակը ցրւում է։ Այդ ժամանակ անմ վերադառնում են Ղրիմ իւրեանց մարդկանց հետ և Տէր-Մարկոսն ու Տէր-Բարթուղիմէոսը, նախապէս այցելելով Մուշի Ս. Կարապետը, Որոտն աւանը, որտեղ թաղուած էր Տէր-Մաղաքիան, և կործանուած Անին, որտեղից դուրս էին եկել նոցա նախնիքը, և այդ նուիրական տեղերում իւրեանց ուխտ կատարելով։ Բարեբաղդաբար նոցա գնալը, Հայաստանում այնքան երկար մնալը և կռուելը մահմեդականների դէմ և վերադառնալը անվտանգ աննկատելի է մնում թաթարներից։ Բայց դաւաճանութիւնը Հայերի միջից էր. կային ոմանք, որ նախանձում էին Տէր-Մարկոսի և Տէր-Բարթուղիմէոսի փառքին, և յատկապէս մէկը, որ կոչւում էր Դրնան Արթին և իւր լրտեսութեան, դաւաճանութեան և մատնողութեան համար սիրելի էր խանին։ Այդ Դրնան Արթինը և դորա համախոհները աշխատել էին վնասել նոցա, երբ դեռ նոքա Հայաստանումն էին, երկու անգամ առանձին մարդու ձեռքով կեղծ նամակներ ուղարկելով և նոցա յետ կոչելով այն առակութեամբ, թէ թաթարները իմացել են նոցա գնալը և բանտարկել են նոցա ազգականներին ու սիրելիներին։ Բայց չէին յաջողել. նոքա հասկացել էին կեղծիքը և չէին վերադարձել։ Այժմ էլ երբ նոքա վերադառնում են իւրեանց սիրելիների մօտ, ենթարկւում են մատնութեան, Խանը կոչում է իւր մօտ ու հարց ու փորձ անելով, արձակում է, կասկածելով Ռուսների վերահաս արշաւանքից։

Արթինը թէ և այս անգամ չի կարողանում վնասել Տէր-Մարկոսին և Տէր-Բարդուղիմէոսին և դոցա հետ գնացողներին և յետ դարձողներին, բայց մի հինգ տարուց յետոյ մեծ պատուհաս է բերում ընդհանրապէս Ղրիմի բոլոր Հայերի գլխին։ Ասում են, որ նա մահամերձ հիւանդանում է և խանը գալիս է տեսնելու իւր մտերմին։ Գնալիս, խանը հարցնում է, ինչ խնդիրք ունի իւր սիրելին։ Հիւանդը շարունակում, թէ ինքը ոչինչ չի ուզում, միայն որ խնդրում է, որ երբ ինքը մեռնի և տանեն թաղելու, իւր մարմինը գերեզման իջեցնելուց առաջ, նա բանալ տայ և նայէ։ Խանը խօսք է տալիս և հրամայում է շրջապատողներին, որ անպատճառ իրան իմաց տան նորա մա-

հուան և Թաղման մասին։ Արթինը կապում է իւր վզին մի հաստ կապոյտ ժապաւէն և պատուիրում է իւրայիններին, որ ոչ մի դէպքում, մինչև իսկ իրան պատանելիս էլ, չքակեն այդ ժապաւէնը։ Շուտով նա մեռնում է և մեծ բազմութեամբ տանում են նորան թաղելու։ Ճանապարհին յուղարկաւորութեան թափորին ընդառաջ դուրս է գալիս խանը և բանալ տալով նորա մարմինը և տեսնելով նորա վզի ժապաւէնը, թէև հասկանում է իւր սիրելու կեղծիքը, բայց բոլորի վերայ մեծ տուգանք է դնում, ասելով, որ Հայերը խեղդել են իւր բարեկամին։

Ահա՛ վերոյիշեալ բարեկիշատակ Տէր-Մարկոսի ժառանգներից էր Մարկոս աղան, բայց ո՜րքան մեծ տարբերութիւն երկուսի մէջ։ Մարկոս աղայի իդէալն էր գանձը, ճոխութիւնը. նա իւր փառքն ու պատիւը որոնում էր արքունի ծառայութեան և դորա հետ կապուած զանազան դատարկ սեթևեթների՝ աստիճանների, փայլուն նշանազգեստի և զանազան շքանշանների մէջ, որոնց հասնելու համար միջոցների մէջ էլ խտրութիւն չէր անում, մոռանալով մինչև անգամ և ազգ և լեզու և ազգային դաստիարակութիւն։ Նորա առաջին գործն այն է լինում, որ կրճատում է ուսուցիչների ռոճիկը, յետոյ արգելում է։ Պատկանեանցին ռուսերէնի դասատուութիւնը, որից և աշակերտներից շատերը թողնում, հեռանում են դպրոցից. նա պահանջում է Պատկանեանցից, որ նա, բացի ուսուցչութիւնից, սարկաւագութիւն էլ անէ եկեղեցում, բայց նա մերժում է, որովհետև, նախ, այդ չկար նորա պայմանագրի մէջ, երկրորդ, դորա համար նա ժամանակ էլ չունէր։ Այն ժամանակ նա գրում է Ներսէսին և պահանջում է, որ նա իրաւունք չունենայ հասարակութեան փողով վարձուած վարժապետին ուրիշ գործեր յանձնել, բայց նա այդ նամակն ուղարկում է Գաբրիէլին և վերստին կրկնում է, որ իւր յանձնարարութիւնը կատարէ։ Նա գրաւում է և դպրոցի վերատեսչութիւնը և սկսում է աշխատել, որ վարժարանը հանէ հասարակութեան ձեռքից և ենթարկէ պետութեան ուսումնարանական իշխանութեան։ Մէկ ռուս ուսուցիչ Սաքուն անունով խոստանում է տէրութիւնից պարգև բերել տալ նորա համար, եթէ նա կարողանայ այդ գլուխ բերել, բայց Գաբրիէլը արգելք է լինում, ուստի և նա սաստկացնում

է հալածանքը նորա դէմ, ջանալով նորան իսպառ հեռացնել Նախիջևանից։

1831 թուին Հաշտարխանի կողմերից տարածւում է մահտարաժամ, և Տէր-Գաբրիէլ Տէր-Գաբրիէլեան աւագ քահանան յունիսին վարունգ ուտելով, բռնւում է համաճարակից և մեռնում։ Պատկանեանցի հակառակորդները լուր են տարածում, թէ քահանան թունաւորուել է նորա ձեռքով, և երբ այդ սուտ է դուրս գալիս, որովհետև քիչ էր մնում, որ անդամահատէին, ասում են, թէ Պատկանեանցի պատճառով նորա մաղձը գլուխն է տուել։ Համաճարակի պատճառով դպրոցը, հետևելով տէրութեան ուսումնարանների օրինակին, փակւում է ամիս ու կէս ժամանակով։ Օգտուելով այդ պարապութեան ժամանակամիջոցից, Ներսէսը հրամայում է Պատկանեանցին գնալ Քիշնև, և այդ հրամանը հասնում է Նախիջևան Տէր-Գաբրիէլեանի թաղման միւս օրը։ Հրաւիրելու պատճառն այն էր, որ Ներսէս հաստատուած լինելով առաջնորդ Նախիջևանի Բեսարաբիոյ վիճակի, պիտի հաստատէր Քիշնևում նոր կոնսիստոր, որովհետև Յովսէփի հաստատած կոնսիստորը Հաշտարխանումն էր, իսկ այն վիճակը անցել էր Սերովբէ Կարնեցու ձեռքը։ Պատկանեանցը պիտի կազմակերպէր նոր կոնսիստորը, որովհետև նա 7 տարի ատենադպիր էր եղել Հաշտարխանի կոնսիստորում և այդ պատճառով էլ լաւ գիտէր բոլոր կարգերը։

Մարկոս աղայի և նորան թելադրող Խալիբի համար լաւ առիթ էր թշնամացնելու Գաբրիէլին Ներսէսի հետ, ուստի և նոքա ճիգ են թափում, որ նա չկատարէ առաջնորդի հրամանը և չերթայ։ Այս պատճառով էլ երբ նա աղերսագիր է մատուցանում քաղաքագլխին, որ նա հրամայէ հոգևոր կառավարութեան, որ իրան անցաթուղթ տայ Քիշնև երթալու, գալիս են նորա կողմից չորս մարդ, որոնց թւում և Խալիբը, և խոստանում են նորա ռոճիկը աւելացնել, միայն որ չերթայ, պատճառ բերելով մահտարաժամը։ Գաբրիէլը պատասխանում է, որ Ներսէսի հետ չի կարելի խաղալ և որ ինքն, իբրև հոգևորական, պարտական է հնազանդել նորա հրամանին։ Դորանից յետոյ որովհետև քաղաքագլխի հրամանը արձակուրդ տալու ուշանում էր, Գաբրիէլը նորից կրկնում է իւր աղերսագիրը և ստանում է

արձակուրդ հեռանալ մակագրութեամբ, թէ իրաւունք ունիս գնալու, միայն որ միւս անգամ այլ ևս չ՚վերադառնաս. քո վարժապետութիւնը մեզ այլ ևս հարկաւոր չէ։

Նա դուրս է գալիս Նախիջևանից յունիսի 28-ին և հասնում է Քիշինև յուլիսի 6-ին ու տալիս է առաջնորդին Մարկոս ագայի մակագրած թուղթը։ Ներսէսը հարցնում է, թէ ինչու եկար. նա ոչինչ չի պատասխանում, այլ միայն զարմանում է, որովհետև ունէր ծոցին նորա հրամանը։ Նոյն րոպէին բերում են փոստը, և Ներսէս ստանում է Նախիջևանից երկու թուղթ. առաջինը մի թուղթ էր 200 ստորագրութեամբ, որով քաղաքացիք բողոքում էին քաղաքագլխի դէմ, թէ նա քանդում է դպրոցը, և գովում էին Գաբրիէլին ու խնդրում, որ նորան քահանայ ձեռնադրէ և վարժապետութիւնը նորան յանձնէ, որ իրանց զաւակները ուսումից չզրկուեն. երկրորդը Մարկոս ագայիցն էր. նա գանգատւում էր Գաբրիէլից, թէ նա տղաներին բան չի սովորեցնում, այլ սաղմոս, շարական, պատմութիւններ, քարոզ ասել և այլն այդպիսի անպէտք բաներ և, որ գլխաւորն է, անպատւում է քաղաքագլխին, իւր զաւակին կնքահայր անելով ոչ իրան, այլ Խռմաչեանին։ Ներսէս այս խօսքերի վերայ ծիծաղում է և չի վերջացնում նամակը, որի վերջաբանն այն էր, որ Գաբրիէլը միւս անգամ չ՚վերադառնայ Նախիջևան։ Ներսէսն ասում է, թէ ինքը մինչև հիմայ կարծում էր, որ Մարկոս ագան լիրբ ու յանդուգն է, իսկ այժմ իմացաւ, որ նա գիժ էլ է, որ կարծել է թէ Պասկևեանցի զաւակների կնքահայրութիւնն էլ կապուած է քաղաքագլխութեան պաշտօնի հետ։

Գլուխ Զ.

Ներսէս հրամայում է Թադէոս սարկաւագ Բէկնազարեանին, որ յետոյ ձեռնադրուեց վարդապետ և եղաւ առաջ Ղրիմի յաջորդ, յետոյ Պարսկաստանի առաջնորդ, որ նա լաւ բնակարան տայ Պասկևեանցին և հանգստացնէ, իսկ ինքը պատասխան է գրում Մարկոս ագային, թէ տիրացու Գաբրիէլը միւս անգամ չի գայ Նախիջևան, այլ նորա տեղ կ՚գայ Տէր-Գաբրիէլը և, փոխանակ քաղաքային վարժարանի, կունենայ հոգևոր

վարժարան։ Նոյն իսկ օրը նա պատրաստւում է գնալ Գրիգորուպօլ, որովհետև այդ քանի օրերը պիտի գար Յարութիւն Ալամդարեանը, և նա կամենում էր դիմաւորել նորան։ Գաբրիէլը ընտրում է իւր համար բնակարան Գրիգոր սրբազանի բաղնիքը, որ յետոյ հաւաբոյն էին շինել, և սկսում է մաքրել, բայց հէնց նոյն օրը մաղձացաւի է հանդիպում, և Ներսէսը քանիցս այցելում է նորան և հրամայում է իւր բժշկին լաւ խնամել նորան։

Մինչդեռ Գաբրիէլը հիւանդ պառկած էր Քիշինևում, Ալամդարեանը եկել էր Նախիջևան և հակառակորդները լցրել էին նորա ականջը անցած-գնացած դէպքերի պատմութեամբ ու իրանց կողմը գրաւել նորան։ Ալամդարեանի հետ Պասկևեանցը ծանօթացել էր Հաշտարխանում դեռ 1822 թուին, երբ նա եկել էր այնտեղ Մոսկովից, միտքը դրած լինելով բռնել նորա տեղը, բայց չէր յաջողել. նա ստիպուած էր եղել շուտով վերադառնալ իւր տեղը, որովհետև լսել էր իւր կնոջ մերձ՚ի մահ հիւանդանալը։ Մի քանի օր Նախիջևանում մնալուց յետոյ, նա ճանապարհ էր ընկել և եկել, հասել Գրիգորուպօլ, բերելով իւր հետ և Ներսէսի քեռորդի Զաքարիա Յովհաննիսեան Շահազիզեանին։ Վերափոխման պահոց եօթնեակին վերադառնում է Գրիգորուպօլից Ներսէսը, բերելով հետը իւր քեռորդուն և Ալամդարեանին, որ արդէն կարողացել էր այն աստիճան փոխել առաջնորդի տրամադրութիւնը դէպի Գաբրիէլը, որ Շահազիզեանը ուղղակի ասում է նորան, թէ այսուհետև Նախիջևանի դուռը փակ է քո առաջ։ Վերափոխման տօնի օրը, որ և Քիշինևի եկեղեցու տօնն էր, առաջնորդը մեծ ընդունելութիւն է ունենում. ամենքը գալիս են շնորհաւորելու սրբազանին և նորա աջն առնելու. գալիս է և Գաբրիէլը, որ այդ օրը վերաբերում էր արել, բայց Ներսէսը կանգնեցնում է նորան և սկսում է նախատել նորան, պատմելով հանդիսականներին ամեն բան, ինչ որ միայն գիտէր նորա մասին, սկսած 1802 թուից, թէ ինչպէս նա նորան հրաւիրել է Թիֆլիս, բայց նա չի գնացել, և տեղը նորա ցուցմունքով Գէորգ ագա Արծրունին հրաւիրել է Ալամդարեանցին, ինչպէս նա 1827 թուին գնացել է Նախիջևան և շփոթութիւն ձգել այնտեղ ժողովրդի մէջ, այն-

պէս որ նա արտաքսուել է Նախիջեւանից և քաղաքացիք Սլամդարեանի բերանով լուր են ուղարկել իրան, որ նորան միւս անգամ Նախիջեւան չուղարկէ, և այլն։ Հէնց այդ խօսքերի վերայ ուշաթափւում է Սլամդարեանը, և նա չի կարողանում աւարտել իւր խօսքը։ Այդ ժամանակն էլ հէնց թղթատարը բերում է „Северная Пчела" օրագիրը, որ Ներսէսը տալիս է կարդալու Գաբրիէլին։ Յայտնւում է, որ լրագրի մէջ տպագրուած է, ի միջի այլոց, կայսերական հրաման Եփրեմի հրաժարականը ընդունելու և Կարբեցուն հայրապետ ձեռնադրելու։ Ներսէսն այլայլւում է և թուղթը պատռելով Գաբրիէլին թարգմանելու, ասում է. «պատերազմ ունիմ Նիկոլայի հետ. նա պէտք է իւր կայսերական խոստմունքը կատարէ. ես չեմ թողնիլ, որ Յովհաննէսը պղծէ հայրապետական աթոռը»։ Երբ Գաբրիէլը թարգմանում, վերջացնում է կայսերական հրամանները, Ներսէսը նորից փոխւում է դէպի նա. նորա հետ փոխւում են և միւսները։ Առաջնորդի եղբօր որդի Յովակիմ Կարապետեան Շահաղիզեանը, որ առաջնորդարանի ելքի ու մուտքի վերակացուն էր, այդ ժամանակ Ներսէսի առանձին յանձնարարականով գնում է Թիֆլիս։ Սլամդարեանը կարծում էր, որ ինքը կստանայ նորա պաշտօնը, բայց Ներսէսը տալիս է նոյն պաշտօնը Գաբրիէլին, որ սակայն ինքը ստանձնում է միայն ընդհանուր վերակացութիւնը, իսկ ներքին տնտեսական գործը, առաջնորդի համաձայնութեամբ, յանձնում է Տէր-Անտոն աւագ քահանայի երիցակնոջ—«Տիրուհուն», որ Գրիգոր եպիսկոպոսի օրով ազատ մուտք էր ունեցել առաջնորդարան։ Ներսէսը սիրում էր Սլամդարեանին, ինչպէս որդի, բայց տնտեսական գործին մօտ չէր թողնում. նա էլ կարծելով, որ դորա պատճառը իւր առաջնորդարանից հեռու բնակուելն է, տեղափոխւում է այնտեղ, որտեղ առաջ ապրում էր գնդապետ Յարութիւն Մակարեան Խուդաբաշեանը, որի մի եղբայրը Գրիգոր քաղաքագլուխ էր Գրիգորուպօլում և դորանից երկու ամիս առաջ մեռել էր, իսկ միւս եղբայրը ժեներալ Աղէքսանդրն էր որ ապրում էր Պետերբուրգում։

Սլամդարեանի Հաշտարխանից դուրս գալուց և Քիշինեւ ժամանելուց յետոյ, եկել էր Նախիջեւան Բղնունեանց Սիմէոն

եպիսկոպոսը և մնացել էր այնտեղ, որովհետև ճանապարհին ոտքը կոտրել էր. նա կամենալով նշանել Սլամդարեանի դուստրը Գաբրիէլի եղբօր տիրացու Պետրոսի հետ, գրում է այդ մասին Քիշինեւ Ներսէսին, Սլամդարեանին և Գաբրիէլին։ Ներսէսը կամք է տալիս և խօսում այս մասին Գաբրիէլի հետ և վերջացնում գործը, մինչ փեսան Նախիջեւանումն էր, հարսնացուն Հաշտարխան։ Օժիտը խոստանում է տալ Ներսէսը, որ դեռ Թիֆլիզում նշանակել էր Սլամդարեանի ամեն մի աղջկան երկու-երկու հազար ռու. ձեռն պատրաստի գումար և երկու-երկու հազար թղթադրամ էլ զարդերի համար։ Սիմէոն եպիսկոպոսը հաւանելով Նախիջեւանին, միտքն է դնում առ միշտ մնալ այդ տեղ և այդ նպատակով կամենալով երկուսի՝ Սլամդարեանի և Գաբրիէլի ճանապարհն էլ փակել դէպի Նախիջեւան՝ գրում է Ներսէսին, ի միջի այլոց, և այն, թէ Պատկանեանցն այսուհետև այլ ևս ընդունելի չի լինիլ Նախիջեւանում, իսկ Յարութիւն վարդապետը կարող է պատուել քո առաջնորդութիւնը։

Մի օր երբ Գաբրիէլը զբաղուած էր առաջնորդարանի այգու այգեպանի գործով և մշակներ էր վարձում, յանկարծ դուրս է գալիս Ներսէսը և արձակում մշակներին, ասելով, թէ դեռ կարելի է այլ ևս մի քանի օր սպասել. նա, ի միջի այլոց յայտնում է, թէ նամակ է ստացել Բղնունուց և մտադիր է առաջիկայ կիւրակէին ձեռնադրութիւն անել. Թադէոս սարկաւագին պիտի տայ աբեղայութիւն և ուղարկէ Ղրիմ յաջորդութեան պաշտօնով, իսկ իրան, Գաբրիէլին, քահանայութիւն և ուղարկէ Նախիջեւան։ Գաբրիէլը պատասխանում է, թէ ինքը չի ուզում գնալ Նախիջեւան և թէ ձեռնադրութեան համար դեռ պատրաստ չէ—պաս չի կարող պահել և հիւանդութեան խաղաւարտները դեռ չեն անցել մարմնի վրայից։ Ներսէսը բարկանում է և մտնելով առաջնորդարան ու պատահելով Սլամդարեանին, ասում է, թէ ինքը ուզում է Պատկանեանցին ձեռնադրել, իսկ նա հրաժարւում է, ասելով, թէ խաղաւարտներ կան մարմնի վրայ և պաս չի կարող պահել։ Ներսէսը կամենում էր Գաբրիէլին քահանայ ձեռնադրել և ուղարկել Նախիջեւան, որ Մարկոս աղան, Խալիբը և դոցա հա-

մախօնները, որոնց նա մի անունով կոչում էր «Խալիբի սրիկայք», չկարծէին, թէ նա վախենում է նրանցից։ Գաբրիէլը խնդրում է, որ իրան Պետերբուրգ ուղարկէ, բայց Ներսէսը մերժում է, ասելով, թէ չես դիմանալ Լազարեանների բռնութեան։

Հասնում է, վերջապէս, Նոյեմբեր ամիսը, և Գաբրիէլի միտքը փոխում է. նա համաձայնում է վերադառնալ Նախիջևան, որովհետև իմացել էր հօրից, թէ Սերոբէ արքեպիսկոպոսը հասել է Հաշտարխան և գրել է Սերովբէ վարժապետին, թէ նոքա թող գան։ Նա խորհում է քահանայ ձեռնադրուել Ներսէսից, վերադառնալ Նախիջևան և իւր ծնողների հետ գնալ Հաշտարխան և վերանորոգել տպարանը, որ Յովսէփի ժամանակից մնացել էր խանգարուած։ Ձեռնադրութիւնը պիտի լինէր 1832 թուի սկզբին. Մոսկովից պիտի գար մի նորընծացու, Գրիգորուպօլում էլ կար մէկը. Գաբրիէլը սկսում է իւր պատրաստութիւնը տեսնել, թէև Սլամզարեանը, առաջնորդի գրագիր «կաշի» կոչուած Ստեփան վարդապետ Վաղարշապատցին և Նախիջևանի ս. Խաչի վանահայր «փասապարտ» Մկրտիչ վարդապետը համոզում էին նորան Նախիջևան չերթալ։

Դեկտեմբերի 31-ին հրաման է լինում Գաբրիէլին երթալ Գրիգորուպօլ և այնտեղ սպասել առաջնորդի գալստեան։ Յունուարի 1-ին Գաբրիէլն արդէն այնտեղ է լինում և գնում է այցելութեան Յարութիւն Խուդաբաշխեանին, որ բնակւում էր իւր Գրիգոր եղբօր տանը. նա հիւանդ էր և անկողնում նստած, հաւի միս էր ուտում։ Նա հարցնում է Գաբրիէլին նորա Գրիգորուպօլ գալու պատճառը և իմանալով, որ եկել է ձեռնադրուելու, ասում է թէ չի ուզենայ նորան քահանայ տեսնել։ Գաբրիէլը պատասխանում է, թէ դորա շատ հեշտ ճանապարհը կայ՝ փոխուել առ Աստուած։ Նա ծիծաղում է և հաւի ոսկրը մնում է կոկորդում ու մեռնում է։ Յունուարի 10-ին գալիս է առաջնորդը, բերելով իւր հետ վարդապետներին, երիցակնոջը և ուրիշներին—ընդամենը 10 կառք։ Ձեռնադրութիւնը լինում է կիւրակէ, Յունուարի 17-ին և նորընծայ Տէր-Գաբրիէլը սկսում է քառասունք պահել ս. Նշան եկեղեցում։ Միւս օրը գալիս է նորան այցելութեան Սրբազանը և օրհնում ու վերջին պատուէրներն է տալիս, խոստանալով Քիշնևից ուղարկել նորա իրեղէնները և քահանայութեան վկայականը։ Տէր-Գաբրիէլի քառասունքի ձանձրացուցիչ միայնութիւնը փարատում ու մխիթարում են տեղի երկու զառամեալ քահանաները Տէր-Գէորգը և Տէր Յովհաննէսը, որոնք գալիս են նորա խուցը և հնութիւնից և մոռացուած անցեալից զանազան հետաքրքրական պատմութիւններ անում. նոքա, ի միջի այլոց, հաղորդում են նորան զանազան տեղեկութիւններ Ղրիմի գաղթականութեան մասին և մատնացոյց են անում մի ձեռագիր տետրակի վրայ, որ պահպանւում էր տեղացի բնակիչ ծերունի Դաւիթ-Բէկի մօտ, որ Ներսէս սրբազանի լաւ բարեկամն էր։ Նա խնդրում է այդ ձեռագիրը և նորա մէջ կարդալով վերոյիշեալ Տէր-Մարկոսի և Տէր-Բարդուղիմէոսի պատմութիւնը, ուղարկում է նոյն տետրակը կարդալու առաջնորդին. նա էլ տալիս է Սլամզարեանին, իսկ այդ վերջինը յանձնում է Ստեփան «կաշի» վարդապետին, որ հասցնէ Տէր-Գաբրիէլի ձեռքը, բայց նա չի կատարում այդ յանձնարարութիւնը և գնում է ս. Էջմիածին և ձեռագիրն էլ հետն է տանում։ Փետրուարի 28-ին լրանում է քառասունքը և Տէր-Գաբրիէլը, որ այդ ժամանակ լինում է ուղիղ 30 տարեկան, պատարագ է մատուցանում հերթով երկու եկեղեցում ևս և ժողովրդի ցանկութեամբ քարոզ է ասում։ Նոյն իսկ օրերը վախճանում է յիշեալ ծերունի Դաւիթ-Բէկը, և Ներսէսը նորից գալիս է Գրիգորուպօլ ներկայ գտնուելու իւր բարեկամի յուղարկաւորութեան. նա գամբանական է խօսում և հիացնում ժողովրդին, որ լսել էր Գիւմուշխանցի Մանուէլ վարդապետին, որ հռչակուած էր իբրև հրաշաքարոզ։

Ծաղկազարդին նա հրաման է ստանում գնալ Քիշնև և իսկոյն ճանապարհ է ընկնում, բայց կառապանի հարբած լինելու պատճառով, նա շեղւում է ճանապարհից և ընկնում է Բենդեր, որով և անակնկալ կերպով առիթ է ներկայանում նորան տեսնել և այդ քաղաքը։ Բայց Քիշնևից, Գրիգորուպօլից և Բենդերից նա այդ ժամանակները տեսնում է և Ակերման քաղաքը, ուր ուղարկում է նորան Քիշնևից առաջնորդը՝ Գրիգորի ժամանակներից մնացած առաջնորդապատկան իրեղէնները բերելու։ Տէր-Գաբրիէլին ճանապարհ ձգելու համար հաւաքւում

են առաջնորդարան Յարութիւն Սպանդարեանը, Քիշնեւի Գէորգ վարդապետը, Մկրտիչ վարդապետը, Յարութիւն աւագ քահանան, Սողոմոն Քէթխուդովը և միւսները։ Ներսէս Յովհաննէս սրբազանի Պատկանեանցին տուած վկայականից հաւաստիանալով, որ նա, երբ քահանայ ձեռնադրուի, իրաւունք պիտի ունենայ աւագութիւն ստանալու և «խաչայ փիլոն» կրելու, տալիս է նորան 200 րուբլի և պատուիրում է Օդեսսում գնել իւր համար ծաղկեայ փիլոնացու և նոյն գնով կամիլաւկայ։ Յարութիւն վարդապետին էլ հրամայում է մի թուղթ գրել Նախարարութեան Տէր-Գաբրիէլի մասին, թէ ինքը կոչել էր նորան Քիշնեւի հոգևոր կառավարութիւնը վերաձեւելու կոնսիստորիայի, և նա յաջողութեամբ կատարել է իւր հրամանը, որի համար և ինքը ձեռնադրեց նորան քահանայ Նախիջևանի Ս. Լուսաւորիչ եկեղեցու վերայ, յանձնելով նորան միանգամայն և բոլոր եկեղեցիների տնօրինութիւնը թէ Նախիջևանում և թէ շրջակայքում։ Ապրիլի 29-ին դուրս գալով Քիշնեւից, նա մայիսի 1-ին հասնում է Օդեսսա, որտեղ ներկայանալով Վորոնցովին, ստանում է Ներսէսի նամակը և նորանից էլ նամակ ստանալով Տագանրոգի քաղաքապետ Դունայեւի վերայ և տեղ հասցնելով, ժամանում է Նախիջեւան մայիսի 10-ին, ընդամենը մնալով Քիշինեւում 11 ամիս։

Ներսէսը հրամայել էր, որ վախճանած Տէր-Գաբրիէլեանի ծուխը տրուի Պատկանեանցին, բայց որովհետև ինքը հանգուցեալ Տէր-Գաբրիէլեանը իւր ծուխն անձամբ երբէք չէր հովուել, այլ Տէր-Մինասի և Տէր-Աստուածատուր Շապոշնիկեանի ձեռքով, այդ պատճառով էլ նորա մահից յետոյ նորա ծուխը մնացել էր նոցա ձեռքին։ Առաջնորդի հրամանի մէջ կար և այն պայմանը, որ ով այն ծխականներից կամենայ Պատկանեանցի ծուխը լինել, պէտք է թղթով յայտնէ այդ մասին հոգևոր կառավարութեան և կամ անձամբ երթայ և ձեռագիր տայ։ Սկսւում է խռովութիւն, որովհետև հոգևոր կառավարութեան դրան առաջ Մարկոս աղայի հրամանով կանգնում են լրտեսներ և եկող-գնացողներին բէշլիներով[7]) տանում են Մագիստրատ, որտեղ նոցա հայհոյում, նախատում և շատ նեղութիւն են տալիս, թէ ինչու նոքա Պատկանեանցի ծուխ են գրուել և գրւում։

Ներսէսը տեսնելով, որ այդ միջոցով չի կարողանում Տէր-Գաբրիէլի համար ծուխ կազմել, հրամայում է, որ առհասարակ ով որ կամենայ և ուրիշ ծխերից ինքնայօժար նորա ծուխը լինել, կարող է անարգել։ Այս միջոցը յաջողութիւն է գտնում, բայց ծուխ են գրւում միայն հալածեալները, վշտացեալները, խեղճերն ու աղքատները, և այդպիսի գերդաստանների թիւը հասնում է 150-ի։ Աստուած սակայն շուտով օրհնում է, և նորա ծխի մէջ էլ կարճ միջոցում երևում են հարուստներ և առհասարակ կարողութեան տէր մարդիկ։ Սակայն Տէր-Գաբրիէլի և նորա այդ ծխականների մէջ յաճախ պատահում էին դժուարութիւններ, որովհետև նա չէր սիրում ուտել, խմել, երկար նստել տներին, խնջոյքներին, հրաւէրքներին, ուստի և ծխականները կարծում էին, որ իրանց տան քահանան արհամարհում է, բանի տեղ չի դնում իրանց։ Եւ այս դժուարութիւնները բոլորը ևս բողոքի ձևով ու սև ու թանձրացած գոյներով գրւում էին առաջնորդին և այդ բոլորին էլ վկայութիւն էր տալիս Բղնունին, որ Տէր-Գաբրիէլի անկումը կամենում էր իւր համար բարձրանալու աստիճան շինել։

Այդ Բղնունի եպիսկոպոսը կամենում է մինչև անգամ թշնամութիւն սերմանել և Պատկանեանցի ընտանիքի մէջ. նա անդադար գրգռում էր նորա ծնողներին, թէ ինչու Տէր-Գաբրիէլը չի շտապեցնում տիրացու Պետրոսի ամուսնութիւնը, որ ինքը նորան քահանայ ձեռնադրէ, թէև ամենքն էլ գիտէին, որ նա իրաւունք չունի, չի կարող Ներսէսի վճռակում ձեռնադրութիւն անել։ Տէր-Գաբրիէլը ստիպուած է լինում հոգևոր կառավարութիւնից շուտով անցաթուղթ տալ եղբօրը, որ նա երթայ Հաշտարխան և ամուսնանայ։ Տիրացու Պետրոսը տանում է իւր հետ եղբօր նոր միայն գրած «Ցեփթայէ» բանաստեղծութիւններից մի օրինակ, որ տեսնում ու կարդում է Սերովբէ եպիսկոպոսը և այնքան հաւանում, որ Տէր-Գաբրիէլի անունը դնում է «Ցեփթայէի հեղինակ»։ Սիմէօն եպիսկոպոսը արգելք է լինում նորա գործունէութեան և հոգևոր կառավարութեան մէջ. նա սեփականել էր իրան բոլոր հոգևոր գործերի տնօրինելու իրաւունքը, իբրև պատկեր վճռակաւորի։ Տէր-Գաբ-

րիկը որպէս զի կարողանայ կառավարութեան վերին ատենա-նի խճճուած գործերը կարգի բերել, ստիպուած է լինում բոլոր իրաւունքը խլել նորա ձեռքից: Նա Յովհաննէս սրբազանի 1815-ին մացրած, բայց անգործադրելի մնացած հաշուեմատեան-ները աշխատում է գործադրել և պարզել եկեղեցիների եկա-մուտքը: Յայտնւում է, որ Լուսաւորիչ, Համբարձում և ս. Թո-րոս միասին ունին 10 հազար ռուբլի թղթադրամ, Ս. Գէորգ— 30 հազար, իսկ ս. Աստուածածինը, որ Մըկըր աղայի ձեռքին էր, ընդդիմանում է և հաշիւ չի տալիս, որից և առաջ է գա-լիս Մըկըր Պօղովի բազմակնճիռ հաշուետուութեան գործը, որի համար ուղարկւում է Նախիջևան Թադէոս վարդապետ Բէկնազարեանը:

Առաջնորդին Պատկանեանցի վերայ ուղարկուած բազմա-թիւ բողոքները, որոնց մէջ խառն էր, ինչպէս տեսցինք, և Բգնունի Սիմէօն եպիսկոպոսի ձայնը, վերջապէս, ունենում են իրեանց ազդեցութիւնը: Յանկարծ գալիս է Սողոմոն Բեթ-խուդովը և երեք օր մնալով եպիսկոպոսի տանը, վերջին, գնա-լու օրը միայն մտնում է Պատկանեանցի տունը, տալիս է Ներ-սէսի ծրարը և գնում է: Թղթի մէջ գրուած էր յանդիմանու-թիւն, հիմնուած գրպարտութիւնների և խեղաթիւրուած փաս-տերի վերայ, որից այնքան վշտանում է նա, որ «մի անսանձ մոլեգնութիւն» է ընկնում նորա սրտի մէջ, և նա մի յան-դուգն պատասխան է գրում, որ վերջանում էր հետևեալ խօս-քերով՝ «յերեսս ամենայն աղերսեմ տալ ինձ հրաման գալ 'ի Գրի-գորուպօլ և անդ 'ի ձեռուն առեալ երես առ երես վիճաբանել ընդ այնոսիկ, յորս միանգամայն մատնացոյց եղեալ է գրպար-տիչն, և թէ հաճոյ իցէ ձեռուն սրբազան քահանայապետու-թեան՝ յառենի անդ գացի և պատգամաւոր 'ի դիմաց Վորոն-ցով կոմսին»: Սորա հետևանքն այն է լինում, որ Ներսէս մխի-թարական նամակ է գրում նորան և հրամայում Սիմէօն եպիս-կոպոսին վերադառնալ Ս. Էջմիածին:

Տէր-Գաբրիէլը երբ վերադառնում է Քիշինեւից, ստիպ-ուած է լինում հրաժարուել քաղաքային վարժարանի ուսուց-չութեան պաշտօնից, որովհետև Մարկոս աղան տեսնելով, որ

նա պաշտօն է վարում և հոգևոր կառավարութեան մէջ, կրտ-րում է նորա ռոճիկը: Այն ժամանակ նա առաջնորդի հրամա-նով բաց է անում Հոգևոր վարժարան և իւր վարժապետու-թեան գործունէութիւնը փոխադրում է այնտեղ: Նոր բացուած դպրոցով Նախիջևանում դպրոցների թիւը այդ ժամանակ լի-նում է չորս՝ խօնախ կամ քաղաքային նորաշէն վարժարան, որի մէջ Մարկոս աղայի բարեհաճութեամբ վարժապետութիւն էր անում Թիֆլիզի Օհան անունով մէկը, որ իւր տգիտութեամբ յիշեցնում էր նախկին Յովհաննէս վարժապետին, Եկմեկեանի վարժարան, որի մէջ ծաղկած էր վայելչագրութեան արուեստը, և Թէոդորոս Խաչամեանի վարժարանը, որ շատ քիչ աշակերտ ունէր և այդ պատճառով էլ շուտով փակւում է, և Խաչա-մեանը գրագրի պաշտօն է ստանձնում Որբոց Իրաւարանում: Հոգևոր վարժարանը եկամուտ չունէր, միայն տունը վարձւում էր եկեղեցական փողով, որովհետև նոյն շէնքում տեղաւորուած էր և Հոգևոր կառավարութիւնը, իսկ ինքը Պատկանեանցը իւր վարժապետութեան համար ոչ մի վարձատրութիւն չէր ստա-նում: Այդ Հոգևոր վարժարանի աշակերտների համար է լինում, որ նա գրում է իւր «Նոր Յեփթայէ»-ն, որի մասին մենք վե-րը խօսեցինք:

Մարկոս աղան տեսնելով, որ իւր բողոքները մնացին ան-հետևանք և Պատկանեանցը քահանայ ձեռնադրուած վերադար-ձաւ Նախիջևան, ստանձնելով պաշտօն և Հոգևոր կառավարու-թեան մէջ և Հոգևոր վարժարան ևս բանալով, դիմում է մի ուրիշ միջոցի. 1832 թուի հոկտեմբերի 10-ին քաղաքական դումի ժողովում 186 մարդու ստորագրութեամբ մի համախօ-սական—«բրիկաւոր»-է կազմում և ուղարկում առաջնորդին, խնդրելով հեռացնել քաղաքից ոչ թէ միայն Տէր-Գաբրիէլին, այլ բոլոր Պատկանեանց տոհմը իբրև վնասակար, խռովութիւն յարուցանող և առաջնորդի սիրտը հասարակութիւնից սառե-ցնող: Թէ ինչ հետևանք է ունենում այդ համախօսականը, մենք չենք կարող ասել, բայց պէտք է կարծել, որ առաջնորդը ու-շադրութիւն չի դարձնում և դորա վերայ, որովհետև Պատ-

կանեանցը դորանից յետոյ էլ դեռ երկար ժամանակ մնում է Նախիջևանում [8]):

Գլուխ Է.

Զարմանալի և առ հասարակ տարօրինակ մի դրութիւն էր ստեղծուել Պատկանեանցի համար Նախիջևանում. քաղաքի մեծամեծները անօգուտ էին համարել նորա ծառայութիւնը հասարակութեան և չէին ուզեցել մինչև իսկ նորա մնալը քաղաքում, ինքը Պատկանեանցն էլ դուրս էր եկել քաղաքից, որ միւս անգամ այլ ևս չվերադառնայ, այլ փոխադրուի Հաշտարխան, Պետերբուրգ կամ մի ուրիշ տեղ, բայց առաջնորդը ներհակութեամբ նորան ձեռնադրել էր և ուղարկել քաղաք, և այն էլ մայր եկեղեցին։ Այս դեռ ոչինչ. նա, դուցէ, դեռ կարողանար մի տեսակ կառավարուել, եթէ քաշուած ապրէր, ճանաչէր միայն իւր ծուխը և շատ շփում չունենար քաղաքի կառավարիչների հետ—մագիստրատի, դումի, որբոց խրատարանի, քաղաքագլխի, հոգաբարձուների և այլն։ Բայց, արի տես, որ առաջնորդը նորան քարտուղար էր նշանակել Հոգևոր կառավարութեան մէջ և վերահսկող եկեղեցիների, ուրեմն, տուել էր նորան մի այնպիսի պաշտօն, որ նա կամայ թէ ակամայ պիտի ամենասերտ յարաբերութիւն ունենար երէցփոխների, քահանաների, Հոգևոր կառավարութեան անդամների և քաղաքի միւս կառավարիչների հետ։ Այս էլ դեռ բաւական չէր, ամեն մի կնճռոտ գործ, ամեն մի փափուկ յանձնարարութիւն, ամեն մի անձնականութիւն շօշափող ու դրամական հաշուի վերաբերեալ խնդիր առաջնորդը սովորութիւն էր արել նորա միջոցով կատարել, նորա ձեռքով լուծել։ Մի խօսքով, ի նկատի առնելով ժողովրդի և առաջնորդի թշնամական յարաբերութիւնը, կարելի է ասել, Պատկանեանցը դարձել էր մի միջնաթումբ, որին երկու կողմից էլ բաղխում էին մրրկայոյզ ծովի կատաղած ալիքները. նա եղել էր մի քաւութեան նոխազ, որի գլխին երկու կողմից էլ թափւում էին հարուածները։ Եթէ ազաների

սրտին ոչ ցանկալի մի կարգադրութիւն էր լինում Հոգևոր կառավարութեան անդամների, եկեղեցական դրամական հաշիւների, քահանաների և առ հասարակ ամեն հոգևոր գործի վերաբերմամբ, ուր շօշափւում էր սորա նորա անձնական և դրամական հաշիւները, իսկոյն այդ վերագրւում էր նորան, իբրև թէ այդ բոլորը կատարուել և կատարւում է նորա ցանկութեամբ, նորա ասելով, նորա գրելով, նորա դրդելով, և ահա բողոքներ էին, որ գնում էին Քիշինեւ, զրպարտութիւններ, չարախօսութիւններ, ամբաստանութիւններ էին, որ լինում էին նորա վերայ։ Առաջնորդն էլ տեսնելով բողոքների յաճախելը և Պատկանեանցի պատկերն էլ նորա մէջ հրէշային կերպով պատկերացած լինելը և, տեղի հեռաւորութեան պատճառով էլ, միջոց չունենալով սուտը ջոկել ճշմարտութիւնից, այդ բողոքներից եթէ տասին չէր հաւատում, տասից մէկին էլ է հաւատում էր և յանդիմանութիւն գրում նորան, երբեմն և պատժում՝ փիլոնն առնում։ Ինչ անէր Պատկանեանցը. եթէ մի բան այնպէս չէր անում, առաջնորդի հրամանը կամ յանձնարարութիւնը չկատարող էր հանդիսանում, եթէ, հակառակ առաջնորդի կամքին, թողնում դուրս էր գալիս Հոգևոր կառավարութիւնից, ըմբոստ էր համարւում և պատժւում։ Եթէ այս բոլորի վերայ աւելացնենք և Պատկանեանցի տաք խառնուածքը, ամեն բան սրտին մօտ ընդունելու յատկութիւնը, ամեն բանի հետաքրքիր լինելը, ամեն բան քրքրելը, տեղեկանալը, իմանալը, երևան հանելը և առ հասարակ նորա հարցասէր բնաւորութիւնը, հզօրների կամքին հակառակ գնալը, հասարակաց գործերին անձնականութիւն խառնելը և իւր եսը, խօսքը յամառ կերպով առաջ քշելու առանձնայատկութիւնը, կըստանանք մի կատարեալ պատկեր նորա կեանքում եղածի, անցած-գնացածի. չենք խօսում արդէն այն բանի մասին, որ արդէն շատ յաճախ էր «անսանձ մոլեգնութիւն ընկնում նորա սրտի մէջ», որ ստիպում էր նորան խօսելու, գրելու և կատարելու այնպիսի գործողութիւններ, որոնք հանում էին նորան պատշաճութեան և օրինականութեան սահմանից, նոյնպէս և որ նա յաճախ էր գործ դնում «խարդախ հնարիմացութիւն-

ներ», որ ուրիշ խօսքով նշանակում է, թէ նա շատ անգամ էր իրան թոյլ տալիս զեղծումներ գործելու իւր պաշտօնավարութեան գործերում։

«Երիկուորը» լինում է վերջին սխրագործութիւնը, որ Մարկոս աղան գործում է Պատկանեանի դէմ։ 1832 թիւը նորա քաղաքագլխութեան եռամեակի վերջին տարին էր, և նա այլևս յոյս չունէր նորից վերընտրուելու։ Սովորաբար երբ մէկի քաղաքագլխութեան եռամեակի վերջին տարուայ զատիկը մօտենում էր, չինանց մէջ արդէն սկսում էին խօսել նոր ընտրութիւնների մասին և զանազան թեկնածուների անուն մէջ բերել, և արդէն իսկ տարուայ վերջին ժողովրդի ձայնը որոշում էր, թէ առաջիկայ ընտրութիւններին ո՞վ պէտք է 70 քուէից մեծամասնութիւնը շահէ։ Այս անգամ էլ այսպէս է լինում, և ամէն տեղ խօսում ու որոշում են, որ Խալիբը պիտի ընտրուի քաղաքագլուխ 1833, 34 և 35 եռամեակի համար, ինչպէս որ լինում էլ է։ 1833 թուի տարեմտին հանդիսաւոր պատարագ է լինում Ս. Լուսաւորչում, և նորընտիր քաղաքագլուխը և դատաւորները երդուում են սրբութեամբ կատարելու իւրեանց պաշտօնը։ Եկեղեցուց ամենքը գնում են Մագիստրատ Դումի կողմը, որտեղ և Մարկոս աղան յանձնում է Խալիբին Դումի կնիքն ու քաղաքի գանձարանի բանալին, յետոյ անցնում են Մագիստրատի կողմը, որտեղ նոր դատաւորները նստում են իւրեանց աթոռները և լսում ու ընդունում հին դատաւորների և հոգաբարձուների շնորհաւորանքը։ Այդտեղից գնում են բազմութեամբ Մարկոս աղայի տունը և շնորհակալութիւն են յայտնում նորա եռամեայ ծառայութեան համար և ապա—Խալիբի տունը՝ շնորհաւորելու նորա ընտրութիւնը և յարգուելու։

Յարութիւն կամ Պապուկ Խալիբեանը աղա Պօղոս Խալիբեանի որդին էր։ Այդ Պօղոսը վախճանել էր Ս.-Պետերբուրգում, ուր գնացել էր նա Ղրիմից 1778 թուին միւս պատգամաւորների հետ կայսրուհու մօտ՝ գաղթականութեան խնդրի և արտօնութիւնների համար։ Նա թողել էր չորս զաւակ՝ մի որդի և երեք աղջիկ։ Որդին էր Յարութիւնը, որ հօր մահից

յետոյ մնացել էր շատ փոքր մօր խնամակալութեան ներքոյ։ Շուտով աղջիկներից մէկը հարսնանում է Գիւմուշցի Խաչերես աղա Համալեանին, իսկ միւսը, որի անունն էր Կատարինէ, Մահտեսի Եղիազարի որդի Պետրոս Բաբասինեանին, որ երկար ժամանակ վաճառականապետի պաշտօն վարելու պատճառով, սովորաբար կոչւում էր «Բազրրգեան-բաշի»։ Հանգուցեալ Պօղոսի այրին իւր աղջիկներին ամուսնացնելուց յետոյ, մնալով մենակ իւր փոքրիկ Յարութիւնի հետ, տեղափոխւում է իւր փեսայ Պետրոսի ճոխ տունը, և Յարութիւնը մեծանում է այդտեղ լիութեան և առատութեան մէջ։ Պետրոս Բաբասինեանը կրթում է Յարութիւնին առաջ Յովհաննէս վարժապետի, յետոյ Սերովբէ Պատկանեանցի մօտ, իսկ երբ այդ վերջինը տեղափոխւում է Հաշտարխան, նա յանձնելով նորան հօրից մնացած բաժինը=4 հազար «սոմ» գումար, տալիս է է Գէորգ աղա Օդաբաշեանի խանութը՝ հմտանալու առևտրական գործին։ Դորանից յետոյ շուտով երբ չափահաս է դառնում Յարութիւնը, Գէորգ աղան հաւանելով նորան, փեսայացնում է իրան և բնակեցնելով առանձին տան մէջ իւր բակում, մասնակից է անում իւր առևտրական գործին և հսկում է նորա վերայ, որ նա ապրի խնայողութեամբ և համեստութեամբ։ Պատմում են, որ յաճախ Գէորգ աղան հսկելու համար, գալիս, ծածուկ նայում է նորա պատուհանից, և երբ նկատում է նորա սեղանի վերայ մի որ և է զեղխութիւն, ներս է մտնում և նկատում։ Առևտրական գործերով սակաւ-սակաւ Յարութիւնը գնում է Մոսկով և Նիժնի տօնավաճառը և յաջող գործառնութեամբ շուտով բաւականին կարողութիւն է ձեռք բերում։ Նորա հարստութեան աղբիւրներից մէկն էլ լինում է տօնավաճառում իւր համաքաղաքացիների մուրհակները շատ էժան գնով ձեռք բերելը և ամբողջութեամբ խեղդելով ստանալը, որով շատ վատ օրինակ է լինում և ուրիշներին։ Բայց ամենագլխաւորը, որ նպաստում է նորան յետագայ ժամանակներում մեծ հարստութիւն դիզելու,—լինում է այն, որ նա կարողանում է յաջող առևտրական ընկերակցութիւն կազմել, որի միջոցով և սկսում է մեծ քանակութեամբ արդար իւղ բերել Սիբիրի կող-

մերից և շահաբեր ու արդիւնաւէտ վաստակով ներքի նահանգներում վաճառել և օտար երկրներ ևս արտահանել։

Յարութիւն Խալիբեանը թէև առաջին անգամն էր, որ ընտրւում էր քաղաքագլուխ, բայց արդէն հմուտ և լաւ ծանօթ էր քաղաքային գործերին և կառավարչական եղանակին. նա դեռ Խաչատուր Խումաջեանից առաջ երկրորդ անգամ քաղաքագլուխ ընտրուած Վարդերես Հայաջեանի ժամանակ նորա խորհրդատուն էր եղել, իսկ իւր աներոջ Գէորգ աղայի և Մարկոս աղայի ժամանակները միանգամայն տիրապետել էր նոցա կամքին և համարեա թէ ինքն էր կառավարում ու ընթացք տալիս քաղաքի բոլոր գործերին։ Նորա յարաբերութիւնը Ներսէսի և Պատկանեանցի հետ շատ վատ էր. նա էր խորհուրդ տուել վերոյիշեալ Տէր-Գաբրիէլ Տէր-Գաբրիէլեանին Ներսէսի թղթին այնպէս պատասխանել և նորա ցանկացած տեղեկութիւնները, նա մանաւանդ դրամական հաշիւները, չտալ. նա էր դրդել Մարկոս աղային այնպէս վարուել Պատկանեանցի հետ և այնպիսի ցնդաբանութիւններ ու յանդուգն թղթեր գրելու առաջնորդին. նա էր, վերջապէս, յորդորել Պատկանեանցին վարժապետութիւնից հանելու, քահանայ ձեռնադրուելուն արգելք լինելու, և այլն և այլն, որով և արժանացել էր դուրս դասուելու առաջնորդին հակառակ կուսակցութեան, որ իւր մի թղթում 1832 թուին Ներսէսը անուանել էր «Խալիբի որիկայք»։

Տէր-Գաբրիէլը, որ քանի ժամանակից ի վեր ճանաչում էր նորան և, իբրև հոգևոր գործերի կառավարիչ, յարաբերութիւն ունէր նորա հետ և որ աշխատում էր նորա սիրտը շահել, յաճախ զիջողութիւններ անելով նորան, այժմ էլ մի նամակ է գրում Ներսէսին և մեկնելով նորան գործի դրութիւնը և Խալիբի պէս մարդուն թշնամի ունենալու անշահաւէտութիւնը և, ընդհակառակը, նորան իրանց կողմը գրաւելու օգտակարութիւնը, խնդրում է, որ նա մի շնորհաւորական նամակ գրէ նորան, յոյս տալով, որ դորանով անշուշտ սէր և խաղաղութիւն կլինի նոցա մէջ։ Նամակի պատասխանը ստանում է Խաչատուր Խումաջեանը, ծրարի մէջ լինում է երկու նամակ՝

մէկը Խումաջեանին, որի մէջ գրած էր, թէ Պատկանեանցը այնքան յանդգնել է, որ իրան, առաջնորդին, խրատներ է գրել, իսկ միւսը՝ Պատկանեանցին, որի մէջ գրուած էր, թէ Նախիջևանում եղած խռովութիւնների պատճառը նա ինքն է, և հրամայում էր, որ այնուհետև նա իրաւունք չունենայ առանց գիտութեան Խաչատուր աղայի իրան նամակ գրելու։ Այս կողմից յոյսը կտրելով, նա դիմում է Խալիբին և համոզում ու յորդորում է նորան, որ նա անէ հաշտուելու առաջին քայլը և նամակ գրէ առաջնորդին, սակայն նա թէև չէ չի ասում, բայց անվերջ յետաձգում է, մինչև որ հասնում է զատիկը և, երաշտութիւն լինելու պատճառով, յայտնւում է, որ հացի թանգութիւն պիտի լինի։ Պատկանեանցը Լուսաւորչի երէցփոխ Զախըրեան Յովհաննէս աղայի ձեռքով հանում է եկեղեցու փողը և ցորեն է գնում, որով մի կողմից հացի թանգութեան առաջն է առնում, միւս կողմից էլ եկեղեցու շահն է աւելացնում, որովհետև փողը քանիցս դարձուած է անում և տոկոս բերում։ Այդ սովի խնդիրը շատ ասէկօսէի առարկայ է լինում քաղաքում։ Ոմանք ասում են, թէ Խալիբեանք են այդ արուեստականօրէն սարքել, որ աղքատ ժողովուրդը սովամահ լինի, կոտորուի, և «Օղուրսըզ»—բարի-չէին համարում Պապուկ աղայի քաղաքագլխութիւնը, որովհետև այդ պատահում է հէնց նորա քաղաքագլխութեան առաջին տարին. ոմանք էլ՝ Խալիբեանք, Մըկրբեանք և Վարդերեսեանք, ասում էին, թէ Տէր-Գաբրիէլն է «վեցհազարեակի» հնարքով այն սովը բերել Նախիջևան, և նա յաճախ այդպէս պիտի անէ, երբ նորա ու ժողովրդի մէջ ծագի խռովութիւն։ Բայց այդ չի վնասում Պատկանեանցին, ընդհակառակը, շատերը սկսում են ապաւինել նորա աղօթքին, և 1834-ի ծննդեան ու զատկին հարիւրաւոր տներ հրաւիրում են նորան, որ նա գայ և իրանց տները օրհնէ։

Նախիջևանի երէցփոխները գանգատւում էին, թէ քահանաներն ինքնագլուխ գանձանակ են շրջեցնում եկեղեցիներում, բայց թէ հաւաքուած փողն ինչ է լինում, յայտնի չէ։ Երբ այդ գանգատներն անում են և տրտունջը սաստկանում՝ Տէր-Գաբրիէլը հաւաքում է հոգևոր կառավարութիւն քահա-

նաներին և երէցփոխներին՝ մի կարգ դնելու, վերացնելու սըրատնչների պատճառը: Քահանաները պնդում են, որ երէցփոխները չխառնուեն այդ գործին, որովհետև նոքա այդ գանձանակներից բաժին են հանում իւրեանց չքաւոր ազգականներին. երէցփոխներն էլ մեղադրում էին քահանաներին: Տէր-Գաբրիէլը տեսնելով, որ երկու կողմն էլ սուտ ու խարդախ են, հրաւիրում է «աղքատաց գանձապետին» և առաջնորդական գործակատարին, որ նոցա միջոցով կարողանայ հաշտեցնել և մի որոշ սահման դնել, բայց նոքա մէկզմէկու վերայ յարձակուելով, կռւում են և թողնում, հեռանում են կառավարութիւնից: Այն ժամանակ Պատկանեանցը կարգադրում է, որ երբ մի քահանայի ծխի մէջ հարկաւոր լինի մի ընտանիքի համար գանձանակ շրջեցնել, այն քահանան առնէ տոմսակ երէցփոխի և տանէ, տայ աղքատաց գանձապետին, և նա այն տոմսակը ուղարկէ քաղաքագլխին, որ երբ իւր ստորագրութեամբ վաւերացնէ այն, նոյն տոմսակի զօրութեամբ Հոգևոր կառավարութիւնը հրաման տայ քահանային ծանուցում անել և գանձանակ շրջեցնել և արդիւնքը հասցնի գանձապետին, որ նա հատուցանէ չքաւոր ընտանիքին: Պատկանեանցի այս կարգադրութիւնը առաջնորդական գործակատարին և Հոգևոր կառավարութեան անդամներին բողոքելու առիթ է տալիս նորա վերայ. նոքա մեղադրում էին Պատկանեանցին, որ նա դորանով Հոգևոր կառավարութիւնը ենթարկել է մարմնաւոր իշխանութեան, իսկ Տէր-Աստուածատուր քահանայ Շապոշնիկեանը գրում է Ներսէսին, թէ Պատկանեանցը, որ չկարողացաւ նամակագրութեամբ հաշտեցնել սրբազանին Խալիբի հետ, այդ միջոցով կարողացաւ այնպէս անել, որ Խալիբի մատը լինի Հոգևոր կառավարութեան գործերի մէջ: Թէև Պատկանեանցը գրում, ցրում է իւր վերայ եղած բողոքները և վերականգնում է ճըշմարտութիւնը, բայց արդէն ուշ է լինում, դորանից առաջ բողոքները ստանալուն պէս, առաջնորդը արդէն գրած է լինում նորան յանդիմանութիւն:

Յարութիւն վարդապետ Ալամդարեանը, որ Հաշտարխանից գնացել էր Մոսկով 1815-ին և մնացել էր այնտեղ մինչև

1823-ը, այնտեղից էլ գնացել էր Թիֆլիս և մնացել էր մինչև 1828-ը և մեկնել էր Քիշինև 1831-ին, առաջնորդի հրամանով 1833 թուին, Խալիբի քաղաքագլխութեան առաջին տարին, գալիս է Նախիջևանի Ս. Խաչ վանքը և այդտեղ օրէցօր սպասում է, որ կըստանայ և վանահայրութեան և քաղաքի ու գիւղերի յաջորդութեան պաշտօնները: Սակայն նա սխալւում է. նորա ակնկալիքը զուր է լինում, չի կատարւում, և նա այդ բոլորը վերագրում է Պատկանեանցին ու սաստիկ զայրանում նորա վերայ ու վշտանում: Նախիջևանցիք կամենում են նորան ոչ թէ միայն վանահայր և յաջորդ տեսնել, այլ և առաջնորդ, և այդ նպատակով մի բազմաստորագիր թուղթ են գըրում կաթուղիկոսին. իսկ ինքն Ալամդարեանցը «կաշի» կոչուած Ստեփան եպիսկոպոս Վեհապետեանի միջոցով յարաբերութեան մէջ է մտնում կաթուղիկոսի հետ առաջնորդութեան գործի համար: Բայց այդ էլ անիրագործելի է մնում, որովհետև Կարբեցին ասում է, թէ թողնենք Ներսէսին հանդիստ իւր առաջնորդական աթոռի վերայ, որ նա էլ մեզ հանգիստ թողնէ մեր հայրապետական գահի վերայ: Երկու տեղից էլ յոյսը կորելով, նա իր բոլոր զայրոյթը թափում է Պատկանեանցի վերայ, աշխատելով իւր այդ անյաջողութեան վրէժը նորանից առնել, նամանաւանդ որ Խալիբեանք անդադար գրգռում ու գրգռում էին նորան: Նա միշտ գնում գալիս է Սերովբէ վարդապետի տունը, որովհետև իւր փեսան ախրացու Պետրոսն անբաժան ապրում էր իւր եղբօր հետ միասին հօր տանը, և բնականապէս յաճախ պատահում էր Տէր-Գաբրիէլին և ամեն անգամ էլ առանց խօսք ու զրոյցի, առանց Տէր-Գաբրիէլին վիրաւորելու, սիրտը խոցելու չէր լինում: Յարութիւն վարդապետի այդպիսի վարմունքի յաճախ կրկնուելը, հետզհետէ սրում էր նոցա յարաբերութիւնը և ատելութեան ու թշնամութեան սերմեր ցանում նոցա սրտերում և պատրաստում հողը՝ այդ բոլորը մի օր սաստկապէս բռնկեցնելու, որ և պատահում է 1834 թուի տարեմտին եկեղեցում: Ալամդարեանը այդ օրը քարոզ է խօսում Ս. Լուսաւորչում և էլ նախատինք չի մնում, որ չթափի Պատկանեանցի գլխին: Տէր-Գաբրիէլը, որ

առաջուց գորգ էր փռել, պատրաստել տուել քարոզչի համար, երբ քարոզը վերջանում է և նա գալիս է կանգնելու այդ գորգի վերայ, առնում է գորգը և շպրտում ժողովրդի գլխի վերայից ժամկոչին. ասելով՝ «Առ այդ գորգը, դորա վերայ կանգնողը դեռ չեկաւ կամ չի եկել»: Մեծ շփոթութիւն է ընկնում եկեղեցու մէջ, և ժողովուրդը պառակտւում է երկու մասի՝ ոմանք Ալամդարեանի կողմնակից և ոմանք Պատկանեանցի:

Խալիբեանք կամենալով վիրաւորել Պատկանեանցին Մըկրտիչ Մոռոզովի պսակը Բազիրգեան-բաշի Պետրոսի դստեր հետ կատարել է տալիս Յարութիւն վարդապետին. Նոյն Խալիբեանց աշխատանքով Յարութիւն վարդապետը զատկին շատ տեղ տնօրհնէք է ման գալիս և մեծապէս արդիւնաւորւում: Զատկից յետոյ Ալամդարեանը հրամայում է իւր փեսայ տիրացու Պետրոսին, որ նա բաժանուի եղբօրից և առանձին բնակի, որ և նա կատարում է մայիսին, երբ դեռ իւր Քերովբէ որդին մի տարեկան էր: Այդ ժամանակները վախճանում է Մրգալաբոնեան Մանուկ Դէվէճեանի կինը, Խօջայեան Գաբրիէլ աղայի դուստրը, որի թաղման հրաւիրւում է և Յարութիւն վարդապետը և մի այնպիսի դամբանական է արտասանում, որ կարելի էր համարել հայ պերճաբանութեան օրինակ: Յուղարկաւորութիւնից յետոյ նա գնում է իւր դստեր նոր բնակարանը շնորհաւորելու, երբ նա ներս է մտնում, պառկում է տախտակաշարի վերայ և բացագանչում՝ «Փառք քեզ, Աստուած, որ իմ զաւակի տանը կարողացայ ոգի առնել»: Միւս առաւօտ, որ երկուշաբթի էր, լսւում է քաղաքի մէջ, թէ աւազակները տեղեկանալով, որ Յարութիւն վարդապետը զատկին տնօրհնէքից մեծ արդիւնք է ստացել, գնացել են Ս. Խաչ վանքը, կոտորել են երկու վարդապետներին և մերձ ի մահ վիրաւորել են Ալամդարեանին սրով ու երկաթէ գործիքով:

Այդ լուրի վերայ քաղաքի երևելիներն իսկոյն հաւաքւում, գնում են և Յարութիւն վարդապետին դիականման դագաղի մէջ դրուած բազմութեամբ բերում են քաղաք: Բժիշկներից մէկը յանձն է առնում բժշկելու նորան, բայց իզուր. 23 վէրք

էր ստացել նա, և ամէն մի վէրքն օրը երեք անգամ խարւում էր: Տէր-Գաբրիէլը հէնց նոյն օրը, երբ մարմինը բերում են, գնում և հաշտւում է նորա հետ. Նա Յարութիւն վարդապետի բերանից մի մեղայական նամակ է գրում Ներսէսին և տանում, ողոքանքով և աղաչանքով ստիպում, որ ձեռք դնէ, բայց նա թէև յօժարում է, սակայն ձեռք չունէր, որ ստորագրէր, որովհետև ձեռքը միջահատ կտրուած էր և միայն մէկ ջլի վրայ կախուած էր մնացել: Միտքն է բերում Պատկանեանցը Ներսէսի այն խօսքը, որ նա ասել էր նորան Ալամդարեանի վերաբերմամբ Քիշինևում իւր ճանապարհ դուրս գալու ժամում առաջնորդարանի պարտիզում, թէ այս նամակ գրողի ձեռքը կտրուի և այս խօսքը բերանից հանողի լեզուն պապանձուի: Ձեռքը կտրուել էր, լեզուն էլ մահից մի քանի օր առաջ կապուեց: Հոգեվարքը մի քանի օր երկարում է և մեղայական նամակը, որ ինքը Պատկանեանցը ստորագրել էր նորա տեղ, դեռ հասած չի լինում առաջնորդին, որ նա վախճանում է և թաղւում վանքի սրահում, որտեղ նա կամենում է եղել իրագործել այն, որ ցանկացել էր Յովսէփ Արղութեանը, բայց չէր յաջողել, այսինքն Ս. Խաչը դարձնել հայերի համար մի նոր Մխիթարեան ուխտ:

Այնուհետև Խալիբեանք աշխատում են իւրեանց կողմը քաշել Թադէոս վարդապետ Բէկնազարեանցին, որ, ինչպէս ասացինք, եկել էր Նախիջևան Մըկըր Պօղոսի Ս. Աստուածածնայ եկեղեցու հաշուետուութեան գործի քննութեան համար, և իւրեանց ազդեցութեան և հարստութեան շնորհիւ շուտով յաջողում են իւրեանց և այդ ձեռնարկութեան մէջ և թշնամացնում են վարդապետին Պատկանեանցի հետ: Առաջ, երբ Պատկանեանցը յարուցանում է այդ խնդիրը, Ներսէս մի առանձին ուշադրութիւն չի դարձնում դորա վերայ, բայց յետոյ երբ բողոքներ են լինում այդ մասին նախարարութեան, նա անմիջապէս հրամայում է Հոգևոր կառավարութեան և Պատկանեանցին, որ Մագիստրատի միջոցով շուտով հաշիւները պահանջէն, բայց Մագիստրատը Խալիբի թելադրութեամբ լռում է, Մըկըր աղան էլ հրաժարւում է հաշուետուութիւնից:

Պատկանեանցի թշնամիները շտապում են հասկացնել առաջնորդին, թէ հաշիւ չներկայացնելու պատճառը ինքը Պատկանեանցն է, որ եթէ նա չլինի, այդ գործը շատ շուտ վախճան կըստանայ։ Պատկանեանցը տեսնելով, որ իւր պատճառով խռովութիւնը զօրանում է, գրում է այդ մասին առաջնորդին և հրաժարւում է հոգևոր կառավարութեան քարտուղարութեան պաշտօնից, որի հետևանքն այն է լինում, որ առաջնորդը այդ ըմբոստութիւն համարելով, զրկում է նորան քահանայագործութեան իրաւունքից։ Պատկանեանցի հրաժարուելովը սակայն խնդիրը չի լուծւում, Մըկըր աղան դարձեալ հաշիւներ չի տալիս, որից հասկացւում է, որ, ուրեմն Պատկանեանցը չի եղել պատճառը։ Առաջնորդն ուղարկելով Թադէոս վարդապետին, կարգում է նորան քննիչ այդ գործին, պատուիրելով միանգամայն, որ եթէ Պատկանեանցը համաձայնի նորից մտնել հոգևոր կառավարութիւն, դարձնել նորան քահանայութիւնը և օգնական առնել նորան քննութեան գործում։ Պատկանեանցը չի համաձայնում. նա նստում է տանը և վարժապետութիւն է անում հոգևոր վարժարանում, շատանալով այն չնչին արդիւնքով, որ ստանում էր գըլխաւորապէս հոգևոր կոչման պատրաստուող աշակերտներից։ Դոքա, այդ հոգևորական աշակերտները, շատ գլխացաւանք էին տալիս իւրեանց ուսուցչին. Նոքա դժգոհութեամբ էին յաճախում դպրոց. նոքա ըմբոստ էին և պատիւ ու պարծանք էին համարում իւրեանց համար գրպարտելու իրանց ուսուցչին, նա մանաւանդ որ այդ ըմբոստութիւնն ու գրպարտութիւնը վարձատրւում էր Խալիբից։ Բաւական էր, որ մէկն այդ աշակերտներից թողնէր Պատկանեանցին և անցնէր Խալիբի կողմը, —այդպիսին իսկոյն կըվարձատրուէր։ Շատ օրինակներ եղան, որոնց մէջ առաջինը Գանձապետեան պատանին էր, որ յետոյ, իբրև վարձատրութիւն, եղաւ Տէր-Թովմաս և միշտ մնաց Խալիբի սիրելին ու պրոտեժէն, ինչպէս և տիրացու Ալեքսան Զորայեանը, որ քանի հաւատարիմ էր Պատկանեանցին, ատելի էր, բայց հէնց որ հեռացաւ նորանից, պաշտպանութիւն գտաւ ամենից։ Ներսէս տեսնելով նորա յամառութիւնը, աւելի

ևս բարկանում է. նա կամենալով նիւթականապէս աւելի ևս նեղ վիճակի մէջ ձգել և այդպիսով ստիպել նորան կատարել իւր կամքը, հրամայում է փակել հոգևոր վարժարանը և զրկել նորան վերջին արդիւնքից։ Այդ հրամանի վերայ 1836 թուին, Գաբրիէլ աղա Խօջայեանի քաղաքագլխութեան առաջին տարին, փակւում է հոգևոր վարժարանը, գոյութիւն ունենալով ընդամենը 4 տարի բոլոր ժամանակ Պատկանեանցի ղեկավարութեամբ, որ ծառայում էր առանց ռոճկի։

1836 թուի ապրիլին Տէր-Գաբրիէլի ծնողները յանկարծ թողնում, գնում են Հաշտարխան, որ շատ բամբասանքի առիթ է լինում քաղաքում։ Ինքը Տէր-Գաբրիէլն էլ միտքը դրած է լինում գնալ այնտեղ, ուր կանչում էր նորան Սերովբէ եպիսկոպոսը, որ ձեռնադրել էր նորա եղբօրը Պետրոսին քահանայ Ստաւրապօլ քաղաքի վերայ և դեռ նորա պսակուելու ժամանակ Հաշտարխանում կարդացած լինելով «Նոր-Յեփթայէն», ապսպրել էր, որ դորա հեղինակը գայ իւր մօտ, ասելով, թէ երբէք նորա և Ներսէսի մէջ հաշտութիւն չի լինիլ, որովհետև նոքա երկուսն էլ «ես շատ գիտեմ» ասող են։ Բայց գնալու համար հարկաւոր էր անցաթուղթ, որ Ներսէս երբէք չէր տալ նորան, ուստի և նա կաշկանդուած մնում էր Նախիջևանում։ Դոյն իսկ 1836 թուին վախճանւում է Սերովբէ վարժապետը Հաշտարխանում, և Տէր-Գաբրիէլը վերջնականապէս փոխում է իւր մտադրութիւնը Հաշտարխան տեղափոխուելու։ Նա այդ ժամանակները նիւթականապէս ամենախղճուկ վիճակի մէջ է լինում. ամեն տեղից արդիւնքը կտրուել էր և ապրելու, ընտանիք պահելու ոչ մի աղբիւր չէր մնացել։ Ընտանիքն էլ մեծացել էր. սարկաւագութեան ժամանակ ծնուել էին Յովհաննէս, Մարիամ և Ռափայէլ զաւակները, քահանայութեան ժամանակ—Վառվառէն և Վահագն։ Նա ապրուստի միջոց հայթայթելու համար, մտածում է բանալ իւր սեփական մասնաւոր վարժարանը և այդ նպատակով գնում է մերձակայ Ռոստով քաղաքը, քննութեան ենթարկւում արքունի գաւառական վարժարանում, ստանում վկայական և իրաւունք մասնաւոր դպրոց բանալու Նախիջևանում—երկլեզուեան վարժա-

րան հայոց և ռուսաց, որից այնքան գժգոհ է Միւռ Ներսէս, որ մինչև իսկ այդ մասին գրում է և նախարարութեան։ Ահա՛ Տէր-Գաբրիէլի այդ մասնաւոր դպրոցումն է լինում, որ աշակերտում են նորան Միքայէլ Նալբանդեանը, Խրլըչեան Յակովբը, Գրիգոր Սալտիկեանը և միւսները։

Գլուխ Ը.

Խալիբի քաղաքագլխութեան առաջին եռամեակին գալիս է Նախիջևան յայտնի Ալթունեան Մանուէլ վարդապետ Գիւմուշխանցին, որ իբր թէ Ներսէսի վիճակից փախչելով, գնում էր այդ ժամանակները Ս. Էջմիածին. Նա հասնում է Ջաւկի հրապարակին , կէս գիշերից անց, առաւօտեան դէմ, և ուղղակի գնում է եկեղեցի և հրամայում առաւօտեան ժամը սկսել, այնպէս որ երբ Տէր-Գաբրիէլը, որ աւագին պատարագիչ պիտի լինէր, գալիս է ժամ, տեսնում է, որ արդէն գիշերային ժամն սկսել են և երգում են «Տէր, զի բազում»-ը և որ դասում մի վեղարաւոր կայ կանգնած, որ հրամայել է այդպէս վաղ սկսել ժամերգութիւնը և ասել է, թէ ինքը պիտի լինի պատարագիչ։ Նա խոնարհութեամբ մօտենում է վարդապետին և ողջունում է, իսկ նա սկսում է յանդիմանել ու նախատինք թափել նորա գլխին և, ի միջի այլոց, կոչում է նորան «չարագրգիռ խանգարիչ ազգի՝ դև Գաբրիէլ»։ Տէր-Գաբրիէլը չի դժկամակում, չի վրդովւում, այլ միշտ քաղցրութեամբ է պատասխանում, որովհետև հասկանում է նորա հոգու որպիսութիւնը, հասկանում է, որ նա նոյնպէս մոլորուած ու սխալուած է, ինչպէս շատերը, որոնք կարծում էին, որ նա Նախիջևանում իսկապէս պատկերն է Ներսէսի և յօժարութեամբ է կատարում նորա բոլոր հրամանները։

Այս Մանուէլ վարդապետը քանի որ Գրիգորուպօլում գործել էր Ներսէսի ծրագրով, հաճոյ էր եղել նորան, բայց երբ սկսել էր հակառակ գնալ, իսկոյն և եթ նա գրել էր Ս. Էջմիածնից Յովհաննէս Կառնակերեանին, որ նա փոխադրէ նորան

Ներսէսը տեսնելով, որ այդ միջոցով չի կարողանում Տէր-Գաբրիէլի համար ծուխ կազմել, հրամայում է, որ առհասարակ ով որ կամենայ և ուրիշ ծխերից ինքնայօժար նորա ծուխը լինել, կարող է անարգել։ Այս միջոցը յաջողութիւն է գտնում, բայց ծուխ են գրւում միայն հալածեալները, փչացեալները, խեղճերն ու աղքատները, և այդպիսի գերդաստանների թիւը հասնում է 150-ի։ Աստուած սակայն շուտով օրհնում է, և նորա ծխի մէջ էլ կարճ միջոցում երևում են հարուստներ և առհասարակ կարողութեան տէր մարդիկ։ Սակայն Տէր-Գաբրիէլի և նորա այդ ծխականների մէջ յաճախ պատահում են դժուարութիւններ, որովհետև նա չէր սիրում ուտել, խմել, երկար նստել տօներին, խնջոյքներին, հրաւէրքներին, ուստի և ծխականները կարծում էին, որ իրանց տան քահանան արհամարհում է, բանի տեղ չի դնում իրանց։ Եւ այս դժուարութիւնները բոլորը ևս բողոքի ձևով ու սև ու թանձրացած գոյներով գրւում էին առաջնորդին և այդ բոլորին էլ վկայութիւն էր տալիս Բզնունին, որ Տէր-Գաբրիէլի անկումը կամենում էր իւր համար բարձրանալու աստիճան շինել։

Այդ Բզնունի եպիսկոպոսը կամենում է մինչև անգամ թշնամութիւն սերմանել և Պատկանեանցի ընտանիքի մէջ. Նա անդադար գրգռում էր նորա ծնողներին, թէ ինչո՞ւ Տէր-Գաբրիէլը չի շտապեցնում տիրացու Պետրոսի ամուսնութիւնը, որ ինքը նորան քահանայ ձեռնադրէ, թէև ամենքն էլ գիտէին, որ նա իրաւունք չունի, չի կարող Ներսէսի վիճակում ձեռնադրութիւն անել։ Տէր-Գաբրիէլը ստիպուած է լինում հոգևոր կառավարութիւնից շուտով անցաթուղթ տալ եղբօրը, որ նա երթայ Հաշտարխան և ամուսնանայ։ Տիրացու Պետրոսը տանում է իւր հետ եղբօր նոր միայն գրած «Յեփթայէ» բանաստեղծութիւններից մի օրինակ, որ տեսնում ու կարդում է Սերովբէ եպիսկոպոսը և այնքան հաւանում, որ Տէր-Գաբրիէլի անունը դնում է «Յեփթայէի հեղինակ»։ Սիմէօն եպիսկոպոսը արգելք է լինում նորա գործունէութեան և հոգևոր կառավարութեան մէջ. Նա սեփականել էր իրան բոլոր հոգևոր գործերի տնօրինելու իրաւունքը, իբրև պատկեր վիճակաւորի։ Տէր-Գաբ-

բիէլը որպէս զի կարողանայ կառավարութեան վերին ատեանի խճճուած գործերը կարգի բերել, ստիպուած է լինում բոլոր իրաւունքը խլել նորա ձեռքից։ Նա Յովհաննէս սրբազանի 1815-ին մտցրած, բայց անգործադրելի մնացած հաշուեմատեանները աշխատում է գործադրել և պարզել եկեղեցիների եկամուտքը։ Յայտնւում է, որ Լուսաւորիչ, Համբարձում և ս. Թորոս միասին ունին 10 հազար ռուբլի թղթադրամ, Ս. Գէորգ — 30 հազար, իսկ ս. Աստուածածինը, որ Մըկըր ադայի ձեռքին էր, ընդդիմանում է և հաշիւ չի տալիս, որից և առաջ է գալիս Մըկըր Պօղովի բազմակնճիռ հաշուետուութեան գործը, որի համար ուղարկւում է Նախիջևան Թադէոս վարդապետ Բէկնազարեանը։

Առաջնորդին Պատկանեանցի վերայ ուղարկուած բազմաթիւ բողոքները, որոնց մէջ խառն էր, ինչպէս ասացինք, և Բզնունի Սիմէօն եպիսկոպոսի մատը, վերջապէս, ունենում են իւրեանց ազդեցութիւնը։ Յանկարծ գալիս է Սողոմոն Քեթխուդովը և երեք օր մնալով եպիսկոպոսի տանը, վերջին, գնալու օրը միայն մտնում է Պատկանեանցի տունը, տալիս է Ներսէսի ծրարը և գնում է։ Թղթի մէջ գրուած էր յանդիմանութիւն, հիմնուած գրպարտութիւնների և խեղաթիւրուած փաստերի վերայ, որից այնքան վշտանում է նա, որ «մի անսանձ մոլեգնութիւն» է ընկնում նորա սրտի մէջ, և նա մի յանդուգն պատասխան է գրում, որ վերջանում էր հետևեալ խօսքերով՝ «յերևս անկեալ աղերսեմ տալ ինձ հրաման գալ 'ի Գրիգորուպօլ և անդ 'ի ձերում ատենի երես առ երես վիճաբանել ընդ այնոսիկ, յորս միանգամայն մատնացոյց եղեալ է գրպարտիչն, և թէ հաճոյ իցէ ձերում սրբազան քահանայապետութեան՝ յատենի անդ գացի և պատգամաւոր 'ի դիմաց Վօրօնցով կոմսին»։ Սորա հետևանքն այն է լինում, որ Ներսէս մխիթարական նամակ է գրում նորան և հրամայում Սիմէօն եպիսկոպոսին վերադառնալ Ս. Էջմիածին։

Տէր-Գաբրիէլը երբ վերադառնում է Քիշնևից, ստիպուած է լինում հրաժարուել քաղաքային վարժարանի ուսուցչութեան պաշտօնից, որովհետև Մարկոս աղան տեսնելով, որ

նա պաշտօն է վարում և հոգևոր կառավարութեան մէջ, կրճատում է նորա ռոճիկը։ Այն ժամանակ նա առաջնորդի հրամանով բաց է անում Հոգևոր վարժարան և իւր վարժապետութեան գործունէութիւնը փոխադրում է այնտեղ։ Նոր բացուած դպրոցով Նախիջևանում դպրոցների թիւը այդ ժամանակ լինում է չորս՝ խօնախ կամ քաղաքային Նորաշէն վարժարան, որի մէջ Մարկոս աղայի բարեհաճութեամբ վարժապետութիւն էր անում Թիֆլիզի Օհան անունով մէկը, որ իւր ադիտութեամբ յիշեցնում էր նախկին Յովհաննէս վարժապետին, Եկանեանի վարժարան, որի մէջ ծաղկած էր վայելչագրութեան արուեստը, և Թէոդորոս Խաղամեանի վարժարանը, որ շատ քիչ աշակերտ ունէր և այդ պատճառով էլ շուտով փակւում է, և Խաղամեանը գրագրի պաշտօն է ստանձնում Որբոց Իրաւարանում։ Հոգևոր վարժարանը եկամուտ չունէր, միայն տունը վարձւում էր եկեղեցական փողով, որովհետև նոյն շէնքում տեղաւորւում էր և Հոգևոր կառավարութիւնը, իսկ ինքը Պատկանեանցը իւր վարժապետութեան համար ոչ մի վարձատրութիւն չէր ստանում։ Այդ Հոգևոր վարժարանի աշակերտների համար է լինում, որ նա գրում է իւր «Նոր Յեփթայէ»-ն, որի մասին մենք վերը խօսեցինք։

Մարկոս աղան տեսնելով, որ իւր բողոքները մնացին անհետևանք և Պատկանեանցը քահանայ ձեռնադրուած վերադարձաւ Նախիջևան, ստանձնելով պաշտօն և Հոգևոր կառավարութեան մէջ և Հոգևոր վարժարան ևս բանալով, դիմում է մի ուրիշ միջոցի. 1832 թուի հոկտեմբերի 10-ին քաղաքական դումի ժողովում 186 մարդու ստորագրութեամբ մի համախօսական — «բրիկաւոր»-է կազմում և ուղարկում առաջնորդին, խնդրելով հեռացնել քաղաքից ոչ թէ միայն Տէր-Գաբրիէլին, այլ բոլոր Պատկանեանց տոհմը իբրև վնասակար, խռովութիւն յարուցանող և առաջնորդի սիրտը հասարակութիւնից սառեցնող։ Թէ ինչ հետևանք է ունենում այդ համախօսականը, մենք չենք կարող ասել, բայց պէտք է կարծել, որ առաջնորդը ուշադրութիւն չի դարձնում և դորա վերայ, որովհետև Պատ-

կանեանցը դորանից յետոյ էլ դեռ երկար ժամանակ մնում է Նախիջևանում [8]):

Գլուխ Է.

Զարմանալի և առ հասարակ տարօրինակ մի դրութիւն էր ստեղծուել Պատկանեանցի համար Նախիջևանում. քաղաքի մեծամեծները անօգուտ էին համարել նորա ծառայութիւնը հասարակութեան և չէին ուզեցել մինչև իսկ նորա մնալը քաղաքում, ինքը Պատկանեանցն էլ դուրս էր եկել քաղաքից, որ միւս անգամ այլ ևս չվերադառնայ, այլ փոխադրուի Հաշտարխան, Պետերբուրգ կամ մի ուրիշ տեղ, բայց առաջնորդը ներհակութեամբ նորան ձեռնադրել էր և ուղարկել քաղաք, և այն էլ մայր եկեղեցին։ Այս դեռ ոչինչ. նա, դուցէ, դեռ կարողանար մի տեսակ կառավարուել, եթէ քաշուած ապրէր, ճանաչէր միայն իւր ծուխը և շատ շփում չունենար քաղաքի կառավարիչների հետ—մագիստրատի, դումի, որբոց խրատարանի, քաղաքագլխի, հոգաբարձուների և այլն։ Բայց, արի տես, որ առաջնորդը նորան քարտուղար էր նշանակել հոգևոր կառավարութեան մէջ և վերահսկող եկեղեցիների, ուրեմն, տուել էր նորան մի այնպիսի պաշտօն, որ նա կամայ թէ ակամայ պիտի ամենասերտ յարաբերութիւն ունենար երէցփոխների, քահանաների, հոգևոր կառավարութեան անդամների և քաղաքի միւս կառավարիչների հետ։ Այս էլ դեռ բաւական չէր, ամեն մի կնճռոտ գործ, ամեն մի փափուկ յանձնարարութիւն, ամեն մի անձնականութիւն շօշափող ու դրամական հաշուի վերաբերեալ խնդիր առաջնորդը սովորութիւն էր արել նորա միջոցով կատարել, նորա ձեռքով լուծել։ Մի խօսքով, ի նկատի առնելով ժողովրդի և առաջնորդի թշնամական յարաբերութիւնը, կարելի է ասել, Պատկանեանցը դարձել էր մի միջնաթումբ, որին երկու կողմից էլ բաղխում էին մրրկայոյզ ծովի կատաղած ալիքները. նա եղել էր մի քաւութեան նոխազ, որի գլխին երկու կողմից էլ թափւում էին հարուածները։ Եթէ աղաների

սրտին ոչ ցանկալի մի կարգադրութիւն էր լինում հոգևոր կառավարութեան անդամների, եկեղեցական դրամական հաշիւների, քահանաների և առ հասարակ ամեն հոգևոր գործի վերաբերմամբ, ուր շօշափւում էր սորա նորա անձնական և դրամական հաշիւները, իսկոյն այդ վերագրւում էր նորան, իբրև թէ այդ բոլորը կատարուել և կատարւում է նորա ցանկութեամբ, նորա ասելով, նորա գրելով, նորա դրդելով, և ահա բողոքներ էին, որ գնում էին Քիշինեւ, գրպարտութիւններ, չարախօսութիւններ, ամբաստանութիւններ էին, որ լինում էին նորա վերայ։ Առաջնորդն էլ տեսնելով բողոքների յաճախելը և Պատկանեանցի պատկերն էլ նորա մէջ հրէշային կերպով պատկերացած լինելը և, տեղի հեռաւորութեան պատճառով էլ, միջոց չունենալով սուտը ջոկել ճշմարտութիւնից, այդ բողոքներից եթէ տասին չէր հաւատում, տասից մէկին էլ է հաւատում էր և յանդիմանութիւն գրում նորան, երբեմն և պատժում՝ փիլոնն առնում։ Ինչ անէր Պատկանեանցը. եթէ մի բան այնպէս չէր անում, առաջնորդի հրամանը կամ յանձնարարութիւնը չկատարող էր հանդիսանում, եթէ, հակառակ առաջնորդի կամքին, թողնում դուրս էր գալիս հոգևոր կառավարութիւնից, ըմբոստ էր համարւում և պատժւում։ Եթէ այս բոլորի վերայ աւելացնենք և Պատկանեանցի տաք խառնուածքը, ամեն բան սրտին մօտ ընդունելու յատկութիւնը, ամեն բանի հետաքրքիր լինելը, ամեն բան քրքրելը, տեղեկանալը, իմանալը, երևան հանելը և առ հասարակ նորա հարցասէր բնաւորութիւնը, հզօրների կամքին հակառակ գնալը, հասարակաց գործերին անձնականութիւն խառնելը և իւր եսը, խօսքը յամառ կերպով առաջ քշելու առանձնայատկութիւնը, կըստանանք մի կատարեալ պատկեր նորա կեանքում եղածի, անցած-գնացածի. չենք խօսում արդէն այն բանի մասին, որ արդէն շատ յաճախ էր «անսանձ մոլեգնութիւն ընկնում նորա սրտի մէջ», որ ստիպում էր նորան խօսելու, գրելու և կատարելու այնպիսի գործողութիւններ, որոնք հանում էին նորան պաշտօնէութեան և օրինականութեան սահմանից, նոյնպէս և որ նա յաճախ էր գործ դնում «խարդախ հնարիմացութիւն-

ներ», որ ուրիշ խօսքով նշանակում է, թէ նա շատ անգամ էր իրան թոյլ տալիս զեղծումներ գործելու իւր պաշտօնավարութեան գործերում։

«Երիկաւորը» լինում է վերջին սխրագործութիւնը, որ Մարկոս աղան գործում է Պատկանեանի դէմ։ 1832 թիւը նորա քաղաքագլխութեան եռամեակի վերջին տարին էր, և նա այլ և յոյս չունէր նորից վերընտրուելու։ Սովորաբար երբ մէկի քաղաքագլխութեան եռամեակի վերջին տարուայ զատիկը մօտենում էր, լինանց մէջ արդէն սկսում էին խօսել նոր ընտրութիւնների մասին և զանազան թեկնածուների անուն մէջ բերել, և արդէն իսկ տարուայ վերջին ժողովրդի ձայնը որոշում էր, թէ առաջիկայ ընտրութիւններին ո՞վ պէտք է 70 քուէից մեծամասնութիւնը շահէ։ Այս անգամ էլ այսպէս է լինում, և ամէն տեղ խօսում ու որոշում են, որ Խալիբը պիտի ընտրուի քաղաքագլուխ 1833, 34 և 35 եռամեակի համար, ինչպէս որ լինում էլ է։ 1833 թուի տարեմտին հանդիսաւոր պատարագ է լինում Ս. Լուսաւորչում, և նորընտիր քաղաքագլուխը և դատաւորները երդւում են սրբութեամբ կատարելու իւրեանց պաշտօնը։ Եկեղեցուց ամէնքը գնում են Մագիստրատ Դումի կողմը, որտեղ և Մարկոս աղան յանձնում է Խալիբին Դումի կնիքն ու քաղաքի գանձարանի բանալին, յետոյ անցնում են Մագիստրատի կողմը, որտեղ նոր դատաւորները նստում են իւրեանց աթոռները և լսում ու ընդունում հին դատաւորների և հոգաբարձուների շնորհաւորանքը։ Այդտեղից գնում են բազմութեամբ Մարկոս աղայի տունը և շնորհակալութիւն են յայտնում նորա եռամեայ ծառայութեան համար և ապա — Խալիբի տունը՝ շնորհաւորելու նորա ընտրութիւնը և յարգելու։

Յարութիւն կամ Պապուկ Խալիբեանը աղա Պօղոս Խալիբեանի որդին էր։ Այդ Պօղոսը վախճանել էր Ս.-Պետերբուրգում, ուր գնացել էր նա Ղրիմից 1778 թուին միւս պատգամաւորների հետ կայսրուհու մօտ՝ գաղթականութեան խնդրի և արտօնութիւնների համար։ Նա թողել էր չորս զաւակ՝ մի որդի և երեք աղջիկ։ Որդին էր Յարութիւնը, որ հօր մահից

յետոյ մնացել էր շատ փոքր մօր խնամակալութեան ներքոյ։ Շուտով աղջիկներից մէկը ամուսնանում է Գիւմուշի Խաչերես աղա Համալեանին, իսկ միւսը, որի անունն էր Կատարինէ, Մահտեսի Եղիազարի որդի Պետրոս Բաբասինեանին, որ երկար ժամանակ վաճառականապետի պաշտօն վարելու պատճառով, սովորաբար կոչւում էր «Բազըրգեան-բաշի»։ Հանգուցեալ Պօղոսի այրին իւր աղջիկներին ամուսնացնելուց յետոյ, մնալով մենակ իւր փոքրիկ Յարութիւնի հետ, տեղափոխւում է իւր փեսայ Պետրոսի ճոխ տունը, և Յարութիւնը մեծանում է այդտեղ լիութեան և առատութեան մէջ։ Պետրոս Բաբասինեանը կրթում է Յարութիւնին առաջ Յովհաննէս վարժապետի, յետոյ Սերովբէ Պատկանեանցի մօտ, իսկ երբ այդ վերջինը տեղափոխւում է Հաշտարխան, նա յանձնելով նորան հօրից մնացած բաժինը—4 հազար «սօմ» գումար, տալիս է է Գէորգ աղա Օզաբաշեանի խանութը՝ հմտանալու առևտրական գործին։ Դորանից յետոյ շուտով երբ չափահաս է դառնում Յարութիւնը, Գէորգ աղան հաւանելով նորան, փեսայացնում է իրան և բնակեցնելով առանձին տան մէջ իւր բակում, մասնակից է անում իւր առևտրական գործին և հսկում է նորա վերայ, որ նա ապրի խնայողութեամբ և համեստութեամբ։ Պատմում են, որ յաճախ Գէորգ աղան հսկելու համար, գալիս, ծածուկ նայում է նորա պատուհանից, և երբ նկատում է նորա սեղանի վերայ մի որ և է զեղխութիւն, ներս է մտնում և նկատում։ Առևտրական գործերով ստէպ-ստէպ Յարութիւնը գնում է Մոսկով և Նիժնի տօնավաճառը՝ և յաջող գործառնութեամբ շուտով բաւականին կարողութիւն է ձեռք բերում։ Նորա հարստութեան աղբիւրներից մէկն էլ լինում է տօնավաճառում իւր համաքաղաքացիների մուրհակները շատ էժան գնով ձեռք բերելը և ամբողջութեամբ խեղդելով ստանալը, որով շատ վատ օրինակ է լինում և ուրիշներին։ Բայց ամենագլխաւորը, որ նպաստում է նորան յետագայ ժամանակներում մեծ հարստութիւն դիզելու,—լինում է այն, որ նա կարողանում է յաջող առևտրական ընկերակցութիւն կազմել, որի միջոցով և սկսում է մեծ քանակութեամբ արդար իւղ բերել Սիբիրի կող-

մերից և շահաբեր ու արդիւնաւէտ վաստակով Ներքի նահանգներում վաճառել և օտար երկրներ եւս արտահանել։

Յարութիւն Խալիբեանը թէև առաջին անգամն էր, որ ընտրւում էր քաղաքագլուխ, բայց արդէն հմուտ և լաւ ծանօթ էր քաղաքային գործերին և կառավարչական եղանակին. Նա դեռ Խաչատուր Խումաչեանից առաջ երկրորդ անգամ քաղաքագլուխ ընտրուած Վարդերես Հալաչեանի ժամանակ նորա խորհրդատուն էր եղել, իսկ իւր աներոջ Գէորգ աղայի և Մարկոս աղայի ժամանակները միանգամայն տիրապետել էր նոցա կամքին և համարեա թէ ինքն էր կառավարում ու ընթացք տալիս քաղաքի բոլոր գործերին։ Նորա յարաբերութիւնը Ներսէսի և Պատկանեանցի հետ շատ վատ էր. նա էր խորհուրդ տուել վերոյիշեալ Տէր-Գաբրիէլ Տէր-Գաբրիէլեանին Ներսէսի թղթին այնպէս պատասխանել և նորա ցանկացած տեղեկութիւնները, նա մանաւանդ դրամական հաշիւները, չտալ. նա էր դրդել Մարկոս աղային այնպէս վարուել Պատկանեանցի հետ և այնպիսի ցնդաբանութիւններ ու յանդուգն թղթեր գրելու առաջնորդին. նա էր, վերջապէս, յորդորել Պատկանեանցին վարժապետութիւնից հանելու, քահանայ ձեռնադրուելուն արգելք լինելու, և այլն և այլն, որով և արժանացել էր գլուխ դասուելու առաջնորդին հակառակ կուսակցութեան, որ իւր մի թղթում 1832 թուին Ներսէսը անուանել էր «Խալիբի որիկայք»։

Տէր-Գաբրիէլը, որ քանի ժամանակից ի վեր ճանաչում էր նորան և, իբրև հոգևոր գործերի կառավարիչ, յարաբերութիւն ունէր նորա հետ և որ աշխատում էր նորա սիրտը շահել, յաճախ զիջողութիւններ անելով նորան, այժմ էլ մի նամակ է գրում Ներսէսին և մեկնելով նորան գործի դրութիւնը և Խալիբի պէս մարդուն թշնամի ունենալու անշահաւէտութիւնը և, ընդհակառակը, նորան իրանց կողմը գրաւելու օգտակարութիւնը, խնդրում է, որ նա մի շնորհաւորական նամակ գրէ նորան, յոյս տալով, որ դորանով անշուշտ սէր և խաղաղութիւն կըլինի նոցա մէջ։ Նամակի պատասխանը ստանում է Խաչատուր Խումաչեանը, ծրարի մէջ լինում է երկու նամակ՝

մէկը Խումաչեանին, որի մէջ գրած էր, թէ Պատկանեանցը այնքան յանդգնել է, որ իրան, առաջնորդին, խրատներ է գրել, իսկ միւսը՝ Պատկանեանցին, որի մէջ գրուած էր, թէ Նախիջևանում եղած խռովութիւնների պատճառը նա ինքն է, և հրամայում էր, որ այնուհետև նա իրաւունք չունենայ առանց գիտութեան Խաչատուր աղայի իրան նամակ գրելու։ Այս կողմից յոյսը կտրելով, նա դիմում է Խալիբին և համոզում ու յորդորում է նորան, որ նա անէ հաշտուելու առաջին քայլը և նամակ գրէ առաջնորդին, սակայն նա թէև չէ չի ասում, բայց անվերջ յետաձգում է, մինչև որ հասնում է պատիկը և, երաշտութիւն լինելու պատճառով, յայտնւում է, որ հացի թանգութիւն պիտի լինի։ Պատկանեանցը Լուսաւորչի երէցփոխ Զախըրեան Յովհաննէս աղայի ձեռքով հանում է եկեղեցու փողը և ցորեն է գնում, որով մի կողմից հացի թանգութեան առաջն է առնում, միւս կողմից էլ եկեղեցու շահն է աւելացնում, որովհետև փողը քանիցս դարձուած է անում և տոկոս բերում։ Այդ սովի խնդիրը շատ ասէկօսէի առարկայ է լինում քաղաքում։ Ոմանք ասում են, թէ Խալիբեանք են այդ արուեստականօրէն ստեղծել, որ աղքատ ժողովուրդը սովամահ լինի, կոտորուի, և «Օղուրսըզ»—բարի-չէին համարում Պապուկ աղայի քաղաքագլխութիւնը, որովհետև այդ պատահում է հէնց նորա քաղաքագլխութեան առաջին տարին. ոմանք էլ՝ Խալիբեանք, Մըկըրեանք և Վարդերեսեանք, ասում էին, թէ Տէր-Գաբրիէլն է «վեցհազարեակի» հնարքով այն սովը բերել Նախիջևան, և նա յաճախ այդպէս պիտի անէ, երբ նորա ու ժողովրդի մէջ ծագի խռովութիւն։ Բայց այդ չի վնասում Պատկանեանցին, ընդհակառակը, շատերը սկսում են ապաւինել նորա աղօթքին, և 1834-ի ծննդեան ու զատկին հարիւրաւոր տներ հրաւիրում են նորան, որ նա գայ և իրանց տները օրհնէ։

Նախիջևանի երէցփոխները զանգատւում էին, թէ քահանաներն ինքնագլուխ գանձանակ են շրջեցնում եկեղեցիներում, բայց թէ հաւաքուած փողն ինչ է լինում, յայտնի չէ։ Երբ այդ գանգատներն անում են և տրտունջը ստատկանում՝ Տէր-Գաբրիէլը հաւաքում է հոգևոր կառավարութիւն քահա-

նաներին և երէցփոխներին՝ մի կարգ դնելու, վերացնելու տրտունջների պատճառը։ Քահանաները պնդում են, որ երէցփոխները չխառնուեն այդ գործին, որովհետև նոքա այդ գանձանակներից բաժին են հանում իւրեանց չքաւոր ազգականներին. երէցփոխներն էլ մեղադրում էին քահանաներին։ Տէր-Գաբրիէլը տեսնելով, որ երկու կողմն էլ սուտ ու խարդախ են, հրաւիրում է «աղքատաց գանձապետին» և առաջնորդական գործակատարին, որ նոցա միջոցով կարողանայ հաշտեցնել և մի որոշ սահման դնել, բայց նոքա մէկմէկու վերայ յարձակուելով, կռւում են և թողնում, հեռանում են կառավարութիւնից։ Այն ժամանակ Պատկանեանցը կարգադրում է, որ երբ մի քահանայի ծխի մէջ հարկաւոր լինի մի ընտանիքի համար գանձանակ շրջեցնել, այն քահանան առնէ տոմսակ երէցփոխի և տանէ, տայ աղքատաց գանձապետին, և նա այն տոմսակը ուղարկէ քաղաքագլխին, որ երբ իւր ստորագրութեամբ վաւերացնէ այն, նոյն տոմսակի զօրութեամբ Հոգևոր կառավարութիւնը հրաման տայ քահանային ծանուցում անել և գանձանակ շրջեցնել և արդիւնքը հասցնի գանձապետին, որ նա հատուցանէ չքաւոր ընտանիքին։ Պատկանեանցի այս կարգադրութիւնը առաջնորդական գործակատարին և Հոգևոր կառավարութեան անդամներին բողոքելու առիթ է տալիս նորա վերայ. նոքա մեղադրում էին Պատկանեանցին, որ նա դորանով Հոգևոր կառավարութիւնը ենթարկել է մարմնաւոր իշխանութեան, իսկ Տէր-Աստուածատուր քահանայ Շապուչնիկեանը գրում է Ներսէսին, թէ Պատկանեանցը, որ չկարողացաւ նամակագրութեամբ հաշտեցնել սրբազանին Խալիբի հետ, այդ միջոցով կարողացաւ այնպէս անել, որ Խալիբի մատը լինի Հոգևոր կառավարութեան գործերի մէջ։ Թէև Պատկանեանցը գրում, ցրում է իւր վերայ եղած բողոքները և վերականգնում է ճշմարտութիւնը, բայց արդէն ուշ է լինում, դորանից առաջ բողոքները ստանալուն պէս, առաջնորդը արդէն գրած է լինում նորան յանդիմանութիւն։

Յարութիւն վարդապետ Ալամդարեանը, որ Հաշտարխանից գնացել էր Մոսկով 1815-ին և մնացել էր այնտեղ մինչև

1823-ը, այնտեղից էլ գնացել էր Թիֆլիս և մնացել էր մինչև 1828-ը և մեկնել էր Քիշնև 1831-ին, առաջնորդի հրամանով 1833 թուին, Խալիբի քաղաքագլխութեան առաջին տարին, գալիս է Նախիջևանի Ս. Խաչ վանքը և այդտեղ օրէցօր սպասում է, որ կըստանայ և վանահայրութեան և քաղաքի ու գիւղերի յաջորդութեան պաշտօնները։ Սակայն նա սխալւում է. նորա ակնկալիքը զուր է լինում, չի կատարւում, և նա այդ բոլորը վերագրում է Պատկանեանցին ու սաստիկ զայրանում նորա վերայ ու վշտանում։ Նախիջևանցիք կամենում են նորան ոչ թէ միայն վանահայր և յաջորդ տեսնել, այլ և առաջնորդ, և այդ նպատակով մի բազմաստորագիր թուղթ են գրում կաթուղիկոսին. իսկ ինքն Ալամդարեանցը «կաշի» կոչուած Ստեփան եպիսկոպոս Վեհապետեանի միջոցով յարաբերութեան մէջ է մտնում կաթուղիկոսի հետ առաջնորդութեան գործի համար։ Բայց այդ էլ անիրագործելի է մնում, որովհետև Կարբեցին ասում է, թէ թողնենք Ներսէսին հանգիստ իւր առաջնորդական աթոռի վերայ, որ նա էլ մեզ հանգիստ թողնէ մեր հայրապետական գահի վերայ։ Երկու տեղից էլ յոյսը կտրելով, նա իր բոլոր զայրոյթը թափում է Պատկանեանցի վերայ, աշխատելով իւր այդ անյաջողութեան վրէժը նորանից առնել, նամանաւանդ որ Խալիբեանք անդադար դրդում ու գրգռում էին նորան։ Նա միշտ գնում գալիս է Սերովբէ վարժապետի տունը, որովհետև իւր փեսան տիրացու Պետրոսն անբաժան ապրում էր իւր եղբօր հետ միասին հօր տանը, և բնականապէս յաճախ պատահում էր Տէր-Գաբրիէլին և ամեն անգամ էլ առանց խօսք ու զրոյցի, առանց Տէր-Գաբրիէլին վիրաւորելու, սիրտը խոցելու չէր լինում։ Յարութիւն վարդապետի այդպիսի վարմունքի յաճախ կրկնուելը, հետզհետէ սրում էր նոցա յարաբերութիւնը և ատելութեան ու թշնամութեան սերմեր ցանում նոցա սրտերում և պատրաստում հողը՝ այդ բոլորը մի օր սաստկապէս բռնկեցնելու, որ և պատահում է 1834 թուի տարեմտին եկեղեցում։ Ալամդարեանը այդ օրը քարոզ է խօսում Ս. Լուսաւորչում և էլ նախատինք չի մնում, որ չթափի Պատկանեանցի գլխին։ Տէր-Գաբրիէլը, որ

առաջուց գորգ էր փռել, պատրաստել տուել քարոզչի համար, երբ քարոզը վերջանում է և նա գալիս է կանգնելու այդ գորգի վերայ, առնում է գորգը և շպրտում ժողովրդի գլխի վերայից ժամկոչին. ասելով՝ «Առ այդ գորգը, դորա վերայ կանգնողը դեռ չեկաւ կամ չի եկել»: Մեծ շփոթութիւն է ընկնում եկեղեցու մէջ, և ժողովուրդը պառակտւում է երկու մասի՝ ոմանք Այամդարեանի կողմնակից և ոմանք Պատկանեանցի:

Խալիբեանք կամենալով վիրաւորել Պատկանեանցին Մըկրտիչ Մռաղովի պսակը Բաղիրդեան-բաշի Պետրոսի դստեր հետ կատարել է տալիս Յարութիւն վարդապետին. նոյն Խալիբեանց աշխատանքով Յարութիւն վարդապետը զատկին շատ տեղ տնօրհնէք է տան գալիս և մեծապէս արդիւնաւորւում: Զատկից յետոյ Այամդարեանը հրամայում է իւր փեսայ տիրացու Պետրոսին, որ նա բաժանուի եղբօրից և առանձին բնակի, որ և նա կատարում է մայիսին, երբ դեռ իւր Քերովբէ որդին մի տարեկան էր: Այդ ժամանակները վախճանւում է Մըրզապարոնեան Մանուկ Դէվճեանի կինը, Խօջայեան Գաբրիէլ աղայի դուստրը, որի թաղման հրաւիրւում է և Յարութիւն վարդապետը և մի այնպիսի դամբանական է արտասանում, որ կարելի էր համարել հայ պերճաբանութեան օրինակ: Յուղարկաւորութիւնից յետոյ նա գնում է իւր դստեր նոր բնակարանը շնորհաւորելու, երբ նա ներս է մտնում, պառկում է տախտակաշարի վերայ և բացագանչում՝ «Փառք քեզ, Աստուած, որ իմ զաւակի տանը կարողացայ ոտի առնել»: Միւս առաւօտ, որ երկուշաբթի էր, լսւում է քաղաքի մէջ, թէ աւազակները տեղեկանալով, որ Յարութիւն վարդապետը զատկին տնօրհնէքից մեծ արդիւնք է ստացել, գնացել են Ս. Խաչ վանքը, կոտորել են երկու վարդապետներին և մերձ ի մահ վիրաւորել են Այամդարեանին սրով ու երկաթէ գործիքով:

Այդ լուրի վերայ քաղաքի երևելիներն իսկոյն հաւաքւում, գնում են և Յարութիւն վարդապետին դիականման դագաղի մէջ դրուած բազմութեամբ բերում են քաղաք: Բժիշկներից մէկը յանձն է առնում բժշկելու նորան, բայց իզուր. 23 վէրք

էր ստացել նա, և ամեն մի վէրքն օրը երեք անգամ խարւում էր: Տէր-Գաբրիէլը հէնց նոյն օրը, երբ մարմինը բերում են, գնում և հաշտւում է նորա հետ. Նա Յարութիւն վարդապետի բերանից մի մեղայական նամակ է գրում Ներսէսին և տանում, աղօթանքով և աղաչանքով ստիպում, որ ձեռք դնէ, բայց նա թէև յօժարում է, սակայն ձեռք չունէր, որ ստորագրէր, որովհետև ձեռքը միջահատ կտրուած էր և միայն մէկ ջլի վրայ կախուած էր մնացել: Միտքն է բերում Պատկանեանցը Ներսէսի այն խօսքը, որ նա ասել էր նորան Այամդարեանի վերաբերմամբ Քիշինեւում իւր ճանապարհ դուրս գալու ժամում առաջնորդարանի պարտիզում, թէ այս նամակ գրողի ձեռքը կտրուի և այս խօսքը բերանից հանողի լեզուն պապանձուի: Ձեռքը կտրուել էր, լեզուն էլ մահից մի քանի օր առաջ կապուեց: Հոգեվարքը մի քանի օր երկարում է և մեղայական նամակը, որ ինքը Պատկանեանցը ստորագրել էր նորա տեղ, դեռ հասած չի լինում առաջնորդին, որ նա վախճանւում է և թաղւում վանքի սրահում, որտեղ նա կամենում է եղել իրագործել այն, որ ցանկացել էր Յովսէփ Արղութեանը, բայց չէր յաջողել, այսինքն Ս. Խաչը դարձնել հայերի համար մի նոր Մխիթարեան ուխտ:

Այնուհետև Խալիբեանք աշխատում են իւրեանց կողմը քաշել Թադէոս վարդապետ Բէկնազարեանցին, որ, ինչպէս ասացինք, եկել էր Նախիջեւան Մըկըր Պօղոսի Ս. Աստուածածնայ եկեղեցու հաշուետուութեան գործի քննութեան համար, և իւրեանց ազդեցութեան և հարստութեան շնորհիւ շուտով յաջողում են իւրեանց և այդ ձեռնարկութեան մէջ և թշնամացնում են վարդապետին Պատկանեանցի հետ: Առաջ, երբ Պատկանեանցը յարուցանում է այդ խնդիրը, Ներսէս մի առանձին ուշադրութիւն չի դարձնում դորա վերայ, բայց յետոյ երբ բողոքներ են լինում այդ մասին նախարարութեան, նա անմիջապէս հրամայում է Հոգևոր կառավարութեան և Պատկանեանցին, որ Մագիստրատի միջոցով շուտով հաշիւները պահանջեն, բայց Մագիստրատը Խալիբի թելադրութեամբ լռում է, Մըկըր աղան էլ հրաժարւում է հաշուետուութիւնից:

Պատկանեանցի թշնամիները շտապում են հասկացնել առաջնորդին, թէ հաշիւ չներկայացնելու պատճառը ինքը Պատկանեանցն է, որ եթէ նա չլինի, այդ գործը շատ շուտ վախճան կըստանայ։ Պատկանեանցը տեսնելով, որ իւր պատճառով խռովութիւնը զօրանում է, գրում է այդ մասին առաջնորդին և հրաժարւում է հոգևոր կառավարութեան քարտուղարութեան պաշտօնից, որի հետևանքն այն է լինում, որ առաջնորդը այդ ըմբոստութիւն համարելով, զրկում է նորան քահանայագործութեան իրաւունքից։ Պատկանեանցի հրաժարուելովը սակայն խնդիրը չի լուծւում, Մրկըր աղան դարձեալ հաշիւներ չի տալիս, որից հասկացւում է, որ, ուրեմն Պատկանեանցը չի եղել պատճառը։ Առաջնորդն ուղարկելով Թադէոս վարդապետին, կարգում է նորան քննիչ այդ գործին, պատուիրելով միանգամայն, որ եթէ Պատկանեանցը համաձայնի նորից մտնել հոգևոր կառավարութիւն, դարձնել նորան քահանայութիւնը և օգնական առնել նորան քննութեան գործում։ Պատկանեանցը չի համաձայնում. նա նստում է տանը և վարժապետութիւն է անում, հոգևոր վարժարանում, շատանալով այն չնչին արդիւնքով, որ ստանում էր գլխաւորապէս հոգևոր կոչման պատրաստուող աշակերտներից։ Դոքա, այդ հոգևորական աշակերտները, շատ գլխացաւանք էին տալիս իւրեանց ուսուցչին. նոքա դժգոհութեամբ էին յաճախում դպրոց. նոքա ըմբոստ էին և պատիւ ու պարծանք էին համարում իւրեանց համար զրպարտելու իրանց ուսուցչին, նա մանաւանդ որ այդ ըմբոստութիւնն ու զրպարտութիւնը վարձատրւում էր Խալիբից։ Բաւական էր, որ մէկն այդ աշակերտներից թողնէր Պատկանեանցին և անցնէր Խալիբի կողմը, —այդպիսին իսկոյն կըվարձատրուէր։ Շատ օրինակներ եղան, որոնց մէջ առաջինը Գանձապետեան պատանին էր, որ յետոյ իբրև վարձատրութիւն, եղաւ Տէր-Թովմաս և միշտ մնաց Խալիբի սիրելին ու պրօտեժէն, ինչպէս և տիրացու Ալէքսան Զորայեանը, որ քանի հաւատարիմ էր Պատկանեանցին, ատելի էր, բայց հէնց որ հեռացաւ նորանից, պաշտպանութիւն գտաւ ամենից։ Ներսէս տեսնելով նորա յամառութիւնը, աւելի

ևս բարկանում է. նա կամենալով նիւթականապէս աւելի ևս նեղ վիճակի մէջ ձգել և այդպիսով ստիպել նորան կատարել իւր կամքը, հրամայում է փակել հոգևոր վարժարանը և զրկել նորան վերջին արդիւնքից։ Այդ հրամանի վերայ 1836 թուին, Գաբրիէլ աղա Մօչայեանի քաղաքագլխութեան առաջին տարին, փակւում է հոգևոր վարժարանը, գոյութիւն ունենալով ընդամենը 4 տարի բոլոր ժամանակ Պատկանեանցի ղեկավարութեամբ, որ ծառայում էր առանց ռոճկի։

1836 թուի ապրիլին Տէր-Գաբրիէլի ծնողները յանկարծ թողնում, գնում են Հաշտարխան, որ շատ բամբասանքի առիթ է լինում քաղաքում։ Ինքը Տէր-Գաբրիէլն էլ միտքը դրած է լինում գնալ այնտեղ, ուր կանչում էր նորան Սերովբէ եպիսկոպոսը, որ ձեռնադրել էր նորա եղբօրը Պետրոսին քահանայ Ստաւրապօլ քաղաքի վերայ և դեռ նորա պսակուելու ժամանակ Հաշտարխանում կարդացած լինելով «Նոր-Յեփթայէն», ապսպրել էր, որ դորա հեղինակը գայ իւր մօտ, ասելով, թէ երբէք նորա և Ներսէսի մէջ հաշտութիւն չի լինիլ, որովհետև նոքա երկուսն էլ «սև շատ գիտեն» ասող են։ Բայց գնալու համար հարկաւոր էր անցաթուղթ, որ Ներսէս երբէք չէր տալ նորան, ուստի և նա կաշկանդուած մնում էր Նախիջևանում։ Դոյն խկ 1836 թուին վախճանւում է Սերովբէ վարժապետը Հաշտարխանում, և Տէր-Գաբրիէլը վերջնականապէս փոխում է իւր մտադրութիւնը Հաշտարխան տեղափոխուելու։ Նա այդ ժամանակները նիւթականապէս ամենախղճուկ վիճակի մէջ է լինում. ամեն տեղից արդիւնքը կտրուել էր և ապրելու, ընտանիք պահելու ոչ մի աղբիւր չէր մնացել։ Ընտանիքն էլ մեծացել էր. սարկաւագութեան ժամանակ ծնուել էին Յովհաննէս, Մարիամ և Ռափայէլ զաւակները, քահանայութեան ժամանակ—Վառվառէն և Վահագն։ Նա ապրուստի միջոց հայթայթելու համար, մտածում է բանալ իւր սեփական մասնաւոր վարժարանը և այդ նպատակով գնում է մերձակայ Ռոստով քաղաքը, քննութեան ենթարկւում արքունի գաւառական վարժարանում, ստանում վկայական և իրաւունք մասնաւոր դպրոց բանալու։ Նախիջևանում—երկլեզուեան վարժա-

րան հայոց և ռուսաց, որից այնքան դժգոհ է մնում Ներսէս, որ մինչև իսկ այդ մասին գրում է և նախարարութեան։ Անա Տէր-Գաբրիէլի այդ մասնաւոր դպրոցում է լինում, որ աշակերտում են նորան Միքայէլ Նալբանդեանը, Խրլըչեան Յակոբը, Գրիգոր Սալտիկեանը և միւսները։

Գլուխ Ը.

Խալիբի քաղաքագլխութեան առաջին եռամեակին գալիս է Նախիջևան յայտնի Այթունեան Մանուէլ վարդապետ Գիւմուշխանցին, որ իբր թէ Ներսէսի վրէժից փախչելով, գնում էր այդ ժամանակները Ս. Էջմիածին. Նա հասնում է Ջամկի հրապարակին , կէս գիշերից անց, առաւօտեան դէմ, և ուղղակի գնում է եկեղեցի և հրամայում առաւօտեան ժամը սկսել, այնպէս որ երբ Տէր-Գաբրիէլը, որ ախաւին պատարագիչ պիտի լինէր, գալիս է ժամ, տեսնում է, որ արդէն գիշերային ժամն սկսել են և երգում են «Տէր, զի բազում»-ը և որ դասում մի վեղարաւոր կայ կանգնած, որ հրամայել է այդպէս վաղ սկսել ժամերգութիւնը և ասել է, թէ ինքը պիտի լինի պատարագիչ։ Նա խոնարհութեամբ մօտենում է վարդապետին և ողջունում է, իսկ նա սկսում է յանդիմանել ու նախատինք թափել նորա գլխին և, ի միջի այլոց, կոչում է նորան «չարագրգիռ խանգարիչ ազգի՝ դև Գաբրիէլ»։ Տէր-Գաբրիէլը չի դժկամակում, չի վրդովւում, այլ միշտ քաղցրութեամբ է պատասխանում, որովհետև հասկանում է նորա հոգու որպիսութիւնը, հասկանում է, որ նա նոյնպէս մոլորուած ու սխալուած է, ինչպէս շատերը, որոնք կարծում էին, որ նա Նախիջևանում իսկապէս պատկերն է Ներսէսի և յօժարութեամբ է կատարում նորա բոլոր հրամանները։

Այս Մանուէլ վարդապետը քանի որ Գրիգորուպօլում գործել էր Ներսէսի ծրագրով, հաճոյ էր եղել նորան, բայց երբ սկսել էր հակառակ գնալ, իսկոյն և եթ նա գրել էր Ս. Էջմիածնից Յովհաննէս Գառնակերեանին, որ նա փոխադրէ նորան

Ղրիմ, իսկ նորա տեղ Գրիգորուպօլում կարգէ Գրիգոր Խուդաբաշեանին աթոռակալ։ Այդ եղել էր Պատկանեանցի Հաշտարխանում կոնսիստորի ատենադպիր եղած ժամանակը։ Յովհաննէս սրբազանը հրամայել էր, որ մի խիստ հրաման գրուի Մանուէլին դուրս գալու Գրիգորուպօլից և երթալու Ղրիմ, իսկ Խուդաբաշեանին նորա տեղը կառավարելու աթոռակալ անունով։ Տէր-Գաբրիէլը այն ժամանակ գործ էր դրել մի «խարդախ հնարիմացութիւն». նա գրել էր երկու հրաման, բայց Խուդաբաշեանի հրամանի մէջ դրել էր մի կտոր թուղթ, որի վերայ գրել էր, թէ այս հրամանը սխալմամբ ձեր սրբութեան ձեռքը կը հասնի, և կնքել ու, իբրև թէ սխալմամբ, հասցէները փոխել էր, այնպէս որ վարդապետի հրամանը պիտի ստանար Խուդաբաշեանը, իսկ Խուդաբաշեանինը — վարդապետը։ Մանուէլ վարդապետը հասկանալով Պատկանեանի միտքը, այն ժամանակ մի շնորհակալութիւն էր գրել Սերովբէ վարժապետին և տիրացու Գաբրիէլին և մի կծու նամակ էլ Յովհաննէս սրբազանին, որի մէջ նորա քիթը մի լաւ քորելուց յետոյ, գրել էր, թէ ինքը Գրիգորուպօլը ստացել է իբրև վարձատրութիւն, որովհետև Ներսէսի հետ միասին Դանիէլին էր յանձնել կաթողիկոսական գահը, կորզելով Դաւթի ձեռքից, և Ռուսաստանի առաջնորդութիւնը տուել էր Եփրեմին, հանելով այն Գրիգորի ձեռքից։

Գիւմուշխանցու Նախիջևանից մեկնելուց յետոյ, գալիս է Մոսկովից Միքայէլ Սալլանթեանը և իջևանում է իւր աշակերտ Դաւիթ Օղարաշեանի տանը. նա թէև թշնամի էր Տէր-Գաբրիէլին և բարեկամ Խալիբին, որի հետ ծանօթացել էր Մոսկովում, բայց շատ է խօսում ու դատապարտում այն ատելութիւնը, որ կար Խալիբի ու նորա համախոհների մէջ Պատկանեանցի դէմ։ Սալլանթեանի թշնամութիւնը դէպի Տէր-Գաբրիէլը սկսուել էր Հաշտարխանում 1817 թուին, երբ նա դեռ Լիբանանցի Յովակիմ վարդապետ անունով նոր միայն եկել էր Հաշտարխան և բնակուել կապուչինների վանքում իբրև հովիւ և քահանայ հռովմէադաւան հայերի, որ ժամանակ այնտեղ էր գտնուում Երուսաղէմի Նուիրակ պօլսեցի Կարապետ վարդա-

պետք, որ յետոյ ձեռնադրուեց եպիսկոպոս Նփրեմից և եղաւ պատրիարք Ադրիանապոլսեցի Պօղոսից յետոյ, և Սերովբէ վարդապետ Կարնեցին, որ եկել էր Ս. Էջմիածնից և գնում էր Մոսկով Լազարեան ճեմարանի հայոց լեզուի ուսուցչի պաշտօնով։ Հաշտարխանի այդ հայ կաթոլիկները, որոնք Կղեմէս Գալանոսի և նորա ժամանակակից մարդագող որսորդների ջանքով դարձած էին, և «Ողջոյն քեզ, Մարիամ», ասելով և մի ծնդան վերայ կալալով ու ստէպ Յիսուս և Մարիամ կրկնելով, կարծում էին, թէ արդէն իսկ Փրանկ եղան, վերջացան, դորա չէն հասկանում Յոխակիմ վարդապետին, որովհետև դա պատարագի խորհուրդը կատարում էր Հայոց լեզուով և ոչ լատիներէն, ինչպէս նորանից առաջ կատարում էին լեհացի կսեոնդները, որից և՛ ինքեանք, և՛ ժողովուրդը բան չէին հասկանում։ Այդ այն ժամանակն էր, երբ դեռ նոր էր բացուել Հոգևոր վարժարանը և 15 տարեկան Պատկանեանցը կարգուել էր վարժապետ և ուսուցանում էր և՛ քերական, և՛ քերականութիւն և միևնոյն ընդարձակ դահլիճում։

Հայադաւան երիտասարդներից ոմանք սկսել էին յաճախել Յոխակիմ վարդապետի խուցը, որոնց միջնորդութեամբ ծանօթացել էր նորա հետ և Պատկանեանցը։ Սալլանթեանը լսելով նորա գիտութեան մասին պատուիրել էր երիտասարդներին բերել նորա գրուածներից մի պատառ բան, սոքա էլ այդ մասին ասել էին Գաբրիէլին, և նա տուել էր նոցա տանելու իւր ռուս լեզուից թարգմանած Դիոդորոս Սիկիլիացու մատենադարան կոչուած հնախօսութիւնից «Աղեքսանդր Մակեդոնացու արկածները» և խնդրել էր, որ եթէ վարդապետը մի սխալ գտնէ լեզուի դէմ, նշանակէ ձեռագրի վերայ։ Գաբրիէլը թարգմանութեան կցել էր մի վերջաբան, որ սկսւում էր՝ «Փառք երկրաւորութեան» խօսքերով։ Սալլանթեանն ասել էր, որ չըպէտք է ասել երկրաւորութիւն, այլ «աշխարհաւորութիւն», և այլն։ Շուտով Պատկանեանցը և անձամբ տեսնուել ու ծանօթացել էր Սալլանթեանի հետ. նա նորան հրաւիրել էր իւրեանց տունը, ուր եկել էին Սերովբէ Կարնեցին և Կարապետ վարդապետը և մինչև լոյս ուրախութիւն էին արել։ Սորանից

յետոյ շուտով սառնութիւն է ընկել Կարապետ վարդապետի և Սալլանթեանի մէջ և դորա պատճառն եղել էր վերոյիշեալ երիտասարդներից մէկը—Յովհաննէս Շամքորեանցը, որ տարածել էր, թէ Սալլանթեանը ասել է, թէ Կարապետ վարդապետի գիտութիւնը մի կատուի բեռ կ'լինի, և լատինների եկեղեցում քարոզել է հայոց եկեղեցու և նորա կարգաւորների դէմ և ասել է, թէ հայոց եկեղեցում հոգու փրկութիւն չկայ, և այլն։

Մի օր ժողովուրդը խափանել է Սալլանթեանի հայ պատարագը և նա եկել, մտել է հայոց եկեղեցին, ցանկանալով տեսնել Պատկանեանցին։ Այդ ժամանակ Կարապետ վարդապետը քարոզ է խօսել և մի լաւ յանդիմանել Սալլանթեանին, որի մասին և նա յետոյ գանգատուել է Պատկանեանցին, ասելով, թէ ինքն եկել էր, որ միասին երթան առաջնորդի մօտ՝ հայ եկեղեցու ծոցը մտնելու, բայց Կարապետ վարդապետն իւր քարոզով այնպէս խոցել է նորա սիրտը, որ նա թողել է իւր այդ մտադրութիւնը։ Սերովբէ վարժապետը հարցրել է նորան, թէ քանի որ դու քարոզում ես, թէ հայոց եկեղեցում հոգու փրկութիւն չ'կայ, ինչո՞ւ ես ուզում հայոց եկեղեցին մտնել. նա պատասխանել է, թէ այո՛, չկայ, բայց ինքն ուզում է «դինիմ իչին դէյլի, գիւնըմ իչին», այսինքն ոչ հաւատի, այլ կեանքի համար։ Այնուհետև Պատկանեանցը վարձել է նորա համար մի փոքրիկ բնակարան, ուր նա փոխադրուել է կապուչինների վանքից և կերակրուել հայերի հայթայթած ապրուստով։ Այս տևել է մի քանի ամիս, և նա սկսել է քարոզել ու տարածել ժողովրդի մէջ, թէ Պատկանեանք հայր ու որդի կաթոլիկ են։ Սորանից յետոյ Յոխակիմ վարդապետը քանիցս դժտուել ու հաշտուել է իւր կաթոլիկ ծխի հետ, մինչև որ դարձել է հայոց եկեղեցու ծոցը և դադար գտել Մոսկովում Լազարեան ճեմարանում։ Եւ այդ ժամանակամիջոցում, չնայելով, որ նա պատճառ է եղել Լազարեանների սառնութեան դէպի Պատկանեանցը, նա, Յովհաննէս սրբազանի հրամանով, ուղարկել է նորան վեղարի, գաւազանի և խաչի հետ միասին և մի ընտիր վկայական, որի մէջ նորա անունը փորուած էր Միքայէլ։

Խալիլի քաղաքագլխութեան ժամանակից յետոյ, հետևեալ

1836, 37 և 38 եռամեակի համար ընտրւում է նոյն Խալիբի ջանքով Գաբրիէլ աղա Խօջայեանը, որ Մարկոս աղայի պէս միայն քաղաքագլխի անուն էր կրում, իսկ իրօք պաշտօնը կատարում էր ինքը Խալիբը։ Այդ Խօջայեանի քաղաքագլխութեան առաջին տարին—1836 թւին, գալիս է Ս. Էջմիածնից նուիրակութեան պաշտօնով «Փոքր» կոչուած Յովսէփ արքեպիսկոպոս Վեհապետեանը, որ ունէր իւր ձեռին երկու կոնդակ՝ և՛ հրաժարուած Եփրեմից, որի սպասաւորն էր եղել ժամանակով, և՛ ընտրուած կաթուղիկոս Կարբեցուց։ Սա բերել էր Պատկանեանցին երկու նամակ՝ Կեսարացի Բարսեղ արքեպիսկոպոսից և Յովսէփ արքեպիսկոպոս Մարութեանից, որոնք իրեանց ազդեցութեամբ Ս. Էջմիածնի սիւներն էին համարւում։ Սրա՛ այդ նամակներն առիթ են տալիս Թադէոս վարդապետին ամբաստանելու Ներսէսի առաջ Պատկանեանցին, թէ նա յարաբերութեան մէջ է մտել Կարբեցու հետ։ Ներսէսը պահանջում է կոնդակներն ու նամակները և կարդալով ու համոզուելով, որ Թադէոս վարդապետի ակնարկածները նոցա մէջ չկան, վերադարձնում է, պատուիրելով Պատկանեանցին իւր տալիք պատասխանը նամակներին նախապէս իրան հաղորդել։ Յովսէփ Փոքրի ախրացուն էր Աբէլ անունով մէկը, որին նա իւր հետ տանում է Քիշինև, որտեղ նա, այդ ախրացուն, աշակերտում է Մսեր սարկաւագին և ստանում այնքան գիտութիւն, որ յետոյ լինում է յայտնի Աբէլ արքեպիսկոպոսը, Աստրախանի ժամանակաւոր առաջնորդը և «Արարատի» խմբագրութեան անդամ ու օգնականը։

Մրկըր Պօպովի հաշուի գործը, վերջապէս, լուծւում է և Թադէոս վարդապետը Ներսէսի հրամանով 15,000 սոմ ծախս անելուց յետոյ, 1838-ի մարտին վերադառնում է Ղրիմ և Պատկանեանցն երեք տարի արգելուած մնալուց յետոյ, վերստին իրաւունք է ստանում քահանայագործելու. Նա աւագ ուրբաթ օրը քարոզ է խօսում, զատկին էլ անօրհնէք շրջում, սկսելով Խալիբի և իւր միւս հակառակորդների աներից, և լաւ արդիւնաւորւում։ Գաբրիէլ Խօջայեանից յետոյ, 1839, 40 և 41 եռամեակի համար ընտրւում է քաղաքագլուխ դարձեալ Խա-

չատուր Խումաչեանը, որ արդէն առաջուանը չէր, այլ անցել էր Խալիբի կողմը։ Սորա կառավարութեան առաջին տարին վերջանալու վրայ էր, երբ Ներսէսից ստացւում է մի ծրար Հոգևոր կառավարութեան և Խումաչեանի անունով, որ երբ բաց են անում, միջից դուրս է գալիս մի ուրիշ ծրար Պատկանեանցի անունով։ Ներսէս հարցնում էր Պատկանեանցին, թէ ի՞նչ է եղել այն թուղթը, որ պարունակւում էր իւր մէջ Նախարարութիւնից 1831 թւին եկած թղթի պատասխանը Հայոց մատաղի մասին ընդհանրապէս և թէ ե՞րբ է մտել Հայոց մէջ այդ սովորութիւնը։ Այդ պատասխանը գրել էր Ներսէսը Քիշինևում և թարգմանել էր ռուսերէն Պատկանեանցը և արտագրել տուել ռուս աւագ քահանայ Լանչկովսկուն, որովհետև այդ օրերը Ալամդարեանը խռովել էր և չէր երևում առաջնորդարանում, այլ ճաշում էր իւր սենեակում։ Եւ այդ բոլորը կատարուել էր առաջնորդի սենեակում և թղթերը մնացել էին նորա մօտ։ Այսպէս էլ պատասխանում է Պատկանեանցը, աւելացնելով և իւր կարծիքը մատաղի մասին, որ նա լսել էր Սալլանթեանից 1817 թւին Հաշտարխանում։

Մի ամսից յետոյ նոր հարցմունք է գալիս Ներսէսից, թէ նախարարութիւնը հարցրել է Յովհաննէս կաթուղիկոսից, թէ ինչո՞ւ համար Հայոց եկեղեցին խաչակնքելու ձեւ աւանդել է այսպէս, և ոչ որպէս Յունաց եկեղեցին։ Կաթուղիկոսը պատասխանել էր, թէ որովհետև արեգակը ձախից աջ է գնում, այդ պատճառով էլ մենք Հայերս խաչակնքելու ժամանակ ձեռքերս ձախից դէպի աջ ենք տանում։ Պատկանեանցը պատասխանում է, թէ քահանան, լինի նա հայ, թէ յոյն, երբ խաչակնքում է ժողովրդի վրայ և ասում է՝ «խաղաղութիւն ամենեցուն», իւր ձեռքը միշտ տանում է ձախից դէպի աջ, և երբեք չի տանում աջից դէպի ձախ։ Եթէ մէկը գրչով կամ մատիտով մի խաչ է ուզում քաշել, նա մինչ առաջին գիծը քաշում է վերևից ներքև, երկրորդ գիծը, որով նա պէտք է կիսէ ուղղահայեաց գիծը, ո՞րտեղից է սկսում՝ ձախի՞ց դէպի աջ, թէ ընդհակառակը, ինչպէս անում են Հրէաները և Արաբացիները։

Սորանից յետոյ գալիս են երրորդ և չորրորդ հարցմունքները, և Պասկևեանցը կասկածանքի մէջ է ընկնում, թէ այդ բոլորի պատճառն ի՞նչ պիտի լինի. նա միտքն է դնում դրել Լանչկովսկուն և նորանից տեղեկանալ հանգամանքներին, բայց մտածում է, որ Ներսէսին շատ էլ հաճոյ չի լինիլ, եթէ նա իմանայ, որ Լանչկովսկին գիտէ նորա թղթակցութեան առարկաները: Սակայն նորա կասկածները շուտով փարատում է մի հնդկահայ պատանի, որ ծառայում էր Մադրասում և որ առաջ ծառայել էր Սինհոդոսում: Նա հաղորդում է նորան, թէ Ներսէսը սկսել է մի անախորժ թղթակցութիւն Սինօդի հետ և դորա շարժառիթն եղել է այն, որ Ներսէսն իւր գրագրութիւնների մէջ չէր գրում Սինհոդոս, Սինօդ սովորական ձևերը, այլ Սինոտ, որ նմանում էր սնոտի բառին, որից և Սինօդականները շատ վիրաւորուել էին և Յովսէփ արքեպիսկոպոս Մարուքեանի և Ստեփան արքեպիսկոպոս Վեհապետեանի ստորագրութեամբ միջանդիմանութիւն էին գրել նորան.— «Սանձեա՛ զլանդուղն գրիչ քո և մի՛ համարձակիր ապարասանս խմբծանօք անարգել զպատիւ սրբազնագումար ժողովոյս, որոյ անդամք կարգակիցք են և հաւասարապատիւ եպիսկոպոսունք և արքեպիսկոպոսունք»:

1840 թւին լուր է հասնում, թէ կոմս Միքայէլ Վորոնցովը դուրս է եկել շրջագայելու իւր իշխանութեան ենթարկուած Նոր-Ռուսիոյ երկրի քաղաքները: Տէր-Գաբրիէլը մտածում է օգտուել այդ հանգամանքից և երբ կոմսը հասնի Նախիջևան, խնդրէ նորան, որ նա միջնորդէ կայսեր առաջ՝ վերացնելու գլխահարկը, որ դրուել էր հայերի վերայ 1836-ին և հակառակ էր արտօնագրին: Քաղաքի մեծամեծները թէև բողոք էին ուղարկել այդ գլխահարկի առթիւ և արտօնագիրը եղծելու համար ուր հարկն է, բայց այդ միայն առ երես էր, նոքա ուրախ էին, որ դորանով պիտի կարողանային բոլորովին ստրկացնել ժողովուրդը, ինքեանք նոցա տեղ հատուցանելով և իրանց ծառայեցնելով նոցա, և արդէն իսկ հաւաքել էին գլխահարկի գումարը 36, 37, 38, 39 և 40 թւերի համար և պահել քաղաքի գանձարանում, որ բողոքի բացասական պատասխան ստացուելու դէպքում իսկոյն և եթ հատուցանեն արքունի գանձարանին: Երբ կոմսը հասնում է Ռոստով, Խալիբը, որ քաղաքագլուխ չլինելով, իսկապէս քաղաքագլխութիւն էր անում Խաչատուր Խումաչեանի տեղ, դնում է Տագանրոգ և բերում քաղաքապետ բարոն Օտտօ Ֆրանկին, որին շատ էր սիրում կոմսը: Մեծամեծների ցանկութիւնն այն էր, որ այդ Օտտօն աջակից լինի նոցա, երբ նոքա աղերսեն գլխահարկը ընդունելու և դորա փոխարէն ազատութիւն տալու, որ Նախիջևանի բնակիչները ըստ հաճոյից քաղաքից դուրս գան, նոցա կալուածներում ապրեն և նոցա հողերը մշակեն և գլխահարկը նոցա տեղ ինքեանք հատուցանեն: Իւր մտածածը գլուխ բերելու նպատակով Պասկևեանցը կոմսի Նախիջևան գալու նախընթաց օրը մի քանի նպատակայարմար կարգադրութիւն է անում. նա, նախ իմաց է տալիս ժողովրդին, որ հաւաքուեն Լուսաւորչի շուրջը և թաքչին, մի մասն էլ բռնեն բոլոր փողոցագլուխները, որոնք դուրս են գալիս Լուսաւորչի մեծ փողոցը, որպէս զի միջոց չտան կոմսի կառքը ծռելու և ուրիշ փողոցով տանելու Խումաչեանի տունը նախաճաշի, ինչպէս որ կարգադրել էին Խալիբը և իւր համախոհները. երկրորդ, կարգադրում է, որ քահանաները առաւօտեան ժամից յետոյ չցրուեն և եթէ տեղ երթալու էլ լինին, իսկոյն վերադառնան. երրորդ, եկեղեցու դուռը բաց լինի և ժամհարներից մէկը զանգակատանը հսկէ, որ հէնց որ կոմսի կառքը Ռոստովի բերդի դռնից դուրս գայ, մեծ զանգակը հնչեցնէ, իսկ երբ հասնի Նախիջևանի քաղաքադռնին, բոլոր զանգակները հնչեցնէ, որ բոլոր ժողովուրդը հաւաքուի: Թէև Խալիբը տեղեկանում է այդ բոլորի մասին և բէշլիներ է ուղարկում ցրելու ժողովուրդը և փողոցագլուխները մաքրելու, բայց նոքա, այդ բէշլիներն էլ, հասարակ ժողովրդից լինելով, խառնւում են նոցա հետ և նպաստում գործին, փոխանակ արգելք լինելու: Տեսնելով, որ այդ չյաջողեց և ոստիկանական միջոցները չօգնեցին, Խալիբը առնում է իւր հետ քաղաքագլուխ Խումաչեանին, բարոն Ֆռանկին և քաղաքի միւս իշխանաւորներին և գալիս, մտնում է Ս. Լուսաւորիչ, որ եկեղեցու դռները փակել տայ, ժողովուրդը ցրէ

և Վօրօնցօվին միջոց տայ՝ առանց եկեղեցի մտնելու, ուղղակի քաղաքագլխի տունը ճաշի երթալու։ Եկեղեցում քաղաքապետը մօտենում է Տէր-Գաբրիէլին, որ սեղանի դէմ գրքակալի մօտ կանգնած էր, և հրամայում է եկեղեցու դուռը փակել և ժողովուրդը ցրել, բայց նա պատասխանում է, որ եկեղեցու մէջ իշխանութիւնն իրան է պատկանում և ուրիշ ոչ ոքի, ուստի և ոչ ոք չի կարող նորան հրամայել այս կամ այն անել։ Նա պատուիրում է հոգևորական դասին զգեստաւորուել և ինքն էլ առնում է շուրջառ ու խաչ և դուրս գալիս ընդառաջ, որովհետև այդ ժամանակ հնչում է մեծ զանգակը և յետոյ միւս զանգակները, որ նշան էին, թէ կոմսի կառքը մօտենում է։ Հասնում է կառքը, և, թէև Խալիբի յայտնի ծառայ «Ղարասու Ստեփանը» աշխատում է ծռել տալ դէպի Խաչատուր աղայի տունը, բայց ժողովրդին ուրախութեան գոռումներ անելու դիմակի տակ սպառնում են նորան և չեն թողնում շեղուելու կոմսին ուղիղ ճանապարհից։ Կոմսը հասնելով եկեղեցուն և տեսնելով զգեստաւորուած հոգևորականներին, իջնում է կառքից, համբուրում խաչը և խուռն բազմութեան հետ մտնում եկեղեցին։ Պատկանեանցը հանում է ծոցից մի թուղթ, կարդում և խնդրում գլխահարկը վերացնել, տանել միայն անահարկ և պահպանել արտօնագիրը, և այս ասելով, ծունր է չոքում. Նորա օրինակին հետևում է և բազմութիւնը։ Կոմսը շատ գթաշարժւում է. նա արտասւում է և բարձրացնելով Պատկանեանցին, խոստանում է ուղղակի Պետերբուրգ երթալ և չվերադառնալ, մինչև որ գլխահարկը վերացնել տայ։

1841 թիւը Խաչատուր Խումաչեանի երկրորդ անգամ քաղաքագլխութիւն անելու եռամեակի վերջին տարին էր, և նա այլ ևս վերընտրուելու յոյս չունէր։ Ժողովրդի ձայնը արդէն հետևեալ եռամեակի քաղաքագլխութեան համար թեկնածու որոշել էր Խալիբին, որ այդ ժամանակ արդէն այնքան յառաջացել էր, որ, կարելի է ասել, ամենաազդեցիկ մարդն էր դարձել քաղաքում։ Խումաչեանի քաղաքագլխութեան առաջին եռամեակը—1827, 28, 29—շատ յաջող էր անցել, և նա քաղաքացւոց մէջ լաւ անուն ու յիշատակ էր թողել, որի հետևան-

քը պէտք էր համարել և նորա երկրորդ անգամ քուէների բազմութիւն վաստակելը։ Այն ժամանակ նա դեռ նոր մարդ էր Նախիջևանում. նա առևտուր ունէր Ղրիմում և նոր միայն վերադարձել էր ճոխացած, նա թէև բարկացող ու կանչվռտող բնաւորութիւն ունէր, բայց բարի էր, աշխոյժ և եռանդոտ. Նորան իւրեանց փորձառութեամբ օգնում էին ուրիշները, նամանաւանդ Գէորգ աղա Օզաբաշեանը, որի աշխատանքով գլխաւորապէս և նա ընտրուել էր քաղաքագլուխ, որովհետև, ինչպէս ասացինք, նա դեռ նոր էր և ժողովուրդը չէր ճանաչում նորան։ Իսկ այդ երկրորդ եռամեակի ընթացքում նա բոլորովին փոխուած էր և ոչ մի բանով չէր յիշեցնում առաջուայ եռանդոտ, անկախ գործող Խումաչեանին, բացի իւր անտեղի գոռում-գոչում հանելու և յաճախակի «դարմանայի» բառը գործածելու սովորութիւնը պահպանելուց։ Խումաչեանի կուսակցութիւնը, որ առաջ շատ հզօր էր, 1839, 40 և 41 թուերին հետզհետէ բոլորովին քայքայւում ու կորցնում է իւր նշանակութիւնն և ազդեցութիւնը. ինքը Խաչատուր աղան էլ կորցնում է իւր անկախ գործելու, լաւ խորհրդակիցներով իրան շրջապատելու գնահատելի յատկութիւնը և ենթարկւում է Խալիբի ազդեցութեան այն աստիճան, որ, համարձակ կարելի է ասել, որ քաղաքագլխի անունն այդ եռամեակում նորանն էր, իսկ քաղաքագլխութիւն անողը իրօք Խալիբն էր։ Պատկանեանցի յարաբերութիւնը նորա հետ առաջ շատ բարեկամական էր. Խաչատուր աղան էր շինել նորա դպրոցը. նա էր նորան հրաւիրել Հաշտարխանից Նախիջևան և նորա ուսուցչութեան ժամանակ ամէն բանում թև ու թիկունք եղել նորան. նա էր, վերջապէս, բաւականին մեծ ծախս արել տպարանի համար, որ կամեցել էր բանալ Պատկանեանցը, բայց չէր յաջողել։ Այս բարեկամութիւնը ամրապնդուել էր նոցա մէջ նամանաւանդ այն ժամանակից, երբ Խումաչեանի Ստեփան որդին կնքել էր նորա Մարիամ աղջկան։ Սակայն վերջին ժամանակները, երբ բոլորեքեան թշնամացել էին Պատկանեանցի հետ, Խաչատուր աղայի յարաբերութիւնն էլ նորա հետ Խալիբի ազդեցութեամբ կամաց-կամաց փտանում է և մի երկու-

ընդհարումից յետոյ փոխուում է ատելութեան ու թշնամութեան։ Ընդհարումներից մէկի ժամանակ, օրինակի համար, Խումաչեանը այնքան բարկանում է, որ թքում է Պատկանեանցի երեսին. նա էլ չկորցնելով իւր հոգու խաղաղութիւնը, հանում է թաշկինակը, սրբում է թուքը երեսից և ասում է. «Խաչատուր աղա, դու թքեցիր իմ երեսին, և ես սրբեցի ու տեղը ոչինչ չմնաց, բայց եթէ ես թքեմ քո երեսին, իբրև անջինջ դրոշ կմնայ յաւիտեանս յաւիտենից քո վերայ և քո սերնդի վերայ և ոչնչով հնար չի լինիլ սրբել»։ Տէր Գաբրիէլի այս խօսքերը խոր խոցում են զոռոզ աղայի սիրտը, որովհետև նա ընդունում է նորան իբրև քահանայի անէծք, որ որդէցորդի պիտի ծանրանայ նորա սերնդի վերայ և ոչ մի հնար չպիտի լինի այդ անէծքի տակից դուրս գալ։ Նա այս մասին մինչև անգամ բողոքում է և առաջնորդին, և Ներսէսը հրամայում է Պատկանեանցին հաշտուել իւր առաջնորդական գործակատարի հետ, բայց Խումաչեանը չի հանգստանում. նա միշտ գանգատուում է, թէ Տէր-Գաբրիէլի հաշտութիւնը իւր հետ անկեղծ չէ, և այլն։

Ժողովրդի ձայնը ինչպէս որ որոշուած է լինում, այնպէս էլ կատարուում է. Խալիբը 1842, 43 և 44 եռամեակի համար ընտրուում է քաղաքագլուխ համարեա թէ միաձայն։ Նա այս անգամ գործում է աւելի համարձակ, քան թէ իւր քաղաքագլխութեան առաջին եռամեակին։ Տուրքերի ծանրութիւնը սաստկանում է, ժողովրդից փող հաւաքելու դէպքերը յաճախում են։ Թէև ամենքը դժգոհ են լինում դորանից, բայց տալիս են, որովհետև վախենում են նորանից իբրև հզօր մարդուց, որ կարող էր ընկած տեղը շատ ու շատ վնասել։ Հաւաքում էր փողը զանազան պատրուակներով—այսօր Տագանրոգի քաղաքապետը պիտի գայ, վաղը քաղաքի այս ինչ գործը պէտք է յաջողեցնել, երրորդ օրը մի ուրիշ պէտքի համար և այսպէս անվերջ։ Դրամը մտնում էր Դումը, իսկ այնտեղից ծախսուում էր քաղաքագլխի ցանկութեամբ, առանց հսկողութեան, առանց հաշուետուութեան. ո՞վ կհամարձակուէր բերան բաց անել և հաշիւ պահանջել։ Խալիբի քաղաքագլխու-

թեան դոյն իսկ առաջին տարին—1842-ին, կոմս Վորոնցովը կրկին այցելում է Նախիջևանը և Պատկանեանցը երկրորդ անգամ մեծ շքով ու հանդիսաւորութեամբ ընդունում է նորան եկեղեցում, նախապէս կոմսի եկեղեցում կանգնած նախկին տեղում մի սիւն կանգնեցնելով, կանաչ կերպասով ծածկելով և վերան գլխահարկի վերացնելու թուականը գրելով—1840 թ. Տէր-Գաբրիէլը նորից մի գրաւոր ճառ է խօսում ու յանձնում թուղթը կոմսին, որ ուրախ ու զուարթ ընդունում է ու գնում Խալիբի տունը, տանելով իւր հետ և ճառախօսին ու նորա հետ երկար խօսելով։ Կոմս Վորոնցովը այդ դէպքում աւելի երախտագէտ է գտնուում, քան թէ Խալիբեանք և միւսները, որոնք ամենևին բանի տեղ չէին դրել նորա արածները և մինչև իսկ գլխահարկի լուրը ստացուելու միջոցին, երբ հասարակութեամբ գոհացողական մաղթանք էին կատարել եկեղեցում, գլխաւոր պատճառ եղողին մի կողմ թողնելով, Ս. Խաչի «Վաստապարտ» Մկրտիչ վարդապետին էին հրաւիրել եկեղեցական հանդիսին նախագահելու։ Նոյն իսկ Խումաչեանի ընդհարումներից մէկը նորա հետ պատահել էր դոյն իսկ միջոցին։ Կոմսի աշխատանքի և գլխահարկի վերացման գործի յաջողելու լուրը հաղորդել էր Նախիջևան իւր Պօղոս եղբօրը Սիմէօն Գրիգորեան Սուլթանշահեանը, և Պօղոս Սուլթանշահեանն էլ այդ առթիւ մեծ հացկերոյթ էր սարքել իւր տանը, բայց չէր հրաւիրել ոչ Պատկանեանցին և ոչ էլ Խումաչեանին, որով չարաչար վիրաւորել էր այդ վերջինի փառասիրութիւնը։ Սա այն ժամանակ այցելութեան էր եկել Պատկանեանցին և հաղորդելով նորան այդ հանգամանքը և իւր զայրոյթը այդ առթիւ յայտնելով, աշխատել էր գրգռել և Պատկանեանցին և ստիպել այդ մասին քարոզ ասելու եկեղեցում և պախարակելու Խալիբեանց ընթացքը, բայց բարեբաղդաբար Պատկանեանցը կարողացել էր այդ անգամ զսպել իրան և չհամաձայնել, որով թէև զայրացրել էր իւր կնքահօրը, բայց պահել էր թէ իւր և թէ եկեղեցու պատիւը։ Մենք ասում ենք «բարեբաղդաբար այս անգամ», որովհետև պէտք է խոստովանել, որ Պատկանեանցը շատ անգամ եկեղեցու բեմը շինել է կռուի ասպարէզ

և հասարակաց խնդիրների գլխակի տակ իւր քարոզների, կամ, ինչպէս ինքն ասում է, «որոտումների» մէջ յաճախ իւր անձնական կիրքն է առաջ քշել, պախարակել իւր թշնամիներին, ջատագովել իւր բարեկամներին։

Գլուխ Թ.

1842-ին մեռնում է Յովհաննէս Կարբեցին և ընտրողական ժողովը 1843-ին առաջին անգամ, Պոլոժենիայի հիման վերայ, Տաճկահայոց, Պարսկահայոց և Ռուսահայոց հոգևոր և աշխարհական պատգամաւորների մասնակցութեամբ ընտրում է երկու թեկնածու՝ Ներսէսին միաձայն և Երուսաղէմի Զաքարիա պատրիարքին ձայների համեմատական առաւելութեամբ։ Պատկանեանցը Մակարիայի տօնավաճառումն է լինում և այնտեղ առաջին անգամ իմանում, որ Նիկողայոս կայսրը 1843-ի օգոստոսի 10-ին հաստատել է կաթողիկոս Ներսէսին, պատուիրելով նորան Քիշինևից երթալ Պետերբուրգ տեսակցութեան, և որ արդէն նա գնացել է։ Նոյն իսկ միջոցին տօնավաճառում նա պատահում է Մոսկուարնակ յայտնի Յովհաննէս Յովնանեանին, ու տալիս է նորան կաթուղիկոսի հաստատութեան ռեսկրիպտը կարդալու և թարգմանելու հայերէն։ Պատկանեանցը կարծես թէ բնազդմամբ հասկանալով, որ ինքն այդ ընտրութեամբ դատապարտուած պիտի լինի սար ու ձոր ընկնելու, կամենում է թեթևանալ ընտանիքից. Նորա մեծ որդիները Ռափայէլն ու Յովհաննէսը արդէն Լազարեան ճեմարանումն էին, փոքրին էլ դորանից մի փոքր առաջ նա ուղարկել էր Վօրօնեժի նորակառոյց կադետների կորպուսը, այժմ էլ իւր վերապարծին շտապում է նշանել իւր հարսնացու դուստր Մարիամին և այդպիսով պատրաստւում է ամեն փորձանք կրելու։

Նոյն 1843 թուին լուր է տարածւում, թէ Նիկողայոս կայսրը կամենալով վերջ դնել այն բոլոր անկարգութիւններին, որոնք կատարւում էին լայնատարած տէրութեան սահմաններում և որոնց լուրը արդէն իսկ հասել էր նորա ականջը,

հրամայում է ամեն կողմ սենատորներ ուղարկել՝ խստութեամբ քննելու ամեն բան և իրան զեկուցանելու։ Դորա վերայ Եկատերինօսլաւի նահանգի համար քննիչ կարգւում է գեներալ Ժեմչուժնիկով արդարամիտ սենատորը, որ 1844-ին աշնանը հասնում է Նախիջևան և ձեռնարկում է Մագիստրատի գործերի քննութեան և գտնում շատ անկանոնութիւններ, որոնց համար սակայն նա ներողամիտ է լինում, որովհետև այնպէս է կարծում, որ այդ բոլորն առաջ է եկել ոչ թէ կառավարիչների չար դիտաւորութիւնից, այլ պարզամտութիւնից։ Այդ մասին խնդրել էր նորան Պատկանեանցը, պատուով ընդունելով նորան եկեղեցում երեկոյեան ժամերգութեան ժամանակ և առաջիկայ կիւրակէին ես հանդիսաւոր պատարագ լսելու հրաւիրելով։ Ժեմչուժնիկովը թէև իւր որդու ու աստիճանաւորների հետ իջևանել էր Մարկոս ողլու տանը, բայց նորա ճաշը բոլորամասն հոգում էր քաղաքը։ Նորա գալու երկրորդ կիւրակէին քաղաքը պատրաստում է նորա պատուին մեծաձախ երեկոյթ դպրոցի դահլիճում, որին ներկայ է լինում և քաղաքապետ Օստօ Ֆուանկը, որ արդէն զգում էր, որ իւր պաշտօնի վերջը հասել է։ Այդ ժամանակները Վօրօնցովը արդէն իսկ տեղափոխուել էր Կովկաս մեծ պաշտօնով և նորա կարգած մարդիկը հետզհետէ դուրս էին գալիս պաշտօնից։ Նորա տեղը Նոր-Ռուսիոյ երկրի կուսակալ նշանակուել էր Ֆեօդորովը, որ մի շատ արդարամիտ մարդու համբաւ էր վայելում։ Երեկոյթին Ժեմչուժնիկովը շատ է խօսում Պատկանեանցի հետ. Նորա կարծիքով Նախիջևանը գնալով պիտի նուաղէր ու ընկնէր, իսկ Ռօստովը աճէր ու մեծանար, և այդ բոլորը նորա համար, որ Նախիջևանցիք չունէին իրանց մէջ մի սրտացաւ ու հասկացող մարդ. Նոքա միշտ փակ աչքով են ընտրել դատաւոր, հոգաբարձու և քաղաքագլուխ. արդեօք ինչ պիտի գրուի Նախիջևանի պատմութեան մէջ,—թէ այս ինչ դատաւոր կամ քաղաքագլուխն երեք տարի գնացին—եկան Մագիստրատ և Դումը, աթոռները մաշեցին, կերան ու խմեցին և զուր ժամանակ վատնեցին։ Թէև Խալիբի գրութիւնը շատ խախուտ է լինում, բայց վերջ ի վերջոյ նա կարողանում է այնպէս անել,

որ մտնում է քննչի աչքը, նամանաւանդ Գոգոյեանի ի պատիւ սենատորին սարքուած ճոխ երեկոյթից յետոյ, այնպէս որ նորա քաղաքագլուխ վերընտրուելը երրորդ անգամ, 1845, 46 և 47-ի եռամեակի համար, ապահովուած կարելի էր համարել։

Կաթուղիկոս ընտրուած և հաստատուած Ներսէսը, որ 1843-ին գնացել էր մայրաքաղաք և անօրինակ շքով ընդունուել կայսրից և մի քանի ամիս այնտեղ ակարացել և «մի գերմանացի մեսմերեան դաղտնիքին ծանօթ ախկնոչ մագնիսաշօշափ բժշկութեամբ» ապաքինուել, արդէն վերադարձել էր Թիֆլիս, ճանապարհին մտնելով Մոսկով, դատելով Լազարեան ճեմարանում Սալլանթեանին և հրամայելով արտաքսել ճեմարանից Յովհաննէս և Ռափայէլ Պատկանեանցներին և պատուէր ուղարկելով իրան Պատկանեանցին, թէ թող նա պատրաստ լինի իւր արածների արժանի վարձն ստանալու։ Թիֆլիսից նա կոնդակով պատուիրում է Մարութեան Յովսէփ արքեպիսկոպոսին և «կաշի» Ստեփան եպիսկոպոսին, որ նոքա գան Մոզդոկ և սպասեն իրան, իսկ ինքը 1844 թուի մեծ մասը մնում է Թիֆլիսում, որովհետև 15 տարի ապրած լինելով այնտեղ, ընտելացել էր և դժուար էր նորան հեռանալ այնտեղից շուտով։ 1845 թուի սկզբին նա դուրս է գալիս դէպի Ղրիմ և այնտեղ անցկացնում նոյն թուի վերջին տաս ամիսը։ Թիֆլիսից դուրս գալուց առաջ, նա հրամայում է, որ վիճակի ամեն կողմից երթան ձեռնադրուողներ, որ երկար ժամանակ իրանից յետոյ քահանայի կարօտութիւն չլինի, որովհետև միտք ունէր, դեռ իւր տեղը առաջնորդ չընշանակել, որ հնար լինի վիճակի արդիւնքը հաւաքել իւր ձեռքը և այն գումարով կառուցանել Ս. Էջմիածնում հազար մանուկների համար մի ճեմարան, որի մասին նա խօսել էր կայսեր առաջ և մայրաքաղաքներում շատ տեղ, և, վերջապէս, տալ վիճակին այնպիսի քահանաներ, որոնց ձեռքով կարողանայ հասնել իւր ունեցած նպատակներին։

Նոյն իսկ 1845 թուին գալիս է կոմս Վորոնցովի տեղը նշանակուած Թեոդորովը. Նա առաջ իջեւանում է Ռոստովում և այնտեղից կոչելով իւր մօտ Խալիբին և Մազխասարտի ատենադրին՝ չարաչար բարկանում է նոցա վերայ և կալանաւորում։ Պատկանեանցը, երբ միւս օրը Թեոդորովը գալիս է Նախիջևան, ընդունում է նորան նոյն կարգով, ինչպէս մի ժամանակ Վորոնցովին, և իւր ճառով փոխում է նորա տրամադրութիւնը դէպի Խալիբը, որի վերայ մի աղտոտ բողոք էր ներկայացրել նորան կառապանի կինը, որ տիկին Խալիբեանի նաժիշտն էր, և գորանով գրգռել գեներալի զայրոյթը քաղաքագլխի դէմ ու նորան արգելելու պատճառ եղել։ Քաղաքի մէջ այդ ժամանակները արդէն լուր էր տարածուել, որ Ներսէսը շուտով պիտի գայ և պատժէ Պատկանեանցին, և այդ լուրն այնպէս էր ազդել ամենքի վերայ, որ նորա կուսակիցների թիւը, որ առանց այն էլ շատ ստուար չէր, զգալի կերպով նուազել էր։ Գործը այդ դրութեան մէջ է լինում, որ լուր է տարածւում, թէ 17 տարեկան Կոստանդին արքայորդին երկարատև ծովային ճանապարհորդութիւն կատարելուց յետոյ, հասել է Սևաստոպոլ և այնտեղից էլ պիտի գայ Ռոստով։ Պատկանեանցը, որին Խալիբը Տագանրոգից հաղորդել էր այդ լուրը, սկսում է պատրաստութիւն տեսնել՝ արքայորդուն վայելչապէս ընդունելու։ Նոյեմբերի 15-ին, երբ պիտի գար կայսերազնը, Պատկանեանցը գնում է եկեղեցի, որ կատարէ ընդունելութիւնը։ Խալիբը նորա գլխին մի խաղ խաղալու նպատակով, ծածուկ հրաւիրել էր Ս. Խաչից Մկրտիչ վարդապետին և նորան յանձնել ընդունելութեան հանդէսը կատարել, պատուիրելով միանգամայն, որ նա շուտով գնայ եկեղեցի և զգեստաւորուած ու մեծ խաչը ձեռքն առած մի տեղ պահուի, որ երբ մեծ իշխանը գայ և Պատկանեանցը պատրաստուի դուրս գալու նորա առաջը, նա յանկարծ դուրս գայ պահուած տեղից և ինքը դիմաւորէ և Պատկանեանցը խայտառակուի։ Այդպէս էլ լինում է. մինչ արքայորդու կառքը հասնում է եկեղեցու բակի դուռը և նա իջնելով կառքից, իւր դաստիարակ Լիտկէի հետ դիմում է դէպի եկեղեցու նախագաւիթը և Պատկանեանցը խուճապելով, պահանջում է մեծ խաչը, որ ընդ առաջ դուրս գայ, յանկարծ յայտնւում է իւր թաքնուած տեղից Մկրտիչ վարդապետը և միւս քահանաների հետ առաջ անցնում ու գնում կայսերորդու ոտքի տակ խաչը։ Ջուր է մաղում ա-

մենքի վերայ, և ինքը մեծ իշխանն էլ սասանում է. նա շտապով առնում է խաչը, համբուրում և վարդապետի ձեռքից մտնում եկեղեցի, որտեղ Պատկանեանցը ասում է իւր գրաւոր պատրաստած ճառը։ Իշխանը գոհունակութեամբ առնում է ճառախօսի ձեռքից թուղթը, դնում ծոցը և ասում. «Այս թուղթը ես կը տանեմ և ցոյց կը տամ հօրս»։ Խաչը ոտքի տակ դնելը և տիրացու Եղիա Տէր-Աստուածատրեանի սարկաւագի նման Հայոց եկեղեցում ռուսերէն «Տէր աղաչեսցուք»-ը ասելը չափազանց ծանր տպաւորութիւն է թողնում ամենքի վերայ։

Ներսէսը գալիս է նոյեմբերի սկզբին, ընդ առաջ են գընում Խալիբեանք, Խօջայեանք, Օդաբաշեանք, Խաչատուր Խռամաչեանը և միւսները, գլխաւորապէս Պատկանեանցի հակառակորդները։ Պատահում են կաթողիկոսին Տագանրոգի և Մարիամպոլի մէջ գտնուած մի գետակի ափին, որտեղ Վեհափառը պէտք է փոխէր կառքի ձիերը։ Իսկոյն բոլորքեան իջնում են կառքերից և դիմաւորում մեծ հիւրին։ Վեհափառը մտնում է իջեւանի դահլիճը, և նորա հետ մտնում է միայն Խալիբը, իսկ դրան մօտ կանգնում է Դաւիթ Օդաբաշեանը, որ ոչ ոքի թոյլ չըտայ մտնելու, մինչև որ նոքա երկուսը վերջացնեն իրանց առանձին խօսակցութիւնը։ Մի քանի ժամանակից բացւում է դուռը և ներս է հրաւիրւում Տէր-Մարտիրոս քահանան, յետոյ արդէն թոյլատւութիւն են ստանում մտնելու և միւսները։ Կաթողիկոսը առաջին անգամ մինչև իսկ չի ճանաչում Խաչատուր տէր Խռամաչեանին, թէև դա բոլոր ժամանակ կանգնած է լինում նորա առաջ։ Թէ ինչ են խօսում երկուսը առանձին—կաթողիկոսը և Խալիբը, չի իմացւում, միայն որ այդ օրուանից սկսւում է նոցա մէջ բարեկամական յարաբերութիւնը, նոցա մէջ, որոնք 15 տարուց ի վեր անհաշտութեան մէջ էին եղել, և պսակւում ու սրբագործւում նոյն հացկերոյթի սեղանով, որ սարքել էին Նախիջևանցիք հետները բերած ճանապարհի սառն պաշարից։ Այդտեղից շքեղ կարաւանը առաջ է շարժւում դէպի Տագանրոգ և մի գիշեր ճանապարհին անցկացնելուց յետոյ, երկրորդ օրը հասնում են Նախիջևան։ Ահա այդ միասին ճանապարհորդելու կարճ ժամանակամիջոցում, երբ Խալիբը բոլոր ժամանակ նըստած է լինում կաթողիկոսի կառքում, վճռւում է ամէն բան—և Տէր-Գաբրիէլի տեղափոխուելը Թիֆլիզ, և Տէր-Մարտիրոսի նախանդամ լինելը հոգևոր կառավարութեան, և Եկանեանի վարժապետ կարգուելը հոգևորականներին, և առաջնորդական գործակատարութեան պաշտօնի և եկեղեցական գումարների Խալիբին յանձնուելը, և այլն և այլն։

Բազմամբոխ և շքեղ ընդունելութիւն է լինում, և կաթողիկոսը մտնում է Ս. Լուսաւորիչ, որտեղից դուրս էր եկել նա 1828 թուի օգոստոսի վերջին առաւօտեան։ Սովորական, «Ուրախ լեր, սուրբ եկեղեցի» երգից յետոյ, վեհափառը դառնում է դէպի ժողովուրդը և քարոզում սէր և խաղաղութիւն ամենի հետ և մանաւանդ ռուսների հետ։ Պատկանեանցը նորա քարոզի բովանդակութիւնը իսկոյն մի նամակով հաղորդում է Թիֆլիզ իւր եղբօրը Միքայէլ Պատկանեանցին։ Իջեւան է պատրաստուած լինում կաթողիկոսի համար «Չէնգին» կոչուած Կարապետի տունը, որտեղ հէնց նոյն օրն էլ լինում է մեծամեծ ճաշկերոյթ։ Այդ ճաշկերոյթին ներկայ չեն գտնւում միայն Խռամաչեանն ու Պատկանեանցը, որ նկատում է և կաթողիկոսն ու ասում, թէ Տէր-Գաբրիէլն ու Խռամաչեանը, երևի, գլուխ գլխի են տուել, որ փարատեն իւրեանց տրտմութիւնը։

Միւս օրը կաթողիկոսի հրամանով ատեան է կազմւում և Պատկանեանցը առաւօտեան ժամը 10-ին կոչւում է դատի, որ պիտի լինէր քաղաքի բոլոր մեծամեծների ներկայութեամբ և հատուցանէր «նորա արածների արժանի վարձատրութիւնը»։ Նա գնում է ժամը 9-ին և տեսնում է, որ ամէն բան արդէն պատրաստ է դատի համար. նստած է Տէր-Խաչատուր Սեթեան քահանան և նորա աջ ու ձախ կողմը քաղաքի մեծամեծները, կաթողիկոսը բազմած է ոսկեզօծ գահոյքի վերայ առանձին և նորա առաջ դրուած է մի սեղան՝ վերան քօղածածկ խաչ ու աւետարան, վեհափառի յետևը կանգնած են հոգևոր կառավարութեան անդամները, որոնց հետ շշնջելով խօսում են Տէր-Մարտիրոս քահանան և Թադէոս վարդապետը, իսկ Սարգիս Տուֆլիկեանը, Տէր-Մարտիրոսի փեսան, անդադար գնում, գա-

լիս է, պատգամներ է բերում Խալիլին և պատասխան ստանում նորանից։

Տէր-Գաբրիէլը որոշեալ ժամին մտնում է տաճար և ուղղակի գնում, առնում է կաթուղիկոսի աջը, նոյն րոպէին էլ Տէր-Մարտիրոսը քաշում, հանում է քօղը խաչի ու աւետարանի վերայից, որ նշան էր, թէ տաճարը բացուած է և դատը սկսուած։ Կաթուղիկոսը «ի՞նչ է այս աջը, որ դու այժմ համբուրեցիր» հարցմունքը նորան տալուց ու պատասխանը լսելուց յետոյ, սկսում է մի առ մի թուել նորա կատարած յանցանքները,—թէ նա Ս. Համբարձման եկեղեցուց գողացել է կենաց փայտի խաչը, թէ նա նախընտրաբար համակրութիւն է ցոյց տալիս Տէր-Սիմէօնեան Տէր-Գաբրիէլին և Յոհանեան տիրացու Ստեփանին և տասը միւս քահանաներին, թէ նա խռովել է Խաչատուր Խամաչեանից և այնպէս հեռացել նորանից, որ նորա գործակատարութիւնը միանգամայն անպէտք է եղել առաջնորդութեան, թէ նա սանձակոտր ու ամենի նեղսիրտ է. թէ նա քաղաքի մէջ ոչ մի բարեկամ չունի, թէ նա գրել է իւր, առաջնորդի մասին Ս. Էջմիածին Բարսեղ Կետրացուն՝ «զիս պատուեալ էր օծութեամբ, չեթող ինչ ի չարեաց, զոր ոչ էած ի գլուխ իմ», թէ նա մեղադրել է Ալամդարեանցին, որ իբր թէ նա ուզեցել է փախչել Ս. Էջմիածին և եպիսկոպոս դառնալ, այն ինչ ինքը խնդրել է Կարապետ եպիսկոպոսից, որ նա իրան տեղ տայ Թիֆլիսում, թէ նա երբէք լուռ չի կենում, ինչպէս Թադէոս վարդապետը և միւսները, այլ միշտ պատասխանում է, որով և արդարացնում է Սողոմոնի խօսքը՝ «այր անզգամ ի պատասխանիս է պատրաստ», թէ նա, ըստ ամենայնի, արժանի է «դև Գաբրիէլ» կոչման, որ տուել են նրան, և թէ, վերջապէս, ինքը շատ զղջում է, որ նորան ձեռնադրել է քահանայ, և այլն և այլն։ Կաթուղիկոսը այդ բոլորը ասելու ժամանակ այնքան վրդովուած է լինում, որ չի կարողանում հանգիստ տեղը նստել. նա մերթ տեղից վեր է կենում ու շրջում սենեակում, մերթ մօտենում Տէր-Գաբրիէլին և ցնցում նորա վերարկուի թևը, մերթ էլ անհանգիստ նստում իւր գահոյքի վերայ։ Նա նամանաւանդ

շատ բարկացած է լինում վերյիշեալ «ի չարեաց» խօսքի վերայ. նա այդ առթիւ անդադար հարցմունքներ է ուղղում բազմականներին, թէ «իրաւո՞ւնք է, որ իմ ձեռնադրած մարդն ինձ չարագործ կոչէ. իշխաններ և մեծամեծներ, ես չարագո՞րծ եմ. Տէր-Գաբրիէլ, ես չարագո՞րծ եմ»։ Դատը տևում է մինչև ճաշ և ընդհատւում է ճաշի պատճառով. վեհափառը սեղան է նստում և հրաւիրում է, որ ներկայ գտնուողներն էլ նստեն, բայց Պատկանեանցը չի մնում. նա գնում է տուն և վերադառնում է միայն ճաշից յետոյ, երբ պիտի վերսկսուէր դատը։ Վեհափառը հարցնում է նորա չը մնալու ու սեղան չը նստելու պատճառը. նա պատասխանում է, թէ ինքը գնացել էր տուն, որ հաղորդէ իւր ընտանիքին, թէ վեհափառը միտք ունի իրան Թիֆլիս փոխադրելու։ Այս անգամ դատը երկար չի շարունակւում. մի քանի հարցմունք տալուց ու պատասխանը ստանալուց յետոյ, երբ նա տեսնում է, որ հրաւիրուածները ձանձրացել են, միմեանց ականջի խօսում են և ոմանք էլ դուրս են գալիս տաճարից, լուծում է ժողովը և արձակում ժողովրդին, խոստանալով միւս անգամ հրաւիրել, որ սակայն չի կատարւում։

Ներսէս Նախիջևանում երեք կոնդակ է տալիս՝ մինը Մկրտիչ Եկանեանին, միւսը Տէր-Մարտիրոս Թորոսեանին և երրորդը Խալիլին։ Այդ կոնդակներով նա գրաւոր կերպով միայն վաւերացնում է, ինչ որ արդէն մասնաւոր և առանձնակի խօսակցութիւնների ու խորհրդակցութիւնների ժամանակ չափած, ձևած ու վերջացրած էր։ Եկանեանը կարգուել էր վարժապետ հոգևորականների վերայ, Տէր-Մարտիրոսը՝ հոգևոր կառավարութեան նախագահ և Խալիլը—առաջնորդական գործակատար և ընդհանուր ինքնագլուխ անօրէն բովանդակ եկեղեցական գոյքերի և փողերի, պատասխանատու միայն կաթուղիկոսի առաջ։ Պատկանեանցի մասին արուելիք կարգադրութիւնը մի փոքր ուշանում է. թէև վեհափառը շատերին և մինչև իսկ իրան Պատկանեանցին էլ յայտնել էր իւր մտադրութիւնը նորան Թիֆլիզ տանելու, բայց իբրև վերջնական հրաման դեռ չէր յայտնուել նորան, որ ամենից շատ էր շտապում, վերջապէս, իւր վիճակը որոշուած տեսնել։ Վերջապէս, երբ Պատ-

կանեանցը սակավ-սակավ սկսում է գնալ-գալ վեհարան և մի վերջնական պատասխան խնդրել, վեհափառը պատուիրում է անցագիր տալ նորան, «Դու ինձ պէտք ես Կովկասում, ասում է նա նորան. Ներսիսեան դպրոցը քեզ պիտի յանձնեմ, մեր ազգի այս կողմերում մնալը ամենամեծ վնասն է»։ Կաթողիկոսը քանի կիւրակէ որ մնում է Նախիջևանում, ամեն անգամ էլ եկեղեցի է գնում, բայց միայն երկու անգամ է քարոզ խօսում՝ մէկ գալիս, մէկն էլ գնալիս։ Նա կարգադրում է, որ աւետարան կարդալու ժամանակ վարդապետները վեղարը մի կողմը կախեն, պատարագիչները սաղաւարտը հանեն, թէև այդ բանի համար իբրև թէ նա Պատկանեանցին յանդիմանել էր Քիշինևում, ասելով, թէ այդ Յունաց ծէս է։ Արքայական տունը յիշատակելու ժամանակ հրամայում է կայսր բառի տեղ «իմպերատոր» գործածել, և ամեն մի խօսակցութեան սկիզբը ընտրում է ընտրան առաքեալի խօսքը՝ «Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոյ վասն Տեառն, եթէ թագաւորի՝ իբրև առաւել ումեք»։

Անցագիր ստանալուց յետոյ, Պատկանեանցը սկսում է տեղափոխուելու պատրաստութիւն տեսնել. նա ամուսնացնում է իւր Մարիամ դուստրը Մարկոս ադայի որդու Մկրտչի հետ և մնում է միայն Վասակ և Սոփիա աղջիկներով։ 1846-ի ծննդեան օրը ժամարար է լինում, քարոզ խօսում, հրաժարականի ողջոյն տալիս և անօրհնէք մնաք գալիս, բայց ոչ ոքի չի յայտնում իւր ճանապարհ գնալու օրն ու ժամը։ Յունուարի 20-ին լուսաբացից առաջ նա ճանապարհ է ընկնում. նորան ուղեկցում են Մարկոս ադան, Յուսիկ Կուսիկեանը և Միքայէլ Նալբանդեանը, մինչև որ հասնում են առաջին իջևանը, որտեղ պիտի փոխէին ձիերը։ Այստեղ վերջին հրաժեշտ են տալիս միմեանց բարեկամները, և Պատկանեանցը դիմում է դէպի Ստաւրապոլ։ 1846 թուի փետրուարին նա դժուարութեամբ անցնելով Կովկասի սառցապատ լեռները, հասնում է Թիֆլիս և մնում այնտեղ անգործ համարեա թէ երեք տարի։ Կաթողիկոսը այդ բոլոր ժամանակը թողնում է նորան անպաշտօն, անդադար յետաձգելով Ներսիսեան դպրոցում պաշտօն տալը նորան և փորձելու համար ծածուկ կարգելով նորա վերայ հսկողներ, որ իմանայ, թէ նա ի՞նչ է անում և ո՞ւմ հետ է բարեկամութիւն կապում։ Մինչև անգամ երբ ուսումնարանական շրջանի հոգաբարձու Սիմէօնովը այդ միջոցում խնդրում է կաթողիկոսին, որ նա թոյլ տայ Պատկանեանցին ճեմարանում և նահանգական վարժարանում կրօնուսոյց լինել, նա մերժում է, ասելով, որ նա իրան էլ հարկաւոր է, իսկ այն պաշտօնները տալիս է ճեմարանինը՝ Տէր-Սահակ Սահառունուն 700 ռուբլի ռոճիկով, նահանգականինը՝ Տէր-Սահակ Ջիալեանին 350 ռուբլի ռոճիկով։ Այդ հանգամանքներում Պատկանեանցը ստիպուած է լինում ապրուստ հայթայթելու համար բաց անել մի գիշերօթիկ մասնաւոր վարժարան հայ, ռուս, վրացի և ֆրանսերէն լեզուների դասատուութեամբ. դորա հետ միասին նա մի փոքր յետոյ, 1850-ին, բաց է անում և մի տպարան և սկսում է հրատարակել «Արարատ» շաբաթաթերթը։ Վեհափառը հաւանում է «Արարատ»-ի տպագրութիւնը, տառերը և գովում է նորա եռանդը և նոյն 1849 թուի վերջին և 50-ի սկզբին կարգում է նորան գասապլուխ և ժամօրհնող Ս. Աստուածածին Նորաշէն եկեղեցում, որտեղ նորան շատ նեղութիւն են տալիս Տէր-Դաւիթ քահանան և մի տիրացու, որոնցից առաջինը իւր խռովարարութեան համար արտաքսուած էր Վանքի եկեղեցուց, երկրորդը նոյն պատճառով հալածուած Բեթղեհէմից։

Իշխան Արղութեան Իվանէ Զաքարիայի խորհրդով, վերջապէս, կաթողիկոսը յանձնում է Պատկանեանցին այն պաշտօնը, որի համար իսկապէս տարել էր նորան—Ներսիսեան դպրոցի տեսչութիւնը. Նա ստիպուած է լինում այդ պատճառով փակել իւր դպրոցը, որովհետև դժուար էր միաժամանակ երկու տեղ էլ պաշտօն վարել, նամանաւանդ որ կաթողիկոսը գանգատուում էր, որ նորա մասնաւոր դպրոցն արգելք է լինում նորան բոլորովին նուիրուել «ազգային հոգևոր դպրոցին». Նա մինչև իսկ անբաւական էր, որ նա խմբագրում էր «Արարատ»-ը և սորան-նորան ասում էր, թէ նա աւելի զբաղուած է «Արարատ»-ի սրբագրութեամբ, քան թէ դպրոցի

գործերով։ Անա հէնց այդ ժամանակ հասնում է Խալիբի միջնորդութիւնը՝ Պատկանեանցին վերադարձնելու Նախիջևան, որ վեհափառը շտապում է իսկոյն կատարել, կարծես թէ ուրախանալով, որ կարող է այդպիսով ազատուել նորանից, նա խոստանում է տալ նորան խաչ, փիլոն և կամիլաւկայ և յորդորում է Կարապետ եպիսկոպոսին այդ մասին միջնորդութիւն յարուցանելու իւր առաջ և արդէն իսկ այդ մասով կոնդակ էլ է պատրաստում, բայց յանկարծ փոխում է իւր միտքը և անցագիր տալով, արձակում նորան։ Պատկանեանցը, նախ, գնում է Կովկասի հանքային ջրերը տեսնելու իւր Մկրտիչ փեսային, որ հէնց այդ ժամանակ եկել էր ջրերը բժշկուելու. ռանառութիւնից, և յետոյ Նախիջևան, որտեղ նորան սպասում էր Մատթէոս Վեհապետեանը և որտեղ դորանից արդէն քանի ժամանակ առաջ սկսուել ու շարունակւում էր եկեղեցական գումարների հաշուետուութեան և առաջնորդի իրաւասութեան յայտնի խնդիրը երկու կուսակցութեան մէջ՝ Խալիբեան և Հայրապետեան։

Պատկանեանցը մտնում է Նախիջևան 1851 թուի յունիսին և յուլիսի 1-ին կարգուում է նախանդամ հոգևոր կառավարութեան, բարեկարգիչ բոլոր եկեղեցիների և ժամօրհնող աւագ եկեղեցու։ Նորա բացակայութեան հինգ տարուայ ընթացքում մեծամեծ փոփոխութիւններ էին եղել Նախիջևանում։ Ճիշդ է, քաղաքի կառավարութեան ձևը, եղանակը և բնաւորութիւնը միևնոյնն էր մնացել, որովհետև չորս եռամեակ յաջորդաբար վերընտրուել էր քաղաքագլուխ Խալիբը, բայց Պատկանեանցի տեղ յառաջ էին եկել նորա դէմ նոր կռուողներ՝ Վեհապետեան Մատթէոս առաջնորդը, Միքայէլ Նալբանդեանցը և Հայրապետեանը և կազմակերպուել ու ամրապնդուել էր հակախալիբեան կուսակցութիւնը— Հայրապետեան։ Մատթէոսը ձեռնադրուած էր Կարբեցուց և աւագ գանձապահ էր եղել Ս. Էջմիածնում, յետոյ նա կարգուել էր Շամախու առաջնորդ և, վերջապէս, ուղարկուել էր վիճակաւոր պաշտօնով Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիոյ թեմը։ Նա տեսնելով, որ իւր առաջնորդական իշխանութեան իրաւունքների

մի մասը Խալիբի ձեռքին է, ներքին գործոց նախարարութեան ձեռքով սկսել էր յետ պահանջել, յարուցանելով մի և նոյն ժամանակ եկեղեցական գումարների հաշուետուութեան խնդիրը. նա նոյնպէս նկատելով, որ իւր ձեռնասուն աշակերտ Յովհաննէս վարդապետ Բէկնազարեանցը Խալիբի կողմն է պահում, ուղարկել էր նորան Ղրիմ, որ Ներսէսի ժամանակ կառավարում էր Թադէոս վարդապետը, իսկ Եփրեմի և Գառնակերեանի ժամանակները—Գիւմուշխանցին, և Տէր-Մարտիրոսի ձեռքից խլել էր բոլոր պաշտօնները, որ տուել էր նորան կաթողիկոսը, և միայն թողել էր նորան աւագ քահանայ Ս. Աստուածածին եկեղեցու։ Նա իւր անձնական քարտուղարութեան պաշտօնը տուել էր Միքայէլ Նալբանդեանցին և ինքը մերթ Քիշինևում նստելով, մերթ Նախիջևանում, մերթ էլ մայրաքաղաքներում, ձեռնարկել էր կառավարելու թեմը։ Նալբանդեանցը, որ լաւ ծանօթ էր անցեալին, եկեղեցական գումարների հետ միասին սկսել էր պահանջել առաջնորդի ձեռքով և խօնախը, որ Մարկոս աղան ենթարկել էր Տագանրոգի դիրեկցիայի իշխանութեան, բայց Խալիբը դպրոցը առաջնորդի ձեռքից ազատելու համար։ 1850 թուին ծխականից նահանգական վարժարանի էր վերածել տուել «վեհագոյն հաստատեալ Նախիջևանի նահանգական վարժարան անունով և ինքը կարգուել վերատեսուչ։ Այս բոլորը կատարուել էր 1849—50 թուերին Մատթէոսի առաջնորդ նշանակուելու առաջին և երկրորդ տարին, Պատկանեանցի Նախիջևան վերադառնալուց 1—2 տարի առաջ։

Պատկանեանցի Տէր-Մարտիրոսի տեղը նշանակուելը արդէն բաւական է լինում նորից զինելու նորա դէմ Խալիբին և նորա կուսակիցներին, որոնց թշնամութիւնը դէպի նա, կարծես թէ, նորա հեռանալովը սառել և կորցրել էր իւր սրութիւնը։ Իսկ Պատկանեանցն էլ չի ունենում այնպիսի բնաւորութիւն, որ կարողանայ, գոնէ, մի առ ժամանակ հեռու մնալ կուսակցական կռիւներից. նա Նախիջևան ժամանելուն պէս, իսկոյն և եթ յարում է առաջնորդական կամ Հայրապետական կուսակցութեան, անմիջապէս խառնուում է գործերի մէջ և

սկսում է ներշնչող դեր խաղալ։ Եւ ուրիշ կերպ լինել էլ չէր կարող, քանի որ, կարելի է ասել, իբրև բողոքող բնաւորութիւն, նա էր հիմք դրել այդ կուսակցութեան։ Ճիշդ է, այն ժամանակները, Պատկանեանցի Թիֆլիս գնալուց առաջ, դեռ չը կային եկեղեցական դումարների և առաջնորդի իրաւասութեան կարևոր խնդիրները, բայց կային մանր-մունր քիչ թէ շատ կարևոր խնդիրներ, որոնք առիթ էին տալիս մեծերի և հզօրների գործողութիւններից դժգոհներին երբեմն ձայն բարձրացնելու նոցա դէմ։ Ահա այդ դժգոհների պարագլուխ այն ժամանակները միշտ համարեա հանդիսանում էր Պատկանեանցը, ինքը համարեա թէ իւր վերայ ընդունելով հզօր հակառակորդների բոլոր հարուածները, ինքը բոլորի տեղ տուժելով, որովհետև վճռական րոպէներին այդ դժգոհները, այդ խուլ ու անհամարձակ կերպով բողոքողները մենակ ու անօգնական էին թողնում նորան և մինչև իսկ թշնամանում էին նորա հետ և, գոնէ, երեսանց անցնում էին զօրաւորների կողմը։ Այժմ, երբ որ հանգամանքները այդպէս փոխուել էին, երբ բողոքողները ունէին կողմնակից և պաշտպան այնպիսի մարդիկ, ինչպէս Մատթէոս առաջնորդը, Հայրապետեանը և Նալբանդեանցը, Պատկանեանցը չը պէտք է կարողանար անկասկած հոգով սրտով չմիանալ նոցա հետ և ձեռքերը ծալած նստել։ Նա, ճիշդ է, այժմ էլ գործ է դնում իւր նախկին մաքառելու եղանակը, աշխատելով ամեն տեսակ հաշտեցնել Խալիբին Մատթէոսի հետ ինչպէս մի ժամանակ նա աշխատում էր հաշտեցնել նոյն Խալիբին Ներսէսի հետ, բայց երբ այդ չի յաջողում, նա չի դադարում, որքան ոյժ ունէր ու կարողութիւն, հարուածելու նորան ու նորա կուսակիցներին, որով և նորից վերանորոգում է իւր հակառակորդների դադարեցած ատելութիւնը դէպի ինքը և հետզհետէ ևս աւելի սրում իւր յարաբերութիւնը նոցա հետ։

Նոյն 1851 թուի օգոստոսի 1-ին առաջնորդը Պատկանեանցին իւր հետ առնելով, տանում է Ղրիմ Վորոնցովի որդու հարսանիքին, որտեղից նա, Պատկանեանցը, վերադառնում է նոյեմբերին Աղաթօն Դաւթեան Հաքիմեանի հետ, որ եկել

էր Ղրիմ առաջնորդի մօտ հրաման ստանալու՝ պսակել Խաչատուր աղա Լազարեանի երկու աղջկան երկու քեռորդու՝ Յովհաննէս Դաւթեան Դիլանեանի և Սիմէօն Դաւթեան Աբամելիքեանի հետ։ Այս անգամ Նախիջևանում Պատկանեանցը գտնում է Սարգիս վարդապետ Ջալալեանին Մկրտիչ վարժապետ Եկանեանի տանը, որին և բերում է իւր տունը ճաշի, հրաւիրելով և Աղաթօնին և գորա քեռորդի Փոնդոյեանին ու քաղաքի մեծամեծներին։ Սարգիս վարդապետեան եկել էր Նախիջևան իբրև քննիչ վիճակի և ծանօթացել էր քահանաների դէպի Պատկանեանցը ունեցած թշնամական յարաբերութեան, նամանաւանդ Մատթէոսից նոր միայն ձեռնադրուած Տէր-Եղիա Տէր-Աստուածատրեան Շապօշնիկեանի յարաբերութեան, որ ամբաստանել էր Պատկանեանցին նախարարութեան առաջ նորա կայսերական տօների ցուցակը օրացոյցում սխալ տպագրելու համար։ Այդ սխալը պատահել էր, որովհետև ինքը Պատկանեանցը լուր առնելով իւր փեսայի հիւանդութեան մասին, շտապել էր դուրս գալ Թիֆլիսից և նոր օրացոյցի մէջ, որ տպւում էր նորա տպարանում, մտել էր հին օրացոյցի կայսերական տօների ցուցակը։ Նախարարութիւնն այդ ամբաստանութիւնը ուղարկում է վեհափառին, նա էլ տալիս է Սինոդին, որ անմիջապէս, գանց առնելով առաջնորդին, կրկին հրովարտակով, արձակուած 1851 թուի դեկտեմբերի 31-ին և 1852-ի յուլիսին, ուղղակի գրկում է Պատկանեանցին քահանայագործութիւնից։

Գլուխ Ժ.

Այս դրութեան մէջ Պատկանեանցը մնում է մինչև 1852 թուի օգոստոսը, երբ, իւր պատմելով, սկսում է նիւթեր հաւաքել մի ընդարձակ բողոքագիր պատրաստելու համար, որ նա միտքը դրած է լինում ուղարկելու Ս. Էջմիածնի Սինոդոսին և վեհափառ կաթուղիկոսին։ Բայց որովհետև նա ռուսերէն և օրէնքները լաւ չէր իմանում, այդ պատճառով էլ սկսում է որոնել մի օրէնսգէտ մարդ, որ իւր պատրաստած նիւթերից կարողանար, օրէնքի հիման վերայ և ռուսերէն, պատրաստել բողոքագիրը։ Ռոստովում հէնց այդ ժամանակներն ապրում էր

մի ատրճանաւոր Կորչեւսկի ազգանունով, որ հաշւառուած էր իբրև հմուտ օրէնսգէտ և խնդիր գրող. Նա դիմում է նորան, բայց այդ վերջինը պէսպէս պատճառներ մէջ բերելով, հրաժարւում է։ Այնու ամենայնիւ նա աչքի է անցկացնում նորա թղթերը և ասում է, թէ դոքա, այդ փաստաթղթերը, այնքան զօրաւոր են և պարունակում են իւրեանց մէջ այնպիսի ծանրակշիռ փաստեր ու ապացոյցներ, որ բաւական են սպանելու ոչ միայն Ներսէսին, այլ և Խալիլին, որից և քաղաքի մէջ իբրև թէ տարածւում է մի զրոյց, թէ Պատկանեանցը միտքը դրել է սպանել Խալիլին։

Շուտով սակայն յիշեալ Կորչեւսկին տեղափոխւում է Զերկասկ քաղաքը և վերանում են այն պատճառաբանութիւնները, որ նա բերում է եղել բողոքագիր պատրաստելու դէմ։ Պատկանեանցը իմանալով, որ այդ օրէնսգէտ ատրճանաւորի հետ լաւ ծանօթ ու բարեկամ է Նախիջևանցի Կարապետ Իսմայիլցեանը, կոչում է նորան իւր մօտ և խնդրում է, որ նա միջնորդ հանդիսանայ իւր և Կորչեւսկու մէջ և համոզէ նորան յանձն առնելու խնդրագրի պատրաստելը։ Իսմայիլցեանը խօսք է տալիս և մի քանի օրից յայտնում է, թէ Կորչեւսկին յօժարացել է և այդ գործում օգնել է իրան Նախիջևանցի Խաչատուր Թերզիեանը։ Սորա վերայ անցնում է այլ ևս մի քանի օր և Իսմայիլցեանը բերում է Պատկանեանցին մի տոմսակ, որ իբրև թէ Կորչեւսկին գրել էր իրան, թէ որովհետև ես ձեր խնդիրքով յանձն առայ գրելու Պատկանեանցի բողոքագիրը, ուստի և խնդրում եմ, որ առնէք նորանից 20 ռուբլի և հասցնէք ինձ այս գրաբերիս ձեռքով, որ հէնց դորա համար ուղարկում եմ։ Սորանից յետոյ մի քանի անգամ էլ կրկնւում է նոյն պատմութիւնը և Պատկանեանցը իբրև թէ Իսմայիլցեանի և գրաբերի ձեռքով ուղարկում է Կորչեւսկուն մաս-մաս զանազան քանակութեամբ գումարներ՝ առաջ 20 ռուբլի, յետոյ 13 և 30 և այլն։ Օգոստոսի 9-ին, վերջապէս Իսմայիլցեանը բերում է հինգերորդ տոմսակը, որի մէջ Կորչեւսկին գրում էր նորան, որ նա առնէ Տէր-Գաբրիէլից 75 ռուբլի և շուտով հասցնէ իւր ձեռքը։ Պատկանեանցը իբրև թէ չը կամենալով զայրացնել նորան, համաձայնում է տալ 50 ռուբլի, միայն որ կամենում է առաջ տեսնել գրաբերին։

Օգոստոսի 10-ին, կէսօրին, գալիս է նորա մօտ Իսմայիլցեանը և ասում, թէ եթէ դու ուզում ես տեսնել Կորչեւսկու ուղարկած մարդուն և անձամբ յանձնել նորան փողը, պէտք է այսօր երեկոյեան ժամը 9-ին դուրս գաս քաղաքից դուրս, որտեղ գտնւում են Փանոսի հողմաղացները. այնտեղից պիտի անցնի գրաբերը, գնալով Ռոստովից Զերկասկ։ Երեկոյեան նըշանակուած ժամին Պատկանեանցը գնում է Իսմայիլցեանի տունը, որտեղ գտնում է և Թերզիեանին, և նոքա հաւատացնում են նորան, թէ Կորչեւսկու մարդը դեռ չի վերադարձած լինի Ռոստովից և մի ժամից առաջ չի վերադառնայ։ Նա նոցա յայտնում է, թէ որտեղ կարող են գտնել իրան, և գնում է, չը կամենալով երկար մնալ նոցա մօտ և սպասել։ Ժամը 10-ին գալիս է Իսմայիլցեանը և միասին գնում են նշանակուած տեղը։ Երբ որ նոքա հասնում են հողմաղացների առաջ գտնուած տափարակը, չեն գտնում այնտեղ Կորչեւսկու մարդուն։ Իսմայիլցեանը հեռուից ցոյց տալով նորան այս կամ այն բանը, ասում է, թէ նա ահա՛ այստեղ է կամ այնտեղ է, և այսպիսով խաբխբելով, կամաց-կամաց հեռացնում է նորան քաղաքից և հասցնում է մի տեղ, որտեղ Պատկանեանցը զարմանքով տեսնում է իւր առաջ երեք ձիաւոր Թերզիեանի հետ։ Իսմայիլցեանը և Թերզիեանցը ցոյց տալով նորան ձիաւորներից մէկին, ասում են, թէ ահա՛ հէնց սա է Կորչեւսկու մարդը, իսկ միւս երկուսը նորա ուղեկիցներն են։ Նա իսկոյն հանելով տալիս է նորան 50 ռուբլի և ասում է, թէ Կորչեւսկին թո՛ղ առ ժամանակ շատանայ սորանով, իսկ երբ վերջացնէ աղերսագիրս, կստանայ այլ ևս 150 ռուբլի։ Այս ասելուց յետոյ, երբ նա ուզում է կառք նստել ու տուն վերադառնալ, ձիաւորներից մէկը, որ ծպտեալ ժանդարմ է լինում, բռնում է նորա օձիքից և սկսում է որոտաձայն կանչել՝ գարաու՛լ, գարաու՛լ։ Այս աղաղակի վերայ իսկոյն դուրս են թափւում դարանամուտները — Խալիլը, դատաւոր Զէյթունեանը, ստրեապչի Սիմեօնովը, ժանդարմների պետ բառօն Կլէյսոր և ուրիշ ծպտեալ

ժանդարմներ, որոնք բռնելով ու նեղը ձգելով նորան, աղաղակում էին, թէ նա կամենում էր կաշառել մեզ, ինչպէս սրիկաների, Խալիբին սպանելու համար: Բոլորեքեան շրջապատելով նորան, հայհոյում են, սպառնում են, ուշ չդնելով նորա աղաչանքներին, նորա, որ կամենում էր յայտնել ճշմարտութիւնը: Բերում են իսկոյն Տէր-Մարտիրոս Թորոսեանին և Տէր-Պօղոս Խռչեանին, որոնց իբրև թէ նախապէս հրաւիրել էին և նախապատրաստել, և խնդրում են, որ դոքա էլ, իբրև հոգևոր կառավարութեան անդամներ, վկայ լինեն գործին: Քահանաներից Տէր-Մարտիրոսը, առանց լսելու նորա պատասխանը, սկսում է, ի միջի այլոց, չարաչար նախատել նորան և անպատուել, որով և հանում է իւր վրէժը ու ոխը, որ վաղուց ի վեր պահում էր իւր սրտում:

Դաշտից տանում են նորան Մագիստրատ, գիշերուայ ժամը 11-ին կազմում են ատեան, շատ համառօտ ցուցմունքներ են առնում նորանից, չեն գրում նորա պատասխանների մինչև իսկ տասներորդ մասը, խլում են նորա ձեռքից 50 ռուբլի փողը, ակնոցը, տէրողորմեան, ձեռնոցները, սանրը և բանտարկում են իբրև մահապարտի, յանցանքի տեղում բռնուած: Այդտեղ Տէր-Պօղոսը, ի միջի այլոց, ի հանդէս Տէր-Մարտիրոսի, կոչում է նորան «Յուդա, բաժանուած առաքեալներից»: Յետոյ միայն իմանում է նա, որ, բանտարկելուց յետոյ, նոքա կազմել են սուտ արձանագրութիւն, որպէս թէ նա հէնց այնտեղ, դաշտում, խոստովանել է իւր մեղքը, որ գործած չէր, և այդ հիման վերայ յայտարարութիւն են ուղարկել Տագանրոգի քաղաքապետ իշխան Լիվէնին և հրաման բերել պահելու նորան բանտում: Բանտարկութեան յաջորդ օրը, օգոստոսի 11-ին, նա խնդրում է, որ թոյլ տան իրան խնդիր գրելու թեմական առաջնորդ Մաթէոս արքեպիսկոպոսին, բայց չի ստանում այդ թոյլտուութիւնը, և նոյն ամսի 14-ին միայն տանում են նորան Մագիստրատի ոստիկանութեան կողմը և իրաւունք են տալիս այնտեղ գրելու, և այն միայն ռուսերէն և մի ժամուայ մէջ: Սորա վերայ 10 օր անցնելուց յետոյ, երբ լսում են, թէ պէտք է գայ Տագանրոգի նոր քաղաքապետ կամերհեր կոմս

Այլերբերգը, միւս անգամ ևս, օգոստոսի 24-ին, հանում են նորան բանտից ճաշի ժամանակ, և նա հազիւ հազ կարողանում է կարդալ և սրբագրել իւր աղերսագիրը: Օգոստոսի 25-ին նա գրում է խնդիր արդարադատութեան նախարարին, 27-ին ժանդարմների շէֆին, սեպտեմբերի 3-ին նոր քաղաքապետին և սեպտեմբերի 5-ին Բեսսարաբիոյ և Նոր-Ռուսիոյ ընդհանրական նահանգապետ Ֆեօդորովին: Սեպտեմբերի 25-ին նա ստանում է իւր խնդրագրի պատասխանը քաղաքապետից, թէ մեղադրեալի խնդիրն ուղարկուած է քննչին, իսկ երիցուհուն, որ նոյնպէս աղերսել և խնդիր էր գրել իւր ամուսնու համար, Տագանրոգից պատասխան է գալիս, թէ նորա խնդիրքը թողնուած է անհետևանք, որովհետև քահանան բռնուած է հէնց յանցանքի տեղում և ինքն էլ հէնց տեղնուտեղը խոստովանել է իւր մեղքը, որի համար և պէտք է ենթարկուի քրէական դատի և պատժուի ըստ օրինաց:

Արդարադատութեան նախարարին և ժանդարմների շէֆին գրած իւր խնդիրներում նա աղերսում էր հրամայել իրան գնալ Պետերբուրգ և այնտեղ կայսեր առաջ արդարանալ, մաքրուել և պահանջել տրիտուր կաթուղիկոսից նորա երեսից կրած իւր 33-ամեայ հալածանքի համար. իսկ առաջնորդից խնդրում էր միջնորդել նորա համար նահանգապետ Ֆեօդորովի առաջ, որպէս զի ինքը կարողանայ ազատուել բանտից և ուղևորուել Պետերբուրգ իւր իրաւունքները պաշտպանելու համար, յիշելով միանգամայն, որ ինքը ոչ մի շահ և օգուտ չի ունեցել և չէր էլ կարող ունենալ Խալիբին սպանելուց, քանի որ ինքը նորա տեղ քաղաքագլուխ լինելու չէր, նորա հարըստութիւնն ժառանգելու չէր, նամանաւանդ որ ինքը միտք էլ չունէր Նախիջևանում մնալու, այլ ձգտում էր տեղափոխուել Մոսկուա: Իւր ասելով, նա ինքը երբեք թշնամի եղած չէ Խալիբին. նա, ընդհակառակը, միշտ աշխատել է ձեռքից եկած լաւութիւնը անել նորան և Ղրիմում, ինչպէս յիշում կլինի և առաջնորդը, ձգտել է իրան սրբազանին հաշտեցնելու նորա հետ: Բայց Խալիբը կասկածաւոր մարդ է. նա կարծել է, որ սրբազանը թուղթ է գրել նախարարին նորա մասին իւր, Պատ-

կանեանցի, խորհրդով ու յորդորելովը, որ կամեցել է այդ ճանապարհով վրէժխնդիր լինել նորանից։ Նա մինչև իսկ միտքը դրած է եղել դիմել իշխան Լիվենին, որ նա համոզէ Խալիբին, միջնորդելու կաթուղիկոսի առաջ քահանայագործութեան իրաւունքը վերադարձնելու իրան։ Սակայն ամենքն իւր դէմ են, որովհետև կաշառուած են Խալիբից՝ սկսած քաղաքապետից, բառօն Կլէյսից, Կորչևսկուց և միւս գլխաւորներից և վերջացրած Թէրգիևանով, որ բանտարկուած լինելով Յովհաննէս Տու-Ֆլիկովին ատրճանակահար անելու փորձի համար, ապաստանել էր Մագիստրատը, հայհոյելով և սպառնալով ծեծել դատաւորներին, եթէ միայն նոքա չեն ազատի իրան բանտից ու պատժից, և այլն և այլն։

Խալիբի աշխատանքով շուտով նորան փոխադրում են Ռոստովի բանտը, որտեղ և նա մնում է մինչև գործի վերջանալը—1853 թուի օգոստոսի 10-ից մինչև 1860 թուի մարտի վերջը։ Թէև նորա կեանքը բանտում շատ էլ մեծ խստութիւններով շրջապատուած չի լինում և նորա բարեկամներն ու ծանօթները համարեա թէ անարգել մուտք ու ելք են ունենում նորա խուցը և մխիթարում են նորան, բայց երկարատև մենակութիւնը, ընտանիքից զրկուած մնալը և կեանքի սովորական սարք ու կարգից ու ազատ գործունէութիւնից կտրուած լինելը շատ ճնշող ներգործութիւն են ունենում նորա վերայ. նորա միակ մխիթարութիւնը այդ դժուար օրերում լինում է իւր մտերիմների ու սիրելիների երբեմնական այցելութիւնները և գլխաւորապէս գրական պարապմունքը։ Մտաւոր աշխատանքով պարապելը, կարդալը և գրելը միշտ նորա սիրելի զբաղմունքն էին եղել, բայց ազատութեան մէջ իւր սովորական կեանքում քահանայութիւնը, վարժապետութիւնը և հասարակաց գործունէութիւնը խլում էին նորա ժամանակի մեծ մասը և արգելք էին լինում նորան լիովին անձնատուր լինելու իւր սիրած գործին։ Սակայն այժմ երբ այլ ևս այդ բոլորը չկային, երբ, ընդհակառակը, մի զբաղմունք պէտք էր նորան, որ կարճացնէր նորա դառն օրերը, որ արգելք լինէր նորան իսպառ անձնատուր լինելու ծանր խոհերի և մաշող մտածմունքների,

որ, վերջապէս, անօգուտ չանցնէին նորա կեանքի այդ արբուն հասակի տարիները, նա բոլորամասն նուիրւում է գրական զբաղմունքի։ Եւ առատ ու բեղմնաւոր են լինում նորա այդ վաստակի պտուղները. նա միայն 1854 տարւայ ընթացքում գրում է եօթ պատմական բանաստեղծական գրուածք—«Հայկերգ», «Արամ-երգ», Շաւարշ Ա, և փարզենի», «Անակ», «Կար», Սօսիք Արտադամօտան» և «Վաշտակ»։ Սորանից միայն Սօսիք Արտադամօտան-ը արձակ վէպ է և դրած է գրաբառ, մնացեալ վեցը բոլորն էլ գրուած են աշխարհաբառ ոտանաւորով և շատ ընդարձակ բաներ են։ Առաջին երկուսը—Հայկերգը և Արամ-երգը—նա շատ վաղուց արդէն միտք էր դրել գրելու և սկսել էր նիւթեր հաւաքել թէ Հաշտարխանում և թէ Նախիջևանում—ժողովրդի բերանում պահուած զանազան զրոյցներ և աւանդութիւններ, բայց դորան արգելք էր եղել, նախ, ժամանակի սղութիւնը, երկրորդ, նորա հայրը։ Մենք միջոց չենք ունեցել կարդալու այդ գրուածները և նորա միւս բազմաթիւ մինչև ցայսօր անտիպ մնացած պատմական, բանաստեղծական, գրական և կրօնական երկերը, բայց ի նկատի առնելով, որ Սերովբէ վարժապետը յատկապէս արգելք է հանդիսացել այդ երկու երկի գրուելուն, կարելի է եզրակացնել, որ նոցա մէջ կան ակնարկութիւններ այն ժամանակուայ հայ կեանքի նամանաւանդ Հաշտարխանի և Նախիջևանի կեանքի զանազան երևոյթների և նոցա շրջապատող մարդկանց մասին, որոնց գլխաւորապէս երևան գալը կարող էր պէսպէս անախորժութիւնների դուռն բանալ նոցա համար։

Պատկանեանցի Ռոստովի բանտը փոխադրուելու հետ միասին փոխադրւում է Ռոստովի գաւառական դատարանը և նորա գործը։ Նա մեղադրւում էր, բացի Խալիբի կեանքի դէմ սպանութեան փորձ անելու գլխաւոր յանցանքից, այլ ևս մի երկու-երեք փոքր յանցանքներում—Նախիջևանցի Ջէօրէքչեանից 10 կեղծ թղթադրամ ստանալու գործում, բանտից փախչելու փորձ անելու գործում և կեղծ դրամ կտրող Նիկոլայ Գոլուբինսկուն իւր տանը պահելու և նորան թէ Նախիջևան Հայոց Մագիստրատի և թէ տէրութեան ձեռքից

փախչել-ազատուելու միջոց տալու գործում։ Խալիբը իւր գործի համար դատարանին ներկայացնում է, բացի բառօն Հէկյաւի արձանագրութիւնից և ներկայ եղող անձանց գրաւոր վկայութիւններից, այլ և երկու գրաւոր փաստաթուղթ—Մարկոս ադայի 1832 թուին Պատկանեանց ընտանիքի մասին կազմած «բրիկաւորի» ռուսերէն թարգմանութիւնը և Տէր-Պետրոս Պատկանեանցի իւր եղբօրը Ստաւրոպոլից 1852 թուի նոյեմբերի 9-ին գրած նամակը, որոնցից առաջինը բնորոշում է ընդհանրապէս Պատկանեանց տոհմի անհաշտ և խռովարար բնաւորութիւնը և մասնաւորապէս Տէր-Գաբրիէլի չարայոյզ ու խռովարար ընթացքը հասարակաց գործերում, իսկ երկրորդը նկարագրում էր նոյն պատկերը ամենասև գոյներով իբրև եղբօր, իբրև հարազատի ընտանեկան գործերում։ «Դու մասծեա՛, ի միջի այլոց ասուած է այդ նամակում, զոր քո չես խոցեալ օձախայթ լեզուաւդ. ի մանկութենէ քումմէ նախ զուսուցիչս քո, ապա զաշակերտակիցս քո, ապա զատենակալս քո, զերախտելի ծերունի զյօհաննէս առաջնորդն. ապա զբոլոր հոգևորական ուխտն Աստրախանայ. զու չէ՞ր պատճառն, որ բոլորամբ թողաք զԱստրախան և եկաք ի Նախիջևան. չէ՞ր զու պատճառն ապարազդութեան ծերունի Տէր-Գաբրիէլի անուանակցի քում, զու չէ՞ր պատճառ ցրելոյ եղբարց ի միմեանց. ի միտ բեր զի՞նչ արարեր ընդ ծնողս քո, քանի՞ցս մայր քո, որ ծնաւ զքեզ, արտասուեաց ի քէն, քանի՞ցս անգամ հայր մեր յանդգամ բանից քոց վիրաւորեալ, ուշաթափ անկաւ ցերկիր կիսամեռ. ո՞չ ապաքէն նեղեալ ի քէն եղբայր մեր Գէորգ արբ զթոյն մահու. միայն ես ատեցի քեզ, անուն և արիւն եղբայրութեան կապէին զիս ընդ քեզ... բայց ոչ ցանկամ զի որդիք քո զնասցեն ընդ ընթացից քոց. կարծեմ լաւ գիտես զի ճշմարիտ ասեմ, ապա թէ ոչ՝ հարց ցանցաւորս ի ճանապարհի և զգիշերապահս Նախիջևանայ. զոր ինչ խօսեալ ես և կատարեալ զինէն, կարծեմ թէ զու առաւել յարմարիս, զի զոյով հրաժարեցուցեալ զքեզ յամենայն գործոց, կարծես թէ կամիս զայսպիսի գործս յառաջ տանել, զի ուսեալ զուցէ իցես յառաջին կատարացքոց, զորս շատ ունիս, առ որս մարզեալ ես...»։ (10)։

Բացի վերոյիշեալ վաւերաթղթերից, որ Խալիբը ներկայացնում է մեղադրեալի դէմ դատարանին գործի քննութեան ժամանակ, 1853 թուի սեպտեմբերի 23-ին տալիս է քննչին հետևեալ գրաւոր ցուցմունքը. «Ճիշդ է, որ Թերզիեանը, երբ ես առաջին անգամ վերադարձայ, չեմ յիշում որ թուին, Տագանրոգից, յայտնեց ինձ Իսմայիլցեանի իրան հաղորդած լուրը, թէ Տէր-Գաբրիէլ քահանան միտք դրել է ինձ սպանելու։ Առաջին նուագ այդ լուրը ինձ անհաւատալի թուաց, որովհետև դժուար էր երևակայել ու կարծել, որ մի հոգևորական անձն միտք դրած լինի ձեռնամուխ լինելու մի այդպիսի զարհուրելի ոճրագործութեան։ Այնու ամենայնիւ ճշմարտութիւնը մերկացնելու նպատակով, ես յանձնեցի Թերզիեանին և Իսմայիլցեանին հարկաւոր և յարմարաւոր միջոցները գործադրելու։ Այդ Թերզիեանը և Իսմայիլցեանը իրանց կողմից ինձ հաղորդեցին Պատկանեանց քահանայի յանցանքը երևան հանելու համար իրանց գործ դրած հնարները և գործողութիւնները։ Դոքա զիջանելով քահանայի աղաչանքներին, երեսանց համաձայնում են գտանելու մի աւազակ ինձ սպանելու համար և ներկայացնում են նորան մի կեղծ սրիկայ, որին Պատկանեանցը տալիս է առաջին անգամ 13 ռուբլի։ Այս բոլորի մասին Թերզիեանը և Իսմայիլցեանը ինձ յայտնելով, աւելացրին, թէ Պատկանեանցը այնչափ հաստատապէս վճռել է գլուխ բերել իւր չարագործութիւնը, որ մինչև իսկ իրանց նորան նպաստելուց հրաժարուելու դէպքում ևս նա չը պէտք է որ դադարի ուրիշ ճանապարհներով հասնելու իւր նպատակին։ Ահա հէնց այդ պատճառով յանցանքը հէնց տեղն ու տեղը մերկացնելու և իմ կեանքս պահպանելու համար, ես կազմեցի մի առանձին ծրագիր, որ և հրամայեցի գործադրել ճշդութեամբ, նախապէս ազատելով բանտից Թերզիեանին մի 7—10 օրով։ Պատուիրելով, որ նոքա շարունակեն խաղալ իւրեանց խաղը քահանայի հետ, ես գնացի Տագանրոգ և անձամբ զեկուցի այդ մասին քաղաքապետ պ. Լիվէնին։ Նորին պայծառափայլութիւնը բարեհաճեց յանցանքը մերկացնելուն նպաստելու համար, ուղարկել Նախիջևան ժանդարմների պետ շտաբս-կապիտան բարօն Հէկյա-

տին երկու ժանդարմի հետ, և Պատկանեան քահանան օգոստոսի 10-ին գիշերը բռնուեց հէնց տեղն ու տեղը, ինչպէս որ այդ մանրամասնաբար գրուած է գործին կցած արձանագրութեան մէջ։ Պատկանեանցի Նախիջևանում ապրելու երկար տարիների ընթացքում ես երբէք նորան չեմ հալածել, երբէք չեմ սպառնացել, այլ, ընդհակառակը, կարելի է ասել, որ ես եղել եմ նորան բարեացակամ և բարերար, որովհետև նա երբ 1845 թուին հայոց կաթողիկոսի հրամանով աքսորուեց Նախիջևանից Թիֆլիս, ես էի, որ հասարակութեան խնդիրքով միջնորդեցի վեհափառ կաթողիկոսի առաջ՝ նորան նորից Նախիջևան վերադարձնելու, չեմ խօսում արդէն ուրիշ բազմաթիւ բարերարութիւնների մասին, որ ես արել եմ նորան և որ նա ինքն էլ խոստովանեց բոլորի առաջ օգոստոսի 10-ին, ինչպէս այդ գրուած է արձանագրութեան մէջ։ Երբ որ Ս. Էջմիածնի Հայոց Սինոդոսի կարգադրութեամբ Պատկանեանցը զրկուել էր քահանայագործութեան իրաւունքից այն ապօրինութիւնների համար, որ նա գործել էր իբրև անդամ Հոգևոր կառավարութեան, և ուղարկուել էր Նախիջևան այդ գործի քննութեան համար Ջալալեան Սարգիս վարդապետը, ես նորա խնդիրքով կամեցայ պաշտպանել նորան, բայց տեսնելով, որ նա պատժուած է այնպիսի յանցանքների համար, որ նկատել է և նորին սրբութիւնը, յետ կացայ։ Այդ առիթ եղաւ նորան դժգոհելու ինձանից և թշնամանալու իմ դէմ, և այդ թշնամութիւնը գնալով զօրացաւ և, վերջ ի վերջոյ, բերեց, հասցրեց նորան ներկայ ոճրագործութեան։ Սորա հետ միասին ես աւելորդ չեմ համարում մատնացոյց անել և այն հանգամանքի վրայ, որ, նախ, Պատկանեանց քահանան, բացի նորանից, որ մասնակից է եղել 1834—35 թուերին կեղծ դրամ կտրող Կրուտիկովի գործին, այլ և մասնակցել է 1851 թուին Նախիջևանում բռնուած սուտ յիսնական ռուբլիանոցներ շինողների գործին, որի համար, և նա ենթարկուած է դատի, և գործը այդ մասին գտնուում է ներկայումս Ռոստովի քաղաքային Մագիստրատում և գաւառական դատարանում. երկրորդ, օրէնքով քննութիւնը լինում է յանցաւորին գտնելու և յանցանքը երևան հանելու համար, իսկ այս դէպքում քննութեան կարիք էլ չկայ, որովհետև յանցաւորը յայտնի է և բռնուած հէնց յանցանք գործելու տեղում և, որ գլխաւորն է, նա, յանցաւորը, խոստովանել է իւր յանցանքը բոլորի առաջ, ուրեմն, այլ ևս ի՞նչ քննութիւն, ի՞նչ ապացոյց պէտք է։ Երկար ու բարակ քննութիւնը յանցաւորին առիթ և ժամանակ է տալիս միայն հնարել պէսպէս բարուրանքներ ճշմարտութիւնը քօղարկելու և գործը խճճելու նպատակով»։

Գործը Ռոստովի գաւառական դատարանում քննուելուց յետոյ, անցնում է Եկատերինոսլաւի դատական պալատը, և երկու տեղն էլ վճռուում է յօգուտ Պատկանեանցի (11)։ Խալիբը, յայտնի բան է, բաւական չի մնում այդպիսի վճիռներից և գործը փոխադրում է Պետերբուրգ բարձր ատեանը—ծերակոյտ, որ 1857 թուի դեկտեմբերի 17-ին փոխելով Եկատերինոսլաւի դատական պալատի քրէական բաժնի վճիռը, որոշում է անբասիր ճանաչել Պատկանեանցին միւս երեք մեղադրական կէտերով նորա վերայ բարդած յանցանքներից, իսկ չորրորդ կէտում—Խալիբի կեանքի դէմ սպանութեան փորձ անելու գործում, յանցաւոր, որի համար և դատապարտում է նորան աքսորանքի Սիբիրի կողմերը, նախապէս զրկելով նորան ամեն իրաւունքից։ Իւր այդ դատավճիռը ծերակոյտը հիմնում է հետևեալ պատճառաբանութիւնների վերայ՝ նախ, Նախիջևանցի Կարապետ Իսմայլյեանը և Խաչերես Թերզիեանը հաստատելով այն արձանագրութիւնը, որ 1853 թուի օգոստոսի 10-ին կազմել էր բառօն Կլէյստը, աւելացրել են, թէ իբրաւ որ Պատկանեանը երկու ամիս շարունակ յորդորում է եղել նորանց սպանելու Խալիբին. նոքա բերել են նորա մօտ Չերմաշև ազգանունով մէկին, որին և Պատկանեանցը կաշառել է, և որովհետև այդ Չերմաշևը պահանջում է եղել անմիջապէս 300 ռուբլի, այդ պատճառով էլ նա չի համաձայնել, այլ կամեցել է նոյն գումարը տալ մաս-մաս՝ առաջ 13 ռուբլի, յետոյ 30, և այլն։ Նոքա, վերջապէս, խոստացել են նորան գտնել երեք սրիկայ անձն աւելի չափաւոր վարձատրութեամբ և առաջարկել են նորան խօսելու նոցա հետ պայմանաւորեալ տե-

ղում, գերեզմանատանը, որ և ընդունել է Պատկանեանը։ Երկրորդ, Ձերմաշեր լիովին հաստատել է Իսմայիլցեանի և Թերզիեանի ցուցմունքը, թէ Պատկանեանը ճիշտ որ յանձնել է իրան սպանելու Խալիբին, որի համար և ինքն Իսմայիլցեանի դրդմամբ պահանջել է 300 ռուբլի անմիջապէս, բայց Պատկանեանը չի համաձայնել, այլ խոստացել է հատուցանել փողը մաս-մաս, և կոչելով իրան միւս անգամ, տուել է 13 ռուբլի և ասել է. «Նայի՛ր, ատրճանակով կամ հրացանով չըսպանես, այլ դաշոյնով պիտի կտրես գլուխը, այդ աւելի հաստատ կը լինի»։ Երրորդ, Ստասիւկ և Ալէկսին ժանդարմները և Նախիջևանցի Օհան Ջուբարեանը և Գրիգոր Լօյսպարոնեանը լիակատար կերպով հաստատել են Կլէյստի կազմած արձանագրութիւնը և իրանց կողմից էլ աւելացրել են, թէ Պատկանեանը տեսնելով Խալիբին գերեզմանոցում, ասել է նրան հայերէն. «Արտեմ Պաւլիչ, խնայեցէ՛ք». և երբ Խալիբը հարցրել է, թէ ինչո՞ւ համար նա կամեցել է սպանել իրան, նա պատասխանել է, ընկնելով նրա ոտքերը. «Եթէ դուք դատելու լինէք ինձ իմ յանցանքների հիման վերայ, կը տեսնէք, որ դոքա շատ ծանր են. ես արժանի չեմ ներողամտութեան, բայց խնայեցէք ինձ իմ երեխաներիս համար»։ Նոյնը չնչին տարբերութեամբ նա կրկնել է ռուսերէն Կլէյստին, Սիմեօնովին և Զէյթունեանին, աղաչելով նոցա խնայել իրան։ Չորրորդ, Տէր-Մարտիրոս Թորոսեանը և Տէր-Պօղոս Խաչեանը հաստատելով Կլէյստի արձանագրութեան մէջ առաջ բերած հանգամանքները, աւելացրել են, թէ երբ ինքեանք հարցրել են Պատկանեանցին, թէ այդ ի՞նչ է նշանակում, նա պատասխանել է. «Մեղայ ձեզ, այսպէս պատահեց, խնայեցէք», Հինգերորդ, Ռոստովի մեշչանին Ֆեօդոր Գաւրիլովը հաստատելով արձանագրութիւնը, հաղորդել է, թէ ինքը կանչուած է եղել 1853 թուի օգոստոսի 10-ին երեկոյեան ժամը 10-ին Խալիբի բակը, որտեղից և Խալիբն ուղարկել է իրան գերեզմանատունը երկու ժանդարմների հետ, որոնք պիտի գործէին իրանց պետից ստացած հրահանգների համաձայն. նոքա էլ իսկոյն փոխել են իրանց շորերը և ճանապարհ են ընկել Թերզեանի հետ, և որ Պատկանեանը

ցուցորելով իրան, Գաւրիլովին, և ժանդարմներին սպանելու Խալիբին, ասել է. «Նայեցէք, չը վիրաւորէք նորան, թէ չէ նա կենդանի կմնայ. աշխատեցէք գլուխը կտրել»։ Վեցերորդ, առաջին դատաւոր Զէյթունեանի կառապան գիւղացի Դունայեր ցոյց է տուել, թէ ինքը, չի յիշում, թէ ո՞ր թուին ու ամսին, տարել է իւր պարոնին ուրիշների հետ քաղաքից դուրս, բայց թէ ինչ է կատարուել այնտեղ, նա չի տեսել մթութեան պատճառով, այլ միայն լսել է, որ մէկը Խալիբից ներողութիւն է խնդրել։ Եօթներորդ, Պատկանեանցի կառապան Գաւրիլ Կլիմովը ցոյց է տուել, թէ 1853 թուի օգոստոսի 10-ին ինքը տարել է իւր տիրոջը մի քանի տեղ. վերջապէս քահանան իւր բնակարանի մօտ մի մարդու հետ խօսելուց յետոյ, հրամայել է իրան իջնել կառքից և տուն երթալ, իսկ ինքը գնացել է չի կարող ասել, թէ ուր։ Իսկ ատրճանաւոր Չերկասկարնակ Կորչեւսկին, որի մասին Պատկանեանցը ասել է, թէ իբրև թէ պէտք է խնդիր գրէ, եղել է նորա գործի համար, և ինքը Իսմայիլցեանի և Թերզիեանի առաջնորդութեամբ գնացել է քաղաքից դուրս, որ տեսնուի նորա ուղարկած մարդու հետ և խնդրած փողը տայ նորան, ցոյց է տուել, թէ ինքը ոչ թէ միայն Պատկանեանցի հետ ոչ մի յարաբերութիւն չի ունեցել, այլ և ոչ մի թուղթ մի որ և է գործի մասին չի գրել նորան և փող էլ երբեք չի ստացել նորանից։

Գլուխ ԺԱ.

Ծերակուտից գործն անցնում է Կայսերական խորհրդարանը, որ ի նկատի առնելով, նախ, որ Տէր-Գաբրիէլ քահանայի խոստովանութիւնը եղել է արտաքոյ դատարանի, երկրորդ, որ արձանագրութեան կազմելուն մասնակցել են ուրիշ անձերի թւում և Հայկական Մագիստրատի ատենապետ Սիմեօնովը, առաջին դատաւոր Զէյթունեանը, որոնց գործողութիւնների վերայ, ներքին գործոց նախարարի ասելով, Խալիբն ազդեցութիւն է ունեցել, և, երրորդ, որ այն արձանագրութիւնը կազ-

մած է առանց այդպիսի ակտերը կազմելու համար սահմանուած ձեւերի—պակասում է մեղադրեալի ստորագրութիւնը—միւս կողմից էլ Պատկանեանցի գերեզմանոց գնալը՝ Իսմայիլցեանի հետ Կորչեւսկու ուղարկած մարդուն տեսնելու համար, վերջնականապէս հերքուած չէ, քանի որ քննութիւն կատարելու ժամանակ ի նկատի առնուած չէ մի ամենակարեւոր հանգամանք՝ Իսմայիլցեանին խուզարկելը, որին, մեղադրեալի ասելով, Կորչեւսկին գրել է տոմսակներ փող ստանալու մասին, որովհետեւ եթէ գտնուէր, գոնէ, մի տոմսակ, արդէն իսկ գործը բոլորովին կփոխուէր, 1859 թուի դեկտեմբերի 7-ին իշխան Օրլովի նախագահութեամբ կայացած նիստում վճռուում է փոխել ծերակոյտի դատավճիռը և քահանային թողնել խիստ կասկածանքի տակ, ենթարկելով նորան իւր հոգեւոր իշխանութեան հսկողութեան։ Եւ այս գլխաւորապէս այն հիման վերայ, որ մէջ բերուած փաստերը մեղադրեալի դէմ բաւարար չէին, նամանաւանդ որ օրէնքը պահանջում է, որ «Որքան ծանր լինի մեղադրանքը, նոյնքան և զօրաւոր պէտք է լինին մեղադրեալի յանցաւորութեան ապացոյցները»։

Սորա հետ միասին արդարադատութեան նախարար կոմս Պանինը ի նկատի առնելով, որ հէնց սկզբից այդ գործի մասին տեղեկացրել էին Թագաւորին և Նորին Մեծութիւնը հրամայել էր Տագանրոգի քաղաքապետ Բրոնեւսկու միջոցով Ռոստովի գաւառական դատարանին, որ խիստ հետեւողութիւն անեն այդ գործին և հետեւանքի մասին իսկոյն զեկուցանեն իրան, անհրաժեշտ է համարում խորհրդարանի վճիռը ներկայացնել բարեհաճ տնօրինութեան կայսեր, որ այդ վճռի դէմ ինքն իւր ձեռքով գրում է. «Եթէ նա այդքան ծանր յանցանքի համար մնում է խիստ կասկածանքի տակ, պէտք է, ուրեմն, զրկուի քահանայութիւնից» (12)։

1853 թիւը լինում է Խալիբի քաղաքագլխութեան վերջին տարին. նորանից յետոյ հետեւեալ 1854, 5, 6 եռամեակի համար ընտրուում է քաղաքագլուխ Մանուկ Ալաջալեանը Ալաջալը տոհմից։ Դոցա նախահայրն համարուում է Ալաջալը Գրիգոր անունով մէկը, որ Դաւիթ-բէկին օգնութեան գնացած

ծնրաշիներից մէկն է եղել, որի թոռն Ալաջօղլու Խաչերեսը իւր ազգական Գէորգի ու Թովմասի հետ գաղթել է Ղրիմից Նախիջեւան։ Ալաջալեանց տոհմը յայտնի է եղել դեռ Ղրիմում, իսկ գաղթականութեան ժամանակ նա հռչակուել է իբրեւ թշուառներին կարեկից և օգնող։ Երբ գաղթականները հասել են Սամար գետի ափը և այդտեղ վերահասել է նոցա Ռուսաստանի սաստկասառոյց ձմեռը և ցուրտը և վառելիքի ու կերակրի պաշարի պակասութիւնը և գետնափոր տնակների խոնաւութիւնը յառաջացրել են գաղթողների կարաւանի մէջ պէսպէս վարակիչ հիւանդութիւններ, որոնք սաստիկ կոտորած են սկսել անել նոցա մէջ, այդ Խաչերեսն էլ միւսների հետ շատ օգնութիւն է ցոյց տուել թշուառներին, նամանաւանդ կարեկից է եղել խեղճերին նորա կինը Խաթունը, որ իւր հօր Հէքիմ Գրիգորի և Զէրքէզահայ բժիշկ Հէքիմ Կարապետի և նորա որդի Խաչատրի հետ միասին չի խնայել ոչ մի ջանք և աշխատանք բժշկական օգնութիւն հասցնելու հիւանդներին։ Ալաջալեանները Նախիջեւանում յաջող առեւտրական գործառնութեամբ շուտով ճոխացել են և կազմել են մի բազմանդամ գերդաստան, մի անուանի նահապետական յու հայ օջախ։ Նոքա պատկանել են Խալիբեան կուսակցութեան և նոցա միջից յաճախ ընտրուել են հոգաբարձուներ, դատաւորներ, իրար յետեւից երկու քաղաքագլուխ՝ վերոյիշեալ Մանուկ աղան և դորանից յետոյ նորա եղբայր Սիմէօն Խաչերեսեան Ալաջալեանը։ Այդ վերջինի քաղաքագլխութեան առաջին տարին, որ Պատկանեանցի բանտարկութեան չորրորդ տարին էր, 1857 թուի փետրուարի 13-ին, վախճանում է Ներսէսը անակնկալ մահով։

Կաթուղիկոսի մահով խորտակուում է Խալիբի յոյսը՝ տապալելու և իւր միւս հակառակորդ Միքայէլ Նալբանդեանցին, որ ոչ թէ միայն իւր վարժապետի ընթացքով էր գնում, այլ պատրաստուում էր շատ աւելի առաջ անցնել նորանից և շատ աւելի յետ թողնել նորան. նա էր եղել գլխաւոր պատճառը, որ Մատթէոս առաջնորդը յարուցել էր եկեղեցական գումարների հաշուետուութեան Խալիբի համար շատ անախորժ խնդիրը. նա էր, որ անդադար փորփրում էր հին, մոռացուած

անցեալը և միջից ընտրում, հրապարակ նետում այնպիսի խնդիրներ, որոնք բոլորն էլ ցոյց էին տալիս հզօր աղայի գործած բազմադիմի ապօրինութիւնները, կամայականութիւնները և ճնշումները, ինչպէս «խօնախի» հոգևոր իշխանութեան դարձնելու խնդիրը. նա էր, վերջապէս, որ կամաց-կամաց մօտենալով Հայրապետեան հարուստ վաճառականին և շրջապատելով նորան իւր ընկերներով և համախոհներով, ձգտում էր նորան դիմադիր բանակի գլուխ կանգնեցնել։ Սակայն Խալիբն էլ այն մարդկանցից չէր, որ շուտով վհատուէր և յետ կենար ասպարիզից։ Ճիշտ է, կաթուղիկոսի մահով նորա աջ թևը կտրուել էր, բայց նա ունէր հարստութիւն, որով կարող էր իւր կողմը քաշել թէ քաղաքացիներին և թէ իշխանաւորներին, չենք խօսում արդէն քաղաքի իշխանութեան մասին, որ գտնուելով իւր կուսակից Սլաչալեանի ձեռքին, ամեն բանում կարող էր նպաստաւոր լինել նորան։ Հէնց այդպէս էլ լինում է. նա մի առժամանակ հեռանալով աչքերև գործելու ասպարիզից և թաղնուելով Սլաչալեանի յետևը, ամբողջ երեք տարի—1857, 8, 9—պատրաստուում է և սպասում է յաջող րոպէի, մինչև որ գտնում է իրան օժանդակ Այվազեան Գաբրիէլ վարդապետին, որ հանգուցեալ հայրապետի ժամանակ մտել էր Հայաստանեայց եկեղեցու գիրկը, իսկ Մատթէոսի ընտրութեան տարին կարգուել էր Նախիջևանի և Բեսարաբիոյ թեմի առաջնորդութեան տեղակալ Մատթէոս Վեհապետեանի տեղը, որ կայսերական հրամանով տեղափոխուել էր Հաշտարխան։ Այս անգամ ամեն բան խոստանում էր յաջողութիւն. Մատթէոս սրբազանը, Պատկանեանցի և Նալբանդեանցի գլխաւոր կուսակիցը, չկար, նորընտիր հայրապետ Մատթէոսը, որ բռնել էր Ներսէսին հակառակ դիրք, չունէր իւր նախորդի ոյժը, այն ինչ Այվազեանը վայելում էր կայսերական շնորհքը և մեծ զօրավիգն էր Խալիբին։

Ճիշդ է, Սիմէօն Սլաչանեանից յետոյ, հակախալիբեան կուսակցութիւնը այնքան զօրանում է, որ 1860,61 և 62 թուականների համար ընտրում է քաղաքագլուխ վերոյիշեալ ջերմ Նալբանդական Կարապետ Հայրապետեանը, բայց ի՞նչ կարող էր

անել նա, քանի որ գործը հասել էր ներքին գործոց նախարարութեան և տէրութիւնն անսահման հաւատ էր ընծայում Այվազեանին։ Շատ շատ նա հիմնուելով օրէնքի և ճշմարտութեան վերայ, առաջ տանէր հաշուետւութեան գործը, բայց ազատել կորստից Պատկանեանցին ու Նալբանդեանցին, որոնց դէմ լարել էին իւրեանց բոլոր որոգայթները Խալիբն ու Այվազեանը, նա չպիտի կարողանար։ Երբ Այվազեանը դեռ 1858 թուին Պարիզից ժամանել էր Պետերբուրգ և Մովսէս Բուդաղեանը մեծամեծ հացկերոյթ էր սարքել նորա պատուին և Ռափայէլ Պատկանեանցն այդ ճաշին գրուածք էր կարդացել նոր հաստատուած առաջնորդութեան տեղակալին, հասարակութիւնը խնդրել էր նորան Պատկանեանցի համար, և նա խոստացել էր ազատել տալ նորան բանտից։ Գաբրիէլ վարդապետի այդ խոստմունքի լուրը կայծակի արագութեամբ հասել էր Նախիջևան բանտարկեալի ականջը, և նա իւր մօտ էր հրաւիրել Հայրապետեանցին և աղաչել, որ հանդիսաւոր ընդունելութիւն անեն առաջնորդին և օգնեն նորան նորա ձեռնարկութիւնների մէջ։ Սակայն երբ Այվազեանը հասել էր Նախիջևան և տեսել եկեղեցական գումարները Խալիբից թէոդոսիայում դպրոց բանալու համար, անակնկալ կերպով ամեն բան փոխուել էր. նա անցել էր Խալիբի կողմը և ոչ թէ միայն չէր օգնել Պատկանեանցին դուրս գալու բանտից, այլև եկեղեցում իւր քարոզի մէջ բազմադիմի դարոմանք էր թափել բանտարկեալի գլխին, ցոյց տալով նրան ըստ ամենայնի արժանի այն պատժին, որ կրում էր նա։

Կարապետ Հայրապետեանը, որ նշանաւոր դեր է կատարել Պատկանեանցի և դորա աշակերտ Նալբանդեանցի կեանքում, Ղարա-Մարգար կամ Նաւուրցի Մարգար Հայրապետեանի որդին էր։ Հայրապետեանները Ղրիմի նոր գաղթականներից էին. եկել էին նոքա թերակղզին ոչ Անիից, այլ Այրարատի Վաղարշապատից։ Ճիշդ է, Շահաբբասի արշաւանք ժամանակ դոցա նախնիքն էլ շատ ուրիշների հետ միասին տարուել էին Պարսկաստան, բայց յետոյ նոքա վերստին վերադարձել էին Հայաստան և վերաբնակուել Վաղարշապատում։ Թէ ինչպէս է եղել

դոցա նախկին ազգանունը, յայտնի չէ. Հայրապետեան կամ Հայրապետական անունը ստացել է դոցա նախնիքներից մէկը Ս. Էջմիածնի աթոռին և նորա գահակալ հայրապետին մեծ ծառայութիւն մատուցած լինելու պատճառով։ Երբ 1725 թուին լուր է տարածւում Հայաստանում Դաւիթ-Բէկի ապստամբութեան մասին, այդ Հայրապետեանի որդին Մկրտիչն էլ, որ այդ ժամանակները լինում է մի քաջ և խիզախ երիտասարդ, հաւաքելով իւր պէս մի խումբ կտրիճներ շրջակայ գիւղերից ու աւաններից, դիմում է Սիւնեաց գիւղացնի բանակը և մասնակցում նորա մղած պատերազմներին Մահմեդականների դէմ։ Սակայն Դաւթի և Մխիթարի մահից յետոյ, երբ ցրւում է բանակը և Ղրիմեցիք վերադառնալու են լինում իւրեանց երկիրը, Մկրտիչը հասկանալով, որ չպէտք է կարողանայ իւր արածներից յետոյ հանգիստ ապրել մահմեդականների իշխանութեան տակ գտնուած երկրում, միանում է իւր պատերազմակից ընկերների կարաւանին և գալիս, բնակւում է Բախչիսարայում։ Այդտեղ դա մեծ չքաւորութեան մէջ է ընկնում և այնտեղն է հասնում, որ ստիպւած է լինում այգեպանութիւն անել Ֆարակաշեանների այգիներից մէկում, երբեմն էլ սայլապանութիւն։ Սորա որդին Արաբաջի Կարապետ Հայրապետեանը, որ գնած է լինում իւր համար մի այգի և իրան նուիրած այգեգործութեան, գաղթելու ժամանակ ստիպւած է լինում ծախել այգին և ինքն էլ գալ Ռուսաստան։ Այստեղ բաղդը ժպտում է Հայրապետեաններին և նոքա հետզհետէ առաջանում ու ճոխանում և առաջնակարգ մարդկանց շարքն են ընկնում։ Դոցա հարստութեան հիմք դնողը լինում է Կարապետի որդին Մարգարը, որ իւր երեսի թխութեան պատճառով կոչւում է եղել Ղարա Մարգար, իսկ Նաւուր աւանում երկար ժամանակ բնակւած և առևտուր արած լինելու պատճառով,—Նաւուրցի Մարգար։

Այդ Խարա Մարգարի որդի Կարապետ Հայրապետեանի քաղաքագլխութիւնը Նախիջևանի համար շատ արդիւնաւոր պիտի լինէր, եթէ չլինէին այն ինտրիգները, կագն ու կռիւը, որոնք բոյն էին դրել հասարակութեան մէջ և ջլատում էին ամեն մի եռանդ, ամեն լաւ գործի սկզբնաւորութիւն։ Եւ դորա,

Հայրապետեանի, քաղաքագլխութեան արդիւնաւոր լինելու պատճառն այն չէր, որ ինքը Հայրապետեանը մի երևելի, հասկացող և բանիմաց մարդ էր, ո՛չ. նա էլ Նախիջևանի աղաներից մէկն էր իւր աղաներին յատուկ պակասութիւններով ու առաւելութիւններով, այլ որովհետև նա ունէր այնպիսի խորհրդատուներ, ինչպիսին էին Պատկանեանը և մանաւանդ խելօք Նալբանդեանը, որ լաւ էր հասկացել, թէ Նախիջևանի դժբաղդութեան պատճառը տգիտութիւնն է և դորա դարմանը լուսաւորութիւնը, դպրոցը։ Նա յարուցել էր եկեղեցական գումարների խնդիրը Նախիջևանում այդ փողերով մի մեծ և կանոնաւոր դպրոց հիմնելու վախճանական նպատակով, որ սակայն չյաջողեց, և գումարները ապարդիւն ծախսուեցին Թէոդոսիայի դպրոցի վերայ, նա նոյն նպատակով նահատակութիւն յանձն առաւ և գնաց Հնդկաստան Բաբաջանի գումարը բերելու, բայց արժանի չեղաւ նորա արդիւնքը տեսնելու, պտուղը վայելելու։ Ո՜րքան մեծ տարբերութիւն սորա և Այվազեանի մէջ, որ հայութիւնից դուրս մի խեղճ ու կրակ Թէոդոսիայում դպրոց հիմնելով և Նախիջևանի եկեղեցիների մեծաքանակ գումարները անիրաւաբար նորա վերայ ծախսելով, կամենում էր միաժամանակ և Աստծուն և մամոնային ծառայել։

Հայրապետեանի քաղաքագլխութեան առաջին տարին—1860-ին—բարեկամների ջանքով, վերջապէս, «վարժապետը» արձակւում է բանտից, եօթ տարի փակւած մնալուց յետոյ, որ չարաչար կատաղեցնում է Խալիբին, թէև Պատկանեանցի այդ ազատութիւնը եղել էր կարգընկէց լինելու պայմանով։ Նա միտքը դրել էր Պատկանեանցին անպատճառ աքսորել տալ Սիբիր իբրև քրէական յանցաւորի, ուստի և չէր խնայել ոչ մի միջոց իւր նպատակին հասնելու համար։ Դեռ առաջ Սիմէօն Ալաջալեանի քաղաքագլխութեան օրով, երբ Պատկանեանցը Ռոստովի գաւառական դատարանի և Եկատերինօսլաւի վճիռներով մի առ ժամանակ արձակուել էր բանտից, Խալիբը գործ էր դրել իւր սովորական հնարիմացութիւններից մէկը և նորան նորից բանտարկել տուել։ Երբ Ղրիմի պատերազմի ժամանակ անգլիական նաւերը յայտնուել էին Տագանրոգի առաջ, կոմս Տոլ-

տօյ նահանգապետի ընտանիքը փախել, եկել էր Նախիջևան և ապաստան գտել Խալիբի տանը, իսկ Տագանրոգի ռմբակոծութիւնից յետոյ, ինքը կոմսն էլ փախել, հասել էր իւր ընտանիքի մօտ։ Հէնց դոյն օրերը եկել է եղել Ռոստով Եկատերինօսլաւի փոխ-նահանգապետ Հերցոգ-Բրանշուէյգը, որին և Խալիբի հետ այցելութիւն է գնացել Տոլստօյը, և այդտեղ խօսք է բացուել Պատկանեանցի բանտից ազատուելու մասին, Պատկանեանցի, որի մասին նոր միայն մի նոր բողոք էր ներկայացրել Խալիբի այրի դուստր Հռիփսիմէն, որ իբրև թէ Պատկանեանը բանտից դուրս գալուց յետոյ, վերստին ձեռնարկել է Խալիբին սպանելու գործին։ Նա իբրև ապացոյց ներկայացրել էր և մի երկաթի գործիք, որով իբրև թէ Պատկանեանցը կամեցել էր իւր ձեռնարկութիւնը կատարել և որ գտել էին Խալիբի պատուհանի տակ։ Նոյն իսկ օրը Խալիբը մի ճոխ ընթրիք է պատրաստել Տոլստօյի և Հերցոգի համար իւր տանը։ Երբ կերել, խմել ու հարբել են, Հռիփսիմէն ներկայացրել է պատրաստի հրաման՝ նորից բանտարկելու Պատկանեանցին, և ծունկ չոքելով, աղաչել ու ստորագրել է տուել այդ հրամանը, որի հիման վերայ և կէս գիշերին կալանաւորուել է Պատկանեանը և բանտարկուել։ Յետոյ միայն յայտնուել է, որ Տէր-Սիմէօնի որդի Տէր-Գաբրիէլն է այն երկաթի գործիքը Խալիբի սպասաւոր «ղարաւուլ Ստեփանի» դիտաւորութեամբ դրել պատուհանի տակ և Ստեփանն էլ, իբրև թէ գտել է, առել, տարել է ներս ու ցոյց տուել ամենքին, ի միջի այլոց, և կոմս Տոլստօյի կնոջը, և ասել, թէ Տէր-Գաբրիէլն է կամեցել այդ գործիքով խորտակել պատուհանը և մտնել ներս ու սպանել Խալիբին։

Պատկանեանցին բանտից արձակելուց առաջ, արքունի խորհրդարանը, երբ դեռ յայտնի չէ եղել կայսեր նորա կարգընկեց անելու վճիռը, հարցրել է Այվազեանին, թէ որտեղ յարմար կլինի մի չորս-հինգ տարով քահանայ կարգել Պատկանեանցին—Ղզլա՞ր, թէ Մոզդոկ։ Այվազեանն այդ հարցին մենակ չի վստահացել պատասխանելու. նա հեռագրել է Խալիբին, որ նա գնայ Թէոդոսիա խորհրդակցելու, և նա, չնայելով իւր անդրանիկ դստեր մահամերձ հիւանդութեան, գնացել է, և դուստրը

վախճանել է։ Նոքա պատասխանել են, թէ թո՛ղ նա հեռացուի վիճակից և արգելուի մի հեռաւոր վանքի մէջ. բայց խորհրդարանը, ինչպէս մենք տեսանք, արձակում է բանտից և հրամայում է կարգընկեց անել նորան, որ և կատարւում է հոգևոր կառավարութեան մէջ բոլոր հոգևորականների ներկայութեամբ, Տէր-Աստուածատուր Շապօչնիկեանի ձեռքով։ Պատկանեանցը այնուհետև ապրում է իբրև աշխարհական. նա հաւաքում է երեխաներ և պարապում է ուսուցչութեամբ, միևնոյն ժամանակ կատարելով և քաղաքագլուխ Հայրապետեանցի մօտ խորհրդատուի և անձնական քարտուղարի պաշտօն։ Նոյն 1860 թուի Սեպտեմբերի վերջերին և Հոկտեմբերի սկզբին գալիս է Նախիջևան Այվազեանը և նկատելով ժողովրդի յուզմունքը, իւր առաջին քարոզի մէջ բնաբան է ընտրում՝ «Զի՞ հալածէք զիս» և երկրորդի մէջ՝ «Ես լոյս աշխարհ եկի, այլ դու ի մէջ ձեր վիշապ, որ միով շնչմամբ կարէ չիջուցանել զամենայն զլոյս»։ Այս խօսքերի վերայ ամենքը դառնում, նայում են Պատկանեանցի վերայ, որ աշխարհական տարազով կանգնած էր ժողովրդի մէջ, և շարժում են գլուխները ու դուրս գալիս եկեղեցուց, այնպէս որ ինքը մնում է մենակ և ստիպուած է լինում վերջացնել քարոզը։

Սակայն Այվազեանը դառնում է միջոց Պատկանեանցին աքսորելու և այդպիսով կատարելու Խալիբի ջերմ ցանկութիւնը. նա Շապօչնիկեան Տէր-Աստուածատուր և Տէր-Եղիա հայր և որդի քահանաների ձեռքով ու միջնորդութեամբ կարողանում է կազմել տալ մի թուղթ, որի մէջ քահանաները վկայում էին, թէ Պատկանեանցի մնալը Նախիջևանում վնաս է քահանաներին, քաղաքին և ազգին։ Այդ թուղթը, որ քահանաները կազմում են 1860 թուի Սեպտեմբերի 27-ին և մատուցանում «Նորին Աստուածարեալ սրբութեան Տեառն Տեղակալի Առաջնորդութեան վիճակիս Նախիջևանի և Բեսարաբիոյ Գաբրիէլ Ծայրագոյն վարդապետի», խնդրագրի ձև ունէր և խմբագրուած էր հետևեալ կերպով. «Ըստ Բարձրագոյն Կայսերական վճռահատութեան, և ըստ եզրակացութեան Սինօդի սրբոյ Էջմիածնայ՝ դատապարտեալն արդէն վասն յանցանաց մարդասպանա-

կան գործոյ՝ զրկեալն ի քահանայութենէ Գաբրիէլ Պատկանեանց որ դատաւորեցաւ ի կարգս աշխարհականաց, գտանի այժմ ատ ի Նախիջեւան քաղաքի և պարապի մանկավարժութեամբ ըստ իւրն կամաց։ Մեք ի վաղուց հետէ գիտելով և ճանաչելով զվատ վարս և զբարս նորա դեռ յառաջ հանգուցեալ Ներսէս կաթողիկոսի, և ի յառաջնորդութեան Մատթէոս սրբազանի, որ բազում անգամ գտեալ էր ի զանազան յանցաւորութիւնս անվայելս իւրումն կոչման թէ ի մէջ քաղաքական և թէ բրէական գործոց, և իւրով անհանգիստ բնութեամբ և խռովարար և չարարուեստ խորամանկութեամբ միշտ ապականեալ է և ապականէ զմիտս և զսիրտ պարզամիտ քրիստոնեայ ժողովրդոց՝ և միշտ հետևի հասուցանել վնաս մեզ հոգևորականաց միանգամայն և ամենից, ուստի ճանաչելով մեր զնոյն անձն վնասաբեր վասն որոյ առ ի բառնալոյ զգայթակղութիւն ժողովրդոց՝ և ի զգուշութիւն մեզ յապառնի վնասուց որք կարեն լինել նովաւ՝ մնալովն այսր ի քաղաքիս։ Սորին սակս այսու մերով միաբանական խնդրագրաւ դիմեալ առ Ձերդ սրբութիւն խնդրեմք խոնարհաբար՝ ընկալնուլ զայս խնդիր մեր և դնել ի գործ՝ հեռացուցանելով զյիշեալ Պատկանեանցն այլուր՝ յօտար սահման, զի եթէ մնասցէ նա այդպէս ի մէջ քաղաքիս՝ խռովութիւն ի միջի ժողովրդոց և հոգևորականաց լինելոց է անպակաս»։

«Նորին Աստուածարեալ Սրբութիւնը», յայտնի բան է, շտապում է այդ յոյժ փափագելի խնդրագիրը «դնել ի գործ» և դորա հիման վերայ Հայրապետեանը հրաւիրում է Եկատերինօսլաւ և երկու անգամ հարցնում են հասարակութեան, թէ ինչ վնաս է տալիս Պատկանեանցի մնալը քաղաքում։ Թէև ոչ մի բանով չի ապացուցւում նորա վնասակարութիւնը, բայց չորս մարդ Խալիբի կուսակիցներից թուղթ են մատուցանում, թէ քաղաքի և իւր իսկ Պատկանեանցի օգուտը պահանջում է, որ նա չմնայ Նախիջևանում։ Եւ այսպէս նա 1861 թուի Յուլիսին աքսորւում է Վեատկա, այնտեղից էլ դեկտեմբերին — Կոստրոմա և այդտեղից էլ, վերջապէս, 1863 թուի Օգոստոսին — Ս. Պետերբուրգ։ Մեծ ցնծութիւն է լինում Խալիբեան

կուսակցութեան շրջանում, որ, վերջապէս, յաղթանակը տանում են և ազատւում «վիշապի» ձեռքից, որ միով շնչմամբ շիջուցանէր զլոյս բերեալն «ի Մխիթարեան ուխտէ», իսկ բուն հեղինակը այդ գործի ինքը Այվազեան ծայրագոյն վարդապետը այնքան հրճւում է, այնքան համը նորա բերանումն է մնում, որ մի անգամ էլ նա կամենում է նոյն հնարագիտութիւնը գործ դնել և իւր միւս հակառակորդ Հայրապետեանի վերաբերմամբ։ Բարեբաղդաբար այս անգամ վարդապետի բերանի քաղցր համը անհամանում է։ Առաջնորդութեան Տեղակալի դրդմամբ և ակնարկութեամբ հաւաքուած անմիտ քահանաների շրջանում գտնւում է մի նորընծայ բանիմաց քահանայ, որ ինքը չի ստորագրում խմբագրուած նոր խնդրագրին և արգելք է լինում ուրիշներին ևս ստորագրելուն, որով և հոգևոր հայրերի չար միաբանութիւնը քակտւում է [13]։

Վեատկայում Պատկանեանցը մնում է 1861-ի Յուլիսից մինչև նոյն թուի Դեկտեմբերը և փոխադրւում է Կոստրոմա, որտեղ մնում է մինչև 1863 թուի օգոստոսը, երբ ուղարկւում է Ս. Պետերբուրգ։ Այդ երկու տարին, որ անց է կացնում Վեատկայում և Կոստրոմայում, լինում է, գուցէ, նորա կեանքի ամենադառն ժամանակամիջոցը, մինչև իսկ բանտարկութեան օրերից էլ դառն։ Բանտարկութեան օրերում նա, ճիշտ է, զրկուած էր ազատութիւնից, բայց, գոնէ, հեռու չէր իւր ընտանիքից, իւր բարեկամներից, որոնք յաճախ այցելում էին նորան, մխիթարում և լցուցանում նորա բոլոր պակասութիւնները, կարիքները։ Իսկ այստեղ, այս հեռաւոր անկիւնում նա կատարելապէս աչքից հեռացած, մտքից մոռացուած էր. չկար հայ բնակութիւն, որոնց շրջանում բարոյական բաւականութիւն գտնէր, չկար հայ եկեղեցի, որտեղ իւր հոգևոր կարիքները կարողանար հոգալ, զրկուած էր իւր մերձաւորների տեսութիւնից, որոնց կարօտը հալումաշ էր անում նորան, չենք խօսում արդէն նիւթական միջոցների սղութեան մասին, որ շատ դժուարութեամբ հոգում էին նորա աշակերտները և ծանօթները։ Ի զուր չէր, որ երջանկայիշատակ Մատթէոս կաթուղիկոսը փոխարքային ուղարկած իւր խնդիրքում Պատկա-

նեանցի մասին գրում էր, թէ նա ամբաստանութեան թշուառ զոհ է, թէ նա ապրում է Վեատկայում և Կոստրոմայում իւր հաղուագիւտ քնքարի գնահատողների և աշակերտների հասցրած օգնութեամբ, հեռու իւր ազգականներից, անծանօթ մարդկանց մէջ, զուրկ իւր դաւանութեամբ խոստովանուելու և հաղորդուելու հնարաւորութիւնից, իւր ցաւալի վախճանին սպասելու դրութեան և իւր դաւանութեան չպատկանող քահանայի ձեռքով թաղուելու վիճակի մէջ. ի զուր չէր նոյնպէս, որ կաթուղիկոսը կարծում էր, որ այդ վիճակի մէջ նորա քնքարը կորչում էր ապարդիւն, որ նա զրկուած էր ընդհանրութեան օգուտ բերելու կարողութիւնից, այն ինչ եթէ նա ազատ լինէր, նա կարող էր մեծ օգուտ տալ իւր ազգայիններին իբրև ճարտարախօս քահանայ, իբրև բանաստեղծ ու գրող, իբրև հայոց լեզուն լաւ իմացող և առհասարակ իբրև գիտութեան տէր մարդ (14)։

Դեռ լաւ էր, որ նորան թոյլ էին տուել առնել իւր հետ մի քանի գրքեր ու բանտում գրած իւր գրուածները. Նա ազատ ժամանակ շատ ունէր և պէտք էր մի բանով զբաղուել։ Եւ ահա նա հէնց նոյն 1861 թուին Վեատկայում ձեռնարկում է կարգի բերելու իւր բանաստեղծութիւնները, պարզագրելու իւր սևագրութիւնները։ Այդ ձեռնարկութեան և աշխատանքի արդիւնքը լինում է վերյիշեալ «Հայկ երգ»-ի, «Արամ-երգ»-ի, «Շաւարշ Ա. և Վարդենի»-ի, «Առնակ»-ի, «Կար»-ի, «Սօսիք Արագածոտան»-ի և «Վաշտակ»-ի սրբագրութիւնը և վերջնական խմբագրութիւնը, որոնցից առաջին հինգը աշխարհաբար են և գրած են ոտանաւորով, իսկ երկու վերջինը—արձակ են և գրուած են գրաբար։ Ցաւալի է միայն, որ այդ բանաստեղծական գրուածները, որոնցից մի քանիսը շատ ընդարձակ բաներ են, ինչպէս, օրինակի համար, «Հայկ-երգ»-ը, որ բաղկացած է 1710 տողից, և «Արամ-երգ»-ը, որ բաղկացած է 2400 տողից, դեռ մինչև ցայսօր տպագրուած չեն, ուստի և մեր ընթերցող հասարակութիւնը զրկուած է հնարաւորութիւնից կարդալու, ծանօթանալու և լիակատարօրէն գաղափար կազմելու Տէր-Գաբրիէլի քնարի էութեան մասին։ Մենք, որ նոյն-

պէս միջոց չենք ունեցել կարդալու այդ գրուածները, կարծում ենք սակայն, որ դոքա էլ նոյն տեսակ բաներ պիտի լինին, ինչպիսին են նորա տպագրուած «Վարդան Մամիկոնեանը», «Շաւարշ Բ.»-ը. «Երեք ցուպք Մասիսի», «Հրաժեշտ Վարդանայ», «Զարմայր», «Վահագն», «Մրմունջք Յիսուսի» և միւսները։ Այստեղ մենք տեղն ենք համարում մի անգամ էլ շեշտելու այն, ինչ որ մի երկու տարի առաջ ընդարձակ քննութեան առարկայ ենք շինել մեր մի գրուածքում, խօսելով Սերովբէ Պատկանեանցի, Ալամդարեանի, Տէր-Գաբրիէլ Պատկանեանցի, Խորէն Նարբէյի, Խրիմեան Հայրիկի և միւս դոցա դասակից և դոցա դպրոցին պատկանած գրաբար կամ գրաբառախառն-աշխարհաբառով գրած ու գրող և մեր մէջ բանաստեղծ համարուած գրողների մասին (15)։ Նայելով դոցա բանաստեղծութիւնների վերայ այժմուայ տեսակէտից և գործ դնելով դոցա վերաբերութեամբ բանաստեղծութեան մասին մեր ունեցած գնահատութեան այժմուայ չափն ու կշիռը, կարող ենք ասել, որ դոքա իսկապէս բանաստեղծներ չեն, այլ ոգևորուած ճառախօսներ, արուեստաւոր յանգակապեր, հնչուն խօսքերի ու ոճերի հաւաքարաններ, երկարաբան, ճոռոմաբան, միտքը բառերի յորդութեան մէջ կորցնող, ախուվախով, աւաղ-եղուկներով ընթերցողի միտքը յոգնեցնող, և այլն և այլն։ Ի հարկէ արդարութիւնը պահանջում է ասել, որ դոցա գրուածների մէջ էլ պատահում են տողեր, հատուածներ. մինչև իսկ ամբողջ գլուխներ որոնք մաքուր ոգևորութեան, վառ երևակայութեան արդիւնք են, անարուեստ, սրտի խորքից բղխած պատկերներ և իսկական բանաստեղծութիւններ են, բայց մեր խօսքը այստեղ հատուկտորի մասին չէ, այլ ամբողջութեան, դոցա քնարի ընդհանուր էութեան, բնաւորութեան ու բովանդակութեան մասին։ Ռուս Տրեդեակովսկու գրուածների մէջ էլ երբեմն պատահում են յաջող տողեր և կտորներ, բայց դորանով նա բանաստեղծ չի դառնում. նա միշտ եղել է և այժմ էլ շարունակում է մնալ ռուս գրականութեան մէջ արհեստաւոր-յանգակապ բանաստեղծների տիպար և օրինակ։

Գլուխ ԺԲ.

Ս. Պետերբուրգում Պատկանեանցը մնում է 1863-ի օգոստից մինչև իւր մահը—1889 թուի Ապրիլի 13-ը, այսինքն համարեա թէ 26 տարի։ Նորա Պետերբուրգի փոխադրուելը լինում է, ինչպէս ասացինք, իւր բարեկամների ջանքով, նամանաւանդ Նալբանդեանցի, որ թէև իշխանաւորների շրջանում ազդեցութիւն չունէր, բայց կապեր ունէր, բարեկամութիւն էր հաստատել այնպիսի մարդկանց հետ, որոնց ձայնը լսելի էր դիրք ունեցող անձանց ականջին, որոնց խօսքը անցուկ էր բարձր շրջաններում։ Նա բուռն սիրով սիրում էր իւր վարժապետին, յարգում էր նորա գիտութիւնը, համակրում էր նորա գործունէութեան և հպարտանալով իրան կոչում էր, նամանաւանդ առաջին ժամանակները, աշակերտ Պատկանեանցի և ստորագրում էր իւր գրուածների տակ «Մ. Նալբանդեանց յաշակերտութենէ Տէր-Գաբրիէլ Պատկանեանցի»։ Եռանդուն, աչքաբաց, կենդանի, նա ամէն տեղ մտնում էր, ամենի հետ խօսում էր, շատերի հետ գրագրութիւն էր անում և իւր այդ կրակոտ գործունէութեան մէջ երբեք չէր մոռանում իւր «վարժապետի գործը»։ Ծերակուտի դատավճռի փոխելը հենց պէտք է վերագրել մայրաքաղաքի հայ մեծամեծների ազդեցութեան, որոնց շարժել, գործել տալու մեքենայի գլխաւոր շարժերակը գտնուում էր իշխանաւորութեան տեսակէտից աննշան Նալբանդեանցի ձեռքին։

Պատկանեանցն էլ փոխադարձաբար սիրում էր Նալբանդեանցին և համարում էր նորան արդիւնարար զաւակ Նախիջևանի և ամբողջ Հայոց ազգի, որի շահերին նա անձնատուր էր, բայց չէր հաւանում նորա յեղափոխական գործունէութեան, որով նա վտանգի մէջ էր ձգել ոչ միայն իրան, այլ և իւր մեկենաս Հայրապետեանցին. նորա գործունէութիւնը Պատկանեանցի աչքին ոչ ազգասիրական և ոչ հայրենասիրական էր երևում. նա կարծում էր, որ նա շեղուել է ուղիղ ճանապարհից և ցաւալի վախճան է գտել, կամենալով գլխով բանալ ճանապարհ ապառաժի մէջ։ Պատկանեանցը նորա կալանաւորուե-

լը և բանտարկուելը համարում էր Այվազեանի և Խալիբեանի ձեռքի գործը, որոնք մատնել էին նորան տէրութեան ձեռքը, ասելով, որ նա խառն է Լեհաստանի վերջին ապստամբութեան գործի մէջ։ Ճիշտ է, նորա թղթերը, որոնք ընկել էին իշխանութեան ձեռքը, շատ էլ անարատ ու մաքուր չէին, բայց նորա թէև հանճարեղ, բայց յանդուգն գրիչը ամենամեծ զէնքն էր նորա հակառակորդների ձեռքին, որով նոքա հեշտութեամբ յաջողում էին խոցել նորա սիրտը։ Պատկանեանցի աչքին Նալբանդեանցը մի նիհիլիստ էր, կամ, ինչպէս ինքն ասում է, մի չնչահաւատ, և այդ նիհիլիստական ուղղութիւնը նա ստացել էր ոչ արտասահմանում օտար երիտասարդներից, ինչպէս որ կարծուում է, այլ Մոսկուայում իւր ուսանողութեան, և Լազարեան ճեմարանում վարժապետութիւն անելու ժամանակները և զարգացրել ու արմատացրել էր իւր մէջ այդ ուսմունքը, նամանաւանդ գործակցելով Հիւսիսափայլին և ծանօթութիւն անելով Ս. Նազարեանցի հետ։ Այդ գաղափարով էլ նա գնացել էր Ս. Էջմիածին և ճանապարհորդել էր Լոնդոն, Պարիզ, Պոլիս և Հնդկաստան և ճանապարհին պատահել էր մի քանի չնչահաւատ Հայերի, որոնց հետ ծանօթացել էր դեռ Ռուսաստանի մայրաքաղաքներում, և խրախուսութիւն գտել նոցա «խօթամիտ» խօսքերից։ Այդ բոլորի հետևանքը եղել էր այն, որ խեղճը կարծել էր, թէ ինքն ինչպէս Պարիզի Սիտէի մէջ քաջ է, այնպէս էլ կենցաղագիտութեան մէջ անսխալ. նա Եղիշէի մէջ սեփականելով իրան Վարդանի անձնուրացութիւնը և Փարպեցու մէջ Վահանի անձնուիրութիւնը, բռնել էր այն ընթացքը, ընկել էր այն ճանապարհը, որ միայն շրջմոլիկ արկածախնդիրները կարող են ճանապարհ համարել դէպի փառքի տաճարը։

Պատկանեանցը Նալբանդեանցի Կարապետ Հայրապետեանցին մօտենալու պատճառը, բացի ուրիշ հանգամանքներից, համարում էր և անձնական շահը, նորանից փող կորզելու, ռոճիկ ստանալու շարժառիթը։ Եւ այդ նպատակին հասնելու համար, նա, քահանայի ասելով, գործ էր դրել ամենաստոյգ միջոցը և ընտրել էր ամենամօտ ու անվրէպ ճանապարհը. նա աշխատել

էր ամէն ձեռքից եկած միջոցներով արծարծել նորա մէջ փառասիրական կայծը, քաջ տեղեակ լինելով, որ եթէ միանգամ բորբոքուեց այդ հարուստ մարդու մէջ կրակը, հրդեհ կառաջանայ և այլևս դժուարութեամբ կհանգչի: Հայրապետեանցը աշակերտել էր Լազարեան ճեմարանի աշակերտ Թէոդորոս Խադամեանին, որ իւր աշակերտների համար սովորութիւն է ունեցել բարեկենդանին զանազան ներկայացումներ սարքելու և այդ նպատակով գրել է զանազան պատմական ողբերգութիւններ, որոնց մէջ յայտնի է եղել նորա շարադրած Վարդան Մամիկոնեանի ողբերգութիւնը, որի մէջ Վարդանի դերը կատարել է Հայրապետեանը և չափազանց յափշտակուել Եղիշէի հերոսի նահատակութեան հանգամանքներով: Ահա նորա այդ թոյլ երակի վերայ սիրել է խաղալ Նալբանդեանցը և ազգասիրութեան պատրուակի տակ, գրգռել ու յարուցել է նորա մէջ փառասիրութիւնը: Այս բոլորը ապացոյց տալու համար, Պատկանեանցը պատմում է մի դէպք, որի ճշմարտութիւնը թողնում ենք նորա պատասխանատուութեան: Երբ նա դեռ նոր միայն դուրս է եկած լինում բանտից, ստանում է նամակներ Թիֆլիզից ու Ս. Էջմիածնից, որոնց մէջ տեղեկութիւններ են լինում Այվազեանի և Խալիբեանի թեկնածութիւնների մասին Հնդկաց հրիտակների վերաբերմամբ. Նա այդ նամակները տանում, կարդում է Հայրապետեանցին, որ հետաքրքրւում էր և միտք ունէր շուտով յարուցանելու հրիտակների խնդիրը: Հէնց այդ ժամանակն էլ ստացւում է Նալբանդեանից մի նամակ, որի մէջ «այն շողոքորթը պանրի ակնկալութեամբ նորա քաղցրիկ դայլայլիկն ներբողելով, կը ակնարկէր նորա եղերերգութեան մէջ Քաջ Վարդանի դերն»: Հայրապետեանցը այնպէս զմայլւում է նամակի խօսքերից, որ սուրբ Հոգւոյ ազդուած մարգարէութիւն է համարում նրան ու այնպէս է ցոյց տալիս, որ ինքը պատրաստ է Վարդանի նման նահատակուել Նախիջևանում: Պատկանեանցը հարցնում է, թէ այդ նամակից երևում է, որ Նալբանդեանցը ձեզանից ամսական ռոճիկ է ստանում. Հայրապետեանը ծիծաղում է և պատասխանում. «ի՞նչպէս իմացար. ճշմարիտ է, ես նորան ամիսը հարիւր րուբլի եմ նուիրում»:

Վերջերում, ինչպէս յայտնի է, Հայրապետեանը մասամբ իրագործում է Նախիջևանում Վարդանի պէս նահատակուելու իւր ցոյց տուած յօժարութիւնը. նա եթէ չի նահատակւում խօսքիս բուն նշանակութեամբ, գոնէ, մեծամեծ նեղութիւններ է քաշում, ենթարկուելով մատնութեան և ամբաստանուելով տէրութեան առաջ իբրև քաղաքական յանցաւոր այն բանի համար, որ նա փոխադրել էր Նալբանդեանցի մարմինը Նախիջևան և մեծ հանդիսով յուղարկաւորել էր նորան: Տէր-Եղիա Շապոչնիկեանի, Խալիբեանի և Այվազեանի ջանքով քննութիւն է բացւում և սկսւում հետապնդութիւն, թէ արդեօք ճշմարիտ է, որ Հայրապետեանցը կամեցել է Նալբանդեանցի մահը ներկայացնել իբրև ճշմարտութեան մարտիրոսի վախճան և որ նա նահատակուել է ազգասիրական սխրագործութեան հանդիսի մէջ: Հարուածը այնքան մեծ է լինում քաղաքագլխի համար, որ նա տուժում է բարոյապէս, կորցնելով իւր առողջութիւնը, և նիւթականապէս, զրկուելով իւր հարստութեան մի խոշոր մասից: Եւ այսպէս Նալբանդեանցի յարաբերութիւնը Հայրապետեանցի հետ անգիտակցաբար դառնում է վերջինիս համար չարիք և պատճառ Հայրապետեան տան կործանուելուն: Եւ առհասարակ Նալբանդեանցի սխալ ուղղութիւնից ու գործունէութիւնից, Պատկանեանցի կարծիքով, առաջ է գալիս բազմաթիւ վնասներ Նախիջևանի հասարակութեան համար. եթէ չլինէր Նալբանդեանցը, չէր բորբոքուիլ Մատթէոս առաջնորդի և հասարակութեան մէջ եկեղեցական գումարների կռիւը, 3 հարիւր յիսուն հազարի մեծ ճոխութիւնը չէր ընկնիլ Այվազեանի ձեռքը, Խալիբեանի ճակատին չէր դրոշմուիլ իբրև աղուէսադրոշմ եկեղեցական փողերի գողի անուն և ոչ էլ այն գումարներով կառուցուած մեծ դպրոցը կչլինուէր Թէոդոսիայում և կկրէր «Խալիբեան». յորջորջումը:

Նալբանդեանցի հիւանդութիւնը, Պատկանեանցի ասելով, ժառանգական «ծիւրախտ» էր և «ափրոդիտեան խօթութիւն» որ նա ստացել էր 1851 թուին և չէր կարողացել բոլորովին բժշկուել և այդ դէշ հիւանդութեան թոյնը մաքրել իւր երակներից «փայլածուի» օգնութեամբ: Եւ զարգացել էր նորա մէջ

այդ հիւանդութիւնը Պետրոս-Պօղոս բերդի խոնաւ խուցերում և բանտի խստակեաց ռէժիմի ազդեցութեան ներքոյ: Ճիշտ է, բազմամեայ բանտարկելութիւնից յետոյ, նա ազատուել էր ու տեղափոխուել Վօլգայի ափը, բայց արդէն ուշ էր... Եւ կըտրուում է նորա կեանքի թելը դեռ երիտասարդ հասակում և իջնում է նա գերեզման, առանց իրագործելու այն բոլորը, ինչ որ նա կարող էր անել, ինչ որ ուզում էր....

Ո՞րքան ճշմարիտ է Պատկանեանցի այդ կարծիքը Նալբանդեանցի մասին: Որ Պատկանեանցը սիրում էր Նալբանդեանցին և ճանաչում էր նորա արժանաւորութիւնը, այդ մասին խօսք չի կարող լինել. նա նորան համարում էր արդիւնարար զաւակ ազգի և անձնատուր նորա շահերին. նա նորա գրիչը համարում էր թէև յանդուգն, բայց հանճարեղ. նա միայն չէր հասկանում նորա բռնած ուղղութիւնը և իբրև հին մարդ չէր էլ կարող հասկանալ, ուստի և կոչում էր նորա գործունէութիւնը ոչ ազգասիրական և ոչ հայրենասիրական: Տէրութեան օրէնքները, սարք ու կարգը և ամբողջ կազմակերպութիւնը նորա համար սուրբ էին և անբիծ, ուստի և ամէն մէկը, որ հակառակ էր գնում այդ բոլորին, նորա աչքին շեղուած էր ուղիղ ճանապարհից և նիհիլիստ էր կամ չնչահաւատ: Գերցենը, Բակունինը և դոցա բոլոր համախոհները, որոնք անբաւական լինելով տիրող սարք ու կարգից, հեռացել էին իւրեանց երկրից և արտասահմանում գործում էին իւրեանց հայրենիքի շահերի համար, միանգամայն օտար էին ու անծանօթ նորան և մինչև իսկ վնասակար, ուստի և Նալբանդեանցի գործունէութիւնը, որ բոլորովին համապատասխան էր նոցա ուղղութեան, նորան միանգամայն ապարդիւն ու անհասկանալի էր թւում. նորա կարծիքով հայ ազգասէրը և հայրենասէրը պէտք է անպատճառ կամ քահանայ լինէր, կամ վարդապետ, կամ վարժապետ և կամ ազգասիրական բաներ գրող. նա չէր հասկանում, որ հայութեան մի ստուար մասի բաղդը անխզելիօրէն կապուած է բովանդակ պետութեան, ընդհանուր հայրենիքի շահերի հետ. որքան որ ընդհանուրը լաւ է, օրինական է, բարեկարգ է, այնքան և նորա մասերը բաղդաւոր են և ընդհակառակը, ուրեմն

և Գերցենը, Բակունինը և միւսները, որոնց թւին պատկանում էր և Նալբանդեանցը, որոնք աշխատում էին ընդհանուր հայրենիքի այդ բարեկաւութեան համար, նոյնքան ազգասէր և հայրենասէր էին, որքան ինքը և իւր նմանները, նամանաւանդ որ Նալբանդեանցը մասնաւորապէս և յատկապէս գործում էր և հայերի համար, քարոզելով, գրելով, ազգային գործերին եռանդուն կերպով մասնակցելով, և այլն և այլն: (16):

Պատկանեանցը չարաչար սխալուում է, երբ կոչում է Նալբանդեանցին «շողոքորթ» և շահասիրական նպատակով Հայրապետեանցին մօտեցող: Նալբանդեանցը ոչ շողոքորթ էր և ոչ շահասէր. երկու կուսակցութիւն Նախիջևանում մաքառում էին միմեանց հետ, և Նալբանդեանցը իբրև այդ կուսակցութիւններից մէկին պատկանող և գլխաւոր աշխատող բնականապէս ճգնում էր իւր կուսակցութիւնը հզօրացնել և այդ նպատակով աշխատում էր մօտենալ հարուստ և Նախիջևանում դիրք ունեցող Հայրապետեանցին, որ կարողանայ նորան իւր կուսակցութեան գլուխ կանգնեցնել իբրև Խալիբեանցին դերակշռող ոյժ և արժանաւոր հակառակորդ: Այստեղ անձնական շահասիրութեան բան չկար, այստեղ պանրի ակնկալութիւն, որի համար արժենար աղուէսին ագռաւի «դայլայլիկը» ներբողել, տեղի չունէր, այստեղ կուսակցական տակտիկայի գործ էր միայն, ուրիշ ոչինչ: Իսկ ինչ որ վերաբերում է ամսական հարիւր ռուբլի ստանալու խնդրին, մենք պէտք է ասենք, որ, նախ և առաջ, մեզ յայտնի չէ, որ Նալբանդեանցը երկար ժամանակ և կանոնաւորապէս Հայրապետեանից ամսական ստացած լինի, երկրորդ, որ եթէ ստացած էլ լինի, այդ մի ամօթ բան չէ: Նալբանդեանցը պաշտօն չունէր, նա կարողութեան տէր չէր. նա գրում էր, նա քարոզում էր, կարելի է ասել, որ ամբողջ կուսակցութեան գործը նա մենակ իւր ուսերի վերայ էր տանում. ինչ զարմանք, ուրեմն, որ այդ կուսակցութիւնը իւր հարուստ պարագլխի միջոցով նիւթականապէս երբեմն օգնէր նորան, տալով ապրելու միջոց, ճանապարհածախսի փող, և այլն:

Միակ կէտը, որի վերաբերմամբ, գուցէ, մեզ պէտք լինի մասամբ համաձայնել Պատկանեանցի հետ, այդ այն է, որ Նալ-

բանդեանցը իւր չափազանց կտրուկութեամբ և կուսակցական կրքոտ գործունէութեամբ ոչ այնքան օգուտ բերեց Նախիջևանի հասարակութեան, որքան վնաս։ Այն ժամանակները ոչ թէ միայն Նախիջևանի հասարակութիւնը, այլ և ամբողջ հայութիւնը դեռ այնքան հասունացած չէր, որ կարելի լինէր ամեն բան տեղն ու տեղը, կտրուկութեամբ և արդարութեան և օրէնքի հիման վերայ որոշել, պէտք էր մի փոքր զգոյշ լինել, մի փոքր ներողամիտ լինել, որ հասարակաց շահերը խաղաղ չվնասուէին, որ յօնքը շինելու տեղ աչքն էլ չհանուէր։ Չպէտք էր մոռանալ, որ դէմ-յանդիման կանգնած մարդիկը ուրիշ տեսակ էին մեծացել, ուրիշ տեսակ գաղափարներ ու հասկացողութիւններ էին ժառանգել իրենց հայրերից, անցեալ սերնդից, ուստի և չպէտք է կարողանային, չպէտք է ուզենային համակերպել եղած պահանջներին, այլ, ընդհակառակը, տեսնելով դիմադրութիւն ու արգելք իւրեանց առաջ, աւելի ևս պիտի գրգռուէին և դիմադրութեան համար գործ դնէին անխտիր թէ թոյլատրելի և թէ ոչ թոյլատրելի միջոցներ, որով և չարաչար վնասէին հասարակաց շահերին, ինչպէս որ եղաւ էլ։ Մատթէոս Վեհապետեանի դիմադրութիւնը Ներսէս կաթողիկոսին, որի մէջ անմասն չէր և Նալբանդեանը, ի՞նչ հետևանք ունեցաւ, բացի նորանից, որ կաթողիկոսական իշխանութիւնը նուաստացրեց տէրութեան առաջ, եկեղեցական գումարների հաշուետուութեան խնդիրը, որ յարուցել էր Նալբանդեանը, ի՞նչ օգուտ ունեցաւ, բացի նորանից, որ Խալիբից ոչինչ չստացուեց, ստացուածն էլ ապարդիւն կերպով ծախսուեց Թէոդոսիայի դպրոցի վերայ. Խալիբեան դպրոցի վերայ անդադար յարձակումը և նորա անունը հասարակութեան առաջ ծաղրելը, ինչպէս որ անում էր Նալբանդեանը, ի՞նչ արդիւնք ունեցաւ, բացի նորանից, որ Նախիջևանում դպրոց չշինուեց, Թէոդոսիայինն էլ հետզհետէ ընկաւ և խափանուեց։ Կարծում ենք, որ ներողամիտ ու զգոյշ վարմունքը կստիպէր Խալիբին և դպրոցը Նախիջևանում շինելու, և իւր ունեցածից էլ մի բան ազգին կտակելու. կարծում ենք նոյնպէս, որ Սալվաղեանը առանց Խալիբի չէր ունենայ այն զօրութիւնը, որ նա ունեցաւ և գործ դրեց

թէ իւր—Նալբանդեանցի, և թէ Մատթէոս կաթողիկոսի դէմ. կարծում ենք, վերջապէս, որ հարուստ Հայրապետեանցը կուսակցական պայքարների պատճառով փոխանակ իւր առևտրական մեծ գործը քայքայելու, Նալբանդեանցի ազդեցութեամբ ընդունակ կլինէր հասարակութեան շահը հասկանալու և իւր մեծ կարողութիւնից մի խոշոր մաս ազգին հանելու, չենք ասում արդէն այն, որ Նախիջևանի հասարակութեան մէջ Խալիբեան և Հայրապետեան կռիւների պատճառով չէին բոյն դնիլ այն երկարատև կագն ու կռիւը, որ վերջնականապէս ջլատեց Ռուսաստանի այդ հայ ամենանշանաւոր գաղութի կենական ոյժերը։

Պատկանեանցը Պետերբուրգում հանգստանում է իւր երկարատև տառապանքներից. նա այդտեղ գտնում է իւր ընտանիքի, իւր մերձաւորների մէջ և ապրում է հայ հասարակութեան շրջանում, հայ եկեղեցու մօտ, մայրաքաղաքի ընձեռած կեանքի յարմարութեան ու վայելչութեան մէջ։ Ճիշտ է, առաջին նուագ նա նեղուում է նիւթական միջոցների սղութիւնից, բայց շուտով այդ կողմից ևս բարւոքւում է նորա վիճակը. նա 70 թուին երջանկայիշատակ Գէորգ կաթուղիկոսի հրամանով և թոյլտուութեամբ կարգւում է հայ մանուկների կրօնուսոյց զինուորական դպրոցներում։ Մնում էր միայն մի ցաւ, որ բարոյապէս տանջում ու թունաւորում էր նորա կեանքը—այդ նորա քահանայութիւնից զրկուած լինելն էր, որի հետ այդքան տարի անցնելուց յետոյ էլ, դեռ նա չէր ուզում, կամ չէր կարողանում հաշտուել. նա երբեք յոյսը չէր կորցնում, գլխից չէր հանում այն միտքը, որ ինքը չպէտք է մեռնի առանց իւր քահանայութիւնը վերստանալու, և միշտ մտածում էր, միշտ յարմար րոպէ էր որոնում յարուցանելու այդ խնդիրը։ Եւ, վերջապէս, այդ յարմար րոպէն ներկայանում է. սկսւում ու վերջանում է Ռուս-Տաճկական պատերազմը, խմբւում է Բերլինի վեհաժողովը, և Խորէն Նարբէյը ուղարկւում է Պետերբուրգ Հայոց խնդրի համար աշխատելու և նրա յաջող լուծման համար հող պատրաստելու, ինչպէս որ նոյն նպատակով ուղարկուած էր Եւրոպա Խրիմեան Հայրիկը։

Պատկանեանցը օգտուում է այդ հանգամանքից և խնդրում է Ներսէս պատրիարքից (17), որ իւր գործը յանձնէ նա Խորէնին, Ներսէս պատրիարքից, որ դորանից մի քանի ժամանակ առաջ արդէն իւր սրտին մօտ ընդունելով նորա դատը, գրել էր այդ մասին վեհափառ Գէորգ կաթուղիկոսին և միջնորդութիւն էր յարուցել Թագաւոր-կայսեր առաջ: Պատրիարքի, վեհափառ կաթուղիկոսի և Խորէնի միահամուռ աշխատանքը, վերջապէս, պսակուում է յաջողութեամբ, և կայսրը 1878 թուի հոկտեմբերի սկզբին ներման վճիռ է արձակում, որի հիման վերայ և Պատկանեանցը վերստանում է իւր քահանայութիւնը: (18)

Պատկանեանցը Պետերբուրգում կենալու իւր 26 տարուայ երկար ժամանակամիջոցի ընթացքում շատ ազատ ժամանակ է ունենում. գիմնազիական դպրոցներում նորա ունեցած դասերը նորանից շատ ժամանակ չէին խլում. նա քահանայութիւն չէր անում, հասարակաց գործունէութիւն էլ նորա համար չկար այնտեղ: Մնում էր միայն ընթերցանութիւնը և գրական պարապմունքը, որոնց նա անձնատուր է լինում և որոնց համար շատ մեծ յարմարութիւն կար մայրաքաղաքում: Դորանով անմ պէտք է մեկնել այն հանգամանքը, որ նորա երկերից շատերը գրուած են հէնց այդ ժամանակամիջոցում— 1863— 1879: Նորան այդտեղ և այդ միջոցում շրջապատում են ու սիրտ են տալիս նորա որդի Ռափայէլն և եղբօրորդի Քերովբէն, որոնցից առաջինը արդէն սկսել էր մեծ բանաստեղծի անուն վաստակել իւր հայրենակիցների մէջ, իսկ երկրորդը գիտնականի ասպարէզ էր ընտրել իւր համար և արդէն առաջանալու շաւղի վերայ էր. նամանաւանդ գրական եռանդուն գործունէութիւն սկսել էր ցոյց տալ Ռափայէլը, որ չշատանալով իւր բանաստեղծութեան տետրակների հրատարակութեան գործով, այդ միջոցներում հաստատուել էր Պետերբուրգում, ծանօթացել էր Ամրեցու ընտանիքի հետ, տպարան էր բաց արել և ձեռնարկել «Հիւսիս» թերթի հրատարակութեան գործին և դորանով գրական գործունէութեան մի լայն ասպարէզ բաց արել այդպիսի բաների սիրահար հօր առաջ:

Պատկանեանցը, ինչպէս մենք տեսանք, դեռ Հաշտարխա-

նում Հայոց տառեր էր ձեռք բերել, միտքը դրած լինելով մի տպարան բանալու այնտեղ, բայց չէր յաջողել. նոյն տառերը նա իւր հետ տարել էր Նոր-Նախիջևան և բաւականին փող էր ծախսել տառերի պակասը լրացնելու և տպարանն այնտեղ բանալու, բայց այդտեղ ևս զանազան արգելքների էր հանդիպել և չէր կարողացել իրագործել իւր նպատակը: Թիֆլիսում միայն նորան յաջողել էր իրագործել իւր ջերմ ցանկութիւնը և ձեռնարկել «Արարատի» հրատարակութեան գործին, միւս կողմից էլ երջանկայիշատակ Ներսէս կաթուղիկոսն էր ցանկացել, որ թողնէ իւր տպարանը և բոլորամասն նուիրուի Ներսիսեան հոգևոր դպրոցին, որին տեսուչ էր կարգուել նա: Այժմ, երբ նա Պետերբուրգումն էր և բոլորովին ազատ և նորա որդին Ռափայէլն էլ տպարան էր բաց արել և ձեռնարկել «Հիւսիսի» հրատարակութեան, լայն բանալով թէ տպարանի և թէ «շաբաթաթերթ բազմակէպ լրագրի» էջերը նորա առաջ, նա բնականապէս սկսում է ամենաեռանդուն գործակցութիւն ցոյց տալ իւր որդու ձեռնարկած հրատարակութեան գործում: Նա 1863 թուին, երբ սկսում է հրատարակուել «Հիւսիսը», գրում է իւր «Վարդանանց պատերազմի վերայ մտածողութիւն», «Դաստիարակութիւն մարդկանց», «Փայտէ ձիու վերայ նստած յառաջադիմութիւն», «Միաբա՞ն են Հայք», «Ազգային յառաջադիմութիւն», «Յարութիւն վարդապետ երբեմն Տէր-Յարութիւն աւագ քահանայ Ալամդարեանց», «Վարդան Մամիկոնեան», և «Նիկոլ կամ Լեհաստանի հայերի թշուառութիւնները» յօդուածները, որոնցից մի քանիսը, ինչպէս «Ալամդարեանի» մի մասը, «Վարդանը» և «Լեհաստանի հայերի թշուառութիւնները» նա ժամանում է հրատարակել շաբաթաթերթի սուղ էջերում նորա կարճատև կեանքում:

Եթէ «Հիւսիսը» կարճատև կեանք է ունենում, այդ յամենայն դէպս չպէտք է վերագրել նիւթի պակասութեան, որ շատ առատութեամբ մատակարարում էր Տէր-Գաբրիէլը, այլ իւր Ռափայէլի իբրև խմբագրի հրապարակախօսի քանքար չունենալու յատկութեան, որ չի կարողանում մի որոշ ուղղութիւն տալ իւր թերթին, չի կարողանում կեանք ու կենդանութիւն

ներշնչել հրատարակուող նիւթերին, հրատապ խնդիրներ յարուցանել, նոր խօսք ասել ընթերցող հասարակութեան և շարժել նորա հարցասիրութիւնը: «Արարատի» հրատարակութիւնից անցել էր 13 տարի և ժամանակները շատ փոխուել էին. հասարակութիւնն էլ համեմատաբար հասունացել, ընթերցողների ճաշակը զարգացել և պահանջները աւելացել: Այն ժամանակները մրցողութիւն չկար և ինչ նիւթ որ տրւում էր, սիրով ընդունւում և կարդացւում էր սակաւաթիւ ընթերցողներից, նամանաւանդ որ Արարատը երկրորդ լրագիրը Ռուսահայերի մէջ, շատ առաջ էր գնացել իւր նախորդ «Կովկասից» թէ իւր հրատարակչութեան ձևով, թէ նիւթերի ընտրութեամբ ու բովանդակութեամբ և թէ նամանաւանդ լեզուով «Արարատը» առաջին հրատարակութիւնն է եղել մեր մէջ, որ թողնելով պաշտօնական գրաբառ լեզուն, սկսել է ժողովրդի հետ հասկանալի աշխարհաբառով խօսել, որով և հետաքրքրել է հասարակութիւնը իւր նորութեամբ և ընթերցողների սիրտը իւր հետ կապել: Ճիշդ է, Արարատում էլ դեռ տպագրւում էին գրաբառ յօդուածներ, բայց այդ շատ չէր խանգարում ներդաշնակութիւնը, այդ մի ժառանգութիւն էր, որ մնացել էր անցեալից, հնութիւնից, որից չէր կարելի իսկոյն և միանգամայն վերջնականապէս բաժանուել և խզել ժառանգութեան կապերը. այդտեղ գլխաւորն այն էր, որ աշխարհաբառին լայն ասպարէզ էր տրուած, ճանաչուած էր նորա իրաւունքը: Հիւսիսի ժամանակները հրատարակւում էին «Հիւսիսափայլը», «Մեղու Հայաստանին», «Կռունկը» և «Մասեաց Աղաւնին», որոնց հետ պէտք էր մրցել և աշխատել մի բանով առաջ անցնել, մի բանով գրաւիչ երևալ հասարակութեան աչքին, որ նա ոչ միայն չի կարողանում անել, այլ և շատ բանով յետ է մնում նոցանից: Եւ այդ բանում, կրկնում ենք, Տէր-Գաբրիէլը մեղք չունէր, նա իւրը իւր ժամանակին արել էր, նա այժմ էլ գրում էր շատ, անվերջ և թէև միակողմանի, բայց առատ նիւթ էր տալիս և իւր ժամանակակից հրատարակութիւնների մէջ, բացի, գուցէ, Հիւսիսափայլից, կարող էր իրան յատկացրած բաժնում պատուաւոր տեղ բռնել: Թարմ ոյժը, ցանկալի ուղղութիւն տուողը պիտի

լինէր Ռափայէլը, իսկ նորան այդ գործում օգնողը—Քերովբէ Պատկանեանը և միւսները:

Պատկանեանը 1863—64 թուերին, երբ ընկնում է Պետերբուրգ և ստիպուած է լինում ընդմիշտ բնակութիւն հաստատելու այնտեղ, լինում է 60—61 տարեկան մարդ, բայց և այնպէս նորա եռանդը դեռ պակասած չի լինում. նա անդադար գրում, թարգմանում, կարդում և ուսումնասիրում է. մինչև իսկ 70 թուականներին, երբ նա ուսուցիչ է նշանակւում գիմնազիական դպրոցներում և լինում է 70—75 տարեկան ծերունի, նա դեռ այնքան ոյժ է ունենում, որ եռանդով յաճախում է դպրոցները և սիրով կատարում իւր ուսուցչական պարտականութիւնները: Միայն երկարատև և չափազանց մեծ աշխատանքից հետզհետէ սկսում են նորա աչքերը փճացուել, այնպէս որ 1885 թուին նա իսպառ կորցնում է իւր աչքի լոյսը—սև ջուր է իջնում, և նա այդ դրութեան մէջ մնում է մինչև 1888 թիւը, երբ այն ժամանակուայ նշանաւոր ակնաբոյժ Դումբերգը վիրահատութիւն է կատարում և վերադարձնում է նորա աչքի լոյսը: Դժբաղդ ծերունու համար մեծ մխիթարութիւն է լինում, երբ այնքան տարուայ խաւարից յետոյ նա վերստին լոյս աշխարհ է տեսնում, միջոց ստանում նորից իւր աչքով կարդալու և տեսնելու իւր սիրելիներին: Բայց այդ մխիթարութիւնը երկարատև չի լինում, մի տարուց—1889 թուի Ապրիլի 13-ին, վախճանւում է նա 87 տարեկան հասակում և նոյն ամսի 16-ին թաղւում է Սմօլենսկի գերեզմանատանը, եկեղեցու մուտքի ձախ կողմը: Յուղարկաւորութիւնը կատարւում է շքեղ հանդիսով, ներկայ է լինում մայրաքաղաքի համարեա ամբողջ հայ գաղութը և ուսանողներից մէկը դամբանական է խօսում նորա վերայ և գովում նորա գործունէութիւնը ու գրական հմտութիւնը և շեշտում նորա նշանակութեան վերայ հայ գրականութեան մէջ իբրև Ռուսահայոց աշխարհաբառ լրագրի հիմնադրի:

Պատկանեանցն իւր երկարատև գործունէութեան ընթացքում խիստ շատ է գրել, սկսելով իւր կեանքի ամենավաղ հասակից ու վերջացնելով խորին ծերութեան օրերում. Նորա ա-

ռաջին գրուածքը համարւում է «Պատմութիւն Աղէքսանդրի Մակեդոնացւոյ», որ նա թարգմանել է ռուսերէնից դեռ իւր պատանեկութեան հասակում, երբ նոր միայն կարգուել էր նա ուսուցիչ Հաշտարխանի նորաբաց հոգևոր դպրոցում, և տպագրել է նորան 1823 թուին։ Սակայն նորա այդ բազմաթիւ գրուածներից համեմատաբար շատ քիչ մասն է հրատարակուել և աւելի քիչ մասը առանձին գրքով լոյս աշխարհ տեսել։ Դորան, դուցէ, պէտք է վերագրել այն հանգամանքը, որ մինչև ցայսօր դեռ, չնայելով, որ հեղինակի մահից արդէն իսկ անցել է 17 տարի, մի քիչ թէ շատ լիակատար աչքի ընկնող ուսումնասիրութիւն չի դուրս եկել մեր գրականութեան մէջ նորա գրուածների վերաբերմամբ. Թէև այն էլ պէտք է ասել, որ նորա մինչև իսկ տպագրուած երկերն այնքան արդէն հնացել են և կորցրել իւրեանց արժէքը ու այժմէութիւնը, որ միայն մասնագէտներին քիչ, թէ շատ կարող են հետաքրքիր լինել, իբրև նիւթեր, իբրև մեր նոր գրականութեան մօտ անցեալի յիշատակարաններ։

Թէև հանգուցեալը գրականութեան համարեա թէ բոլոր ճիւղերում էլ փորձել է իւր ոյժը, բայց նորա գրուածների ամենամեծ մասն, նայելով նոցա բովանդակութեան ու ձևին, կարելի է բաժանել երեք մասի՝ արձակ գրուածներ կրօնական բովանդակութեամբ, արձակ գրուածներ պատմական բովանդակութեամբ և բանաստեղծութիւններ պատմական և կրօնական բովանդակութեամբ։ Թողնելով մի կողմ բանաստեղծութիւնները, որոնց մասին մենք արդէն իսկ մի փոքր առաջ համառօտակի խօսեցինք ու որոշեցինք նոցա արժէքը, և կրօնական գրուածները, որոնց ամենամեծ մասը տակաւին ձեռագիր է և այդ պատճառով իբրև մեծ մասով մեզ անծանօթ նիւթ չի կարող քննութեան առարկայ լինել, մենք այստեղ կաշխատենք համառօտաբար խօսել միայն նորա պատմական գրուածների մասին և որոշել նոցա արժէքը գրական և պատմական նիւթի մշակման տեսակէտից, պատմական գրուածների, որոնք, մեր կարծիքով, ամենաաչքի ընկնելուն են նորա բոլոր գրուածների մէջ։ Նորա պատմական գրուածներից մեզ ծանօթ են՝ «Հայոց ազգի

պատմութիւնը», «Նիկոլ», «Հարիւրամեակ Ն. Նախիջևան հայաբնակ քաղաքի», «Ներսէս Ե. կաթողիկոս և հայրապետ ամենայն Հայոց» և «Յարութիւն վարդապետ Ալամդարեանց», որոնցից առաջին երկուսը տպագրուած են և լոյս ընծայուած առանձին գրքերով, իսկ վերջինները դեռ ձեռագիր են։ (19)։

«Հայոց ազգի պատմութիւնը» ոչնչով չի տարբերւում մեր միւս բազմաթիւ Հայոց պատմութիւններից. դա, ինչպէս և միւսները, համառօտութիւն է Չամչեան հատորների։ Եթէ մի նորութիւն կայ դորա մէջ, այդ էլ, դուցէ, այն է, որ հեղինակը աշխատում է ցրել այն կարծիքը որ Հայերը իբրև թէ անմիաբան են և որ Հայոց ազգի բոլոր դժբաղդութիւնը հենց առաջ է եկել և առաջ է գալիս այն հանգամանքից, որ նոքա միաբան չեն գործել և գործում։ Բացի սորանից, նա իւր պատմութեան մէջ յայտնում է և մի ուրիշ, մեր կարծիքով, շատ տարօրինակ կարծիք, որ իբրև թէ մեր ազգի քաղաքական տապալւում ունեցած անյաջողութեան պատճառներից մէկն էլ պէտք է համարել այն, որ նորա գործի գլուխ կանգնած գլխաւոր նախարարական տները զուտ հայ ծագում չեն ունեցել, օտար են եղել։ «Նիկոլը» Առաքել Վաղարշապատցու աշխարհաբառի վերածած և ընդարձակած պատմութիւնն է։ Հարիւրամեակը հաւաքածու է ամեն տեսակ նիւթերի. այդտեղ պատմական նիւթերի հետ խառնուած են շատ մեծ ծաւալով կենսագրականներ, կողմնակի դատողութիւններ, կրօնական մեկնութիւններ. առասպելներ և հեքեաթաձև պատմութիւններ և այլն և այլն։ «Ներսէս կաթողիկոսը» և «Յարութիւն վարդապետը», վերջապէս, զուտ պատմութիւն չեն, այլ կենսագրականներ իւրեանց պատմական պարագաներով։ Ընդհանրապէս նորա բոլոր պատմական համարուած գրուածներում չի երևում պատմական նիւթի կանոնաւոր մշակութիւն, պատմական մի որոշեալ հայեացք համաձայն այդ գիտութեան նորա ժամանակները եղած զարգացման աստիճանին, պատմական աղբիւրների լուրջ ընտրութիւն և քննադատութիւն, համեմատական եղանակ, ազգային անաչառութիւն և խուսափումն առասպելաբանութիւններից—յատկութիւններ, որոնք ամեն մի

խոկական պատմաբանի առաջնորդող ֆակտորները պիտի լինեն, ամեն մի լուրջ պատմութեան ուղն ու ծուծը, հիմնաքարը պիտի կազմեն։ Եւ առհասարակ հանգուցեալի բոլոր գրուածների ընդհանուր յատկութիւններն են՝ աւելորդաբանութիւնը, մտքի քաջութիւնը, խօսքի շատութիւնը, անվերջ անծայր հեքեաթաբանութիւնը, սիստեմի պակասութիւնը, կողմնակի դատողութիւնները, Ս. Գրքից բերած օրինակները և նոցա հեա.աբած համեմատութիւնները։ Ոչ ոք, մեր կարծիքով, օրինակի համար, չի կարող առանց ձանձրանալու կարդալ սկզբից մինչև վերջը «Տէր-Կիրակոսի պատմութիւնը», որ զետեղուած է Հարիւրամեակի մէջ, և կամ «Հայոց ազգի ուսումնառութիւնը ուսումնարանք և ուսուցիչք», որ հրատարակուած է առանձին գրքոյկով 1865 թուին, այնքան յոգնեցուցիչ ու ձանձրացուցիչ են դոքա։ Պատկանեանցի գրուածների դժուարութեամբ կարդացուելուն և շատ շուտով հնանալուն, բացի վերոյիշեալ բոլոր թերութիւններից, նպաստում է և նորա գործածած լեզուն, որ մի խառնակ ու անկազմ բան է. գրաբար է—գրաբար չէ, աշխարհաբար է—աշխարհաբար էլ չէ. այլ աշխարհաբարախառն գրաբար, կամ ընդհակառակը՝ գրաբարախառն աշխարհաբար։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1.) Այս աշխատութեան համար մենք օգտուել ենք.—

ա.) հանգուցեալ Յարութիւն Խալիբեանի թղթերի մէջ գտնուած Պատկանեանցին վերաբերեալ շատ գնահատելի պաշտօնական և ոչ պաշտօնական բազմաթիւ վաւերականներից։

բ.) Պատկանեանցի «Հարիւրամեակ Նոր-Նախիջեւան հայաբնակ քաղաքի» ձեռագիր պատմութիւնից, որի մէջ կարելի է գտնել ցաքուցրիւ ընկած բազմաթիւ կենսագրական տեղեկութիւններ հեղինակի մասին։

գ.) Ժամանակակից ծերունիների պատմածներից։

դ.) Բժ. Պ. Քառաքաշի Պատկանեանցի ծննդեան հարիւրամեակի առիթով գրած համառօտ կենսագրութիւնից, որ տպագրուել է «Մշակի» 1902 թուի 41 և 42 համարներում։

ե.) Պատկանեանցի Մատթէոս արքեպիսկոպոսին բանտից գրած ընդարձակ խնդրագրից, և այլն և այլն։

Աւելորդ չենք համարում այստեղ մեր լիաբերան շնորհակալութիւնը յայտնելու յատկապէս Պ. Դաւիթ Խօջայեանին, որ մեծ սիրելութեամբ մեր տրամադրութեան տակ դրեց Խալիբեանի, իւր պապի, թղթերը, և «Լումայի» խմբագիր Գիւտ ա. ք. Աղանեանցին, որ ուղարկեց մեզ օգտուելու Նոր-Նախիջեւանի Հարիւրամեակի ընդարձակ ձեռագիրը։

2.) Պատկանեանց ազգատոհմի ազգաբանութեան աղիւսակի մասին տես մեր «Մկրտիչ Յովսէփեան Էմին» գիրքը, էջ 159։

3.) Այդ ընծայագրի ռուսերէն բնագիրը և նորա հայերէն թարգմանութիւնը տպագրուած է մեր «Պատմական պատկերներ» գրքում էջ 188։

4.) Թադէոս վարդապետը պօլսեցի էր և գիտնականի ու լաւ քարոզչի համբաւ էր վայելում, ուստի և ստացել էր «Բիթապիւտան» և «հրաշաքարոզ» մակդիրները։ Դա իր ուսումը ստացել էր Զաքարիա պատրիարքից, որ կամենալով վիճակներն ուսեալ ու քարոզիչ վարդապետներ ուղարկել, ժողովել էր պատրիարքարան առաքեալների թուով 12 աշակերտ և գիտնական

վարժապետներ հրաւիրելով, դաստիարակել ու կրթել էր նոցա։ Երբ Յովսէփ Արղութեանը հիմնում է Ս. խաչ վանքում դպրոց ու նոր հիմնարկուած Գրիգորիուպօլից բերում է 72 որբ տղայ, աշակերտ, ցանկանում է դպրոցի համար վարժապետ հրաւիրել 12-ից մէկին։ Ընտրութիւնն ընկնում է Թադէոս վարդապետ Մարուգեանի վերայ, որ այդ ժամանակները քարոզչութեան պաշտօնով շրջագայում էր Մոլդաւիոյ և Վալաքիոյ կողմերը, թէև շատ գովասանքի հետ միասին նա նորա մասին լսել էր, թէ նա շատ գինեմոլ է, որ և յետոյ արդարանում է։

5.) Ափրեմը նամանաւանդ հաւանել էր «Սահման անսահման» երգին, որ շարադրել էր Սերովբէն նորա կաթուղիկոս հաստատուելու առթիւ։ Նա այդ երգը սովորեցրել էր աշակերտներին, նոքա երգել էին իբրև շնորհաւորանք կաթուղիկոսի Պետերբուրգից Հաշտարխան վերադառնալու միջոցին։ «Սահման անսահման»-ի ամեն մի տան գլխատառերը յօդում էին հեղինակի անունը՝ «Սերովբէ վարժապետ Պօլսեցի»։

6.) Պատկանեանցի ասելով Ալամդարեանը քահանայ է ձեռնադրուել իւր 19 տարեկան հասակում և Յովհաննէս առաջնորդի թոյլտուութեամբ քառասունք չի պահել և իսկոյն և եթ իրաւունք է ստացել գաւազան բռնելու։ Իսկ իւր Յարութիւն անունը նա ստացել է 'ի յիշատակ վաղամեռիկ Յարութիւն Լազարեանի։ Թէև իւր այդպիսի ապօրինի գործողութիւնների համար Յովհաննէս սրբազանը արժանի չի եղել ոչ մի գովասանքի, բայց Սերովբէ վարժապետը ստիպուած է եղել և նորա պատուին մի երգ յօրինելու, որ սկսւում էր. «Սիմէոնի Առն Աստուծոյ» խօսքերով ու վերջանում էր. «էին սրբոց պաշտօնէից՝ կրկներամեան ծառայից, շուրջ զձեօք պսակ կազմեալ դպիսեննեաց հալուէից, խոնարհմամբ առ խնկենիդ՝ մաղթողացս զկենացդ, տուր օրհնութիւն խաղաղութեան ընդ յաղթութեան ռուսաց Տէրութեան, և սուրբ Աթոռոյն մեր բարձրութեան»։

7.) «Բէշլի» կոչւում էին Նախիջևանում Հայկական մագիստրատի ոստիկանները։ Այդ մասին տես մեր» «Պատմական պատկերներ». էջ 11—12։

8.) Աւելորդ չենք համարում այստեղ մէջ բերելու այդ «բրիկաւորը» իւր ամբողջութեամբ իբրև մի հետաքրքրական դոկումենտ.—

«'Ի 1832 ամի, և 'ի հոկտեմբերի 10-ում յաւուրն. 'ի Նախիջևանու հայոց հասարակութեան քաղաքական տունս արարաք զայս բրիկաւորս,—Որ մեք, 'ի խնդրելն 'ի մէնջ տիրացու Գաբրիէլ Պատկանեանց, որ այժմ է քահանայ, զժամանակաւոր արձակումն 'ի վարժապետական պաշտօնէ իւրմէ տուաք նմայ պյաւիտենական արձակումն 'ի քաղաքէս, վասն անհաշտ և խռովարար բնութեան բարուց նորա, և վասն ամենևին անօգուտ լինելոյն վասն հասարակութեանս բնակութիւն տոհմին Պատկանեանց 'ի քաղաքս մեր և ապայ յետ փոքր միջոցի զհայրն նորին զՍերովբէ վարժապետն, և զեղբայրն նորա տիրացու Պետրոսն արգելաք 'ի վարժապետական պաշտօնէ իւրեանց, նպատակ ունելով առ 'ի բոլորովին հեռացուցանելոյ զնոսա 'ի քաղաքէս, իսկ տիրացու Գաբրիէլն յետ ստանալոյ զայդպիսի արձակումն դիմեաց դէպ ուղիղ առ ոտս բարձրագահ առաջնորդին մերոյ 'ի Թիֆլիս, ուր և ընկալեալ զաստիճան քահանայութեան, դարձ արար վերստին 'ի քաղաքս առնել մեզ քահանայագործութիւն. մեզ որ անգամ մի զվարժապետութիւն դորայ և զմնալն իսկ դոքայ 'ի քաղաքս ոչ կամէաք, վասն ընդդէմ ընթացիցն հասարակութեանս, և գնացիցն դոցայ։ Այժմ զիարդ իցէ ապա մեզ ընդունել զքահանայութիւն նորա ու զկեալն իսկ դոցայ 'ի քաղաքի մեր որք չեն մեր քաղաքացիք, և չեն ամենևին հաճելի մերս հասարակութեան, և որ առաւել զարմանալի է այժմս տէր Գաբրիէլն հողոքորդելով մինչև բռնադատելով ևս, հնարս հնարէ իւրացուցանել յինքեան զժողովուրդս, մինչդեռ ոչ ժողովուրդք և ոչ իսկ բոլոր հասարակութիւնս յօժարեմք ընդ կեալն և ընդ մնալն դոցայ 'ի քաղաքիս, որք չարայոյզ բնութեամբ իւրեանց ոչ սակաւս վիրաւորեցին և չփօթեցին զխաղաղասէր հասարակութիւն մեր, միանգամայն և զսիրտ և զսէր Նորին բարձու Սրբազնութեան պակասեցուցին 'ի մէնջ։ Վասնորոյ կարգաւորեալ զսոյն բրիկաւոր և հաստատեալ ստորագրութեամբ մերով, տամք քաղաքական գլօվայ Մարկոս փոփովին, զի նայ յերեսաց բոլոր հասարակութեանս խնդրամատոյց լինիցի, Նորին գերաստիճանեալ բարձր Սրբազնութեան և ամենողորմ առաջնորդին մերոյ Տեառն Ներսեսի, բարեհաճել ամենողորմած շնորհաբերութեամբ առ մեզ, հեռացուցանել բոլորովին զօտար քաղաքացի տոհմն Պատկանեանց 'ի քաղաքէս, և այնպէս տալ մեզ վայելել զհանգիստ կեանս և յաւիտեան օրհնել զբարի անուն Նորին բարձր Սրբազնութեան։ Իսկ եթէ քաղաքական գլովայն մեր, յիւրով քաղաքական այլովք գործովքն զբաղեալ անձեռնհաս լինիցի այսմ առարկային, առ 'ի հեռացուցանելոյ 'ի քաղաքէս զտէր Գաբրիէլն և զտոհմն նորին, տամք այնուհետև լիովին իշխանութիւն, որ նայ ինքն ընտրեսցէ զերկու պատուելի անձինս 'ի հոգաբարձուացն քաղաքիս սրտացաւ հասարակութեանս։ Որք նոքայ այնուհետև ըստ զօրութեան այսր բրիկաւորին գրեսցեն ուր հարկն է 'ի նպատակ

այն, որ ելցէն'ի քաղաքէս մերմէ բոլոր Պատկանեանքն, վասնորոյ ստորագրութեամբ մերով տուաք զայս բրիկաւորս քաղաքական տումս»։

9.) *Պատկանեանցը քահանայ ձեռնադրուելուց յետոյ, երբ Քիշինևից պիտի դուրս գար վերադառնալու Նախիջևան և երբ կառքն արդէն լծած պատրաստ էր և ճանապարհ ձգողներն էլ արդէն հաւաքուել էին առաջնորդարան, յանկարծ գալիս է նորա մօտ տիրուհին և կոչում է նրան պարտէզ սրբազանի մօտ։ Ներսէսը շատ բարկացած ու վշտացած է երևում. նա տալիս է նրան մի նամակ և հրամայում է, որ նա կարդայ։ Նամակը Թիֆլիսից էր և գրողն էր Գէորգ աղա Բէգլուղեանը. մէջը դրուած էր Ալամդարեանի մի նամակը, որի մէջ շատ բամբասանք էր գրուած առաջնորդի և տիրուհու յարաբերութեան մասին և Նախիջևանը Պատկանեանցին տալու մասին ևս և մի խնդիրք, որ նա, Բէգլուղեանը, միջնորդ լինի իւր, Ալամդարեանի, և Կարբեցու մէջ։ Երբ Պատկանեանցը կարդում վերջացնում է նամակը, Ներսէսը բացականչում է. «Ես Աստուծոյ անունը արդարադատ չեմ ասել, եթէ այս խօսքերն արտասանողի լեզուն չ'պապանձուի և սրա գրողի ձեռքը չ'կոտրուի»։*

10.) *Բացի բազմաթիւ մեղադրանքներից, որ Նախիջևանցիք բարձում էին Պատկանեանցի վերայ, նրան շատերը մեղադրում էին և այն բանի մէջ, որ նա իբրև թէ սիրային յարաբերութեան մէջ է գտնւում այս կամ այն կնոջ հետ. նա մանաւանդ տարածուած էր նորա և Ալթը-բարմաղ անունով մէկի կնոջ սիրային յարաբերութիան համբաւը, այնպէս որ այդ հասել էր մինչև իսկ Ներսէսի ականջը, և Պատկանեանցը սպասում էր, որ իւր դատի ժամանակ այդ մեղադրանքը ևս կ'յիշուի, և պատրաստել էր պատասխանը։ Ահա Տէր-Գաբրիէլի այդ սիրային յարաբերութիւնների վերայ է ակնարկում և Տէր-Պետրոս Պատկանեանցի նամակը, որ թէև ընտանեկան բնաւորութիւն ունի, բայց շատ նրբութեամբ ու զանազան կողմերից լուսաւորում ու բնորոշում է Տէր-Գաբրիէլին, ներկայացնելով մեզ նորա կեանքի, գործունէութեան ու բնաւորութեան ամբողջ նկարագիրը։ Այս տեսակէտից հետաքրքրական է այդ նամակն իւր ամբողջութեամբ և արժէ որ մեր ընթերցողները աչքի առաջ ունենան և այդ, եթէ միայն կամենում են լիակատար գաղափար կազմած լինել Տէր-Գաբրիէլ Պատկանեանցի մասին իբրև քահանայի, իբրև հասարակական գործչի, 'ի հարկէ դէն ձգելով միջից բոլոր զուտ ընտանեկան հանգամանքները։ «Երբեմն բարձր պատուոյ արժանաւոր Տէր-Գաբրիէլ, մեծ եղբայր իմ, որպէս ես, այնպէս և աշխարհ ամենայն գիտէ*

թէ 'ի մարդկանէ ոչ ամաչես, բայց ո՛չ գիտէի ո՛չ կարծէի թէ և յԱստուծոյ ոչ երկնչիս, բայց այժմ ստուգիւ ցուցեր և չիք ես կարծիք։ Եթէ մարդ ոք և այն քրիստոնեայ, և ևս առաւել քահանայ Աստուծոյ և առաւել քան զամենայն եղբայր հարազատ, եթէ ջանասցի արկանել գժտութիւն 'ի մէջ հօր և զաւակաց, եթէ զըրպարտեսցէ զեղբայր իւր և քոյր, եթէ սուտ վկայեսցէ ու ջանասցի արատաւորել զոք այնպիսի սարսափելի պիղծ բանիւք և գնացիւք, զուր ոչ ոք 'ի թշնամեաց կարիցէ կամ զօրեսցէ հանել 'ի բերանոյ, թէ և իցէր նա ոմն 'ի բիրտ հեթանոսաց։ Եթէ ոք զոհեսցէ անմեղ զանուն և զպատիւ եղբօր իւրոյ, և ընտանեաց նորա և զաւակաց, զոր կարծեմ թէ աւազակք անտառոց, որք կարէին անխիղճ հեղուլ զարիւն, բայց այդպիսի արիւն քսել 'ի վերայ եղբօր իւրոյ ո՛չ առնուին յանձն, այլ զարհուրեալ հրաժարէին։

Իսկ դու առանց իրիք խղճահարութեան, բացեր զդժոխասարաս բերան քո բանս ժայթքեցեր զըպարտութեանց և նախատանաց 'ի վերայ իմ և 'ի վերայ տան իմոյ առանց իրիք յիմմէ կողմանէ՝ տալոյ քեզ զպատճառ, և այն առաջի փեսային իմոյ, և ապա 'ի մէջ բազմութեան և առաջի խնամեաց իմոց։ Այժմ քեզ հարցանեմ ունիս դու զԱստուած. քարինք ամ. աղաղակեսցեն թէ անաստուած ես դու։ Իմ կեանք և քոյդ յայտնի են բովանդակ Հայոց ազգի բազում քաղաքաց, և ևս ռուսաց և այլն, Աստրխան, Նախիջևան, Ստաւրապօլ, Քիշնև, և մանաւանդ Թիֆլիս, ուր առաւել հանդիսացեալ էիր. Թո՛ղ նոքա վկայեսցեն վասն քո և վասն իմ, քննեսցեն զգնացս քո և իմ, ընտանեաց քոց և իմ, բայց ես քեզ նման անամօթ չեմ, քո ընտանեացդ համար ոչինչ ասացից և ոչինչ գրեցից, զի և իմ են նոքա. դու ես միայն որ անամօթացար առ ամենեսին, հարցից քեզ առաջի Աստուծոյ ամենատեսին՝ ճշմարիտ են զուր ասացեր, կարծեմ թէ ոչ կարես հայել յերեսս պատկերի Փրկչին մերոյ և շարժել զթիւնալից լեզուդ, զի խիղճ քո և Աստուած կշտամբեսցեն զքեզ։

Դու նախատինք եղեր բովանդակ ազգատոհմին Պատկանեանց, ոչ ոք 'ի Պատկանեանց առանց շառագունելոյ զանուն քո ոչ լսէ, իսկ դու թողեալ զայդ և առաւել քան զայս որ ես ընդ պատուհասիւք, և ընդ քրէական կասկածանօք ժամանակ և դէպ ես գըտեալ արատաւորել զիս զեղբայր քո որ միշտ վշտակից եմ եղեալ քեզ յամենայն պահու. հա՜րց ցհայր Սարգիս վարդապետ քննիչն քո, հարց և զքաղաքագլուխ աղայ զալուպոֆն նոքա վկայեսցեն զինչ խնդրեցի 'ի նոցանէ։ Զգիտեմ ստուգիւ յիմարեալ ես թէ կատաղեալ բոլորովին, եթէ միայն յիմարեալ ցաւալի ես, և խղճալի զա-

ւակոնքդ, իսկ եթէ կատարեալ որպէս գործք քո իսկ ցուցանեն, քեզ անկէ դեղնագոյն տունն չերքասկէի. դու մտածեա զո՞ր ոք չես խոցեալ օձախայթ լեզուաւդ: 'Ի մանկութենէ քումմէ նախ զուսուցիչս քո, ապա զաշակերտակիցս քո, ապա զատենակալս քո, զերանելի ծերունի գյօհաննէս առաջնորդն, ապա զբոլոր հոգեւորական ուխտն Աստրխանայ. դու չէիր պատճառն, որ բոլոր տամբ թողաք զաստրախան և եկաք 'ի Նախիջևան: Չէիր դու պատճառն ապաքաղդութեան ծերունի Տէր Գաբրիէլի անուանակցի քում: Դու չէիր պատճառ ցրելոյ եղբարց 'ի միմեանց, 'ի միտ բեր զինչ արարեր ընդ ծնողս քո, քանիցս մայր քո որ ծընաւ զքեզ, արտասուեաց 'ի քէն, քանիցս անգամ հայր մեր յանդգամ բանից քոց վիրաւորեալ ուշաթափ անկաւ յերկիր կիսամեռ, ոչ ապաքէն նեղեալ 'ի քէն եղբայր մեր Գէորգ արբ զթոյն մահու, միայն ես տոկացի քեզ, անուն և արիւն եղբայրութեան կապէին ընդ զիս ընդ քեզ: Յետ հեռանալոյդ 'ի Քիշնև ամիս տասն և մէկ ծվ պահեաց զընտանիս քո, բայց դու յետ գալոյ հիմոյ 'ի Քիշինևէ արտաքսեցեր զիս 'ի տանէ, ոչ խղճահար եղեալ, թէ այդ եղբայր իմ գոլով ամուրի 'ի միասին պահէ զտուն, որ եօթն ամօք յառաջ ծանրաբեռնեալ էիր, և իմ միակ էր զլուխ և յելանելն մեր 'ի քաղաքէդ, առանց ամօթոյ կամելով պարտաղերց լինել ծածուկ ասացեալ ես հարսին քում, թէ ես 250 ռուբլի ասիգ. փող տուեալ եմ Պետրոսին 'ի պահու հարսանեաց, զայն հաշուեա 'ի պարտս, և որ առաւել ամօթ է մի մուշտակ ընծայ հարսին քո տուեալ էիր կարել ո՛չ ապաքէն թէ դու ունէիր իրաւունք 'ի նոյն տանէ առնել ծախս և ես ունէի զի 'ի միասին էր ռոճիկ երկոցունցս և ես քան զքեզ աւելի շատ աշակերտ ունէի, այն աշակերտք ես վկայեսցեն և զայն ես յետոյ հաշուեալ ես հանդէպ պարտուցդ. զայս ամենայն արարք քո միթէ յիշեցի ամսքան, երկիցս եկիր 'ի ստաւրապօլ զմ՞արդ ճանապարհորդեցի քեզ, դու լաւ գիտես. յետոյ 200 ռուբլի խնդրեցեր և առաքեցի քեզ 'ի Թիֆլիզ և քանիցս անգամ որդոց քոց Յոհաննիսին և Ռափայէլին ետու դրամս ինձ այս ամօթ է յիշելն, բայց քեզ առաւել ամօթ է մոռանալն. եթէ կին իմ ոչ գիտէր պահել զզաւակունս, որպէս ասացեր, ընդէ՞ր կրկին անգամ առաքեցեր զորդիստ քո առ մեզ 'ի պահել որ գյօհաննէսն պահեցի ամս իբր երկու և զռափայէլն երկու անգամ ամս երկուս. զի՞նչ էիր տուեալ վասն նոցա ինձ: Թո՛ղ նոքա դատեսցեն զքեզ և ջարարս քո: Ասա՛ վասն Աստուծոյ, քեզ զինչ բաւականութիւն, եթէ զաւակունքն իմ գժտեսցին յինէն. Աստուած քո զաւակունքդ քեզ բաշխեսցէ, ընդ իմայնոց. զի՞նչ ունիս, բայց ասեմ քեզ մարգարէաբար, այլ ոչ կամիմ, զի եկեսցէ ժամանակ,

զի զաւակունք քո ամաչեսցեն անուանել որդի քո, և այս քեզ 'ի պատուհաս, զի ծնողք քո վշտանային 'ի քէն, բայց այժմ փոքր ինչ խօսեցայց անզգամութեամբ. որդիք քո պատկառեսցին 'ի գնացից քոց, բայց որդիք իմ յուսամ, ուսցին զգնացս իմ, բայց ոչ ցանկամ զի որդիք քո գնասցեն ըստ ընթացից քոց. կարծեմ լաւ գիտես զի ճշմարիտն ասեմ, ապա թէ ո՛չ հարց ցանցաւորս 'ի ճանապարհի և ցգիշերապահս Նախիջևանայ: Զոր ինչ խօսեալ ես և կասկածեալ զինէն, կարծեմ թէ դու առաւել յարմարիս, զի գոլով հրաժարեցուցեալ զքեզ յամենայն գործոց, կարես թէ կամիս զայսպիսի գործս յառաջ տանել զի ուսեալ գուցէ իցես յառաջին կաւատաց քոց զորս շատ ունիս առ որս մարզեալ ես:

Զորասցի ձեռն իմ զի գրեմ այսպիսի ինչ 'ի վերայ եղբօր իմոյ, բայց յառաջ չորանար լեզու քո որ ոչ զրպարտէր այսպիսի բանիւ զի եղբայր քո. թող դատեսցէ զմեզ Աստուած 'ի բանիդ յայդմիկ:»

11.) Ռոստովի գաւառական դատարանը քաղաքային մագիստրատի հետ միասին քննելով Տէր-Գաբրիէլի գործը և չ՛գտնելով նորան մեղաւոր նորա վերայ բարձած յանցանքում և գործադրելով նորա վերաբերմամբ 1855 թուի Մարտի ամենողորմած մանիֆեստը ևս և համարելով նորա այնքան ժամանակ բանտում մնալը բաւարար պատիժ նորա համար, իւր 1855 թուի Մայիսի 4-ին կայացած վճռով որոշում է ազատել նրան բանտարկութիւնից և յանձնել նրան ոստիկանութեան հսկողութեան:

Այս վճռի դէմ սակայն բողոքում է Ռոստովի գաւառական Ստրեապչին, դիտել տալով, որ այդպիսի գործի համար, որի վերայ ուշադրութիւն է դարձրել և Թագաւոր Կայսրը, և 'ի նկատի առնելով յանցաւորի կոչումը, նա չպէտք է լինի ոստիկանութեան հսկողութեան ներքոյ, այլ պիտի պահուի բանտում: Եւ երբ անլսելի է լինում նորա բողոքը, և Պատկանեանցը նոյն թուի Մայիսի 24-ին արձակւում է բանտից, նա նոյն թուի Մայիսի 25-ին բողոք է ուղարկում Եկատերինօսլաւի դատախազին:

12.) Պատկանեանցին կարգընկէց անելու հանգամանքների մասին տես մեր յօդուածը—«Նալբանդեանցի նորագիւտ հնագոյն նամակների առթիւ», որ տպագրուեց «Լումայի» 1905 թուի 1 և 2 համարներում:

13.) Այդ նորընծան Նախիջևանի մայր եկեղեցու այժմուայ աւագ քահանայ Տէր-Խաչատուր Զարիֆեանն է:

14.) Երջանկայիշատակ Մատթէոս Կաթողիկոսի այդ խընդրագրի հայերէն թարգմանութիւնը մենք հրատարակել ենք «Լումայի» 1905 թուի երրորդ համարում:

15.) Տես մեր խորէն Գալֆայեան գիրքը։

16.) Նալբանդեանցի Գերցենի, Օգարեօվի, Բակունինի և դոցա միւս համախոհների հետ ունեցած յարաբերութեան վերայ մի աղօտ լոյս է սփռում «И. С. Тургеневъ и эмигранты» յօդուածը, որ տպագրուեց Историческій вѣстникъ» ամսագրի ներկայ թուի Յունուարի համարում։

17.) Բարեկրօն Հ. Յով. Ա. քահ. Մկրեանը շատ վշտացել է մեր մի նկատողութիւնից, որ մենք արել ենք մեր հոգևոր իշխանաւորների մասին նոցա Պատկանեանցին քահանայութիւնը վերադարձնելու համար գործ դրած մեծ եռանդի առթիւ մեր «Նալբանդեանցի հնագոյն նամակների առթիւ» յօդուածում։ Մենք մեր 13 ծանօթութեան մէջ ասել ենք. «Մեզ չափազանց զարմացնում են մեր հոգևոր բարձր իշխանութեան ներկայացուցիչների գործողութիւններն այդ գործում։ Այն ժամանակ, երբ մեր կեանքում այնպիսի հրատապ խնդիր է վճռուելիս եղել, ինչպիսին Բերլինի վեհաժողովինն էր, մեր Կաթուղիկոսը, պատրիարքն և նուիրակը ժամանակ են գտել թղթեր ու աղերսագրեր գրելու կայսեր, դեսպաններ մէջ ձգելու, քաղաքական բնաւորութիւն կրող բանագնացութիւններ անելու մեծամեծների հետ մի փոքրիկ, չնչին գործի վերաբերմամբ», և այլն։ Հայր Մկրեանը այս տողերի պատճառով ցաւ է յայտնում, որ մեր գրչից դուրս է եկել մի այսպիսի ոչ մարդասիրական խօսք, և որ մենք, կարծես, մի անարգ անձնաւորութիւն ենք համարում Պատկանեանցին, որ ասել ենք, թէ չարժէր գործն այդ շնորհին արժանանալու համար գործ դրած մեծ աշխատանքին։ Բացի սրանից, արժ. Տէր-Հօրիմ վերաբերմամբ գրած խօսքերից ընդհանուր առմամբ կարելի է եզրակացնել, որ մենք լաւ ծանօթ չենք հանգուցեալ քահանայի գրածներին, գործունէութեան և նորա վերաբերմամբ եղած վաւերականներին, և որ մեր ձեռքին գտնուած թղթերը միակողմանի են, որովհետև քաղուած են այնպիսի պաշտօնական աղբիւրներից, որոնք զերծ չեն Խալիբի ազդեցութիւնից և այլն։

Այս բոլորի դէմ մենք կասենք, որ ամեն մի քննադատ-պատմաբան պէտք է նախապէս մի կողմ դնէ իւր անձնական համակրութիւնն ու հակակրութիւնը դէպի այն անձն, որի մասին նա գրում է, և գործի վերայ նայէ անաչառութեամբ։ Մենք անձամբ երբէք չէինք ուզենալ, որ հանգուցեալ քահանան ենթարկուէր այնքան տառապանքների և ընդ միշտ զրկուած մնար, բայց այստեղ չէ՞ որ անձնական զգացմունքի, մարդասէր լինելու կամ չլինելու մասին չէ խնդիրը, այլ հասարակականը, մասնաւորը ընդհանուր ազգային խնդրի հետ չխառնելու։ Տէր-Գաբրիէլի գործունէութիւնը, որքան և իւր ժամանակին օգտաւէտ եղած լինի մեր հասարակութեան ու ազգին, այնուամենայնիւ նորա պատժից ազատուելու խնդիրը այնքան ընդհանուր-ազգային բնաւորութիւն չունէր, որ արժենար, որ կաթուղիկոսն ու պատրիարքը քաղաքականին կերպարանք տալով նրան, դեսպանների ձեռքով միջնորդութիւն յարուցանէին կայսեր առաջ, և այդ այն ժամանակ, երբ այնպիսի հրատապ խնդիր էր դրուած քաղաքական հրապարակի վերայ, ինչպիսին հայկականն էր Բերլինի վեհաժողովում, և երբ մեր ազգի ներկայացուցիչների՝ կաթուղիկոսի և պատրիարքի խօսքն ու միջնորդութիւնը երկրիս հզօրների առաջ պիտի լինէր միայն ամենակարևոր խնդիրների մասին։

Ե՞ւ ինչից, ո՞ր պատժից էին ուզում ազատել Պատկանեանցին. Նա արդէն իսկ կայսերական խորհրդարանի վճռով արդարացած էր ու մաքրուած ամեն մեղադրանքից, իսկ քահանայութիւնը վերադարձնելու խնդիրը մի բոլորովին երկրորդական բան էր, որի համար չարժէր, կրկնում ենք, այնքան աշխատելը ու շնորհք խնդրելը։ Իսկ ինչ որ վերաբերում է հանգուցեալ քահանայի իբրև հեղինակի արժանաւորութեան ու նորա բազմաթիւ երկերի ցուցակին, որ տպագրուեց «Արարատում»,—թո՛ղ արժ. Հ. Մկրեանը համոզուած լինի, որ մենք այնքան էլ անտեղեակ չենք մեր գրականութեան ու պատմութեան, որ չիմանանք, թէ ինչ է գրուած այդ մասին մեր հանդէսներում ու թերթերում ու չ'կարդանք։ Այո, բազմաթիւ են նորա երկերը, բայց, նախ, նրանց մեծ մասը ձեռագիր են, ուրեմն, և՛ մեզ, և՛ Տէր-Հօրը անծանօթ, երկրորդ, միթէ մի հեղինակի արժանաւորութիւնը պէտք է չափել նորա երկերի քանակութեամբ և ոչ յատկութեամբ։ Կարծում ենք, որ անաչառ քննադատը քրքրելով ու ուսումնասիրելով հանգուցեալի յայտնի տպագրուած երկերը, ոչ մի առանձին արժանաւորութիւն չի գտնիլ նրանց մէջ, բացի միջնադարեան կրօնական սքօլաստիկութիւնից։

Մեր ձեռքին եղած նիւթերը հանգուցեալի մասին բազմաթիւ են ու ազգի ազգի, ինչպէս արժ. Հայրը կարող է տեսնել մեր ներկայ գրուածքից, և յամենայն դէպս աւելի պակաս միակողմանի են, քան թէ իւր ձեռքին եղածը, որ իւր, հանգուցեալի, ձեռքով գրուած լինելով, բնականապէս ջատագովական են իւր անձի համար և իրան արդարացնելու շարժառիթ ու բնաւորութիւն ունին։ Հայր Մկրեանը իբրև ապացոյց, օրինակի համար, մէջ է բերում Կորչևսկու պատմութիւնը, որ գրել ուղարկել է նրան ինքը Պատկանեանցը։ Բայց պէտք է իմանայ Տէր-Հայրը, որ այդ պատմութիւնը մեզ համար մի նոր, մի անծանօթ բան

չէ. մեր ձեռքին գտնւում է նոյն Պատկանեանցի ձեռքով բանտից գրուած խնդրագիրը Մատթէոս Վեհապետեանին, որի մէջ գտնւում է ամբողջապէս նոյն պատմութիւնը միայն ուրիշ վարիանտով։ Մենք չենք ասում, թէ Պատկանեանցը սուտ է ասում, բայց չենք էլ ասում, որ նա ուղիղ է ասում. մեզ համար Կորչեւկու պատմութիւնը դեռ մի առեղծուած է, որ կարօտ է պարզաբանուելու, լուծուելու։ Մենք միայն մէջ ենք բերում պատմութիւնն ու փաստերը, ինչպէս որ կան, իսկ եզրակացութիւնը թողնում ենք անելու ընթերցողներին։

18. Այդ մասին տես մեր «Նալբանդեանցի հնագոյն նամակների առթիւ» յօդուածը «Լումայում» 1905 թ. համար 2, էջ 107։ Աւելորդ չենք համարում այստեղ դնել Պատկանեանցի այն նամակը, որից մենք քաղել ենք նորան քահանայութիւնը վերադարձնելու պատմութեան մանրամասնութիւնը։—

Հոկտ. 10 1878. Ս. Պ. Բուրգ։

Գերազնիւ իշխան Աղայ Գէորգ Աղայ Պօղոսեան,
իմ Հոգեհարազատ ծերունի բարեկամ
և ողորմած տէր,

Յիսուն տարիէն աւելի է՝ որ մենք կը ճանաչենք զիրեարս, Ձեր հարսանիքէն սկսած՝ ո՞վ գիտէ թէ քանի անգամ եմ Ձեր շնորհաշուք Տանն սէր վայելել, բայց այս առաջին նամակն է, որ ես Ձեր գերազնւութեան կը գրեմ։

19.) Պ. Պօղոս Քառաքաշը խօսելով Տէր-Գաբրիէլի երկասիրութիւնների մասին, ասում է, որ նորա հազուագիւտ օրինակներով հարուստ գրադարանը, նոյնպէս և ձեռագրերը մնացել են Պետերբուրգում նորա կրտսեր որդի Վահագնի մօտ, որ տուել է բոլորը (ձեռագրերը) իւր փեսայ ինժեներ Գասպար Եազուբեանին, որ իբրև թէ խոստացել է եղել մշակել և հրատարակել նորա երկերը, բայց չի ժամանել, որովհետև դրանից յետոյ շուտով վախճանել է։ Մենք սորա վերայ կարող ենք աւելացնել, որ հանգուցեալ Եազուբեանի այրին, տիկին Ալմաս Եազուբեանը, իւր ամուսնի մահից յետոյ, իւր պապի երկերը յանձնել է Պ. Գր. Խալաթեանին, որ պահելով իւր մօտ հանգուցեալի Ներսէս Ե. կաթուղիկոսի պատմութիւնը և իւր՝ հանգուցեալի, նամակագրութիւնը, միւս բոլոր երկերը խոստացել է ուղարկել ազգիս վեհափառ Հայրապետին Ս. Էջմիածնում պահելու և ըստ իւր հայեցողութեան հրատարակելու։

Պ. Խալաթեանը ձեռագրերը տիկին Եազուբեանից ստանալու մասին տեղեկութիւն է տուել «Մշակի» 1902 թուի 66 համարում, իսկ նորա Ս. Էջմիածին ուղարկելու իւր դիտաւորութեան

մասին գրել է «Արարատի» 1902 թուի Մարտ—Ապրիլ միացեալ համարներում, որտեղ տպագրել է և հանգուցեալի բոլոր թէ ձեռագիր և թէ տպագիր երկերի ցուցակը։ Պ. Խալաթեանը անկասկած կատարած կ՚լինի իւր խոստումը ու երկերը ուղարկած Մայր-Աթոռի մատենադարանը, բայց այն օրերից մինչև ցայժմ դեռ ոչ մէկը հանգուցեալի երկերից տպագրուած չէ։

Աչքի անցկացնելով հանգուցեալի երկերի այդ ընդարձակ ցուցակը, մենք, նախ, չենք տեսնում նոցա շարքում մեր յիշած երկերից մի քանիսը և մասնաւորապէս «Նոր Ցեփթայէ»-ն, որի մասին ինքը հեղինակը շատ գովասանքով է խօսում։ Հաւանական է կարծել, որ այդ բանաստեղծութեան ձեռագիրը իւր, հեղինակի, ձեռքին չի պահպանուել, իսկ սորա-նորա ձեռքին եղած օրինակները կորել, անհետացել են։ Երկրորդ, ցուցակում մենք չենք գտնում «ինքնակենսագրութիւն» անունով երկասիրութիւնը, որի մասին այնքան գովասանքով է խօսում Պ. Քառաքաշը։ Կարծում ենք, որ այդպիսի անունով մի առանձին երկասիրութիւն հանգուցեալը չի էլ ունեցել, այլ այդ եղել է մեր ներկայ գրուածքի համար նիւթ մատակարարած «Հարիւրամեակ Ն. Նախիջեան հայաբնակ քաղաքի» եռահատոր ընդարձակ ձեռագիր պատմութիւնը, որ հանգուցեալի կենսագրութիւնը իւր մէջ ամփոփելու պատճառով, գուցէ, և հնարաւոր լինի կոչել «ինքնակենսագրութիւն»։ Այստեղ ՚ի դէպ աւելորդ չենք համարում նկատել, որ Քառաքաշի հաղորդած կենսագրական տեղեկութիւնները շատ կէտերում ամենևին չեն համապատասխանում «Հարիւրամեակում» հանգուցեալի իւր մասին հաղորդածներին, նամանաւանդ ժամանակագրական մասը։ Երրորդ, որ ցուցակի մէջ մտած երկերի շարքում, բացի «Հարիւրամեակից», չ՚կայ մի այնպիսին, որ արժանի ու հարկաւոր լինէր ներկայումս տպագրելու։ Եւ այդ «Հարիւրամեակն էլ, եթէ մի օր տպագրուելու լինի, պէտք կ՚լինի բազմաթիւ փոփոխութիւններ անել՝ կրճատել, ամբողջ գլուխներ հանել, ձգել, մի խօսքով եռահատորը միահատորի դարձնել։ Միակ գրուածքը, որ արժէր, որ այժմ տպագրութեամբ լոյս տեսնէր, այդ Ներսէս Ե. կաթուղիկոսի պատմութիւնն է, որ պ. Խալաթեանը պահել է իւր մօտ, գուցէ, և Ալամդարեանի կենսագրութիւնը։ Մենք «Հարիւրամեակում» գտնուած տեղեկութիւններից Ներսէսի մասին կարող ենք եզրակացնել, որ նա չպէտք է նման լինի և ոչ մէկին մինչև ցայսօր լոյս տեսած հանգուցեալ կաթուղիկոսի կենսագրութիւններից։ Հաւանական է կարծել, որ դա այն պատմութեան ընդարձակն է, որ Պատկանեանցը տպագրել է «Արշալոյս» «Արարատեան»-ում և առանձին տետրակով էլ հրատարակել՝ Ծաղկա-

քաղ լիակատար վարուց Ներսէսի հինգերորդի սրբազան Հայրապետի և ամենայն Հայոց ազգի Կաթուղիկոսի» խորագրով։ Ցամենայն դէպս դա պէտք է անպատճառ մի դպրոլական և տենդենցիօզ բան լինի, ինչպէս և Ալամդարեանինը...։

Հանգուցեալի երկերի ցուցակում մենք չենք գտնում և պ. Քառաքաշի յիշած Շէքսպիրից արած թարգմանութիւնները, բացի Համլէտի առաջին գործողութեան ա. և բ. տեսարանների թարգմանութիւնից։ Մենք կարծում ենք, որ Տէր-Գաբրիէլը, բացի այդ կտորից, ուրիշ թարգմանութիւն անգլիացի մեծ հեղինակից արած էլ չէ։ Պ. Քարաքաշն այս դէպքում էլ, ինչպէս մի քանի ուրիշ դէպքերում, չափազանցօրէն է խօսում իւր պապի արժանաւորութիւնների մասին իբրև քահանայի, իբրև հասարակական գործչի և իբրև հեղինակի։ Նորա ասելով, օրինակի համար, 16 տարեկան Գաբրիէլից դաս է առնում, սովորում է Յովհաննէս եպիսկոպոսը, առաջնորդը, և ստիպում է, որ միւս եպիսկոպոսներն ու վարդապետներն էլ սովորեն նրանից. նա ինքնուսութեամբ կատարելապէս ուսումնասիրած է լինում աստուածաբանութիւնը, պատմութիւնը և մանաւանդ դիցաբանութիւնը, որի գիտութեան մէջ անզուգական է եղել, իւր նմանը չի ունեցել։ Նա 53՛ թուից յետոյ էլ դեռ ուղղում է Միքայէլ Նալբանդեանցի շարադրութիւնները, և այլն և այլն։

Եթէ այս բոլորը չափազանցութիւն չ՛լինէր, այլ իրողութիւն, փաստ, կարծում ենք, որ, նախ, ինքը Տէր-Գաբրիէլը, որ չի խուսափում իւր արժանաւորութիւնների մասին խօսելու, կյիշէր իւր «Հարիւրամեակում» կամ ինքնակենսագրութեան մէջ. երկրորդ, մեզ ամենքիս էլ այժմ լաւ հասկանալի է, թէ ո՛րքան մեծ գիտութիւն է հարկաւոր, որ մարդս կատարելապէս ուսումնասիրած համարուի պատմութիւնը, աստուածաբանութիւնը և դիցաբանութիւնը, որ Պատկանեանցը անպայման չէր կարող ունենալ. երրորդ, յիշուած թուականից յետոյ էլ նա չէր կարող ուղղել իւր նախկին աշակերտ Նալբանդեանցի շարադրութիւնները, քանի որ այդ ժամանակներից սկսած նորա, Նալբանդեանցի, մտքի կորովը այնքան արագ աճում է, որ ամեն բանով յետ է թողնում իւր ուսուցչին։ Այո՛, նա ուղղել է Նալբանդեանցի շարադրութիւնները, բայց ո՛ր շարադրութիւնները—նորա աշակերտական շարադրութիւնները, տիրացուական շարադրութիւնները, որոնցից նմուշներ էլ չեն հասել մեր ձեռքը, ինչպէս «Մարդեղութիւն Քրիստոսին», որ նա սկսել էր շարադրել «°ի վարժատան Պատկանով քահանային» և յետոյ վերջացրել իւր տիրացու եղած ժամանակ։ Պարզ է, որ այդ բոլորը չափազանցութիւններ են, որ սակայն պէտք է վերագրել թոռի դէպի իւր պապը ունեցած ջերմ զգացմունքին, և ոչ թէ մի ուրիշ բանի։

Պ. Քառաքաշը, վերջապէս յիշում է, որ Տէր-Գաբրիէլը ծանօթ է եղել նշանաւոր Միցկևիչի հետ, և այդ վերջինը հիացած մի հայ համեստ քահանայ-ուսուցչի ունեցած խելքի և կրթութեան վերայ», նորա պատուին մի երգ է ձօնել։ Այդ շատ հետաքրքրական է։ Ցաւում ենք սակայն, որ պարոնը չէ յիշում, թէ արդեօք այդ ո՛ր կամ ի՛նչ երգ է, որ լեհացի մեծ բանաստեղծը ձօնել է մեր համեստ քահանայի և ուսուցչի պատուին։

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊԷԿ

22404

2013